

**Հայաստանը Արարչագործության Եվ Քաղաքակրթության Բնօրրան
Անժեղա Տերյան Երեվան 2002 թ.**

*Երեվան Քաղաքի Պատմության Պետական Թանգարան
Նվիրում էմ Լույսի Ու Հավերժի Մշտական Ուղեկից Հայ Ժողովրդին*

Armenia: Cradle Of Creation And Civilization.
Angela Teryan Yerevan, 2002

Գիրքը Տպագրվում է ՀՀ Գաա Պատմության Ինստիտուտի Հոգեվոր Պատմության Բաժնի
Երաշխավորությամբ:
Խմբագիր՝ պատմական
գիտությունների դոկտոր Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Աշխատության մեջ քննարկվում են կարևոր պատմագիտական հարցեր: Հնագույն գրավոր
աղբյուրները, մշակութային արժեքները վկայում են, որ Հայաստանը արարչագործության, Արարիչ ԱՐ
Աստծո, արևի պաշտամունքի ու քաղաքակրթության հնագույն երկիրն է: ԱՐ Աստծո պաշտամունքը և
արևապաշտությունը խոր հետքեր են թողել կազմավորվող հայ-արմենների, ինչպես նաև
հնդեվրոպական ժողովուրդների նախնիների՝ արիական ցեղերի հոգևոր ու նյութական արժեքների
ձևավորման ու զարգացման վրա: Ժամանակը և տարածությունը թուլացրել են բնօրրանի մասին եղած
հիշողությունները, բայց մշակութային շատ արժեքներ, այդ թվում արևի ու ԱՐ Աստծո պաշտամունքի
հետքերը մարդկանց վերադարձնում են լույսի, արևի ու ԱՐ Աստծո երկիր՝ Հայաստան:
Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

Գրքի տպագրությունը հովանավորել է Քանաքեռ - Ջեյթուն համայնքի թաղապետ՝ Ռուբեն Սինոյանը:

Երախտագիտությունս եմ հայտնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստ. Եսայանին,
պատմական գիտությունների թեկնածու Հ. Կարազեռզյանին, կենսաբանական գիտությունների
թեկնածու, մարդաբան Ն. Քոչարին, պատմական գիտությունների թեկնածու Գ. Վարդույանին,
պատմական գիտությունների թեկնածու Ա. Խաչիկյանին և այլոց, որոնք իրենց խորհուրդներով ու
դիտողություններով օգնել են ինձ գրքի վրա աշխատելու ժամանակ:

Նախաբան

Հայաստանը, որտեղ կազմավորվել է հայ ժողովուրդը, ձևավորվել նրա լեզուն և մշակույթը, գրադեցնում է Փոքր Ասիական ու Իրանական բարձրավանդակների, Մև ծովի, Անդրկովկասի ու Միջագետքի հարթավայրերի միջև ընկած ավելի բարձրադիր տարածքները (մոտ 400.000 քառ. կմ): Աշխարհագրական իր այդ դիրքի պատճառով Հայաստանն անվանում են նաև Հայկական լեռնաշխարհ:

Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից է: Նյութական մշակույթի բազմադարյան հետքերը, հնագույն պատմական վկայությունները, դիցաբանական գրույցները, առասպելները, աշխարհագրական ու անձնական անունները խոսում են այն մասին, որ հայերը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներն են բնիկները և ապրում են այստեղ անհիշելի ժամանակներից:

Առաջավոր Ասիան ու Հայկական լեռնաշխարհը մշտապես եղել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Այստեղ են կազմավորվել հնագույն պետությունները, այստեղ են ստեղծվել հնագույն քաղաքակրթություններն ու մշակույթները, նաև այս տարածքում են խաչաձևվել տարբեր քաղաքակրթություններ ու մշակույթներ, որի արդյունքը նոր որակ է հաղորդել ու էլ ավելի հարստացրել մարդկության պատմությունը:

21-րդ դարի շեմին սեփական պատմության ու մշակույթի հանդեպ նոր հետաքրքրություն է նկատվում մարդկանց մոտ: Յուրաքանչյուր ժողովուրդ նորից ուսումնասիրում, արժեքավորում է իր պատմությունն ու մշակույթը և փորձում պարզել, ովքե՞ր են իրենք, ովքե՞ր են իրենց նախնիները, ի՞նչ տեղ ու դեր ունեն նրանք համաշխարհային քաղաքակրթության ստեղծման մեջ, ո՞ր են հասնում իրենց արմատները և այլն: Այս հարցերը հետաքրքրել և հետաքրքրում են նաև հայ մարդուն: Բազմաթիվ հայ պատմիչներ և ուսումնասիրողներ պատմահայր Մովսես Խորենացուց (5-րդ դար) մինչև մեր օրերը փորձում են պատասխանել այդ հարցերին:

19--20-րդ դարերում ուսումնասիրողները, հիմք ընդունելով հայ պատմիչներ Խորենացու,

Ագաթանգեղոսի (5-րդ դար), Փավստոս Բուզանդի (5-րդ դար), Մեբեոսի (7-րդ դար), Հովհ.

Դրասխանակերտցու (10-րդ դար) և այլոց վկայությունները Հայկ Նահապետի ու նրա գերդաստանի հարավից եկած լինելու մասին, առաջ են քաշել այն տեսակետը, որ հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկի սերունդների և Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի միաձուլումից:

Հայերն ու հայոց պատմությունը հետաքրքրել են նաև օտարներին: Պատմագրության մեջ հայերին ու հայոց պատմությանն առաջինն անդրադարձել են հույները: Հույն պատմիչներ Հերոդոտը (մ.թ.ա. 5-րդ դար), Քսենոփոնը (մ.թ.ա. 5--4-րդ դարեր), Եվդոքսոսը (մ.թ.ա. 4-րդ դար), Դ. Հալիկառնացին (մ.թ.ա. 1-ին դար), Ստրաբոնը (մ.թ.ա. 63 - մ.թ. 20) և ուրիշներ իրենց աշխատություններում բավմիջս անդրադարձել են հայերին, հայոց պատմությանն ու աշխարհագրությանը: Հունական պատմագրությունը առաջ է քաշել նաև հայերի ծագման մասին իր տարբերակը: Այն է. հույն պատմիչները թրակիա փռոզիական ծագում են վերագրել հայերին, ելնելով նրանց միջև եղած ընդհանուր սովորույթներից, հագուստի ձևերից, օգտագործած զենքերի տեսակներից, նաև թեսալացի Արմենոսի մասին եղած ավանդությունից և այլն: Այս տեսակետը նոր զարգացում ունեցավ 19--20-րդ դարերում, երբ Եվրոպայում մեծ հետաքրքրություն առաջացավ Առաջավոր Ասիայի, նաև Հայաստանի հանդեպ: Տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ և ուսումնասիրություններ, որտեղ հեղինակները (Յ. Մարկվարտ, Հ. Հյուբշման, Պ. Կրեչմեր, Ն. Մառ, Լեռ, Գ. Ղափանցյան, Հ. Մանանդյան և ուրիշներ) բազմակողմանիորեն քննարկելով ու գնահատելով հայոց լեզուն, պատմությունն ու մշակույթը, շարունակում են թրակիա-փռոզիական կամ բալկանյան ծագում վերագրել հայերին: Առաջ են քաշվում նաև այլ տեսակետներ, որոնցից մեկի համաձայն հայ ժողովուրդը կազմավորվել է տեղաբնիկ հայասացիների և եկվոր հնդեվրոպացի արմենների միաձուլումից, այլ տեսակետի համաձայն՝ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ խուրրի-ուրարտացիների ու եկվոր հնդեվրոպացի արմենների միաձուլումից և այլն:

Ինչպես տեսնում ենք, դեռևս մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսից հայերն ու հայոց պատմությունը գտնվել են պատմիչների և ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Պատմության այդ երկար ժամանակահատվածը, սակայն, չի կարողացել հստակ պատասխան տալ վերոհիշյալ հարցերին: Շարունակում են գոյություն ունենալ չպարզաբանված հարցեր՝ հատկապես հայոց պատմության հնագույն շրջանի վերաբերյալ:

Հնագիտական, ազգագրական, լեզվաբանական ու մարդաբանական նոր ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին 20-րդ դարի կեսերից առաջ քաշել նոր տեսակետներ հնդեվրոպացիների

(արիական ցեղեր) նախահայրենիքի ու հնդեվրոպական լեզվաընտանիքի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի տեղաբնիկ լինելու մասին: Անդրադատանք թեմայի հետ սերտորեն առնչվող հնդեվրոպացի և արիացի (արիական ցեղ) անվանումներին: Հնդեվրոպացի անվանումը պատմաաշխարհագրական անվանում է և նկատի ունի Եվրոպայից Հնդկաստան ընդարձակ տարածքներում ապրող հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդներին: Գիտական աշխարհում հնդեվրոպացիներին անվանում են նաև արիական ցեղեր, որն այդ լեզվաընտանիքի ժողովուրդների հնագույն անվանումներից է: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից Իրանում և Հնդկաստանում հայտնվում են ցեղեր, որոնք խոսում էին հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներով: Այդ ցեղերին ընդունված է անվանել հնդիրանական ցեղեր: Ցեղի մի մասը, որ մնաց Իրանում, կոչվեց իրանցի, իսկ Հնդկաստանում հայտնված ցեղերը կոչվեցին հնդարիներ: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի հնդկական (վեդաներ) և իրանական ("Ավեստա") գրավոր աղբյուրները վկայում են, որ հնդարիներն ու իրանցիները իրենք իրենց անվանել են արի կամ արիացի: Նրանց մոտ լայնորեն տարածված էր *aria*¹ ինքնանվանումը: Հայտնի է, որ հնդիրանցիները Հնդկաստանի և Իրանի հնագույն բնակիչները չէին: Ուրեմն նրանք ունեցել են նախահայրենիք, բնօրրան, աստվածների պաշտամունք, նաև գլխավոր աստծո պաշտամունք (տվյալ դեպքում ԱՐ Աստծո պաշտամունքը): Հետևաբար, կարելի է մտածել, որ հնդիրանական ցեղերի մոտ տարածված արի կամ արիացի ինքնանվանումը կապված է ԱՐ Աստծո պաշտամունքի և անվան հետ²:

Հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին կատարված հետազոտություններից կարևորում են լեզվաբանական ուսումնասիրությունները: Լեզվաբաններ Վ. Իլլիչ-Սվիտիչը, Վ. Գեորգիևը, Օ. Շիրոկովը, Գ. Կլիչկովը, Ա. Դուրգոպոլսկին, Վ. Իվանովը, Ռ. Իշխանյանը և ուրիշներ իրենց աշխատություններում պատմահամեմատական լեզվաբանության, նաև հնագիտական ու մարդաբանական տվյալներով հիմնավորում են այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվում էր Առաջավոր Ասիայում: Օ. Շիրոկովն ու Գ. Կլիչկովը նույն մեթոդներով (լեզվաբանություն, հնագիտություն, մարդաբանություն) ավելի հստակ եզրակացության են հասնում, այն է, հայերը տեղաբնիկ են իրենց զբաղեցրած տարածքներում՝ Հայկական լեռնաշխարհում (Օ. Շիրոկով, "Լրաբեր", 1980, թիվ 5, Գ. Կլիչկով, "Լրաբեր", 1980, թիվ 8), իսկ հույն պատմիչների վկայությունները արմենների Բալկաններից եկած լինելու մասին նրանք համարում են Փոքր Ասիայում կատարված ոչ մեծ տեղաշարժերի վկայություն:

Հնդեվրոպացիների նախահայրենիքը Առաջավոր Ասիայի արևելյան մասերում (Հայկական լեռնաշխարհ և շրջակա տարածքներ) գտնվելու մասին տեսակետը ավելի բազմակողմանի ու մանրամասն քննարկեցին Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը իրենց "ԼվՊՏպՉԸՏտպրրՄՌո չոսՍ Ռ ՌվՊՏպՉԸՏտպրրՓո" աշխատության մեջ: Այս, ինչպես նաև հայերի տեղաբնիկ լինելու մասին տեսակետները իրենց աշխատություններում ու հողվածներում քննարկման նյութ դարձրին և պաշտպանեցին Մ. Գավուքյանը, Լ. Շահինյանը, Ռ. Իշխանյանը և ուրիշներ: Իսկ հնդիկ հնագետ ու պատմաբան Ա. Դիկշիտը իր § Введение в Археологию՝ աշխատության մեջ հնդեվրոպացիների նախահայրենիք է համարում Կովկասի ու Հայաստանի լեռները:

Այս տեսակետը հաստատուն կերպով մտնում է գիտական աշխարհ, ձեռք բերում նորանոր կողմնակիցներ, հարստանում նոր ուսումնասիրություններով ու աշխատություններով: Նոր ուսումնասիրություններից նշենք Կ. Ռենֆրուի, Մ. Ռուիլենի աշխատությունները, նաև Լ. Լ. Կավալլի-Սֆորզայի, Պ. Մենոզայի, Ա. Պլազզայի համատեղ աշխատությունը և այլն:

Այլ ուսումնասիրողներ (Ֆ. Դեբեց, Գ. Տրոֆիմով, Ն. Չերկասարով) Հայկական լեռնաշխարհը և Փոքր Ասիան համարում են օյկումենի՝ աշխարհի մարդկանցով բնակեցված տարածքի կենտրոնական մասը, ի նկատի առնելով այն, որ այս տարածքները ունեն հարմար աշխարհագրական դիրք, բարենպաստ բնակլիմայական պայմաններ ու վաղ բնակավայրեր (Փ. Дебеч, Г. Трофимов, Н. Чебоксаров. Проблемы заселения Европы, "Происхождение человека и древнее расселение человечества", 1951, стр. 415):

Լ. Լ. Կավալլի - Սֆորզան իր նոր աշխատության մեջ լեզվաբանական (Կ. Ռենֆրու, 1987), հնագիտական (Մ. Գիբրոթաս, Old Europe 7000-3500 B.C., 1973) և այլ բնույթի ուսումնասիրությունների հիման վրա առաջ է քաշում այն տեսակետը, որ հնդեվրոպական լեզուները ծագել են Փոքր Ասիայում, ապա տարածվել դեպի Եվրոպա նեոլիթյան (նոր քարի դար) երկրագործ ցեղերի կողմից: Նշվում է, որ Փոքր Ասիայում մոտ 10.000 տարի առաջ խոսել են հնդեվրոպական լեզուներով: Հայոց լեզուն հեղինակը համարում է հնագույն հնդեվրոպական լեզու, որն այդ տարածքներում խոսակցական լեզու է եղել դեռևս 9000 տարի առաջ (L. L. Cavalli-Sforza, "Genes Peoples and Languages", 2000, pp., 160-161, 164): Ներկայացվող աշխատության մեջ, վկայակոչելով Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդների (շումերներ, աքադացիներ, խուրրիներ, խեթեր) գրավոր աղբյուրները, պահպանված առասպելներն ու

գրույցները, փորձ է արվում հիմնավորելու այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհը արարչագործության ու քաղաքակրթության հնագույն կենտրոններից է:

Աշխատության մեջ կրկին փորձ է արվում քննարկելու ու պաշտպանելու հնդեվրոպացիների նախահայրենիքը Առաջավոր Ասիայի արևելյան շրջաններում (Հայկական լեռնաշխարհի և շրջակա տարածքներ) գտնվելու և Հայկական լեռնաշխարհում հայերի տեղաբնիկ լինելու մասին վերոհիշյալ տեսակետները: Ուշադրություն է դարձվում նաև այն բոլոր հարցերին, որոնք կարող են օգնել հիմնավորելու այս տեսակետները: Քննարկվում են հնագիտական, ազգագրական, լեզվաբանական, մարդաբանական, դիցաբանական, էթնիկական տեղաշարժերի և այլ կարգի հարցեր՝ ուշադրության կենտրոնում պահելով հայ էթնոսը, հայոց պատմությունն ու Հայկական լեռնաշխարհը:

Աշխատության մեջ դարձյալ քննարկվում են Արարիչ ԱՐ Աստծո պաշտամունքի հետ կապված հարցեր (Ա. Տերյան, ԱՐ Աստծո պաշտամունքը Հայաստանում, Երևան, 1995): Մեծ ուշադրություն է դարձվում ԱՐ Աստծո արևի աստված լինելու և Հայաստանը՝ արևի ու լույսի պաշտամունքի հնագույն երկիր լինելու հարցերին: Կարևորվում է ԱՐ Աստծո դերն ու նշանակությունը հայկական/արիական ցեղերի հոգևոր ու նյութական մշակույթի ստեղծման մեջ: Ներկայացվում են նոր փաստեր, վկայություններ ու կարծիքներ ԱՐ Աստծո պաշտամունքի ծագման, տարածվածության ու նշանակության մասին ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Աշխատության մեջ ուշադրություն է դարձվում նաև ԱՐ Աստծո նկարագրի զարգացման հարցերին, երբ ժամանակի հետ ԱՐ Աստծո նկարագիրը հարստանում էր նոր հատկանիշներով, երբ նրա նկարագրի հատկանիշները (մեկը կամ մի քանիսը) հանդես են գալիս որպես այլ աստվածների հատկանիշներ և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց հնագույն ԱՐ Աստծո անունը, պաշտամունքը, նաև գաղափարախոսությունը կարող են օգնել հասկանալու հայոց պատմության (ոչ միայն հայոց) հնագույն շրջանի շատ հարցեր, այդ թվում Հայկական լեռնաշխարհում և նրա սահմաններից դուրս ստեղծված հնագույն շատ ցեղերի ու պետությունների անուններ, ավելի ուշ հանդես եկած այլ աստվածների անուններ, նրանց պաշտամունքներն ու գաղափարախոսությունները, նաև շատ անձնական ու աշխարհագրական անունների ծագման ու բացատրության հարցեր և այլն: Ուշադրություն է դարձվում նաև Հայկական լեռնաշխարհում ստեղծված նյութական ու հոգևոր մշակութային արժեքների և հնագույն քաղաքակրթության այլ կենտրոններից (Միջագետք, Փոքր Ասիայի արևմտյան մաս) հայտնաբերված մշակութային արժեքների միջև եղած կապերին, նրանց ընդհանրություններին և նմանություններին: Աշխարհի հնագույն երկրներից Հնդկաստանն ու Իրանը այն երկրներն են, ուր վաղ ժամանակներից հատկապես երևում են արիական ցեղերի հետքերը: Հնդարիները և իրանցիները երբեք չեն մոռացել իրենց արմատները: Այդ մասին են վկայում արդեն հիշատակված նրանց հնագույն գրավոր աղբյուրները՝ հնդկական վեդաները և իրանական "Ավեստան": Ճիշտ է, այդ գրավոր աղբյուրներում ուղղակիորեն հիշատակություններ չկան նախահայրենիքի մասին,³ բայց վկայված աստվածների պաշտամունքը, գրի առնված ու պահպանված օրենքները, սովորույթները, դիցաբանական գրույցները, առասպելները, ինչպես նաև անձնական ու աշխարհագրական անունները, որ այնքան նման են հայոց մեջ պահպանված ավանդույթներին, սովորույթներին, անուններին, հայոց հնագույն աստվածների պաշտամունքներին, թույլ են տալիս մտածելու, որ նրանց նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն ու շրջակա տարածքներն են: Հաշվի առնելով այս հանգամանքը, ներկայացվող աշխատության մեջ մեծ տեղ է տրվել Հայաստան--Հնդկաստան, Հայաստան--Իրան, նաև Հայաստան--Հունաստան հնագույն պատմամշակութային կապերին, դիցաբանական գրույցներին, ավանդույթներին, սովորույթներին և այլն:

1. Տարածված տեսակետներից մեկի համաձայն (Գ. Բյլին, Ի. Դյակոնով) հնդիրանցիների մոտ լայնորեն տարածված *aria* անվանումը ունեցել է "ազնվացեղ" իմաստը և օգտագործվել է բարձր դասի ու վերնախավի համար: (История древнего мира, Ранняя древность, Москва, 1982, р.332 (բաժինը գրել են Գ. Բյլինը և Ի. Դյակոնովը):
2. Է. Դանիելյանը արիականն ու արիականությունը դիտարկում է իբրև հնագույն հոգևոր արժեք, որը որոշիչ դեր է ունեցել բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում մնացած հայ- արմեն ցեղերի հոգիքնակալումների համար: Բնօրրանում շարունակվեց արիական Աստվածընկալումը, այն է. Լույսի (Բարու) պաշտամունքը չընդմիջարկվեց "երկակիությունը": Լույսին գուգակից չդարձավ խավարը (չարը) (Է. Դանիելյան, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997, էջ 13):
3. Իրանական "Ավեստայի" "Վենդիդատ" բաժնում (1, 2) հիշատակություն կա արիների նախահայրենիքի՝ առասպելական Արյանա Վեջա (ավելի ուշ՝ Էրինվեջ) երկրի մասին: Այս մասին տե՛ս

աշխատության Հայաստան--Իրան բաժինը: Նշենք նաև, որ "Ավետայի" այս մասը ստեղծվել է ուշ՝
մ.թ.ա. 3-րդ դարում:

Գլուխ Առաջին

Արարչագործությունը Եվ Հայկական Լեռնաշխարհը

Հայ-Արմեն Անունների Ծագումը

Արարչագործության մասին տեղեկություններ են պահպանվել Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդների գրավոր աղբյուրներում: Աշխարհի ու մարդու արարման մասին շումերական առասպելաբանության մեջ քաղցրահամ ջրերի Համաշխարհային օվկիանոսը, որի վրա գտնվում է երկիրը, կոչվում է Աբգու (աքաղացիները անվանում են Ապսու, խուրրիները՝ Ապսուվ): Աբգուի տիրակալն էր իմաստության աստված (աստվածուհի) Էնկի--Հայան: Միջագետքյան առասպելաբանության մեջ Աբգուն համարվում էր նաև երկրի խորքում սուզված "ստորերկրյա թագավորություն" կամ ինչ-որ վայր երկրի վրա¹, ուր ապրում են աստվածներ ու պահպանվում մեծ ուժ ունեցող գաղտնիքներ, ամենագոր օրենքներ՝ մե: Միջագետքի գրավոր աղբյուրներում այս երկիրը այլ անունների հետ (Կուր, Կի-գալ, Էդեն, Իրիգալ) կոչվում է նաև Արալի (Հարալի)²: Ըստ շումերական "Էնկի և Նինմախ"³ պոեմի Արալի երկրում ապրող աստվածները որոշում են ստեղծել մարդկանց ցեղը, որպեսզի իրենք ազատվեն երկրի վրա աշխատելու պարտականությունից: Դրա համար նրանք դիմում են Նինմախ (կամ Դինգիրմախ) աստվածուհուն, որն իմաստության աստված Էնկիի ("երկրի տիրակալ") հետ, կավից, որին խառնված էր ինչ-որ սպանված աստծո արյուն, ստեղծում են մարդուն, այնուհետև շունչ, կենդանություն հաղորդում նրան: Մարդուն արարելուց հետո աստվածները խնջույք են կազմակերպում, որի ժամանակ գինովացած աստվածները նորից փորձում են մարդ ստեղծել, բայց այս անգամ կատարյալ մարդ ստեղծել նրանց չի հաջողվում: Ստեղծվում են միայն անճոռնի ու հաշմանդամ մարդիկ: Շումերական առասպելաբանությունը այսպես է բացատրում նման մարդկանց գոյությունը հասարակության մեջ⁴: Որպես արարչագործ աստված Էնկին հանդես է գալիս նաև Նուդիմնուդ "արարիչ" անունով⁵:

Արարչագործության մասին աքաղական (բաբելական) առասպելաբանության մեջ ըստ "Էնումա Էլիշ..." ("Երբ վերնում...") պոեմի Համաշխարհային օվկիանոսն ու նախաստեղծ ուժերը մարմնավորող Ապսուն (Աբգու) և նախամայր Թիամայթը "խառնում են իրենց ջրերը" և ծնունդ տալիս աստվածների առաջին սերնդին: Երիտասարդ այս սերունդը, սակայն, իր անհանգիստ պահվածքով (բարձրացրած ուրախ աղմուկով) գայրացնում է Ապսուին, ու նա որոշում է ոչնչացնել նրանց: Սկսվում է պայքար աստվածների ավագ ու կրտսեր սերունդների միջև: Աստվածների կրտսեր սերնդի ներկայացուցիչ Հայան սպանում է Ապսուին: Սպանված Ապսուի (Համաշխարհային օվկիանոս) վրա Հայան կառուցում է իր կացարանը, կոչում այն Ապսու և սկզբնավորում Մարդուկին (մարդ-ուկ), իսկ այնուհետև՝ նաև մարդկային ցեղը⁶:

Միջագետքի հնագույն այլ գրավոր աղբյուրներում ("Ատրախասիս", "Գիլգամեշ") Հայա աստվածը շարունակում է պաշտպանել մարդկանց ու լինել մարդկային ցեղի փրկության նախաձեռնողն ու հովանավորը: Այսպես. "Ատրախասիս" դիցաբանական գրույցում աստվածները դարձյալ ստեղծում են մարդկանց, որ նրանք իրենց զոհաբերություններով պահեն աստվածներին: Մակայն երկրի վրա նրանց բարձրացրած աղմուկից գայրացած աստվածները նորից որոշում են նախ սովի, ապա ժանտախտի ու վերջապես ջրհեղեղի միջոցով ոչնչացնել մարդկային ցեղը: Սպասվող ջրհեղեղի մասին բարի աստված Էան (Հայա)⁸ զգուշացնում է իր սիրելի Ատրախասիսին (խրճիթի ու պատի միջոցով): Զգուշացված Ատրախասիսը նավ է կառուցում, ընտանիքի և ունեցվածքի հետ տեղավորվում այնտեղ ու փրկվում: Այնուհետև աստվածները, որպեսզի չդրժեն իրենց երդումը՝ ոչնչացնել բոլոր մահկանացուներին, անմահություն են շնորհում Ատրախասիսին:

Համարյա նույնությամբ այս պատմությունը ներկայացված է նաև շումեր-աքաղական "Գիլգամեշ" դյուցազնավեպի 11-րդ պնակիտում: Այս ստեղծագործության մեջ սպասվող ջրհեղեղի մասին բարեպաշտ Ուտնապիշտին է զգուշացվում Էա-Հայայի կողմից (շումերական տարբերակում ջրհեղեղից փրկվում է Զիուսուդրան, որը աքաղեբեն թարգմանությամբ նշանակում է Ուտնապիշտի "Երկար կյանք գտած"): Ուտնապիշտին ևս նավ է կառուցում, որը ջրերի վրա տարուբերվելուց հետո կանգ է առնում Նիսիր (Նիցիր) լեռան վրա: 7-րդ օրը Ուտնապիշտին դուրս է գալիս տապանից և լեռան վրա զոհաբերություն ու խնկարկում կատարում: Այնուհետև աստվածները Ուտնապիշտիին ևս անմահություն են շնորհում և բնակեցնում Համաշխարհային օվկիանոսից սկիզբ առնող Համաշխարհային կամ Ստորերկրյա գետի գետաբերանի մոտ⁹:

Արարչագործության մասին առասպելներ, դիցաբանական գրույցներ ու պոեմներ են ստեղծվել նաև Հայկական լեռնաշխարհում, սակայն դրանց չնչին մասն է հասել մեզ: Պահպանված գրույցներից հնագույնները խուրրիական "Երկնային թագավորության մասին" և "Վահագնի ծնունդը" պոեմներն են: Ինչպես "Երկնային թագավորության մասին" պոեմը, այնպես էլ խուրրիական այլ գրավոր հուշարձաններ պահպանվել են խեթերեն թարգմանվելու շնորհիվ: Իսկ խեթական մշակույթը սերտորեն կապված է եղել Հայկական լեռնաշխարհի և խուրրիական մշակույթի հետ: Իրենց հերթին խեթերը մ.թ.ա. 14--13-րդ դդ. մշակութային կապեր են ունեցել հունական ցեղերի՝ աքայացիների հետ, որոնց մասին բազմիցս նշում են իրենց գրավոր աղբյուրներում:

Ծանոթանանք արարչագործության մասին խուրրիական առասպելաբանությանը: "Երկնային թագավորության մասին" պոեմում, որը բաղկացած է չորս մասից, պատմվում է Աստվածների առաջին երեք սերնդի՝ Ալալուի, Անուի, Կումարբիի և Երկրի գավակների ծննդի մասին: Ալալու և Անու աստվածների տիրապետությունից հետո, որոնցից յուրաքանչյուրը իշխել էր 900 տարի, Կումարբի աստվածը հաղթում է Անուին և վերցնում իշխանությունը: Այնուհետև Կումարբիին Անուի օգնությամբ (ոչ իր ցանկությամբ) ծնունդ է տալիս երեք այլ աստվածների՝ Ամպրոպի Աստծուն (ծնվում է գանգից), Արանցախ գետին և Թասմիսուին (Ամպրոպի Աստծո եղբայրը և օգնականը): Կումարբիին և մյուս աստվածները որոշում են ոչնչացնել դեռ չծնված Ամպրոպի Աստծուն, որը իշխանության համար պայքարում պարտված Անուի ցանկությամբ պետք է ոչնչացներ Կումարբիին և վերցներ իշխանությունը: Սակայն Ապսուվի (Աբգու) տիրակալ, իմաստուն Էան (Հայա) խորհուրդ է տալիս չսպանել Ամպրոպի Աստծուն, այլ դարձնել երկրի արքա: Պոեմի չորրորդ մասում պատմվում է Երկրի գավակների ծննդի մասին: Ներկայացնենք այդ հատվածը.

...Եկավ Կառապանն երկնային
Իր Աստղային կառքով...
Անցան վեց օրեր: Կառապանն
Այնժամ Երկրի հետ պառկեց
Եվ իր սերմը թողեց նրա մեջ...
Երկնային Կառապանը նորից
Վերադարձավ երկինք: Ապսուվում էր նա,
Ուր իր հոգին լցրեց իմաստնությամբ
Այնտեղ իմաստուն Էան է իշխում
Տասներորդ ամսին Երկիրը
Ճչում էր ցավից,
Երբ որ Երկիրը ճչաց
Նա երկվորյակներ ծնեց¹⁰:

Ինչպես տեսնում ենք, երկնքից իր "Աստղային կառքով" Էա-Հայայի տիրապետության տակ գտնվող Ապսուվ է գալիս Երկնային Կառապանը (Արև-Աստված) և Մայր Երկրի հետ ծնունդ տալիս "Երկրի գավակներին", որոնց իր հովանավորության տակ է առնում իմաստուն Էա-Հայան:
Արարչագործության մասին Հայկական լեռնաշխարհում ստեղծված ու պահպանված լավագույն դիցաբանական գրույցներից է "Վահագնի ծնունդը" պոեմը, որը մեզ է հասել Մովսես Խորենացու (5-րդ դար) "Հայոց պատմություն" աշխատության միջոցով: Պոեմի հրաշալի տողերը պատկերում են արևի ու կրակի աստված Վահագնի (նաև մարդկանց) ծնունդը.

Երկներ երկին,
Երկներ երկիր,
Երկներ և ծովը ծիրանի,
Երկն ի ծովուն ուներ և գկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ
Եվ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ,
Նա հուր հեր ուներ:
Ապա թե՛
Բոց ուներ մորուս,
Եվ աչկունքն էին արեգակունք¹¹:

Նկատում ենք, որ պոեմում աստվածների (նաև մարդկանց) արարմանը մասնակցում են Երկինքը, Երկիրը և Արև-Աստվածը ("Ծովը ծիրանի"): Խուրրիական պոեմում ևս մարդու արարմանը մասնակցում էին Արև-Աստվածը ("Երկնային Կառապան"), Երկինքն ու Երկիրը¹²:

Արարչագործության մասին վկայություններ են պահպանվել նաև հունական դիցաբանության մեջ: Ըստ հունական դիցաբանության (Հեսիոդոսի "Թեոգոնիա" աշխատությանը), աշխարհի արարման ժամանակ Մայր Երկիր Գեան (Gaia, Aia) ծնվելով Քաոսից հետո (ավելի ուշ ծնվում են Տարտարոսը և Էրոսը) կյանք է տալիս Ուրանոսին (երկինք), Պոնտոսին (ծով), այլ տիտանների, կիկլոպների¹³: Գեան, որ մինչ օլիմպիական աստվածներից է, համարվում է ոչ միայն մարդկանց նախամայրը, այլև հողում թաղված մեռյալների օթևանը: Ավելի ուշ Գեան մղվում է երկրորդական պլան, մնալով հնագույն իմաստությունների պահապանը, որին հայտնի էին նաև մարդկանց ճակատագրերը, ճակատագրի օրենքները և այլն: Որպես հնագույն Մայր աստվածուհի Այա-Գեան մեծ խորհուրդ է ունեցել հույների հոգևոր ընկալումներում և որպես այդպիսին հույները aia են կոչել "հողը", "երկիրը", և "մորը"¹⁴: Նույն հոգևոր ընկալումներով՝ Այա-Հայա աստվածուհու պաշտամունքի խորհրդով են առաջնորդվել նաև հայերը՝ "այա" կոչելով Մեծ մորը՝ նախամորը (Արցախի բարբառ):

Հայա (Այա, Էա) աստվածուհու պաշտամունքի այլ վկայություններ ևս կան առաջավորասիական հնագույն ժողովուրդների առասպելաբանության ու դիցաբանության մեջ: Այսպես. արադական (բաբելա-ասորական) դիցաբանության մեջ արևի աստված Շամաշի կինը կոչվում է Այա¹⁵: Խեթական դիցաբանում մեռնող-հառնող Տելեպինուս աստծո առջև դրված կենաց ծառը, որից կախված էր ոսկե գեղմը, կոչվում էր Էա¹⁶: Իսկ հունական առասպելաբանության մեջ սրբազան ծառից կախված ոսկե գեղմը ձեռք բերելու համար հույն կտրիճները "Արգո" նավով արշավում են Արևի աստված Հելիոսի որդի Այետի (Այետես) երկիր՝ Էա¹⁷: Ինչպես տեսնում ենք, իսթական դիցաբանում ոսկե գեղմով կենաց ծառն է կոչվում Էա-Այա, իսկ հունական դիցաբանում սրբազան ծառի ու ոսկե գեղմի երկիրն է կոչվում Էա:

Հայոց հնագույն պետություններից մեկի՝ Արարատ--Ուրարտուի դիցաբանում մ.թ.ա. 9--8-րդ դդ. դեռ պահպանվում են Այա-Հայա աստվածուհու պաշտամունքի հետքերը, հանձինս Այա աստվածուհու¹⁸, որն արդեն սովորական աստվածուհի է: Ասորեստանում Սարգոն 2-րդի (721-705) ժամանակներում ևս դեռ գոյություն ունեին Երկրի տիրակալ Էայի պաշտամունքը՝ իր նախկին իմաստության ու բանականության աստվածուհու հատկանիշներով¹⁹:

Այսպիսով, արարչագործության մասին Առաջավոր Ասիայում ստեղծված հնագույն առասպելներն ու դիցաբանական գրույցները, որոնք հաճախ ոչ ամբողջական են ու կցկտուր, վկայում են, որ շատ վաղուց, մարդկության պատմության արշալույսին գոյություն է ունեցել Մայր Երկրի՝ հողի (նաև անդրաշխարհի) ու ջրի (Համաշխարհային օվկիանոս) Հայա (Էա, Այա) աստվածուհու (աստծո) պաշտամունքը:

Շումեր-արադական դիցաբանության մեջ Աբգուն, այլ անունների հետ (Կուր, Էդեն, Իրիզա) կոչվում նաև Արալի (Հարալի): Առասպելաբանության մեջ աստվածների բնակավայր այս երկիրը՝ Արալին, ջրանցքների (գետերի ակունքների), նաև Համաշխարհային օվկիանոսը Երկրի հետ կապող ստորերկրյա գետի գետաբերանի (երկրի վրա՝ գետերի ակունքների) շրջանում գտնվող երկիր է: Փորձենք պարզել, թե Մայր Երկրի ո՞ր մասում կարող էր գտնվել աստվածների, իսկ այնուհետև նաև մարդկանց բնակավայր այս երկիրը: Վերոհիշյալ անունների մեջ անմիջապես ուշադրություն է գրավում Արալի-Հարալի անունը, որն իր Ար-Հար արմատով կապվում է Հայկական լեռնաշխարհի ու հայոց շատ տեղանունների, այդ թվում երկրանունների հետ: Արալի անվան երկրորդ -ալի մասը տեղանվանակերտ մասնիկ է (հմմ. Արմարիալի կամ Արմարիլի, Մանանադի, Դարանադի): Հարցի պարզաբանման համար մեծ կարևորություն ունի մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերով թվագրվող շումերական մի քարտեզ (աղյուսի վրա ուրվագծված սխեմա, նկ. 1), որի վրա պատկերված է տիեզերքը՝ Համաշխարհային օվկիանոսը, նրա վրա լողացող Մայր Երկիրը և յոթ երկնականմարներ: Մայր Երկրի՝ Աբգուի վրա պարզորոշ երևում է մուտք (դարպաս), որտեղից սկիզբ է առնում Ստորերկրյա կամ Համաշխարհային գետը, երևում է նաև այդ գետի Մայր Երկրի երես դուրս գալու շրջանը, որտեղից սկիզբ են առնում Եփրատ ու Տիգրիս գետերը: Պատկերված են նաև լեռներ: Հարցի պարզաբանման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներով թվագրվող շումեր-արադական այլ պատկերներ ու կնիքադրոշմներ ևս: Հայտնաբերված պատկերներից մեկում շումերները Հայա աստծուն պատկերել են ձեռքում բռնած սկիհով, որից հոսում ու գետերն են թափվում երկու ջրաշիթեր: Թեմատիկ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայտնաբերված կնիքադրոշմների վրայի պատկերները: Կնիքադրոշմներից մեկը (նկ.2, մ.թ.ա. 3-րդ

հազարամյակի 2-րդ կես) ներկայացնում է աստվածների բնակավայրը: Պատկերված են աստվածներ (Էնկի, Ուտու, Ինաննա), լեռներ (հստակ երևում են լեռան երկու գագաթներ), կենսաց ծառ, կենդանիներ և այլն: Աստվածներից Էնկի-Հայան պատկերված է ոտքը լեռանը հենած և ուսերից սկիզբ առնող երկու ջրաշիթերով: Մեկ այլ կնիքադրոշմի վրա ջրաշիթերը սկիզբ են առնում Էնկի-Հայայի ձեռքի մատներից: Բոլոր պատկերների վրայի ջրաշիթերը անկասկած Եփրատ ու Տիգրիս գետերն են խորհրդանշել: Հայտնի է, որ Միջագետքի այս երկու խոշոր գետերը սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից: Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանում գտնվող երկիրը Հայաստանն էր՝ պատկերված վերոհիշյալ շումերական քարտեզում: Եփրատն ու Տիգրիսը հնում համապատասխանաբար կոչվել են Պուրատտու (Պ-ուրատտու) և Արանգահ (Արանգահ անունը հիշեցնում է խորրիական դիցաբանությունից հայտնի Արանցախ գետի անունը):

Միջագետքի այլ հնագույն գրավոր աղբյուրներ ևս օգնում են "Աստվածների բնակավայր" այս երկրի ուր գտնվելու հարցի պարզաբանմանը: Շումեր-աքադական "Գիլգամեշ" դյուցազնավեպի 11-րդ պնակիտում անմահություն ստացած Ուտնայիշտին Կյանքի ծաղիկը ձեռք բերելու և անմահություն ստանալու համար մեծ դժվարություններով ("մազցել է դժվարին լեռներ, անցել բոլոր ծովերի միջով") իր մոտ հայտնված Գիլգամեշին պատմում է Մեծ աստվածների (Անու, Էնլիլ, Նինուրթա, Էա) կամքով եղած ջրհեղեղի, Էա (Հայա) աստծո կողմից իր զգուշացվելու, ջրհեղեղից փրկվելու, աստվածների կամքով անմահություն ստանալու և Աբգուի տիրակալ Էայի (Հայա) երկրին մոտ՝ գետաբերանի (կամ գետերի ակունքների) շրջանում, որը նաև աստվածների բնակավայր տանող ճանապարհն էր, բնակեցվելու մասին:

Ինչպես տեսնում ենք, Գիլգամեշը լեռներ ու ծովեր (հավանաբար Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Եփրատ գետն էր) անցնելուց հետո է հասել աստվածների ու անմահների երկիր, ուրեմն Միջագետքից սկսվող այդ ճանապարհը Գիլգամեշին պետք է հասցներ Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջան: Հետևաբար կարելի է մտածել, որ Միջագետքի հնագույն ժողովուրդների հոգևոր ընկալումներում ստորերկրյա Համաշխարհային գետի գետաբերանի (կամ գետերի ակունքների) շրջանում գտնվող երկիրը՝ Աստվածների բնակավայրը, որը հայտնի է նաև Արալի անունով, համապատասխանում է Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանին՝ Հայկական լեռնաշխարհին: Աստվածների ու անմահների երկիրը Հայկական լեռնաշխարհում տեղադրելու համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մովսես Խորենացու "Հայոց պատմության" աշխատության մեջ հիշատակված հայոց հնագույն Արարադ/ու և Հարք երկրանունները: Խորենացին, վկայակոչելով ասորի պատմիչ Մար Աբաս Կատինային, գրում է, որ Բաբելոնյան աշտարակաշինության անհաջող փորձից հետո Թորգոմի (Հաբեթի սերնդից) որդի, քաջ նախարար Հայկը, չկամենալով հնազանդվել Տիտանյան Բելին, Բաբելոնում իր Արամանյակ որդու ծնվելուց հետո չվում է ԱՐԱՐԱԴԻ երկիր²⁰ (Վանա լճից հարավ): Այնուհետև այդ տարածքը իբրև ժառանգական կալվածք տալիս է Կադմոսին, Արամանյակի որդուն, իսկ ինքը մնացած մարդկանցով շարժվում է հյուսիս-արևմուտք, բնակվում մի քարձրավանդակ դաշտում, որը կոչում է ՀԱՐՔ (Վանա լճից հյուսիս-արևմուտք), այսինքն՝ այստեղ բնակվողները հայրերն են Թորգոմի տան սերնդի²¹: Անդրադառնանք Արարատ և Հարք անուններին:

Արարադ/Արարատ²² անունը հայ պատմագրության մեջ հիշատակված հայոց հնագույն երկրանունն է: Անունն իր արար- և -ատ բաղադրիչներով թույլ է տալիս ենթադրել, որ այս երկրանունը կապ ունի արարչագործության ու մարդու արարման հետ: Արարատ անվան առաջին՝ արար- բաղադրիչը հենց արարել, ստեղծել իմաստն ունի: Անվան -ատ բաղադրիչը տեղանվանակերտ մասնիկ է (հմմ. Տանբատ, Շադատ, Նպատ, Որդուատ, նաև բացատ, անապատ, հեղեղատ, խորխորատ)²³: Հետևաբար, հայոց հնագույն ԱՐԱՐԱՏ երկրանունը իր ծագմամբ ու հնչողությամբ հայկական է և արարելու, ստեղծելու վայր, տեղ իմաստն ունի²⁴:

Խորենացու աշխատության մեջ վկայված հայոց հնագույն մյուս երկրանունը Հարքն է, որն Խորենացին բացատրում էր "հայրերի երկիր"²⁵ իմաստով: Մակայն այս դեպքում անունը (Հարք) ավելի խոր արմատներ և իմաստ ունի: Այն է. Խորենացու բացատրությունը կարելի է հասկանալ նաև, որ Հարքում (Հար-ք, Հ-արք, "ք"-ն հայերենում և՛ տեղանվանակերտ է, և՛ հոգնակիակերտ) մեզ արարող Հայր Աստվածը, Արարիչն է բնակվել (նաև այլ աստվածներ): Հետևաբար, ՀԱՐՔ երկրանունը Հայր Աստծո՝ Արարիչ Աստծո երկիր (հայրերի, աստվածների երկիր) իմաստն ունի, որը նախ աստվածների բնակավայրն էր (երկիրը), ապա՝ մահկանացու մարդկանց, երբ Հայր Աստվածը՝ Արարիչը արարեց մարդուն: Հարք անվան այս բացատրությունը ամրապնդվում է հայ մատենագրության մեջ եղած այլ վկայություններով: Այսպես. Ըստ "Աշխարհացոյցի" (7-րդ դար) աստվածների բնակատեղի էր Մեծ Հայքի առաջին աշխարհը՝ Բարձր Հայքը, որն աշխարհագրական իր բարձր դիրքով առանձնանում է Հայկական լեռնաշխարհում. "Հիրավի ինչպես ցույց է տալիս անունը, Բարձր Հայքը բարձր է ոչ միայն

Հայաստանի (մնացյալ) մասերից, այլև ամբողջ Երկրից, որի համար էլ այս աշխարհը կոչեցին Կատար Երկրի: Աշխարհի չորս կողմերը ջուր է արձակում և նրանից բխում են չորս հզոր գետեր"²⁶:

Հայկական լեռնաշխարհի այս "բարձր" աշխարհում էին գտնվում հայոց հեթանոսական աստվածներ Արամազդին (Դարանաղյաց գավառի Անի կամ Հանի բնակավայրը), Անահիտին (Եկեղյաց գավառի Երիզա ավան), Միհրին (Դերջան գավառի Բագայառիձ ավան), Նանեին (Եկեղյաց գավառի Թիլ ավան) նվիրված տաճարներն ու մեհյանները, ինչպես նաև պաշտամունքային այլ կենտրոններ: Հեթանոսական Հայաստանի պաշտամունքային հայտնի կենտրոններից էր նաև Մեծ Հայքի Տուրուբերան (կամ Տարոն) աշխարհի Աշտիշատ (Հաշտիշատ) ավանը, ուր գտնվում էին Անահիտի, Աստղիկի, Վահագնի մեհյանները: Տուրուբերանում էր գտնվում Բյուրակն (Բինգյոլ) ընդարձակ լեռնագանգվածը (նաև՝ լեռնաղաշտ, բարձրավանդակ) իր հայտնի Սերմանց (Սրմանց) լեռնագագաթով (խուրրիական պոեմում "Երկնային Կառապանը" մարդու արարման ժամանակ Երկրում (Ապսուլ) թողեց իր "սերմը"): Սերմանց լեռը ևս կոչվում է "Կատար Երկրի", որից բխում են բազմաթիվ աղբյուրներ²⁷: Նորից անդրադառնանք Խորենացու վկայությանը, երբ Հայկը "իր մնացած մարդկանցով... շարժվում է դեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնաղաշտի անունը կոչում է Հարք": Իր աշխատության այս հատվածում Խորենացին կարծես տալիս է հենց Բյուրակն բարձրավանդակի նկարագրությունը: Իսկ Հարքը, որն ըստ "Աշխարհացույցի" Տուրուբերան աշխարհի 9-րդ գավառն էր²⁸, հնում հավանաբար ավելի ընդարձակ է եղել՝ ընդգրկելով իր մեջ նաև տարածքներ Բարձր Հայք և Տուրուբերան աշխարհներից:

Հայ մատենագիրների (Փ. Բուզանդ) վկայությամբ աստվածների բնակատեղի էր նաև Բարձր Հայքի Եկեղյաց գավառի (այժմ Երզնկայի շրջան) Մեծ լեռը, որը "աթոռ Անահտայ" է ("աթոռ Նահտայ")²⁹ կոչվում: Աստվածների բնակատեղի ու նստավայր լինելու մասին են վկայում նաև Այրարատ աշխարհի Արագած (Արայի գահ)³⁰ ու Արա լեռների, և Սյունիք աշխարհի Գեղարքունիք գավառի Մեհոգած (Միհրի գահ)³¹ լեռան անունները:

Այսպիսով, գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ շումերական, արադական, խուրրի-հայկական և առաջավորասիական այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ հիշատակված Հայա (Էա, Այա) աստծո տիրակալության տակ գտնվող Մայր Երկրի "աստվածների ու անմահների երկիրը", ուր արարվել է նաև մարդը, Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանն է, Հայկական լեռնաշխարհը: Իսկ Մայր Երկրի տիրակալ Հայա աստծո երկրում արարված մարդը իրեն կոչել է հայ, որը Երկրի բնակիչ, երկրաբնակ, երկրային էակ իմաստն ունի: Այդ է վկայում նաև հայոց Հայկ անունը, որը հավանաբար առաջացել է հայիկ ձևից և հայ ցեղին պատկանելու իմաստն ունի (հմմ. պարսիկ, հնդիկ):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց արմեն անունը ևս խոր հնություն ունի: Արմեն անվան ծագումը, էությունն ու իմաստը հասկանալու համար նորից դիմենք հնագույն գրավոր աղբյուրներին: Այսպես. երբ համեմատում ենք արարչագործության մասին Միջագետքում (շումեր-արադական) և Հայկական լեռնաշխարհում (խուրրի-հայկական) ստեղծված առասպելաբանությունները, նկատում ենք էական մի տարբերություն: Այն է. շումեր-արադական առասպելաբանության մեջ մարդն արարվել է կավից Հայա (Այա, Էա) աստծո երկրում, (ավելի ուշ Հին Կտակարանը ևս այդպես է ներկայացնում մարդու արարումը), այլ դեպքում ("Էնումա Էլիշ...")՝ երկու աստվածներ խառնում են իրենց ջրերը՝ ծնունդ տալով մարդուն և այլն:

Այլ կերպ է ներկայացված մարդու արարումը Հայկական լեռնաշխարհում ստեղծված առասպելաբանության մեջ ("Ոռեմ Երկնային թագավորության մասին", "Վահագնի ծնունդը"): Այն է. մարդն արարվել է Հայա (Այա, Էա) աստծո երկրում Մայր Երկիր Հայայի ու Տիեզերական Արարչի ("Երկնէր Երկին", "Երկնային Կառապան", "Օիրանի ծով") կողմից, նրանց միացումից: Տիեզերական Արարիչը՝ Հայր Աստվածը, արարված մարդկանց կողմից ընդունվում է իբրև միակ Գերագույն Արարիչ Աստված ու հանդես է գալիս ԱՐ-ԱՐԱ անունով: Եվ Հայկական լեռնաշխարհում արարված մարդը՝ երկրի բնակիչը՝ հայը, Մայր Երկրի տիրակալ Հայա աստծո պաշտամունքը զուգակցում է տիեզերական հոր՝ Արարիչ ԱՐ Աստծո պաշտամունքի հետ, իրեն համարելով Արարիչ ԱՐ Աստծո որդի՝ Արմա³² (Հարմա), Արամ³³, Արմեն: Իսկ տարածքը, որտեղ արարվել են Երկրի բնակիչները՝ հայերը, Արարատ ու Հարք, իսկ հայ ցեղի մարդկանցով բնակեցված տարածքը Հայք ու Հայաստան են կոչել:

Երբ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներին Արաբական թերակղզուց սեմական ցեղերը՝ արադացիները (ավելի ուշ բաբելացիներն ու ասորեստանցիները), հայտնվեցին Հյուսիսային Միջագետքում և սկսեցին

շփվել Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայ-արմենների հետ, այնտեղ դեռ գոյություն ուներ Արարիչ Հոր՝ ԱՐ Աստծո պաշտամունքը: Պահպանվել էին նաև գրույցներ ու առասպելներ Հայկական լեռնաշխարհի բնիկների Հայա աստծո Երկրի բնակիչ լինելու և Արարիչ ԱՐ Աստծո որդի (Արմա, Արամ) լինելու մասին: Եվ սեմական ցեղերը ևս հայերին անվանում են ԱՐ Աստծո որդիներ՝ արմա-արմե(ն)-ներ, իսկ երկիրը՝ Արմանի, Արամանի³⁴:

Միջագետքի հնագույն գրավոր աղբյուրներում՝ "Գիլգամեշ" դյուցազնավեպի մի շարք վիպերգերում ("Գիլգամեշը և անմահների երկիրը", "Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը") շումերները հայոց հնագույն պետությունն անվանում են Արատտա (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկիզբ), որը "բարձր լեռների ու սուրբ օրենքների" երկիր էր³⁵: Արատտա անունը իր առաջին՝ Ար- բաղադրիչով կապվում է ԱՐ Աստծո անվան հետ: Անվան երկրորդ -աստա բաղադրիչը իմաստով ու հնչողությամբ կապվում է հնդեվրոպական atta բառի "հայր, մայր, նախնի" իմաստով վերականգնված ձևի հետ³⁶: Հետևաբար հայոց հնագույն պետության Արատտա անվանումը ԱՐ Հայր Աստծո (երկիր) իմաստն ունի և նշանակում է "հայրերի, նախնիների երկիր": Համեմատության համար հիշենք, որ Խորենացին Հարթ երկրանունը ևս բացատրում էր "հայրերի, նախնիների երկիր" իմաստով: Այս առումով Արատտա անունը նաև իմաստավորվում ու կապվում է հայոց հնագույն Հարթ (Արթ), Արարատ ու այլ Ար-ով սկսվող երկրանունների հետ:

Հայոց հնագույն երկրանուններն ու անձնանունները ուսումնասիրելիս նկատում ենք հետաքրքիր մի երևույթ. ար-ը հաճախ հանդես է գալիս հար ձևով: Բացի արդեն հիշատակված Հարալի (Արալի), Հարթ երկրանուններից հայտնի են նաև Հարմինույա³⁷, Հարիա³⁸ երկրանունները, հայոց նահապետներից մեկի Հարմա (Արմա) անունը և այլն: Նկատում ենք, որ ար-ը հար ձևի ժամանակ իր հնչողությամբ մոտենում է հայ ձևին: Դա հատկապես նկատելի է Հարթ-Հայր դեպքում: Այս օրինակը եզակի չէ: Հայոց լեզվում (բարբառներ) կան այլ դեպքեր ևս, երբ ար-ը հնչում է հայ կամ այ ձևով: Այսպես. Հաճնի բարբառում արևը հնչում է այեվ³⁹, հարսը՝ հայս (Համշեն)⁴⁰, արծիվը՝ այձիվ (Հաճն)⁴¹, զարմանալը՝ զայմանոլ (Ջեթուն, Հաճն)⁴² ձևով և այլն:

Ար-հար (հնչյուն ավելանալու) ար-այ, հար-հայ (ր-յ հնչյունափոխություն) անցումները հետաքրքիր են, հաճախ անսպասելի: Այս դեպքում կարելի է ասել, որ ար-ը և հայը տարբեր լինելով իրենց ծագումնաբանությամբ⁴³, սերտորեն միահյուսվել են հար ձևի մեջ:

Այսպիսով Հայկական լեռնաշխարհի բնակիչների հայ և արմեն անունները պատմության շատ խոր, հնագույն շրջանին են վերաբերում ու իրենց ծագմամբ, իմաստով ու արմատներով հասնում են արարչագործության ժամանակները, վկայելով, որ Հայկական լեռնաշխարհում արարված հայ-արմեն ցեղը Մայր Երկրի վրա երբևէ արարված հնագույն ցեղերից է: Կարելի է մտածել նաև, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները իրենց հայ-արմեն անուններով կապ, կամուրջ են Տիեզերքում՝ կապելով Մայր Երկիրը (Հայա, Այա, Էա աստվածուհի) Տիեզերքի (Արարիչ ԱՐ Աստված, Հայր Աստված) հետ:

1. Древняя литература Малой Азии, Москва, 1977, стр. 309. Мифы народов мира, I, Москва, 1988, стр. 22.

2. РЗЭ 2с. »Ищ3 дб»½23³, 9с. ³Э, 1982, չ3 82 (Ֆксп3 .³Э.³ПЭ»сбн...! еб»ШБ): Мифы Народов Мира, II, 1991, стр. 648.

3. МНМ, I, стр. 22. Литература Вавилонии и Ассирии, Москва, 1981, стр. 32-51. Литература древнего Востока, Москва, 1971, стр. 54-55. История древнего Востока, I, Москва, 1983, стр. 310.

4. ИДВ, I, стр. 310.

5. Хрестоматия по истории Востока, Москва, 1963, стр. 268.

6. Литература Вавилонии и Ассирии, стр. 32-51.

7. Литература Вавилонии и Ассирии, стр. 51-75, ИДВ, I, стр. 473:

8. Ուսումնասիրողները նշում են, որ Էան Հայայի ոչ ճիշտ ընթերցումն է (ИДВ, I, стр. 281 (բաժինը գրել է Ի. Դյակոնովը):

9. ՀԱՊ, էջ 155-161:

10. ՀԱՊ, էջ 186-187:

11. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 102:

12. Արարչագործության հեռավոր արձագանքներ ենք գտնում հայոց "Մասնա ծոեր" էպոսում: Էպոսի "Մասնասար-Բաղդասար" ճյուղում Համաշխարհային օվկիանոսը կամ նախաստեղծ օվկիանոսը մարմնավորող Ծովինարը (հայոց Գագիկ թագավորի դուստրը) ջրից հղիանալով (խմում է մեկ լրիվ և

կես բուռ ջուր) կյանք է տալիս երկվորյակ եղբայրներ Սանասարին ու Բաղդասարին (Սասունցի Դավիթ, Երևան, 1939, էջ 14-16):

13. МНМ, I, էջ 300: Դիցաբանական բառարան, 1985, էջ 49:

14. Древнегереческо-русский словарь, Москва, 1958, стр. 322.

15. Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից Արաբական թերակղզուց Հյուսիսային Միջագետքում, իսկ այնուհետև Հարավային Միջագետքում հայտնված սեմական ցեղերը շփման մեջ մտնելով Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների հետ, մշակութային այլ արժեքների հետ հավանաբար փոխ են առել նաև աստվածների, այդ թվում Հայա (Այա, Էա) աստծո պաշտամունքը:

16. Древняя литература Малой Азии, стр. 61. МНМ, I, стр. 396.

17. МНМ, I, стр. 98-99: Առասպելի ամբողջական տարբերակի հեղինակ Պինդարոսը Էա-Այա երկիրը նույնացրել է Կողքիսի (Կոլխիդա) հետ: Այս մասին տես Հայաստան-Հունաստան բաժինը: Ի դեպ, ուսումնասիրողների կողմից Այա երկիրը իրավացիորեն նույնացվում է Հայասա երկրի հետ (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 285):

18. Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960, 27 (21, 69).

19. Հայ Ժողովրդի Պատմության Քրեատոմատիա, Երևան, 1981, էջ 25:

20. Հավանաբար, Հայկի և նրա գերդաստանի այս տեղաշարժը հայկական ցեղերի վաղ շրջանի տեղաշարժերից էր:

21. Մ. Խորենացի, էջ 41:

22. Հնագույն գրավոր աղբյուրներում օգտագործվում են անվան ն՝ Արարադ, ն՝ Արարատ ձևերը: Այսպես. Աստվածաշնչի երբայերեն բնագիրը, նաև լատինական թարգմանությունը (Վուլգատա) Հայաստանի համար օգտագործում են Արարադ, իսկ հունական վաղ թարգմանությունը (Յոթանասունից)՝ Արարատ անունները (Թագավորաց, 4-րդ դիրք, ԺԹ, 36-37, Երեմիա, ԾԱ, 27): Հայոց մեջ ընդունված ու տարածված է անվան Արարատ ձևը, որն իր բարեհնչյուն արտասանությամբ շատ ավելի հարագատ է մեր լեզվին:

23. Լեզվաբանները հայերենում տեղանվանակերտ են համարում նաև -ուտ (Թեղուտ, Կաղնուտ), - ոտ (Կաշկառոտ) մասնիկները (Գ. Ջահուկյան, 1987, էջ 415):

24. Արարատ անունը Գ. Ղափանցյանը բացատրում է ելնելով Խորենացու "Արայի դաշտ" բացատրությունից: Ղափանցյանը ենթադրում է, որ Ararat-ի -arat մասնիկը "ինչ-որ լեզվով երևի նշանակել է "դաշտ" (գուցե արտ)" կամ էլ Արարատը առաջացել է ur-art, Ar-art ձևից, որ Արայի արտ (դաշտ) իմաստն է ունեցել, Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 151 (նաև տողատակը): Արարատ անվան բացատրության այլ տարբերակ է առաջարկում Հ. Կարազեղոյանը: Նա Ara data> Արարատ անվան առաջին՝ Արա- բաղադրիչը կապում է Արա Գեղեցիկի անվան հետ: Անվան երկրորդ -data "տրված" բաղադրիչը համարում է data-rat անցման հետևանք: Հետևաբար, ըստ հեղինակի Արարատ նշանակում է Արայատուր և առաջացել է Aradata չվկայված ձևից (Հ. Կարազեղոյան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիրներում, հ. I, գիրք I, Երևան, 1998, էջ 16-17):

25. Հայոց բարբառներում հայր, մայր բառերը հնչում են նաև հար, մար ձևով:

26. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ "Աշխարհացույցի", Երևան, 1963, էջ 106:

27. Աշխարհացույց, էջ 108:

28. Աշխարհացույց, էջ 62:

29. Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 334-335:

30. Գ. Ղափանցյան, 1945, էջ 98:

31. Գ. Ղափանցյան, 1945, էջ 98:

32. Հնդեվրոպական ma, me (նաև man, men) բառերը ունեն "սերել, ծնել, որդի", նաև "մարդ" իմաստը (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, էջ 278-279:): Հետաքրքիր է, որ մարդ բառի արմատը՝ հնդեվրոպերեն mer-ը նաև "մեռնիլ" իմաստն ունի, և հնդեվրոպացիները մարդ բառն օգտագործել են նաև որպես մարդ-մահականացու՝ անմահների (աստվածներ) հակառակը:

33. "Մերվել, ծնվել, որդի" իմաստն ունի նաև Արամ անվան -ամ բաղադրիչը (մա-ի շրջված ձևը, ամ=մա, հմմ. Գեղամ, Վահրամ, Վռամ):

34. "Նի", "նե" բաղադրիչները տեղանվանակերտ մասնիկներ են: Այդ վերջավորությունն ունեն Հայկական լեռնաշխարհի, հատկապես խուրրի-ուրարտական ժամանակաշրջանի շատ բնակավայրեր. Արդինի, Էրեբունի, Էթիունի...

35. И. Канева, Эмеркар и верховный жрец Аратты, ВДИ, 1964, 4, стр. 208.

36. Ընդունված է, որ հնդեվրոպական լեզուներում հայր բառի նախնական ձևը վերականգնված pater ձևն է: Հնդեվրոպական լեզուներում (վլավոնական, բալթյան) pater-ի փոխարեն հայր իմաստով օգտագործվում է նաև atta ձևը (հմմ. սանսկրիտ atta "մայր", հունական aia "հայր", լատիներեն atta

"հայր", գործերեն *atta* "հայր", արբաներեն *at* "հայր", ռուսերեն *отец* "հայր"), (Հ. Աճառյան, 1977, էջ 32): Ավելացնենք խուրրիերեն *atta* "հայր", ուրարտերեն *atte* "հայր" (И. Дьяконов, Языки древней Передней Азии, Москва, 1967, стр. 133, Գ. Ջահուկյան, 1987, էջ 427) նաև հայոց որոշ բարբառներում օգտագործվող աղբյուր "մայր" բառը և այլն: Ինչպես տեսնում ենք *atta*-ն հնդեվրոպական հնագույն բառերից է և օգտագործվում է "հայր, մայր, նախնի" իմաստով: Նշենք, որ ոչ հնդեվրոպական լեզուներում ևս օգտագործվում են հնդեվրոպական *atta* "հայր" բառին նման, նույն իմաստով բառեր: Այսպես հունգարերենում կա *anya* "հայր", թուրքերենում *ata* "հայր" բառը (Հ. Աճառյան, 1977, էջ 32. Турецко-русский словарь, Москва, 1945, էջ 44) " ³ŪÉÝ:

37. Պարսից Դարեհ 1-ին (522-485) արքայի Բեհիսթունյան արձանագրության մեջ էլամական բնագիրը Հայաստանի համար օգտագործում է Հարմինույա անունը: (Կ. Բասմաջյան, Դարեհի արշավանքն ի Հայս, Բանասեր, Ա, Պարիս, 1899, էջ 6-45):

38. Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 10 (3, 35).

39. Հ. Աճառյան, 1971, էջ 313:

40. Հ. Աճառյան, 1977, էջ 62:

41. Հ. Աճառյան, 1971, էջ 320:

42. Հ. Աճառյան, 1971, էջ 328:

43. Առաջ քաշելով այս տեսակետը, լիովին չենք բացառում ար-հար-հայ անցման հնարավորությունը առանձին դեպքերում:

Աստվածաշունչը Եվ Հայաստանը

Առաջավոր Ասիայի մ.թ.ա. 2-րդ--1-ին հազարամյակների գրավոր աղբյուրները շարունակում են խոսել արարչագործության՝ աշխարհի, աստվածների ու մարդու արարման մասին: Արարչագործության մասին Առաջավոր Ասիայում՝ Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում ստեղծված հոգևոր նյութը (առասպելներ, դիցաբանական գրույցներ, հնագույն տեքստեր) մ.թ.ա. 8-6-րդ դդ. մարգարեների կողմից հավաքվեց ու ներկայացվեց Աստվածաշնչի Հին Կտակարանում (Նոր Կտակարանը գրվել է մ.թ. 1-ին--2-րդ դդ.): Այս իմաստով Աստվածաշունչը հնագույն գրավոր այն ստեղծագործություններից է, որն իր արմատներով հասնում է հազարամյակների խորքը և որպես այդպիսին կարևոր գրավոր աղբյուր է ինչպես Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդների, այնպես էլ հայերի վաղ շրջանի պատմության ուսումնասիրության համար: Կարևորվում է հատկապես այն հանգամանքը, որ Հին Կտակարանում վկայություններ կան արարչագործության, Երկրային դրախտի, Համաշխարհային ջրհեղեղի, Արարատ լեռան ու մարդկային ցեղի փրկության մասին: Հստակորեն մատնանշվում է, որ արարչագործության, դրախտի, ինչպես նաև Համաշխարհային ջրհեղեղից մարդկային ցեղի փրկության երկիրը Արարատի երկիրն է, Հայաստանը: Անդրադառնանք այդ վկայություններին: Ըստ Հին Կտակարանի արարչագործության ժամանակ Հայր Աստվածը կավից ստեղծում է մարդուն և բնակեցնում Երկրային դրախտում. "Աստված արևելյան կողմը՝ Եդեմում դրախտ տնկեց և իր շինած մարդը այնտեղ բնակեցրեց...: Եվ դրախտը ջրելու համար գետ էր բխում Եդեմից ու այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի: Մեկի անունը Փիսոն է...: Երկրորդ գետի անունը Գեհոն է...: Երրորդ գետը Տիգրիսն է...: Չորրորդ գետը Եփրատն է...":

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհից սկիզբ են առնում բազմաթիվ գետեր, այդ թվում Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը (Արաքս), Փիսոնը (ենթադրվում է Հալիսը կամ Փասիարը), Կուրը և այլ գետեր ու գետակներ, որոնք դրախտից բխող գետի նման հոսում են ցած, ոռոգելով բազմաթիվ հարթավայրեր ու դաշտավայրեր:

"Արարչագործությունը և Հայկական լեռնաշխարհը բաժնում նշվել է, որ Հայկական լեռնաշխարհի համարյա կենտրոնում գտնվող Հարթ գավառն իր շրջակա տարածքներով (Բարձր Հայք, Տուրուբերան) բազմաթիվ աղբյուրների, գետերի ու գետակների ակունքը լինելով, նաև իր անվամբ (Հար-ք) լիովին համապատասխանում է շումեր-աքադական գրավոր աղբյուրներում հիշատակված "աստվածների ժողովի լեռ", "աստվածների հավաքատեղի" անուններին, ուր ինչպես հայտնի է Արարիչը՝ Հայր Աստվածը արարել է մարդուն: Այս տարածքը լիովին համապատասխանում է նաև Աստվածաշնչյան դրախտին, ուր նույնպես Արարիչը՝ Հայր Աստվածը արարել է մարդուն և օժտել բարին ու չարը հասկանալու իմաստնությամբ: Այս առումով հետաքրքիր է Նեմրոս լեռան վրա (Մալթիայից հարավ-արևելք) Կումագենի թագավոր Անտիոքոս 1-ին (69-34) Երվանդունու կողմից կառուցված սրբատեղին (նկ.3): Լեռան վրա՝ հարթակում կանգնեցվել են գահերի վրա նստած աստվածների (Արամազդ, Վահագն, Միհր, Անահիտ) հսկայական արձաններ: Տեսարանը այժմ էլ շատ տպավորիչ է (արձանները ջարդված են, չկա ամբողջական արձան), կարծես աստվածները լեռան վրա նորից հավաքվել են ժողովի (հմմ. շումեր-աքադական կնիքի վրա եղած պատկերը): Սակայն ըստ Հին Կտակարանի, երկրի վրա մարդու բնակության իրավունքը այս անգամ էլ հեշտ չի ընթացել: Կրկնվել է շումեր-աքադական գրավոր աղբյուրներից ("Գիլգամեշ", "Ատրախասիս") հայտնի հին, ծանոթ պատմությունը: Այն է. Արարչի կողմից արարված մարդը իր բարքերով (այս անգամ չարության ու նախանձի պատճառով) նորից գայրացնում է Աստծուն և արժանանում ջրհեղեղի միջոցով վերանալու վտանգին: Բայց կա փրկության ուղի: Դա բարությունն ու բարեպաշտությունն է: Եվ մարդկային ցեղի փրկության համար Աստվածը ընտրում է հենց այդպիսի բարեպաշտ մի մարդու՝ Նոյին: Սպասվող ջրհեղեղի մասին Աստծո կողմից զգուշացված Նոյը վարվում է այնպես, ինչպես շումերական Ջիուսուդրան և աքադական Ուտնապիշտին էին վարվել: Կառուցում է տապան և ընտանիքի ու երկրի վրա եղած բոլոր տեսակի կենդանիների հետ (զույգերով) տեղավորվում այնտեղ: 40 օր ու 40 գիշեր անձրև է գալիս: Ամեն ինչ ծածկվում է ջրով: 40 օր ջրերի վրա տարուբերվելուց հետո "եթոներորդ ամիսը՝ ամսուն տասնութերորդ օրը՝ տապանը Արարատ լեռներուն վրա նստավ"²: Այնուհետև դադարում է անձրևը, ջրերը հետ են քաշվում և Նոյը դուրս է գալիս տապանից ու զոհաբերություն անում Աստծուն իր փրկության համար: Ջրհեղեղից հետո, Արարատի լեռներում հաստատվում է նաև Աստծո ու մարդու (Նոյի ու իր սերունդների) Հավիտենական ուխտը արված "յավիտենական դարերու համար", որի "նշանը սա է. աղեղը ամպին մեջ պիտի տեսնուի"³ (ծիածանը):

Հին Կտակարանում եղած վկայությունները արարչագործության, ջրհեղեղի, Նոյյան տապանի, Արարատ լեռան, դրախտի ու այնտեղից բխող գետի (գետեր) մասին կասկած չեն թողնում, որ արարչագործության, դրախտի, իմաստության ու կենաց ծառի երկիրը Հայաստանն է: Պատահական չէ նաև այն, որ Արարչի կողմից Հայկական լեռնաշխարհում արարված մարդը ջրհեղեղի ժամանակ իր փրկությունը գտնում է Հայկական լեռնաշխարհում՝ Արարատ լեռան վրա⁴:

Աշխարհի հնագույն այլ ժողովուրդների նման հայ ժողովուրդը ևս ունի գրույցներ ու ավանդություններ Համաշխարհային ջրհեղեղի ու Նոյի մասին: Այդ գրույցների մի մասը կապված է Նոյի ու Նախիջևան անվան հետ: Մասիս--Արարատ լեռան շուրջը տարածվող, Արարատյան դաշտավայրի շարունակությունը կազմող Նախիջևան գավառի (նաև բնակավայր) անունը իր ժողովրդական ստուգաբանություններով թույլ է տալիս ասելու, որ Նոյ Նահապետի տապանը կանգ է առել Մեծ Մասիս--Արարատ լեռան վրա: Նախիջևան անունը այսօր էլ մեր մեծերի կողմից բացատրվում է իբրև Նոյի իջնելու տեղ, Նոյի իջևան: Այլ բացատրությամբ՝ երբ Նոյը Արարատից իջել է, նախ իջևանել է այստեղ, իսկ սերունդները տարածվել են ավելի հեռու: Հայոց ավանդագրույցները Նոյին համարում են Նախիջևան քաղաքի հիմնադիրը, Նոյի կնոջը անվանում են Նոյեմզար, Նոյի գերեզմանը տեղադրում են Նախիջևանում⁵ և այլն:

Նոյի ու ջրհեղեղի հետ է կապվում նաև հայոց հնագույն տոներից մեկը՝ վարդավառը: Ավանդությունը պատմում է, որ Արարատից իջնելուց հետո Նոյը իր որդիներին պատվիրել է ջուր լցնել իրար վրա ի հիշատակ ջրհեղեղի ու ջրհեղեղից փրկվելու⁶:

Հայոց ավանդությունը պատմում է նաև, որ Էջմիածնի Մայր տաճարը Աստծո Միածին որդու՝ Հիսուս Քրիստոսի ցուցումով կառուցվել է այն վայրում, ուր Նոյը Արարատից իջնելուց հետո պատարագ է մատուցել իր և իր ընտանիքի փրկության համար:

Հայերը նաև սուրբ, աստվածային լեռ են համարել Մասիս սարը, որի գագաթին չպետք է դիպչեր մահկանացու մարդու ոտքը: Հայոց հավատալիքներում լեռը պահպանում են քաջքերն ու վիշապազունները: Հիշենք Խորենացու վկայությունը, երբ Հայոց Արտաշես թագավորն անիծում է որդուն՝ Արտավազդին, ասելով.

Թե դու հեծնես որսի գնաս

Ազատն ի վեր, դեպի Մասիս,

Քաջքերը քեզ բռնեն տանեն

Ազատն ի վեր, դեպի Մասիս⁷:

Մասիս լեռը պահպանող այս քաջքերն ու վիշապազունները հիշեցնում են շումեր-աքադական դյուցազնավեպի Մաշու (Մասու) լեռների դարպասները պահպանող ու միայն աստվածների համար այն բացող մարդակարիճներին⁸: Նոյի, Նոյյան տապանի ու ջրհեղեղի մասին հայոց մեջ տարածված այս ավանդություններն ու գրույցները շատ ավելի կարևոր ու հավաստի են, քանի որ ստեղծվել են հենց տեղում՝ Նոյի տապանի իջնելու երկրում: Այս առումով կարևորվում է Հ. Փլավիոսի (1-ին դար) վկայությունը: Փլավիոսը գրելով, որ Նոյի (Նոբոս) տապանի լեռը Հայաստանում է, այնուհետև ավելացնում է՝ "Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ apobaterion"⁹: Զրույցներն ու ավանդությունները ստեղծվում են դարերի ընթացքում, հետևաբար Նոյի ու ջրհեղեղի հետ կապված հայոց ավանդությունները Փլավիոսի ժամանակներից շատ ավելի հին են: Ի դեպ, այս վայրը հույն աշխարհագիր Պտղոմեոսը (2-րդ դար) ևս իր կազմած քարտեզում անվանում է Նոյի իջնելու տեղ՝ Naxuana¹⁰ և այլն¹¹:

Ամփոփենք: Առաջավոր Ասիայում՝ Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում ստեղծված առասպելաբանությունը, հնագույն գրավոր աղբյուրները, Աստվածաշունչը, նաև նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ (պատկերներ, քանդակներ, կնիքադրոշմներ) վկայում են, որ արարչագործության երկիրը, ուր Տիեզերական Արարիչը՝ Հայր Աստվածը արարել է մարդուն, Հայաստանն է: Հայաստանում արարված մարդը ինքն իրեն Հայա աստծո Երկրի բնակիչ՝ հայ է կոչել ու Արարիչ Ար Աստծո որդի՝ արմա, արամ, արմեն համարել: Իսկ իր երկիրը (տարածքը) հայ-արմենը Հայք, Հայաստան է կոչել:

Այլ ժողովուրդների կողմից (սեմական ցեղեր, ավելի ուշ հույներ, պարսիկներ) որպես Հայկական լեռնաշխարհի բնակիչների անվանում ընդունվել ու տարածվել է արման, արմին, ավելի ուշ՝ արմեն, իսկ երկրի (տարածքի) համար՝ Արմանի, Արմենիա անունները:

Հայաստանը՝ Արարատի երկիրը նաև մարդկության վերածննդի երկիրն է, ուր Նոյի սերունդը փրկվեց ջրհեղեղից, բազմացավ ու սփռվեց աշխարհում: Եվ վերջապես. Հայաստանում արարված մարդը իր

հայ-արմեն անուններով յուրահատուկ կապ, կամուրջ է Տիեզերքի (Արարիչ ԱՐ Աստված) ու Մայր Երկրի (Հայա աստվածուհի) միջև:

1. Ծննդոց, Բ, 8-14:

2. Ծննդոց, Ը, 4, 5:

3. Ծննդոց, Թ, 8-16:

4. Աստվածաշնչի եբրայերեն բնագիրը Հայաստանի համար օգտագործում է Արարատի թագավորություն (Ուրարտու) անունը, իսկ Նոյյան տապանի սարը կոչում է Արարատի լեռ (լեռներ)՝ ի նկատի առնելով Ուրարտու--Արարատ երկրի համարյա կենտրոնում գտնվող, հայոց մեջ Մասիս անունով հայտնի լեռը: Ավելի ուշ, մ.թ. սկզբներին Աստվածաշնչի վաղ քրիստոնյա մեկնիչները նույնացնում են Արարատի երկրում գտնվող Արարատ և Մասիս անունները, ու Արարատ--Մասիս լեռը Արարատ անվամբ համարվում է Նոյյան տապանի սարը:

5. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, 360, 789 Բ, ՀՄՀ, հ. 8:

6. Հ. Ակինյան, Հայոց եկեղեցական տարին եօթներորդ դարու սկիզբ, Հանդես ամսօրեայ, 1947, էջ 369: Ա. Ղանալանյան, 1969, 789 Բ:

7. Մ. Խորենացի, էջ 233:

8. ՀԱՊ, էջ 143:

9. Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, Երևան, 1976, էջ 54:

10. ՀՄՀ, հ. 8:

11. Հ. Փլավիոսի աշխատության միջոցով մեզ են հասել նաև այլ հեղինակների չպահպանված վկայություններ, որոնք ի տարբերություն հայոց ավանդությունների Նոյյան տապանի սար են համարում Կորդոբի Արարատ (այժմ Ջուդի դաղ) լեռը: Վկայակոչելով Բերեսոս Քաղդեացուն (մ.թ.ա. 3-րդ դար), որի աշխատանքներից հատվածներ են պահպանվել, Փլավիոսը գրում է. "Ասվում է, թե մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում է Հայաստանում, Կորդոբաց լեռների մոտ", (Հ. Փլավիոս, էջ 55): Այս տեսակետի օգտին խոսող փաստարկ է համարվում Ասորեստանի թագավոր Աշուրնազիրպալ 2-րդի (884-859) արձանագրության մեջ Արարադ (Արարդի) անունով լեռան հիշատակումը՝ կապված նրա դեպի Հայկական Տավրոս կատարված արշավանքների հետ, (ABINUY, 23, (I, 58)):

Մարդկության փրկության սար է համարվում նաև շումեր-աքադական դյուցազնավեպից հայտնի երկգագաթ Մասու (Մաշու) լեռը, որը նույնացվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող Մասիոս-Մասիոն (այժմ Տուր Աբդին) լեռների հետ: Այս լեռների Մասիոս-Մասիոն անունները հայտնի են հունական և հայկական ("Աշխարհացույց") գրավոր աղբյուրներից: Ասուրական արձանագրություններում այս լեռները կոչվում են Քաշիարի լեռներ (ԸԹԼԼձ, 23, (II, 15)): Ենթադրվում է, որ շումերները Միջագետքի հարավային մասեր են իջել Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից, տանելով իրենց հետ մշակութային շատ արժեքներ, այդ թվում՝ կրոնադիցաբանական: Անկասկած, նրանք իմացել են հնագույն Միս ու Մասիս (Մա-սիս. "Մայր-սնուցիչ, սնուցող") անունով սրբազան լեռների մասին և նոր հայրենիքում խոսելով ջրհեղեղի մասին ("Գիլգամեշ" դյուցազնավեպում), անշուշտ, ոչ պատահաբար տապանի երկգագաթ սարը կոչել են Մասու (Մաշու): Ի դեպ, լեռան գագաթը, որի վրա կանգ է առել փրկարար տապանը, նույն դյուցազնավեպի աքադական տարբերակում կոչվում է Նիսիբ, որը ևս հեռավոր նմանություն ունի Մասիս անվանը: Այսպիսով կարելի է ասել, որ Մասու (Մաշու), Մասիոս (Մասիոն), նաև Նեխ-Մասիք (Միփան) լեռների անունների համար հիմք է հանդիսացել հայոց հնագույն սրբազան լեռան Մասիս անունը:

Գլուխ Երկրորդ Հայաստանը Հնագույն Գրավոր Աղբյուրներում

19--20-րդ դդ. Առաջավոր Ասիայի հնագույն պետությունների ու ժողովուրդների պատմությամբ զբաղվող գիտնականները հայտնաբերված գրավոր տեքստերը կարդալիս հաճախ էին հանդիպում հայ ու արմեն անուններին, նաև հայկական դիցանունների, անձնանունների, երկրանունների և հայոց պատմությունն ու մշակույթը ներկայացնող այլ վկայությունների: Հետաքրքիր էր նաև այն փաստը, որ Հայաստանը որպես ամբողջական տարածք, պետություն միշտ ներկայացված է աշխարհի բոլոր հնագույն քարտեզներում, (հույն ճանապարհորդ ու աշխարհագիր Հ. Միլեթացու մ.թ.ա. 517 թ. կազմած քարտեզը, մ.թ.ա. 7-րդ (կամ 5-րդ) դարի բաբելական քարտեզը և այլն): Առաջացած հետաքրքրությունը մեծ էր և գիտնականները սկսեցին զբաղվել նաև հայոց պատմության, մշակույթի, հայ-արմեն անունների ծագման հարցերով և այլն:

Գիտնականներին հատկապես հետաքրքրում էր այն հարցը, թե ինչպես են առաջացել հայ և արմեն անունները: Առաջ են քաշվում տարբեր տեսակետներ ու կարծիքներ հայ ու արմեն անունների ծագման մասին: Ծանոթանանք եղած տեսակետներին ու կարծիքներին:

Հայ մատենագիրները այս հարցերին փորձել են պատասխանել դեռևս 5-րդ դարում: Առաջիններից մեկը, որ անդրադարձել է հայ-արմեն անունների ծագման հարցերին, պատմահայր Մովսես Խորենացին է: Իր "Հայոց պատմություն" աշխատության մեջ Խորենացին պատմում է Հայկի ու Բելի պատերազմի, Վանա լճի ափին տեղի ունեցած ճակատամարտի և Հայկի հաղթանակի մասին¹: Այնուհետև Խորենացին գրում է, որ հայոց աշխարհը մեր քաջ նախնի Հայկի անունով կոչվել է Հայք²: Շարունակելով պատմությունը Խորենացին գրում է նաև Հայկի ծոռնորդի Արամի³ մասին, որը վարելով հաղթական պատերազմներ, ընդարձակել է Հայքի սահմանները և նրա անունով էլ մյուս ազգերը մեր աշխարհը կոչել են Արմեն, Արմենիկ:

Խորենացու վկայությունը՝ Հայկի անունով մեր երկիրը Հայք կոչելու և Արամի անունով Արմենիա կոչելու մասին, իրենց աշխատություններում համարյա նույնությամբ կրկնում են հետագա բոլոր հայ պատմիչները: Մեբեոսը, Հովհ. Դրասխանակերտցին և ուրիշներ հայ անունը կապում են Հայկ Նահապետի անվան հետ, իսկ Արմեն անունը՝ Հայկի ծոռնորդի Արամի անվան հետ: Նշենք, որ Մեբեոսը Արմեն անունը կապում է Հայկի որդի Արամենակի⁴ անվան, իսկ Հ. Դրասխանակերտցին՝ Հայկի որդի Արամանյակի⁵ անվան հետ: Հայ պատմիչները օգտագործել են նաև Աստվածաշնչից հայտնի "տուն Թորգոմայ", "Թորգոմական աշխարհ", "որդիք Թորգոմայ", "Ասքանազյան ազգ" անունները և այլն:

Պատմագրության մեջ հայ-արմեն անունների ծագման հարցերին անդրադարձել են նաև հույն պատմիչները: Հերոդոտը, Եվդոքսոսը, Դ. Հալիկառնացին, Ստրաբոնը և ուրիշներ հայերին նույնացրել են թրակիա-փռուգիական ցեղերի հետ՝ ելնելով նրանց ինչ-որ սովորություններից, հագուստի ձևերից, օգտագործած զենքերի տեսակներից և այլն: Ստրաբոնը՝ օգտվելով Ալ. Մակեդոնացու զորավարներ Կյուրսիլոս Փարսալացու և Մեդիոս Լարիսացու չպահպանված ինչ-որ աշխատությունից, մեզ է հասցնում մի ավանդություն, ըստ որի արմենները ունեն թեսալական ծագում, իսկ նրանց անվանադիր նախնին Արմենոս Թեսալացին է: Հունական ավանդությունը պատմում է, որ արգոնավորդների ղեկի Այա (Կողքիս, Կոլխիդա)⁶ երկիր կատարած արշավանքին մասնակցում էր նաև Արմենոսը Թեսալիայի Արմենոս քաղաքից, որն այնուհետև իր ուղեկիցների հետ մնացել է Հայաստանում և երկրին ու ժողովրդին տվել իր անունը՝ արմեն--Արմենիա⁷ (արգոնավորդների մասին առասպելը ձևավորվել է մ.թ.ա. 13--12-րդ դդ.):

Ելնելով հայերի թրակիա-փռուգիական ծագման մասին հույն հեղինակների վերոհիշյալ տեղեկություններից, ինչպես նաև Եվրոպյան հնդեվրոպացիների նախահայրենիքը լինելու այն ժամանակ (19--20-րդ դդ.) ընդունված տեսակետից, ուսումնասիրողները (Պ. Յանսեն, Յ. Մարկվարտ, Պ. Կրեչմեր, Լեո, Ա. Խաչատրյան, Հ. Աճառյան) առաջ են քաշում այն տեսակետը, որ հայերի նախնիները (արմեններ) եկել են Բալկաններից, փռուգիացիների հետ, եգիպտական փարավոն Ռազմես 3-րդի (12-րդ դարի սկիզբ) արձանագրությունից հայտնի "ծովի ժողովուրդների" արևմուտքից-արևելք շարժման ժամանակ: Նշվում են նաև Արմենիոն⁸, Օրմենիոն⁹ քաղաքները Թեսալիայում, Արմենե-Հարմենե քաղաքը (Միտոպի մոտ), Արմենիոն լեռը Հալիս գետի ակունքների շրջանում և այլ տեղանուններ, որոնք սփռված են Բալկաններից Հայկական լեռնաշխարհ ընկած տարածքներում: Իսկ հյուսիսային Հունաստանում (Թեսալիա) գտնվող Պենոս գետը (այժմ Սալամբրիա), ըստ Ստրաբոնի, նախապես

կոչվել է Արաքս և նրա անունով էլ իբր Արմենոսը անվանակոչել է հայոց Արաքս գետը¹⁰: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եգիպտական աղբյուրների հիշատակած "ծովի ժողովուրդների գաղթի" ցուցակում¹¹ որպես գաղթողներ հայերը չեն հիշատակվում: Ի նկատի ունենանք նաև, որ ըստ նորագույն ուսումնասիրությունների հնդեվրոպացիների նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն ու նրան հարող տարածքներն են և այստեղից են էթնիկական տեղաշարժերի մի քանի ալիքներով հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը հայտնվել արևելքում, արևմուտքում և այլն:

19--20-րդ դարերում առաջ քաշված վերոհիշյալ տեսակետը՝ հայերի Բալկաններից եկած լինելու և երկիրն ու ժողովուրդը Արմենոս Թեսալացու անունով արմեն-Արմենիա կոչելու մասին, այսօր չի դիմանում ոչ մի քննության: Ընդհակառակը, հունական ցեղերն են Փոքր Ասիայով շարժվել դեպի Բալկաններ, իսկ նախահայրենիքում եղած տեղանունների գոյությունը շարժման ճանապարհին և նոր հայրենիքում միանգամայն բնական էր: Դրանք հիշողություններ էին նախահայրենիքի մասին: Խորենացու բացատրությունները հայ և արմեն անունների ծագման մասին երկար ժամանակ անվիճելի էին համարվում: Ուսումնասիրողների մի մասը անվերապահորեն ընդունում էր Խորենացու այս բացատրությունը, սակայն ժամանակ առ ժամանակ նաև փորձեր էին արվում նորովի բացատրելու հայ և արմեն անունների ծագումը: Այսպես. գիտնականների մի խումբ (Շպիգել, Չ. Կիպերտ, Ն. Դոլենս, Ա. Խաչատրյան) հայ անունը փորձում էր բացատրել հնդեվրոպական պըտի բառով, որը պետ, գլխավոր է նշանակում, իբր իրենց այդպես են կոչել եկվոր արմենները, որպեսզի տարբերվեն բնիկներից: Հետագայում, ըստ նրանց, պըտին ձևափոխվելով դարձել է հայ¹²: Պ. Յանսենը գտնում էր, որ հայ անունը առաջացել է հեթիթների (խեթեր) hat, hatio էթնիկական անունից t>j անցումով: Նա հեթիթներին նույնիսկ համարում էր հայեր¹³:

Փորձեր են եղել հայ անունը բացատրել Վանի թագավորության գլխավոր աստված Ալդի-Խալդիի (նաև Հալդի) անունով¹⁴: Ն. Մառը հայ անունը կապում էր մ.թ.ա. 6-րդ դարում հյուսիսից Հայաստան արշաված հանիոխներ կամ հենիոխներ ցեղի անվան հետ և այլն¹⁵:

Հայ պատմագրության մեջ, ինչպես արդեն նշվել է, արմեն անվան բացատրության առաջին փորձը պատկանում է Խորենացուն: Նշվել է նաև, որ ի տարբերություն հայ պատմիչների, հույն պատմիչները արմեն անունը կապում են արգոնավորող Արմենոսի անվան հետ:

Մի շարք ուսումնասիրողներ (Ժ. Դարմստետեր, Բոխարտ, Կ. Ա. դե Կարա, Կ. Բասմաճյան), ելնելով Աստվածաշնչի եբրայերեն բնագրում հիշատակված Միննի երկրանունից (Միննի անվանումը Աստվածաշնչի ասորական տեքստում փոխարինված է Հարմինի-Արմենիով), արմեն անունը ստուգաբանում են որպես սեմական ծագում ունեցող ցեղանուն, որի հիմքը մին կամ միննի արմատն է¹⁶: Սակայն ար- բաղադրիչի բացատրության ժամանակ նրանց կարծիքները տարբերվում են: Դարմստետերը ար-ը բխեցնում է Արարատ անունից նշելով, որ Ար և Մին(նի) բաղադրիչների միացումը կատարվել է արհեստականորեն, պարսկական պետական պաշտոնական լեզվում: Բոխարտը և Կ. Բասմաճյանը ար-ը բխեցնում են եբրայերեն har "լեռ" բառից, Կ. դե Կարան՝ քամյան kar "տեղ, բնակատեղի" բառից (կոկորդային "կ"-ի սղմամբ)¹⁷ և այլն:

Յ. Մարկվարտը գտնում էր, որ Արամ անունը պահպանել է հայերի նախնիների՝ արիմների (Հոմերոսի "Իլիականում" հիշատակված), էթնիկական անունը, և որ արմեն անունը կազմված է արմ (արիմ կամ արում) արմատից և ուրարտական ինի կամ ինա վերջածանցից¹⁸:

Լ. Շահինյանը ընդունելով Խորենացու բացատրությունները հայ և արմեն անունների ծագման վերաբերյալ, մերժում է մնացած բոլոր ոչ խորենացիական բացատրությունները (տե՛ս "Գիրքը դարերի խորքից" աշխատությունը)¹⁹:

Ինչպես տեսնում ենք բացատրությունները բազմաթիվ են, սակայն դրանց մեծ մասը հետագայում քննություն չքոնեց և չընդունվեց գիտական աշխարհում: Ավելի ընդունված տեսակետ համարվեց Խորենացու բացատրությունը՝ Հայկի անունով երկիրը Հայք, Հայաստան և Արամի անունով Արմենիա կոչելու մասին: Սակայն ժամանակի հետ առաջանում էին նոր հարցեր, իսկ գուցե՞ Հայկ նահապետն է իր անունը ստացել հայ, Հայք անունից, ե՞րբ է առաջացել հայ անունը, ե՞րբ է առաջացել արմեն անունը, ինչո՞ւ են օտարները մեզ արմեն անվանում, ո՞ր անունն է հնագույնը և այլն:

1970-ական թվականներին Մ. Գավուբյանի կողմից առաջ քաշվեց մի տեսակետ, որի համաձայն արմեն և հայ անունները ծագում են ար- արմատից, ընդ որում հայ անունը դիտվում էր իբրև ար-հար- հայ անցման հետևանք²⁰: Այս տեսակետը նոր ու հետաքրքիր էր: Բայց հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես արդեն նշվել է, հայ անունը այլ ծագում ու իմաստ

ունի, և որ այն կապված է Մայր Երկրի Հայա (Էա, Այա) աստվածուհու անվան հետ²¹, իսկ արմեն անունը՝ Արարիչ ԱՐ Աստծո անվան հետ:

Այժմ տեսնենք, թե որտեղ են հայերի ու Հայաստանի մասին եղած հնագույն հիշատակությունները, և գրավոր աղբյուրները ինչ անուններ են օգտագործել տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշխարհում ստեղծված պետական կազմավորումների համար: Հայաստանի մասին հնագույն հիշատակությանը հանդիպում ենք շումերական դյուցազնավեպում Արատտա անունով (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկիզբ):

Միջագետքի հնագույն ժողովուրդներից մեկի՝ շումեր ժողովրդի պատմությունը ուսումնասիրելու համար մեծ նշանակություն են ունեցել շումերական "Գիլգամեշ" դյուցազնավեպի հայտնաբերված վիպերգերը: Այդ վիպերգերը մեծ արժեք ունեն ոչ միայն շումերների, այլև հնագույն այլ ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Դյուցազնավեպում ներկայացված են շումերների մշակութային, տնտեսական ու այլ կարգի կապերն ու փոխհարաբերությունները հարևան ցեղերի ու պետությունների, այդ թվում հայոց հնագույն Արատտա պետության հետ: Հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում դյուցազնավեպի "Գիլգամեշը և անմահների երկիրը", "Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը", "Լուգալբանդան և Խուտում լեռը" ու այլ վիպերգեր, ուր բազմաթիվ վկայություններ ու հիշատակումներ կան "բարձր լեռների երկիր", "անմահների և սուրբ օրենքների երկիր"²² Արատտայի²³ մասին: Ինչպես տեսնում ենք, Հայկական լեռնաշխարհում ստեղծված հնագույն երկիրը գրավոր աղբյուրներում հիշատակվում է Արատտա անունով:

1970-ական թվականներին Սիրիայի հյուսիսում (Հալեպից 70 կմ հարավ), որտեղ հնում էրլա քաղաք-պետությունն էր գտնվում, պեղումների ժամանակ հայտնաբերվել են այդ պետության թագավոր Էբրիումի աքաղաղներով գրված արձանագրությունները:

Այդ արձանագրությունները, որ թվագրվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերով (մ.թ.ա. 24-րդ դար), անչափ կարևոր են հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության համար: Դրանք մեզ հայտնի հնագույն գրավոր աղբյուրներն են, որտեղ հանդիպում ենք և՛ հայ, և՛ արմեն(ն) անուններին: Էբրայի արձանագրության մեզ հետաքրքրող հատվածում թվարկված են իրեր, որոնք տրվել, նվիրվել են տարբեր մարդկանց Էբրիում թագավորի կողմից: Արձանագրության այդ հատվածները այդպիսին են. "բարձր որակի գործվածք, մեկ նուրբ գործվածք, մեկ բազմագույն գործվածք միջնորդ (լիագորված) հային (ha-a)..., մեկ ոսկե ձուլակտոր (20 սիկլեյ) հային...", այնուհետև. "մեկ գործվածք Մուրիին Արմ(ից), մեկ գործվածք, մեկ բարձր որակի բազմագույն հագուստ Մալումի համար Արմ(ից)"²⁴:

Ինչպես տեսնում ենք, հայ անունը այս արձանագրության մեջ օգտագործվել է որպես ցեղի անվանում. ha-a, իսկ՝ Արմ(ին)՝ որպես տեղանուն (երկիր, բնակավայր), Մուրի և Մալումի երկիրը: Հայ անվանը (Haja) որպես ցեղի անուն հանդիպում ենք նաև Ասորեստանի հնագույն մայրաքաղաք Աշշուրից հայտնաբերված արձանագրության մեջ, որը թվագրվում է մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներով: Այս արձանագրության մեջ հետաքրքրող մասը այսպիսին է. "այս երկու անոթները նախատեսված (ուր)-ա-մեացիների շուկայի (համար), ...հնգօրյա շաբաթում Աշշուր-Էննամի Թաշմետ աստվածուհու... Haja բնակիչը՝ հայը պատրաստեց"²⁵:

Հայաստանի մասին հաջորդ հնագույն հիշատակությանը հանդիպում ենք Աքադի թագավոր Նարամ-Սուենի (2236-2200) արձանագրություններում Արմանի անունով: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսին Սարգոն Աքադացուն (նաև Սարգոն Հին) հաջողվում է միավորել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից Միջագետքում հայտնված սեմական ցեղերին և ստեղծել Աքադ պետությունը: Վարելով նվաճողական քաղաքականություն, Սարգոն Աքադացուն (2316-2261) հաջողվում է ստեղծել ուժեղ պետություն: Այդ քաղաքականությունը շարունակում է նաև Սարգոնի թոռը՝ Նարամ-Սուենը: Խեթերեն գրված մի արձանագրությունից, որը հայտնի է "Նարամ-Սուենն ու իր թշնամիները" անունով, պարզվում է, որ Նարամ-Սուենի դեպի հյուսիս կազմակերպված մի արշավանքի ժամանակ նրա դեմ միացյալ ուժերով դուրս են եկել 17 դաշնակից երկրներ: Արձանագրության մեջ թվարկվում են այդ երկրների և թագավորների (առաջնորդներ) անունները²⁶: Թվարկված երկրների շարքում (11-րդը) հիշատակվում է Արմանի երկիրը, որի առաջնորդն էր Մադակինան: Արձանագրության մեջ թվարկված 17 երկրները տեղադրվում են Փոքր Ասիայի արևելյան (Խեթական պետություն) և Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասերում: Եղած տեղեկություններով հնարավոր չէ ճշտորեն որոշել բոլոր 17 երկրների տեղադրության հարցը, սակայն մի շարք երկրներ հնարավոր է տեղադրել որոշակի տարածքում: Այսպես. Hatti-ն՝ և Kanes-ը՝ տեղադրվում են Փոքր Ասիայի արևելյան մասերում, Amurru-

ն՝ Ասորիքում, Սևի-ն՝ Դիարբեքիից արևելք՝ Տիգրիսի արևելյան հոսանքների շրջանում, Hur SAG Eri-ն՝ Մայրիների լեռն է (երկիր), Կիլիկիայի Ամանոս լեռը²⁷: Ենթադրվում է, որ Nikki [...] -ն կարող էր Նիխիրի--Նիխիրիանին լինել (Արևմտյան Տիգրիսից հարավ, Քաշիարի լեռներում)²⁸: Արմանին աշխարհագրորեն համապատասխանում է Աղձնիք-Մասունին (ներառյալ Դիարբեքիի շրջանը): Այս տարածքը հետագա գրավոր աղբյուրներում հիշատակվում է Armana²⁹, Alzia, Alse (խեթական), Alzini, Alzi (ասուրական), Urme, Arme, Alze³⁰ (ուրարտական)³¹ անուններով:

Նարամ--Սուենի արձանագրության մեջ թվարկված երկրների շարքում Արմանին կենտրոնական դիրք էր գրավում: Այս առումով հետաքրքիր է Աղձնիքում (Դիարբեքիի շրջակայքում) հայտնաբերված Նարամ--Սուենի հաղթական կոթողը՝ վատ պահպանված արձանագրությամբ (աքաղերեն):

Արձանագրության մեջ կարդացվում է. "Աստվածային Նարամ-Սուենը, հզոր արքան (աշխարհի) չորս կողմերի...": Նարամ-Սուենի մեկ այլ արձանագրության մեջ (աքաղերեն) կարդացվում է. "Աստվածային Նարամ-Սուենը՝ հզոր արքան (աշխարհի) չորս կողմերի՝ նվաճողը Արմանիի..."³² (շարունակությունը ջարդված է): Հայտնաբերված մեկ այլ արձանագրություն (աքաղերեն) կարծես լրացնում է վերոհիշյալ արձանագրության պակասող մասը: Մարմարի վրա փորագրված այդ արձանագրության մեջ կարդացվում է. "Աստվածային Նարամ--Սուենը, հզոր արքան (աշխարհի) չորս կողմերի, նվաճողը Արմանիի և Իբլայի"³³: Նարամ--Սուենը մեծ կարևորություն է տվել Արմանիի նվաճմանը, այդ մասին հիշատակելով իր արձանագրություններում: Իսկ Աղձնիքում կանգնեցված հաղթական կոթողը վկայում է, որ հենց այդ տարածքում Նարամ--Սուենը կարող էր հանդիպել ու ճակատամարտ տալ 17 երկրների միացյալ ուժերին³⁴:

Նարամ--Սուենի արձանագրություններից հայտնի է դառնում նաև, որ Մարգոն Աքաղացին՝ Նարամ--Սուենի պապը, ևս արշավանք է ձեռնարկել դեպի Արմանի երկիր: Կրկնվող այս արշավանքները լավագույն ապացույցն են այն իրողության, որ Արմանին, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի այլ մասերի բնակիչները մշտապես ուժեղ հակահարված են տվել աքաղացիներին, ռազմական դաշինքի մեջ մտնելով հարևան ցեղերի ու պետությունների հետ (Էլամ):

Այսպիսով Աքաղի տիրակալ Նարամ--Սուենի արձանագրություններում հիշատակվող Արմանի անունը հայոց պետական կազմավորումներին տրվող հնագույն անվանումներից է (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կես)³⁵:

Հայկական Միջագետքի կենտրոններից մեկում՝ Կարքեմիշում (Միտանիի գլխավոր քաղաքներից) հայտնաբերված լուվիերեն հիերոգլիֆ արձանագրության մեջ (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ) հայ անունը վկայված է Haja ձևով³⁶ (որպես տեղանուն):

Ինչպես տեսնում ենք մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսից գրավոր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի բնակիչների համար օգտագործում են ն՝ հայ, և՛ արմեն անունները: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսից Հայկական լեռնաշխարհի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի, նաև ցեղային միությունների ու պետական կազմավորումների մասին հնագույն գրավոր աղբյուրները ավելի բազմաբնույթ ու բազմապիսի տեղեկություններ են հաղորդում: Դրանք Խաթթիի, Եգիպտոսի ու Ասորեստանի թագավորների արձանագրություններն են, որտեղ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների համար օգտագործվել են Հայասա, Ազզի, Նաիրի, Խուրրի, Միտանի, Նահարինի և այլ անվանումներ: Անդրադառնանք արձանագրություններում հիշատակվող անուններին: Այսպես. խեթական գրավոր աղբյուրները օգտագործում են Հայասա, Ազզի, Թեգարամա (նաև Թոգարամ)³⁷ անունները:

Ըստ արձանագրությունների Հայասա երկիրը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում՝ Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքներում, Եփրատ, Արաքս և Ճորոխ գետերի ակունքների շրջանում, մինչև Սև ծով: Խեթական թագավորներ Թուրիալիա 3-րդի (մոտ. 1400-1320), Սուպիլուլիումաս 1-ինի (1380-1340), Մուրսիլիս 2-րդի (1340-1320), Խաթթուսիլի 3-րդի (1275-1250) և այլոց արձանագրությունները պատմում են դեպի Հայասա երկիր կատարված արշավանքների մասին: Արձանագրություններում հիմնականում հանդիպում են երկրի անվան Hajasa ձևին, որի "հետիոտն զինվորներն ու կառավարողները" իրենց առաջնորդներ (թագավորներ) Մարիասի, Կարաննիի, Հուկաննայի և Անիասի գլխավորությամբ միշտ վճռական դիմադրություն են ցույց տվել խեթերին:

Խեթական արձանագրություններում Hajasa երկրանունը կարդալուց հետո շատ ուսումնասիրողներ (Է. Ֆոռեր, Պ. Կրեչմեր, Գ. Ղափանցյան)³⁸ անմիջական կապ են տեսնում հայ, Հայք, Հայաստան և Հայասա անունների միջև³⁹: Պ. Կրեչմերը լեզվաբանորեն հիմնավորեց, որ Hajasa անվան մեջ առկա է haja-hajo

հիմքը և -sa (- asa) տեղանվանակերտ խեթա-լուվիական վերջավորությունը⁴⁰: Ինչպես տեսնում ենք խեթերը հայերին անվանել են այնպես, ինչպես նրանց ինքնանվանումն է. հայ⁴¹: Հետևաբար, Հայասանը անվանակում էր հայերի երկիր:

Արձանագրություններում Հայասան երկրի համար օգտագործվում է նաև Ազգի անվանումը, որը Հայասանի գլխավոր նահանգն էր (տեղադրվում է ճորդի գետի ավազանում): Ազգի անվանումը ուսումնասիրողները կապում են հայերեն ազն՝ ցեղ, սերունդ, տոհմ, ազգ իմաստն ունեցող բառի հետ⁴²: Նույն ժամանակաշրջանի՝ (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես) գրավոր աղբյուրները (Ալալախ, Կանեշ, Մարի, Ամառնա) խոսում են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և Հայկական Միջագետքում (նաև Հյուսիսային Միջագետք, Վերին Միջագետք) կազմավորված մի նոր պետության՝ Միտանիի մասին:

Մ.թ.ա. 15--14-րդ դդ. Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասում՝ Ուրմիա (Կապուտան, Մանտիենե) լճի բլրաշատ ցածրավայրերում ապրող խուրրիական միտանի ցեղի թագավորներին հաջողվում է միավորել խուրրիական ցեղերին և ստեղծել ուժեղ ու հզոր Խուրրի-Միտանի պետությունը: Հնագույն գրավոր աղբյուրները Միտանիի համար օգտագործում են Hurri, Miittani, Majteni, Hanigalbat, Nahrin, Nhrjn⁴³ անունները⁴⁴: Այսպես. խեթական թագավոր Խաթթուսիլի 1-ինի (18-րդ դարի սկիզբ) բիլինգվա (խեթերեն, արադերեն) արձանագրություններում վկայություններ կան խուրրիների և խեթերի միջև տեղի ունեցած ռազմական ընդհարումների մասին: Այդ արձանագրությունների խեթական տեքստում երկիրը կոչվում է Hurri (ավելի հաճախ Hurla), իսկ արադականում՝ Hanikalbat նաև Haligalbat⁴⁵:

Արձանագրություններում վկայություն կա այն մասին, որ խեթերի հարձակմանը ենթարկված Կիցվատնայի (Կիլիկիա) և Հյուսիսային Միջագետքի մի շարք քաղաքների բնակիչներ օգնության համար դիմել են իրենց հզոր հարևանին՝ "խուրրի ռազմիկների թագավորին": Խեթական թագավոր Մուրսիլիա 1-ինը (մ.թ.ա. 16-րդ դարի սկիզբ) գրում է, որ հաղթել է "խուրրիների երկրների մարդկանց": Ամառնայից հայտնաբերված տեքստերից մեկում գրված է "խուրրի ռազմիկների թագավորի թագավորները" և այլն: Խուրրի-Միտանիի արքա Տուշրատան (1387-1367) եգիպտական փարավոն Ամենհոտեպ 3-րդին (1414-1383) ուղղված նամակներից մեկում (խուրրերեն) իր երկիրը անվանում է Hurriohe-խուրրիական, այն է՝ Hurri, մեկ այլ դեպքում՝ Mitani: Տուշրատան օգտագործում է նաև Խալիգալբատ անունը⁴⁶ (իր նամակի արադերեն տարբերակում): Խուրրի-Միտանիի այլ թագավորներ Սաուսադատտարը (1455-1430) և Մուտառնա 1-ինը (1404-1390) իրենց անվանում են Maitani-ի թագավորներ: Սաուսադատտարի հայտնաբերված կնիքներից մեկի վրա գրված է. "Սաուսադատտար, որդի Պարսադատտարի, արքա Մայտենիի"⁴⁷:

Եգիպտական 18-րդ հարստության (1660-1100) փարավոնների արձանագրություններում Խուրրի-Միտանի երկիրը (նաև Միլիա-Պաղեստինը) վկայված է H'rw ձևով, որը կարդացվում է խարրու կամ խուրրու⁴⁸ ձայնավորմամբ⁴⁹:

Եգիպտական տեքստերում և Ամառնայի գրագրություններում Միտանիի փոխարեն օգտագործվում է նաև Nhrn Նահարինի անունը⁵⁰ և այլն:

Այս պետությունն ընդունված է անվանել Միտանի, նաև Խուրրի-Միտանի (նախկինում՝ Հարրի Միտանի): Արձանագրություններում ասորա-բաբելոնական հս-ս-ur սեպարատուրը մի շարք ուսումնասիրողներ (Էդ. Մեյեր, Վայդներ, Ֆորեր, Վայսբախ) կարդում են har "խար" (նաև har), այլ ուսումնասիրողներ՝ (Հրոզնի, Ունգնատ) har "խուր" ձևով: Ավելի ուշ ընդունվում է պետության անվան Խուրրի-Միտանի ձևը: Երկրի անվան Խարրի (Հարրի) ընթերցումը կարծես լրացնում է Հայաստանի համար օգտագործվող Հարք, Հարիա (Թիգլաթպալասար 1-ինի արձանագրությունը), Հարմինույա (Դարեհ 1-ինի Բեհիսթունյան արձանագրության էլամական բնագիրը) անունների շարքը, իսկ Խուրրի (Հուրրի) ընթերցումը՝ Ուրարտու (Արարատ), Ուրմե (Արմե) և այլ անունների շարքը: Ինչպես տեսնում ենք, խուրրի (հուրրի) անունը ևս կապվում է ար (ուր) արմատի հետ (ԱՐ Աստծո պաշտամունքը) և հանդես գալիս իբրև Հայկական լեռնաշխարհի բնիկներին՝ հայերին տրվող անվանում: Ընդունված է, որ hurri-ն երկրի էթնիկ բնակչության անվանումն է, ցեղի ինքնանվանումը: Արձանագրությունների տեքստերից երևում է, որ ի տարբերություն միտանի անվան խուրրի անվանումը ավելի լայն ընդգրկում ունի և հանդես է գալիս իբրև հավաքական անուն: Այսպես. Միտանիի թագավորները կոչվում են "խուրրի ռազմիկների թագավորներ", Տուշրատան իր երկիրը անվանում է hurriohe "խուրրիական", իսկ ինքն իրեն՝ "խուրրիների թագավոր" և այլն: Նշենք նաև, որ շումերները Հյուսիսային Միջագետքի համար (ավելի ստույգ Տիգրիսի միջին ու վերին հոսանքների շրջանը, ապագա Խուրրի-Միտանիի տարածքը) օգտագործում են Subir, իսկ արադացիները՝ Subari,

Subartu կամ subartu անունները⁵¹: Այս դեպքում Սուրբի, Սուրբարի, Սուրբարտու կամ Շուրբարտու և Խուրբի անունները հանդես են գալիս որպես հոմանիշներ, օգտագործվելով նույն տարածքի (երկրի) և նույն ցեղերի (հայկական) համար: Միտանի-Մայտենի անունը մեծ նմանություն ունի Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերում ապրող մատյենի ցեղի անվան հետ, որոնց մասին մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից հիշատակում են հույն պատմիչներ Հերոդոտը, Մտրաբոնը և ուրիշներ: Հիշենք նաև Մաուսադատտար թագավորի վերոհիշյալ արձանագրությունը, որտեղ նա կոչվում է Մայտենիի (Միտանի) թագավոր: Մայտենին շատ նման է մատյենի անվանը: Ի դեպ, Մտրաբոնը Ուրմիա լիճը կոչում է Մանտիենե լիճ⁵²: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին Ուրմիա լճի ավազանում և նրանից արևելք կազմավորվում է Մաննա կամ Մատիանա (Աստվածաշնչի եբրայական բնագրում՝ Միննի) պետությունը: Կարելի է մտածել, որ Մաննա պետության ստեղծումը միտանի ցեղի նոր հաջողությունն էր:

Մ.թ.ա. 13-րդ դարից Հայկական լեռնաշխարհում ստեղծված պետական կազմավորումների համար ասորեստանցիները օգտագործում են նոր անուններ. Նաիրի⁵³, Ուրուատրի, Ուրատրի, Ուրարտու, նաև Ուրումու, Սուրբարտու (Շուրբարտու) Շուպրիա⁵⁴: Այսպես. Սալմանասար 1-ինի (1274-1245) արձանագրության մեջ, որտեղ նա պատմում է դեպի Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասեր կատարած իր արշավանքների մասին, առաջին անգամ հանդիպում ենք Ուրուատրի անվանը. "Իմ գահակալության տարին, ուրուատրիները ըմբոստացան իմ դեմ և ես բարձրացա նրանց հզոր լեռները"⁵⁵: Սալմանասար 1-ինի որդու՝ Թիկուլթի-Նինուրթայի (1243-1221) արձանագրության մեջ օգտագործվում է Նաիրի⁵⁶ անունը (Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան ընդարձակ տարածքները, ներառյալ Վանա լիճը (Նաիրիի ծով)): Թիզլաթալասար 1-ինի (1115-1077) արձանագրության մեջ ևս հանդիպում ենք Նաիրի անվանը. "Ընդարձակ Նաիրիի երկրին իր ողջ սահմանով ես տիրեցի": Նրա մեկ այլ արձանագրության մեջ կարդում ենք. "Ընդամենը Նաիրի երկրի 23 թագավորներ իրենց երկրներում իրենց մարտակառքերն ու իրենց գորքերը միավորեցին, կռիվ ու ճակատամարտ տալ ցանկացան..."⁵⁷:

Ադադնիրարի 2-րդի (911-890) և Աշուրնասիրպալ 2-րդի (883-859) արձանագրություններում Ուրարտու և Նաիրի անունները օգտագործվում են որպես համագոր անուններ, որն ավելի ուշ ժամանակաշրջանի արձանագրություններում դառնում է սովորական:

Մ.թ.ա. 8-րդ դարի վերջերին Ուրարտուն արդեն կազմավորված, ուժեղ պետություն էր, սակայն ասորեստանցիները շարունակում են օգտագործել և՛ Նաիրի, և՛ Ուրարտու անունները: Մարգոն 2-րդը (721-705) իր արձանագրություններում շարունակում է երկիրը կոչել Նաիրի, Ուրարտու, իսկ Վանա լիճը՝ Նաիրի երկրի ծով⁵⁸: Մարգոն 2-րդի արձանագրություններից հայտնի է դառնում նաև, որ նա իր արշավանքներից մեկի ժամանակ հասել է մինչև Արմարիլի (նաև Արմարիալի, տեղադրվում է Վանա և Ուրմիա լճերի միջև) և Այադու (Հայադու, հավանական տեղադրումը Վանա լճի հյուսիսային մասերում) երկրները⁵⁹:

Ուրարտուի առաջին թագավորները իրենք իրենց կոչել են Նաիրի երկրի թագավորներ: Մարդուրի 1-ին թագավորը (840-825) իր արձանագրության մեջ (ասուրերեն) գրում է. "Մարդուրիի արձանագրությունը, որդու Լութիպրի, մեծ արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, որի հավասարը չկա..."⁶⁰:

Անկասկած, Ասորեստանի թագավորների նման Ուրարտուի թագավորները ևս տարբերություն չեն դրել Նաիրի և Ուրարտու անունների միջև, որովհետև և՛ Նաիրին, և՛ Ուրարտուն բնակեցված էին նույն ցեղի մարդկանցով՝ հայերով: Ձգացվում է, որ Մարդուրին և ուրարտական մյուս թագավորները հպարտությամբ են իրենք իրենց կոչում Նաիրի երկրի թագավորներ:

Գիտական աշխարհում մեծ է այն ուսումնասիրողների թիվը (Ա. Գյոտցե, Ջ. Գարսթենգ, Գր.

Ղափանցյան, Բ. Պիտրովսկի), որոնց կարծիքով "ասորեստանցիները Խուրբի երկիրը կոչում էին Նաիրի, իսկ Ուրարտու պետության կազմավորումը տեսնում են խուրբիական քաղաքական տրադիցիաները"⁶¹: Ա. Գյոտցեն համոզված էր, որ խուրբիները, միտանիները և ուրարտացիները մեկ ժողովուրդ են, պարզապես նրանք ներկայացնում են տարբեր պետական կազմավորումներ: Նա գրում է նաև, որ "Նաիրի երկրների խուրբիները մ.թ.ա. 9-րդ դարում միավորվեցին և Լութիպրի որդի Մարդուրի գլխավորությամբ ստեղծեցին Ուրարտու պետությունը"⁶²:

Ինչպես տեսնում ենք, մ.թ.ա. 13-րդ դարից սկսած ասուրական գրավոր աղբյուրները Նաիրի անվան հետ օգտագործել Ուրուատրի, Ուրատրի և Ուրարտու անունները (վաղուց արդեն ընդունված է, որ Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է, նորից հիշենք, որ Աստվածաշնչի եբրայական բնագրում օգտագործվում է երկրի անվան Արարատ ձևը): Մ.թ.ա. 9-րդ դարից ասուրական

արձանագրությունները սկսում են խոսել Հայկական լեռնաշխարհում կազմավորված նոր, ուժեղ պետության՝ Ուրարտուի մասին (նաև՝ Բիայնիլի, Վանի թագավորություն, Արարատի թագավորություն): Այս նոր պետության երևան գալը Խուրրի-Միտանիից հետո անսպասելի չէր: Դեպի Հայկական լեռնաշխարհ Ասորեստանի թագավորների հաճախակի կազմակերպվող արշավանքները դարձյալ ստիպում են միավորվել հայկական ցեղերին և ստեղծել մեկ այլ ուժեղ, կենտրոնացված պետություն: Այս խնդիրը հաջողությամբ են իրագործում Ուրարտուի թագավորներ Իշպուինին (825-810), Մենուան (810-786), Արգիշտի 1-ինը (786-764), Սարդուր 2-րդը (764-735) և ուրիշներ: Նրանց հաջողվում է միավորել Հայկական լեռնաշխարհի բոլոր մեծ ու փոքր պետական կազմավորումներին, ցեղերին ու դառնալ ժամանակի հզոր պետություններից մեկը Արարատ (Ուրարտու) անունով: Ուրարտական թագավորները իրենց արձանագրություններում երկիրն անվանում են Բիայնիլի Biainili, որն առանց -իլի տեղանվանակերտ մասնիկի (Արգիշտիիսինիլի, Մենուաիսինիլի) կարդացվում է Բիայն, Biayn⁶³, Վանի բարբառում՝ Վիան, Վան: Սա այն դեպքերից է, երբ կազմավորվող պետությունը կոչվել է մայրաքաղաքի անունով՝ Վանի թագավորություն:

Ուշադրություն դարձնենք նաև ուրարտական արքայացանկի անուններին: Այն սկսվում է Արամ (Արամե) և ավարտվում էրիմենա (Արմենակ) անուններով: Հայկական՝ հնդեվրոպական հենք ունեն նաև Սարդուրի (Ս-արդուրի), Մենուա (man, men), Արգիշտի (Ար-Արա), Ռուսա (Ուրսա) և այլ անուններ, որոնք վկայում են նաև այդ արքայատոհմի հայկական լինելը: Երիմենայից (մոտ. 625-617) հետո (հիշատակվում են նաև Ռուսա 3-րդ և Ռուսա 4-րդ թագավորները, որոնց մասին քիչ են տեղեկությունները) Ուրարտու--Հայաստանում հավանաբար տեղի է ունեցել արքայատոհմի փոփոխություն, և իշխանությունը մ.թ.ա. 4-րդ դարի սկզբներից անցել է Երվանդունիներին (Երվանդ 1-ինը իշխել է 580-560 թթ.):

Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդների, այդ թվում հայերի վաղ շրջանի պատմության ուսումնասիրման համար կարևոր գրավոր աղբյուր է Աստվածաշունչը (մ.թ.ա. 13-րդ - մ.թ. 2-րդ դդ.): Աստվածաշունչում Հայաստանի մասին առաջին հիշատակությունը այսպիսին է. Ասորեստանի Մենեքթրիմ թագավորի (705-681) որդիները՝ Ադրամեղեքը և Սարասարը սպանում են իրենց հորը և փախչում Արարատի երկիր⁶⁴: Այնուհետև "Դրօշակ բարձրացրեք երկրի մեջ, փող հնչեցուցեք ազգերի մեջ, նրա դեմ պատրաստեցեք ազգերին, հրավիրեցեք նրա դեմ Արարատի, Միսինի ու Ասքանազի թագավորությունները"⁶⁵: Աստվածաշունչի այս հատվածը թվագրվում է մ.թ.ա. 594-592 թթ.-ով: Ի տարբերություն Երեմիայի մարգարեության եբրայական բնագրի, ասորական տարբերակում Արարատ ու Միսինի անունները փոխարինվել են Հարմինի-Արմինի անունով⁶⁶: Անկասկած է, որ երկու դեպքում էլ նկատի ունի Արարատի թագավորությունը՝ Ուրարտուն, որն այդ ժամանակներում դեռ պահպանում էր ուժեղ երկիր լինելու իր համբավը և ինչպես տեսնում ենք, Երեմիան օգնության է կանչում նրան Բաբելոնը կործանելու համար: Նշենք նաև, որ Եսայիի մարգարեության Կումրանյան ձեռագրերում Արարատը հիշատակվում է hwrrt Ուրարատ ձևով: Աստվածաշունչը Հայաստանի համար օգտագործում է նաև "տուն Թորգոմայ" անունը⁶⁷:

Հունական գրավոր աղբյուրներում հայերի մասին հնագույն հիշատակությանը հանդիպում ենք Հոմերոսի մոտ՝ արիմ ձևով (մոտ մ.թ.ա. 12-րդ դար)⁶⁸: Ըստ Հոմերոսի "Իլիականի", արիմները ապրել են Արգեոս լեռան և Մաժակ (Կեսարիա) քաղաքի շրջակայքում: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից հույն պատմիչները (Հերոդոտ, Քսենոփոն, Դ. Միկիլիացի, Պոլիբիոս, Ստրաբոն) Հայաստանի համար օգտագործում են Արմենիա անունը:

Հայաստանի պատմության հնագույն շրջանի, ինչպես նաև հայ և արմեն անունների ծագման հարցերի ուսումնասիրության համար շատ կարևոր է պարսից Դարեհ 1-ին արքայի Բեհիսթունյան եռալեզու (տրիլինգվա) արձանագրությունը, որտեղ Հայաստանի համար օգտագործվել են Armina (հին պարսկերեն), Urastu (բաբելերեն) և Harminuya (ելամերեն) անունները⁶⁹:

Մեզ հայտնի հնագույն գրավոր աղբյուրները վկայում են, որ հայոց պատմությունն ընդգրկում է ավելի քան 6-7 հազար տարվա պատմություն. շումերների կողմից վկայված Արատտա երկրից մինչև մեր օրերի Արմենիա--Հայաստանը: Այդ հազարամյակների ընթացքում մենք հայտնի ու անհայտ, շատ հեռու և մոտ շատ հարևաններ, բարեկամներ ու թշնամիներ ենք ունեցել: Նրանք մեզ կոչել են՝ արմեն, արման, հար, հայ, խուրրի, ուրարտացի, նաիրցի..., իսկ մեր երկիրը՝ Արատտա, Արարատ, Արմանի, Խուրրի, Հայասա, Նաիրի, Ուրարտու, Արմենիա...: Օտարները մեր անունը հարմարեցրել են իրենց լեզվին, հաճախ նաև խեղաթյուրել ու աղավաղել այն⁷⁰: Այդ պատճառով մասնագետներից մեծ ջանքեր են պահանջվում այդ անունների մեջ ճանաչելու հայերին ու հայոց երկիրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերոհիշյալ բոլոր անունները մեր ցեղի ու մեր երկրի տարբեր անուններ են: Նրանք

ունեն նույն իմաստը, քանի որ վերաբերում են նույն ցեղին՝ հայերին ու նույն երկրին՝ Հայաստանին: Անունների այս բազմազանությունը միանգամայն բնական է մեր անցած երկարատև պատմության ճանապարհին: Հիշենք, որ Հայաստանը ընդարձակ երկիր էր, ուներ բնակչիմայական բազմազան պայմաններ և այստեղ ապրող մեր նախնիները միմյանցից բաժանված են եղել բարձր լեռներով, անդնդախոր ձորերով, կիրճերով, արագահոս գետերով ու անտառներով, որը բնականաբար դժվարացրել է միմյանց հետ հաղորդակցվելը: Այս պայմաններում Հայկական լեռնաշխարհի այս կամ այն հատվածում կարող էին առաջանալ միմյանցից անջատ, տարբեր պետական կազմավորումներ: Այսպես, նույն ժամանակահատվածում են առաջացել (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես) Խուրրի-Միտանի (հարավ-արևմուտք) և Հայասա-Ազգի (հյուսիս-արևմուտք) պետությունները: Ստեղծված պետությունը բնականաբար ցանկացել է իր գերիշխանությունը տարածել ողջ ցեղի վրա, միավորելով նրանց ու երկիրը: Այսպես է եղել Ուրարտուի՝ Վանի թագավորության ժամանակ, երբ Վանի արքաներին հաջողվել է միավորել Հայկական լեռնաշխարհի բոլոր ցեղերին ու ցեղային միավորումներին: Այդպես է եղել նաև մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջերին, երբ նոր մեծ հաջողության է հասել հայոց Տիգրան Մեծ արքան (95 -55), որին նույնպես հաջողվել է միավորել հայոց բոլոր մեծ ու փոքր պետական կազմավորումներին, ցեղերին և ստեղծել հզոր պետություն: Եղել են նաև կամավոր միավորման դեպքեր: Այդպես է եղել, երբ հայոց աշխարհին սպառնացել է թշնամին: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսի խեթական գրավոր աղբյուրները հայտնում են, որ իրենց դեմ կռվում են "խուրրի ռազմիկների թագավորները", Ամառնայից հայտնաբերված արձանագրությունների մեջ վկայություն կա "Խուրրի ռազմիկների թագավորի թագավորների" մասին և այլն: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ դեռ չէր կազմավորվել խուրրիների ուժեղ պետությունը՝ Միտանին: Իսկ ասորեստանյան աղբյուրները հայտնում են, որ իրենց արշավանքի ժամանակ միավորվել ու ռազմական դաշինքի մեջ են մտել Նաիրյան 23, ապա 43 ու 60 ցեղային միություններ⁷¹: Հիշենք, որ ունեցել ենք Սյունիքի, Լոռու, Կարսի, Աղվանքի թագավորություններ, ինչպես նաև՝ Ղարաբաղի մեկիքություն: Տարբերությունն այն է, որ Վանի թագավորները և Տիգրան Մեծը կարողացել են միավորել ամբողջ Հայաստանը և ստեղծել ուժեղ պետություն⁷²:

Ամփոփենք: Հնագույն գրավոր աղբյուրները Հայաստանի համար օգտագործում են ԱՐՄՍՍԱ (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ, շումերական դյուցազնավեպ) ԱՐԱՐԱԴ/ԱՐԱՐԱՍ, ՀԱՐՔ, ՀԱՅՔ, ԱՐՄԵՆԻԱ (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կես, Մ. Խորենացի), ԱՐՄԵ(ն), ՀԱՅ ԿԱ-Ա, (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կես, Էբլայից հայտնաբերված գրավոր աղբյուրներ), ԱՐՄԱՆԻ (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջ, արքայական գրավոր աղբյուրներ), ՀԱՅԱՍՍԱ, ԱՁՁԻ, ԽՈՒՐՐԻ, ՄԻՏԱՆԻ, ՆԱՀԱՐԱԻՆԻ, (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես, խեթական, եգիպտական, խուրրիական գրավոր աղբյուրներ), ՆԱԻՐԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ՍՈՒՐԱՐՏՈՒ, (մ.թ.ա. 2-րդ--1-ին հազարամյակի սկիզբ, ասորական գրավոր աղբյուրներ), ԲԻԱՅՆԻԼԻ (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ, ուրարտական գրավոր աղբյուրներ) ԱՐԻՄ (մ.թ.ա. 12-րդ դար, "Իլիական"), այնուհետև ԱՐՄԵՆԻԱ (մ.թ.ա. 1-ին հազարամյակի կես, հունական գրավոր աղբյուրներ), ԱՐՄԻՆԱ (հին պարսկերեն), ՈՒՐԱՇՏՈՒ (բաբելոնյան), ՀԱՐՄԻՆՈՒՅՄ (էլամերեն) (մ.թ.ա. 1-ին հազարամյակի կես, Դարեհ 1-ինի Բեհիսթունյան եռալեզու արձանագրություն), ԱՐԱՐԱՍ (մ.թ.ա. 7--6-րդ դդ., Աստվածաշունչ) և այլն:

Ինչպես տեսնում ենք մեր երկրի հնագույն անունների մեջ մեծ թիվ են կազմում Ար-ով սկսվող անունները. Արատտա, Արարատ, Արմանի, Ուրարտու (Արարատ), Արմինա, Արմենիա և այլն: Հնագույն այս անունները կապված են ԱՐ Աստծո անվան հետ, նորից փաստելով այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհը Արարիչ ԱՐ Աստծո պաշտամունքի հնագույն երկիրն է:

1. Ըստ Ղևոնդ Ալիշանի հաշվարկների Հայկը Բելին հաղթել է մ.թ.ա. 2492 թ. (4494 տարի առաջ), Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, հ. Ա, էջ 95-96:
2. Մ. Խորենացի, էջ 45, 47: Հայկ Նահապետը ամենայն հավանականությամբ եղել է իրական անձ, "հսկաների մեջ էլ քաջ ու երևելի": Հավանաբար հայոց պատմության ինչ-որ փուլում Հայկ Նահապետն է առաջնորդել հայոց զորքը թշնամու՝ տվյալ դեպքում Բել Նեբրովթի դեմ: Արդեն նշվել է, որ ըստ Ալիշանի հաշվարկների Հայկը Բելին հաղթել է մ.թ.ա. 2492 թ.: Սա այն ժամանակաշրջանն է, երբ սեմական ցեղերն արդեն հաստատվել էին Միջագետքի հարավային մասերում, ստեղծել էին Աքադ պետությունը և փորձեր էին անում ներխուժել նաև Հայկական կամ Վերին Միջագետք ու Հայկական լեռնաշխարհ: Այդ արշավանքներից մեկի ժամանակ նրանց դեմ դուրս է եկել Հայկը, առաջնորդելով հայոց միացյալ ուժերը: Ճակատամարտում Հայկը նետահարել է Բելին ու ապահովել հայոց հաղթանակը: Հայկը աչքի է ընկել ոչ միայն իր քաջությամբ ու արիությամբ, այլև շիտակությամբ ու

ազնվությամբ և խոր հետք է թողել ժողովրդի հիշողության մեջ: Դա հիմք է տվել Մար Աբասին, Խորենացուն և մյուս պատմիչներին Հայկին համարելու հայոց նախնին: Նշենք, որ միջնադարի հայ թարգմանիչները Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Օրիոն համաստեղության անունը փոխարինել են Հայկ անունով: Հետևաբար կարելի է ասել, որ Հայկ անունը առաջացել է հայ ցեղանունից և նշանակում է հայ ցեղի մարդ (-կ մասնիկը հավանաբար մնացորդն է -իկ մասնիկի):

3. Մ. Խորենացի, էջ 53: Արամի ու նրա քաջագործությունների մասին Խորենացին մեծ սիրով գրում է, որ Արամը հաղթական պատերազմներ է վարել Նինոսի, Պայապիս Քաադյայի, Բարշամի, Նյուբար-Մադեսի և այլոց դեմ ու ընդարձակել հայոց աշխարհի սահմանները: Պատմագրության մեջ Նինոսը նույնացվում է Մալմանասար 3-րդի (858-824) հետ: Ասորեստանի մեկ այլ թագավոր Աշշուր-Դան 2-րդը (մոտավորապես մ.թ.ա. 10-րդ դարի կեսեր) նույնացվում է Պայապիս Քաադյայի հետ (Մ. Չամչյան, Հայոց պատմություն, Երևան, 1984, հ. 3, Ժամանակագրություն, էջ 22-32, Վ. Խաչատրյան, Հայաստանը մ.թ.ա. 15--7-րդ դդ., Երևան, 1998, էջ 20), իսկ Թիքուլթի--Նինուրթա 2-րդը (890-884) Բարշամի (հետ Վ. Խաչատրյան, էջ 107):

Մալմանասար 3-րդը իր արձանագրություններից մեկում, որը պատմում է դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքներից մեկի մասին, գրում է, որ հաղթել է իր դեմ դուրս եկած ուրարտացի Արամուին և նվաճել նրա Սուգունիա ամրոցն ու Արծաշկու քաղաքը (ԸԹԼԼձ, 27 (I, 23), 27 (II, 45)): Փաստերի համադրությունը թույլ է տալիս մտածելու, որ Խորենացու աշխատության մեջ վկայված Արամն ու Նինոսը, "ուրարտացի" Արամուն և Մալմանասար 3-րդն են: Հայտնի է, որ Ուրարտուի հզորության սկիզբը դրվել է Արամե թագավորի ժամանակ (860-840): Խորենացու աշխատության մեջ Արամը բազմաթիվ քաջագործություններ է կատարել: Կարելի է մտածել, որ Խորենացու Արամը իր կատարած գործերով ընդհանրացրել է հայոց այս պետության Ուրարտուի ստեղծման ողջ պատմությունը, իր մեջ ներառելով նաև մյուս արքաների քաջագործություններն ու կատարած գործերը: Խորենացին նշում է նաև, որ Ասորեստանի արքունական բուն մատյաններում տեղեկություններ չեն պահպանվել Արամի քաջագործությունների մասին, քանի որ կարևոր չի համարվել գրել օտար թագավորների սխրանքների մասին: Ավելին, այրել են եղած այդպիսի մատյանները: Մար Աբաս Կատինայի մատյանից հայտնի է դառնում, որ արքունի դիվանում Արամի մասին գրված պատմությունները ժողովվել են գուսանական երգերից, փոքր ու աննշան մարդկանց ձեռքերով:

4. Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 1-7, 12:

5. Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 17-18:

6. Ջրույցի նախնական տարբերակներում արգոնավորդները ուղևորվում են Այա (Էա) երկիր, իսկ առասպելի ամբողջական տարբերակի մշակման հեղինակ Պինդարոսը (մ.թ.ա. 5-րդ դար) Այա-Էա երկիրը նույնացրել է Կողքիսի (Կոլխիդա) հետ (ՄԾՄ, I, էջ 98-99, Դիցաբանական բառարան, էջ 33-34):

7. Ստրաբոն, Աշխարհագրություն, Երևան, 1940, XI, գլ. 44, 12 (էջ 33, 61-62):

8. Ստրաբոն, XI, գլ. 44, 12 (էջ 61):

9. Հովերոս, Իլիական, II, 2, 734:

10. Ստրաբոն, էջ 63, (XI, 44.13):

11. И. Дьяконов, Предистория армянского народа, Ереван, 1968, стр. 103-104, Ancient Records of Egypt, Chicago, 1927, III, IV.

12. Ն. Դոլենս, Ա. Խաչ, Պատմութիւն հին հայերի, Թիֆլիս, 1909, էջ 11:

13. P. Yensen, Hettiter und Armenier, Heidelberg, 1898, Հանդես Ամսօրեայ, 1898, էջ 277:

14. Հայ Ժողովրդի Պատմություն, Երևան, 1961, էջ 105-108:

15. Նոր ուսումնասիրություններից նշենք Հ. Կարազեղոյանի բացատրությունը: Նա հայ էթնոնիմը և Հայք տեղանունը կապում է ուրարտական արձանագրություններում հիշատակված էթիու (չվկայված ձևը էթիո) երկրի անվան հետ (Հ. Կարազեղոյան, էջ 173):

16. Կ. Ա. դե Կարա, Արմենիա անուան ստուգաբանությունն ու հայ ազգի ծագումն, Բազմավեպ, 1899, 12, էջ 575-576:

17. Կ. Բասմաճեան, Հայք ս. գրոց մեջ, Բազմավեպ, 1899, 12, էջ 63:

18. Հ. Մանանդյան, Քննական տեսության հայ ժողովրդի պատմության, Երևան, 1977, էջ 26:

19. Գ. Ջահուկյանը Արմեն անունը կապում է արմ(ն) "արմատ", գ-արմ, "ցեղ, սերունդ", արմատ "արմատ, ցեղ, զարմ, հիմք" բառերի հետ (Գ. Ջահուկյան, 1987, էջ 287-288):

20. Մ. Գավուրջյան, Արմեն ու հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրոյթ, 1973, էջ 271:

21. Հայ անունը Հայա (Էա, Այա) աստծո անվան հետ են կապում նաև Ալ. Վարպետյանը (Ինքնություն, Երևան, 1993, էջ 56-57) և Ա. Մովսիսյանը (Սրբազան լեռնաշխարհ, Երևան, 2000, էջ 36-38):

22. И. Канева, ВДИ, 1964, 4, стр. 208.

23. Արատտա պետության տեղադրության հարցի մասին կան տարբեր տեսակետներ: Վկայակոչելով շումերական դյուցազնավեպի "Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը" վիպերգի այն հիշատակությունը, որ Շումերից Արատտա ճանապարհը անցնում էր Էլամի Սուգա և Մնշան երկրներով (քաղաքներ), նաև որ Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի (721-705) արձանագրության մեջ հիշատակություն կա Ուրմիա լճի ավազանում գտնվող Արատտա անունով գետի մասին (АВВИУ, 49(6)), որոշ ուսումնասիրողներ՝ Ս. Կրամերը (*The Sumerians*, Chicago, 1963), Բ. Կաննան (նշված հոդվածը), Վ. Մասսոնը (*Средняя Азия и Древний Восток*, М-Л, 1964) և ուրիշներ Արատտան տեղադրում են Շումերից արևելք ընկած տարածքներում՝ Իրանում: Ս. Կրամերը Արատտան տեղադրում է նաև Ուրմիա լճի և Կասպից ծովի միջև ընկած տարածքում: Սակայն շումերական դյուցազնավեպի ավելի մանրամասն և ուշադիր ուսումնասիրությունները թույլ են տալիս նաև այլ տեսակետ առաջ քաշել: Այսպես, ըստ Ս. Գավուրջյանի՝ Արատտան գտնվում էր Հայկական լեռնաշխարհում ("Արմենիա, Սուբարտու, Սումեր", Պեյրոթ, 1988): Արատտան Հայկական լեռնաշխարհում են տեղադրում նաև Ա. Մովսիսյանը (Արատտա, Երևան, 1990), Է. Դանիելյանը (*История Армении*, Ереван, 1999) և ուրիշներ:

Այսպիսով իր անվամբ (Արատտա), շումերական դյուցազնավեպում նկարագրված աշխարհագրական դիրքով (բարձր լեռների երկիր), մետաղահանքերով ու շինարարական նյութերով հարուստ երկիր լինելով, տաճարներ կառուցելու փորձ ու հմտություն ունեցող մարդկանց հայրենիքը լինելով ("Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը" վիպերգում Շումերի Ուրուկ քաղաքի տիրակալ Էնմերքարը Էնլիլ աստծուն նվիրված տաճար է կառուցում և ցանկանում, որ այն կառուցեն "սուրբ ծեսերի երկիր"՝ Արատտայի մարդիկ և բնորոշ այլ հատկանիշներով Արատտան վստահորեն կարելի է տեղադրել Հայկական լեռնաշխարհում, այն համարելով նաև հայոց հնագույն պետական կազմավորում:

24. В. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимну Ва(х)агну, д'Р, 1983, 4, չ3 31: Ha-a-ն որպես էթնոնիմ և տեղանուն Վ. Իվանովը կապում է հայերի հետ և ընթերցում Ha-ja:

25. В. Иванов, д'Р, 1983, 4, չ3 31:

26. В. Hrozni, Naram-sin et ses ennemis d' apres un texte Hittite, <Archiv orientalni>, 1929, Vol. 1, N1, pp. 66-76, Ս. Գավուրջյան, 1973, էջ 10-12:

27. В. Hrozni, նշվ. աշխ., էջ 69-70, Լ. Բարսեղյան, Հնագույն ցեղային միությունը Հայաստանում, Տեղեկագիր, 1962, 1:

28. Ս. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե Շուպրիա երկրում, ՊԲՀ, 1958, 3, էջ 66:

29. Խեթական թագավոր Թուդիսալիա 4-րդի (1250-1220) տարեգրության մեջ հիշատակվում է Armana երկրանունը, որը նույնացվում է Արմե անվան հետ (А. Кифшин, Географические понятия древних шумеров во времена пагеси Гудеа, ПС, 13, 1965, стр. 65): Ասորեստանի թագավոր Թիզլաթալասար 1-ինի (1115-1077) արձանագրության մեջ հիշատակվում է Urume ժողովրդանունը (ԸԹԼԼձ, I, (II, 89)):

30. Ուրարտական թագավոր Մենուայի (810-786) արձանագրության մեջ օգտագործվել է Urmeuhi, Արգիշտի 1-ինի (786-764) արձանագրության մեջ՝ Urme, Սարգուրի 1-ինի (764-735) արձանագրության մեջ՝ Arme անունները (ձԽԾ, 40, 128A, 156D):

31. Ժամանակաշրջանը շեշտելու նպատակով աշխատության մեջ Արարատի թագավորության (նաև Վանի թագավորություն, Բիսյնիլի) համար օգտագործվում է ասուրական արձանագրություններից հայտնի հայոց այս պետության նաև Ուրարտու անվանումը:

32. G. Barton, The Royal Inscripticns of Sumer and Akkad. London, 1929, p. 141: Ս. Գավուրջյան, 1973, էջ 17-18:

33. G. Barton, 1929, էջ 139: Ս. Գավուրջյան, 1973, էջ 30:

34. Նշենք, որ Նարամ--Սուենը սպանվել է Կորդվաց լեռների բնակիչների՝ կուտիների (գուտիներ) հետ տեղի ունեցած մի ճակատամարտում մոտ. մ.թ.ա. 2200 թ., երբ լեռնական կուտիական ցեղերը իրենց առաջնորդ Էնրիդավիզիրի գլխավորությամբ արշավել են Միջագետք՝ Աքադի թագավորություն:

Միպպար քաղաքում կանգնեցրած արձանագրության մեջ, Էնրիդավիզիրը իրեն անվանում է "աշխարհի չորս կողմերի թագավոր", իսկ սա այն տիտղոսն է, որով իրեն մեծարում էր Նարամ--Սուենը (ԼԺԹ, I, էջ 253, 255): Կարելի է մտածել, որ շարունակվում էր Հայկական լեռնաշխարհ--սեմականացող Միջագետք հակամարտությունը, պայքարի կենտրոնը տեղափոխվել էր Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասեր և խուրրի-հայկական ցեղերը (սուբարիներ, կուտիներ) փորձում էին օգնել առաջին բռնապետական միապետության՝ Աքադի տիրապետության տակ գտնվող, շատ վաղուց Միջագետքում հաստատված իրենց ցեղակիցներին: Մոտ մ.թ.ա. 2176 թ. կուտիներին հաջողվել է իրենց տիրապետությունը հաստատել Միջագետքում: Այդ հաջողությանը նպաստել է նաև այն հանգամանքը,

որ նրանք դաշնակիցներ են ունեցել արքայական պետության ներսում՝ հանձինս շումեր քրմության ու բնակչության մի մասի: Կուտիները մոտ 100 տարի Միջագետքը կառավարել են շումեր կամ արքայ կառավարիչների (հաճախ ընտրված) միջոցով: Կուտիների դեպի Միջագետք կատարված արշավանքների մասին տե՛ս նաև Ա. Մովսիսյանի "Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը" ուսումնասիրությունը, Երևան, 1997:

35. 19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին ընդունված էր այն տեսակետը, որ հնդեվրոպացիների հայրենիքը գտնվում է Եվրոպայում: Երբ Նարամ--Սուենի արձանագրություններում կարդացին Արմանի (երկիր) անունը, ուսումնասիրողներից շատերը ոչ միայն այն չտեղադրեցին Հայկական լեռնաշխարհում, այլև չէին ցանկանում որևէ կապ տեսնել Արմանի, Արմենիայի ու հայերի միջև: Ուսումնասիրողներից Բ. Հրոզնիս (Historie de l'Asie Ant'erieure, Paris, 1947, p. 110), Բ. Դյակոնովը (История Мидии, Москва, 1956, стр. 126-129) և ուրիշներ Արմանին տեղադրում են Հալեպի տեղում: Արմանին Հայկական լեռնաշխարհում չտեղադրելը և հայերի հետ չկապելը հետևանք էր այն բանի, որ այդքան վաղ հիշատակված Արմանի-Արմենիան չէր տեղավորվում այն "տեսության" մեջ, որի համաձայն իբր հայ-արմենները Հայկական լեռնաշխարհ եկել են Թեսալիայից մ.թ.ա. 2--1-ին հազարամյակներում: Իբրև հակափաստարկ նշվում է նաև, որ "Նարամ--Սուենն ու իր թշնամիները" արձանագրությունը խեղդեցնում է և Նարամ--Սուենի ժամանակներին չի վերաբերում: Այս դեպքում հիշենք, որ արձանագրության մեջ հիշատակություն կա խեթերի մասին ու խեթերը կարող էին այն թարգմանել իրենց լեզվով նաև ավելի ուշ և այլն: Ի տարբերություն վերոհիշյալ ուսումնասիրությունների այլ ուսումնասիրողներ Արմանին տեղադրում են Հայկական լեռնաշխարհում: Ա. Կիֆշինը Արմանին նույնացնում է Արմեի հետ և տեղադրում Տիգրիսի վերին հոսանքների ու Վանա լճի շրջակայքում (А. Кишшин, ПС, 13, 1965, стр. 64-65): Հայ ուսումնասիրողներից Հ. Ժամկոչյանը (ՀԺՊ, պր. 1, 1961, էջ 116), Մ. Գավուքյանը (1973, էջ 31), Ա. Մովսիսյանը (Արմանի-Արմի երկիրն ըստ արքայական և էրլայական աղբյուրների, "Հայկագետն հայագիտական հանդես", հ. ԺԳ, Պեյրուր, 1993, էջ 113-127) և ուրիշներ Արմանին տեղադրում են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում՝ Սասուն-Աղձնիքի շրջակայքում: Նոր ուսումնասիրությունները կասկած չեն թողնում, որ Արմանին Արմենիան է: Արմանի անունով այլ ցեղ կամ երկիր չկա Առաջավոր Ասիայում: Իսկ միջագետքյան մշակույթի ժառանգորդներից արաբները այսօր էլ հայերին ու նրանց երկիրը անվանում են Արմանի:

36. В. Иванов, д'Р, 1983, 4, չ3 30-33:

37. Թեգ-Արամա (Թեգարամա) անունը բաղկացած է թոգ, թեգ և արամա-արամա բաղադրիչներից, որոնցից առաջինը նշանակում է "ազգ, ցեղ, տուն, երկիր", իսկ երկրորդը՝ ցեղանուն է: Թեգարամա նշանակում է արամա-արմենների ցեղ, ազգ, երկիր, տուն (ՀԺՊ, 1961, պր. 1, էջ 121): Թեգարամա կամ Թոգարամա անունը նույնացվում է Աստվածաշնչի եբրայական բնագրի Թոգարամա երկիր (Եզեկիել, ԻԷ, 14), ասուրա-բաբելական արձանագրություններից Թիլ-Գարիմմու և Աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ հիշատակվող Տունն Թորգոմա երկրանունների հետ: Տեղադրվում է Գամիրք-Կապադոկիայում:

38. E. Forrer, Hajasa-Azzi, <Caucasica>, 1931, p. 9: P. Krechmer, Der nationate name der Armenier Haikh, 1932, N 1-7, հայերեն ամփոփումը՝ Հանդես Ամսորեայ, 1937, N 7-8, էջ 429-432: թ. Капанцян, Хайаса-колыбель армян, Ереван, 1948:

39. Այլ ուսումնասիրողներ (Բ. Դյակոնով) հիմնավոր չեն համարում Hajasa - հայ նույնացումը, պատճառաբանելով, որ Hajasa-ն հնչում է խ-ով, նաև որ իբր հայ անվան համար հիմք է հանդիսացել hajo-ն և ոչ թե haja-ն (И. Дьяконов, 1968, стр. 211-212): Հեղինակը գտնում է նաև, որ հայ անունը առաջացել է hatti անունից t-j հնչյունափոխությամբ (И. Дьяконов, 1968, стр. 236-237):

40. Գ. Ղափանցյանը հայաստանյան անձնանունները համեմատելով խուրրիականի հետ (Г. Капанцян, 1947, էջ 64-78) Հայաստանի բնակիչների լեզուն խուրրիական էր համարում: Ղափանցյանի այս կարծիքը այսօր էլ ավելի է համոզում, որ և՛ խուրրիները, և՛ հայասացիները Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերն էին՝ հայերը: Ավելի ուշ Գ. Ջահուկյանը ապացուցում է, որ "հայասերներ" հնդեվրոպական լեզու է, իսկ հայերենում տեսնում է "հայասական" (հին անատոլիական հնդեվրոպական լեզու) ուժեղ ենթաշերտ (Գ. Ջահուկյան, 1987, էջ 281):

41. Նշենք, որ խեթական արձանագրություններում հ և հ հնչյուններով տեղանունների համար օգտագործվում է միննույն հ սեպանշանը (2. թՈՎՄԳպմԴՊԶպ, կպԳպՊՉՌԶպվԴպ ըՏԿսՌրվօ Չ պՅՅրՄՍՎ, կպԳպՊվպՈՂՌՌՅրՄՌՌ ըՌՏԳվԴՄ, ՄՏրՄՉՈ, 1961, ըՅԳ. 245): Ուստի պատահական չէ, որ ուսումնասիրողների կողմից ընդունվել ու շրջանառության մեջ է դրվել երկրի անվան Հայասա ձևը:

42. Г. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, չ3 78:

43. Եգիպտացիները օգտագործում են Nhrin, արևմտյան սեմական ցեղերը՝ Nahrina անունները:

44. Աշխատության մեջ օգտագործվում է երկրի անվան Խուրրի (Հուրրի) ձևը, որն ավելի հարազատ է սկզբնաղբյուրներին (ի տարբերություն խուրի ձևի, երբ հայերենում hurri-ի երկու ր-ն կարդացվում է ո):
45. Г. Гиоргадзе, Хетты и хурриты по древнехеттским текстам, ВДИ, 1969, 1, стр. 72-73.
46. И. Дьяконов, Ариицы на Ближнем Востоке. Конец мифа, ВДИ, 1970, 4, стр. 60 (А. В. Mercier, The Tell-el-Amarnah Tablets, Toronto, 1939):
47. И. Дьяконов, Ариицы... стр. 48:
48. И. Дьяконов, 1967, стр. 117, 1968, стр. 14. В. Hrozni, Archiv Orientalni, vol. 2, 1929, էջ 98: Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպ. շրջանի պատմություն, Երևան, 1933, էջ 163-164:
49. Հին Կտակարանը Մեռյալ ծովի հարավում՝ Մեիրի լեռներում ապրող ցեղերի համար օգտագործում է Horr "խորիտ" (քոռեցի) անունը, (Մանդոց, ԼԶ): Խորիտ անունը որոշ ուսումնասիրողներ (Հրոզնի) նույնացնում են խուրրիների հետ, կապում ասուրա-բաբելոնյան, նաև եբրայերեն hor "այր, քարայր" իմաստով բառի հետ և խորիտներ (նաև խուրիիներ) անունը բացատրում իբրև "այրաբնակներ": Բ. Դյակոնովը խորիտներին սեմականացած խուրրիներ է համարում (Լ. ժՖյՍՍԿՏ, 1967, էջ 116): Սակայն Հին Կտակարանի խորիտները սեմական ցեղեր են և իրենց վարք ու բարքով, անուններով ու կենցաղով միանգամայն տարբերվում են Խուրրի-Միտանիի բնակիչներից՝ խուրրիներից: Հավանաբար սա այն դեպքերից է, երբ խուրրի անունը խորիտ ձևով օգտագործվում է սեմական այն ցեղերի համար, որոնք զբաղվելով անասնապահությամբ ու քոչվոր կյանք վարելով հայտնվել էին Խուրրի-Միտանիում, այնուհետև՝ Մեռյալ ծովի հարավային մասերում: Այս մասին էդ. Մեյերը գրում է. "Խորիտները իրենց տոհմանունների ցուցումներով պարզապես անապատի ցեղերի մի խումբ են, որոնք տարածվեցին մշակութային երկրի վրա" (Ed. Meyer, Geschichte des Altertums, II, B., I: Abteilung-Die Zeit der egyptischen grossmacht, 1928, 88: Ա. Խաչատրյան էջ 165): Համեմատության համար նշենք արամեացի անունը, որը ժառանգել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերից արաբական անապատներից Հյուսիսային Միջագետքում և Հյուսիսային Միջագետքում հայտնված սեմական ahlame և suti ցեղերը: Մա լավագույն ապացույցն է այն իրողության, որ սեմական ցեղերից առաջ այս տարածքներում բնակվել են Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ ԱՐ Աստծո որդիները: Այս մասին տես նաև Մ. Գավուրյան, 1973, էջ 370-379:
50. И. Дьяконов, Ариицы..., стр. 60, ИДМ, 1982, стр. 186.
51. АВИИУ, 1, 3: Ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ կարելի է կապ տեսնել Սուբիր, Սուբարի, Սուբարտու անունների և ԱՐ Աստծո անվան միջև: Սուբիր, Սուբարի անունների sub- բաղադրիչը շումերերենում "երկրպագել, պաշտել" իմաստն ունի (Մ. Գավուրյան, 1973, էջ 139, S. Langdon, A Sumerian crammer and crestomaty, p. 241), Sub/sub- բաղադրիչը շումերերենում նաև "մաքուր, պայծառ" իմաստն ունի (Հ. Աճառյան, 1979, էջ 256): Հնդեվրոպական սուրբ բառի վերականգնված ձևն է՝ Kubhro, որից ծագում են սանսկրիտ cubhra "փայլուն, պայծառ, մաքուր", հայերեն "սուրբ" ձևերը և այլն: Sub-ar(u), Sub-ar-tu անվան -ar բաղադրիչը ԱՐ Աստծո անունն է, որը կարող է հանդես գալ նաև -ir ձևով (Subir): Անվան -tu մասնիկը տեղանվանակերտ է (հմմ. Մանգիբուտու, Խալիտու): Հետևաբար կարելի է մտածել, որ Սուբիր, Սուբարտու անունները ևս կապված են ԱՐ Աստծո անվան հետ և ԱՐ Աստծո երկիր, արևապաշտների երկիր իմաստն ունի:
52. Ստրաբոն, 11, (44.8):
53. Ընդունված է, որ Նաիրի նշանակում է "գետերի երկիր": Մ. Գավուրյանի կարծիքով, սեմական ծագում ունեցող Նաիրին (nur, naira, nura) նշանակում է հրի, կրակի (արև) երկիր (Մ. Գավուրյան, 1973, էջ 177): Այլ տեսակետի համաձայն՝ Նաիրի նշանակում է "լեռնաշխարհ" nau-a "քար" և i-ri "բնակավայր" արմատներից, որոնք ասուրերենում շումերական փոխառություններ են (Վ. Խաչատրյան, էջ 83):
54. Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերի և 1-ին հազարամյակի սկզբների ասուրա-բաբելոնյան գրավոր աղբյուրները շարունակում են օգտագործել շումեր-աքադական աղբյուրներից հայտնի Սուբարտու կամ Շուբարտու հնագույն անունները, որպես՝ Խուրրի-Միտանի անվանը համագոր անուններ: Այսպես. Ադադնիրարի 1-ինը (մ.թ.ա. 14-րդ դար) և Թիկուլթի Նինուրթան (մ.թ.ա. 13-րդ դար) իրենց արձանագրություններում Հայկական Միջագետքի (Խուրրի Միտանի) համար օգտագործում են Սուբարտու (Շուբարտու) անունները (ԸԹԼԼձ 1, 3): Սակայն Թիզլաթպալասար 1-ինի (1115-1077) և Աշուրնազիրպալ 2-րդի (884-859) ժամանակներից Շուբարտու, Շուբրիա են անվանել ոչ թե Խուրրի Միտանիի հիմնական տարածքը, այլ Խուրրի Միտանի պետության հյուսիսարևմտյան մասը (Ադանիք--Սասուն), որի բնակիչներին ասորեստանցիները խուրրիներ էին համարում (ԸԹԼԼձ, 2, 89, 23, 26): Այս տարածքը՝ Շուբարտու-Շուպրիան, Թիզլաթպալասար 1-ինը իր 4-րդ արշավանքի ժամանակ նաև Խանիգալբատ (Խալիգալբատ) է անվանում:
- Թիզլաթպալասար 1-ինը Հայկական Միջագետքի համար օգտագործում է նաև Միտանի անունը: Արձանագրություններից մեկում Թիզլաթպալասար 1-ինը գրում է. "Իմ պահապան աստծո՝ Աբնիլի

- հովանավորությամբ Միտան երկրի անապատում... չորս կատաղի ցուլի կյանքին վերջ տվի" (Ա. Խաչատրյան, էջ 50): Սա այն ժամանակն էր, երբ Միտանին պարտվել էր: Ասորեստանցիների դեմ պայքարի ծանրությունը տեղափոխվել էր Հայկական լեռնաշխարհի այլ մասեր՝ Շուպրիա, Նաիրի, Ուրումու, Ուրուատրի: Իսկ պարտված ու արդեն սեմականացող Միտանին այլևս վտանգավոր չէր Ասորեստանի համար: Ասորեստանի թագավորների դեպի Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասեր կազմակերպվող արշավանքները պատճառ են դառնում բնակիչների միավորմանը:
55. АВИИУ, 2.
56. АВИИУ, 3, 5, 6, 8, 9.
57. АВИИУ, 10, (4, 40).
58. АВИИУ, 46, 47, 49, 51.
59. УКН, 62.
60. УКН, 1.
61. Б. Пиотровский, Ванское царство, (Урарту), М.-Л., 1959, стр. 49.
62. Б. Пиотровский, 1959, стр. 50.
63. Bia-ն, կարծիքներից մեկի համաձայն, Հայկական լեռնաշխարհի ցեղերից մեկի անվանումն է (Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 132):
64. Թագավորաց, 4-րդ գիրք: Այս դեպքերի մասին գրում են նաև Մ. Խորենացին և Թ. Արծրունին: Այն արտացոլվել է նաև հայոց "Մասնա ծոեր" դյուցազնավեպում (Սանասար-Բաղդասար ճյուղը): Նշենք, որ ասորական Պեշիտո կոչվող թարգմանության մեջ Արարատ անունը փոխարինվել է Կարդու անունով (Հ. Մելքոնյան, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 78), որը հավանաբար Կորդուք անվան տարբերակ է: Իսկ Մ. Գավուրջյանը հետևյալ բացատրությունն է տալիս Կարդու անվանը՝ Kardu-ի k-ը նախածանցը գալիս է շումերերեն ki "վայր, երկիր" նախդիր որոշիչ ձևից: Հետևաբար Արարատ անվան այս ձևը՝ k-ar-du/di նշանակում է Ա.Ը Աստծո երկիր (Մ. Գավուրջյան, 1973, էջ 183):
65. Երեմիա, ՕՍ, 27:
66. Բազմավեպ, 1899, 12, էջ 63, 576:
67. Եզեկիել, ԻԷ, 14:
68. Ի տարբերություն հայ և օտար մի շարք ուսումնասիրողների (Յ. Մարկվարտ, Հ. Մանանդյան, Ս. Երեմյան), որոնք "Բլիականում" հիշատակված արիմների (անկախ նրանից Արիմը բնակավայր է, թե ցեղի անուն) կապում են հայ-արմենների հետ, այլ ուսումնասիրողներ (Ի. Դյակոնով) մերժում են այդ կապը՝ ելնելով այն հանգամանքից, որ այս ժամանակ բացառվում է հնդեվրոպական ցեղերի, առավել ևս հայ-արմենների գոյությունը Փոքր Ասիայի այդ մասերում (Ս. Дьяконов, 1968, стр. 226):
69. Կ. Բասմաջյան, Բանասեր, Ա, 1899, էջ 6-45, ՀԺՊՔ, էջ 154-156:
70. Հաճախ թյուրիմացությունների տեղիք են տալիս հույն հեղինակների (Հերոդոտ, Քսենոփոն, Ստրաբոն) կողմից հիշատակված հայոց ցեղանունները: Այսպես. նրանք հիշատակում են կարդուխներ (Կորդուք), ալարդուներ (Արարատ), փասյաններ (Բասեն), սայսպերներ (Սպեր), տադիներ (Տայք) և այլ անուններ, որոնք բնականաբար շեշտում են բնակավայրը (գավառ, նահանգ) և ոչ ազգությունը (Էթնոպատկանելիությունը): Այսօր էլ օգտագործվում են լոռեցի, արցախցի, զանգեզուրցի և այլ անուններ, որով նկատի չի առնվում առանձին ցեղ կամ ազգություն, այլ հասկացվում է, լոռեցի հայ, արցախցի հայ, զանգեզուրցի հայ, որոնք ունեն ընդհանուր մի անուն՝ հայ: Համեմատության համար հիշենք, որ հույները հնում կոչվել են նաև աքայացիներ, սպարտացիներ, դորիացիներ, մակեդոնացիներ և այլն:
71. АВИИУ, 3, 5, 6, 8, 9, 10 (IV, 40).
72. Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը: Հնագույն արձանագրությունները վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում կազմավորված ոչ մի պետության մեջ թագավորը երբեք միանձնյա տիրակալ, առավել ևս բռնակալ չի եղել: Թագավորը հավասարների մեջ (ավագանի) առաջինն է եղել: Խեթական արձանագրություններից հայտնի է, որ Խուրրի-Միտանի պետության գլուխ կանգնած էր հզոր, մեծ թագավորը, որը երկիրը ղեկավարում էր "խուրրի մարդկանց" կամ "խուրրի որդիների" (ավագանի) հետ: Հետևենք Խուրրի-Միտանի արքաների արձանագրությունների տեքստերին. "Ես Մատիուազաս ու մենք՝ Խուրրի մարդիկ" կամ "Եթե ես՝ Մատիուազաս ու մենք՝ Խուրրի մարդիկ այս դաշնագրի ու երդումի խոսքերը չպահենք, այդ ժամանակ թող ես ու Խուրրի մարդիկ ոչ մի սերունդ չունենանք" կամ "Այսպես ասում է Մատիուազա արքայորդին, այսպես ասում են և Խուրրի մարդիկ" (Ա. Խաչատրյան, էջ 173): Խեթական թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի (1380-1340) և Հայաստյի թագավոր Հուկաննայի միջև կնքված պայմանագրի տեքստում Սուպիլուլիումասը դիմում է ոչ միայն Հուկաննային, այլև

"Հայասայի մարդկանց" (ՀԺՊ, 1971, էջ 198): Անկասկած է, որ ն' "Խուրրի մարդիկ", ն' "Հայասայի մարդիկ" արտահայտությունները նշանակում էին ավագանի, ավագների խորհուրդ: Ե՛վ Խուրրի-Միտանիում, ն' Հայասայում կար թագավոր և ավագանի՝ ավագների խորհուրդ:

Գլուխ Երրորդ

Հայաստան. Ար Աստծո Պաշտամունքի Երկիր Ար. Արեվ-Աստծո Պաշտամունքի Ծագումը Եվ Տարածումը

Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայ-արմենների հնագույն աստվածը արարչական գործությամբ օժտված արևի ԱՐ Աստվածն էր¹:

Երկնային լուսատուներից ամենալուսավորն ու ամենապայծառը արեգակն է, որը լույս, ջերմություն, կյանք է տալիս մարդուն, ապահովում բերք ու բարիքով: Արևը Մայր Երկրի վրա ամենայն բարիքներ ստեղծող գերբնական մի ուժ է, կյանքի նախապայման ու սկիզբ:

Մեր նախնիները հետևելով արեգակի ընթացքին տեսնում էին, որ նա ամեն օր ծնվում է, լույս, ջերմություն, բերք, բարիք, ուրախություն պարգևում մարդկանց ու աշխարհին, իսկ երեկոյան հեռանում, մահանում է: Արևի հեռանալը, որին հաջորդում էին գիշերվա մութն ու խավարը, վախ ու տխրություն էր պատճառում մարդկանց, և նրանք անհամբերությամբ սպասում էին նոր օրվան և արեգակի նոր ծննդին: Մարդիկ հավատում էին, որ գիշերվա խավարում գործում են նոր ուժ ստացած չար ոգիներ, որոնց չպետք է բարկացնել (գիշերը գետնին փայտով չեն խփել, ջուր չեն թափել դրսում, որպեսզի չհանդիպեն զբոսնող չար ոգիներին)²: Մարդիկ հավատում էին նաև, որ այդ ժամանակ հոգնած արեգակը հանգստանում էր ծովի հատակում կամ լեռներում գտնվող իր պալատում, մոր մոտ (մայր է մտնում), որը կերակրում էր նրան կենսատու, երիտասարդացնող կաթով: Բացվում էր նոր օրը, առավոտյան էլ ավելի գեղեցիկ ու փայլուն նորից ծնվում էր արեգակը, և մարդիկ մեծ ուրախությամբ ողջունում էին նրա ծնունդը:

Արևն ու մյուս լուսատուները մարդու կողմից սկսում են ընկալվել որպես գերբնական ուժեր, էակներ, որոնք ապրում են ներդաշնակ կյանքով, ունենալով իրենց ուրիշը, կարգն ու կանոնը: Եվ մարդն արևն աստված համարեց ու պաշտեց այն որպես Արև-Աստված: Պատմական ինչ-որ ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհի բնակիչը՝ հայ-արմենը Տիեզերական Արարչին նույնացրել է աչքով տեսանելի տիեզերական ամենամեծ ու ամենապայծառ լուսատուի՝ լույս, ջերմություն, կյանք պարգևող Արև-Աստծո հետ և պաշտել այն որպես ամենագոր Արարիչ, արևի ԱՐ Աստված:

Շատ խոր հնության պատճառով դժվար է ճշտորեն որոշել ինչպես Արև-Աստծո, այնպես էլ ԱՐ Աստծո պաշտամունքի ծագման ժամանակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արևի պաշտամունքի հետքերը Հայկական լեռնաշխարհում հասնում են հնագույն քաղաքակրթության վաղ ժամանակները: Արևապաշտությունը խորհրդանշող բազմաթիվ պատկերներ կան հնագիտական իրերի վաղագույն նմուշների, ժայռապատկերների վրա: Իսկ արևի պաշտամունքի մասին հնագույն գրավոր հիշատակությանը հանդիպում ենք շումերական դիցաբանական պատմությունում: Դիցաբանական պատմությունում, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություն Արատտայում եղել են արևին նվիրված տաճարներ՝ գանուններ³, ուր երեկոյան հանգստացել է արեգակը:

Վիպերգը պատմում է, որ Շումերի Ուրուկ (Հին Կտակարանում՝ Արեգ) քաղաքի տիրակալ Էնմերքարը ցանկացել է, որ Էնլիլի համար տաճար կառուցեն "սուրբ ծեսերի երկիր" Արատտայի մարդիկ, և որ այն նման լինի Արատտայի տաճարներին՝ գանուններին.

- Թող կառուցեն նրան (տաճարը) փայլուն,
"գանունից" դուրս եկող շողշողուն արևի նման,
Նրա բոլոր սեմերը թող լուսավոր լինեն
Նրա (Արատտա) բոլոր գանուններում, որտեղ երգում են
Մրբազան ու դյուրիչ երգեր,
Նուղիմուղիի (Էնլիլ) թախանձանքը նրան ասա⁴:

Հավանաբար Արատտայի տաճարներում կատարվող "սրբազան ու դյուրիչ" երգերը եղել են Արևագալի երգեր⁵ նվիրված արևին ու արևածագին:

Արևը ոչ միայն լույս ու ջերմություն էր տալիս մարդկանց, այլև ապահովում էր կյանքի, ապրելու համար անհրաժեշտ բերք ու բարիքով: Գարունը և տաք արևը, որ փոխարինել են Հայկական

լեռնաշխարհի հաճախ շատ ցուրտ ու երկարատև ձմռանը, մեծ ուրախություն են պատճառել մարդկանց: Նրանք մեծ անհամբերությամբ են սպասել արևին, գարնանն ու բնության զարթոնքին և գարնան գալուստը նշել են մեծ տոնախմբություններով (բարեկենդան, տրնդեգ, համբարձման տոն): Հավանաբար այս տոները արևին ու ԱՐ Աստծուն նվիրված հնագույն տոնակատարությունների արձագանքներն են, որ հասել են մինչև մեր օրերը՝ ընդունվելով նաև քրիստոնեական եկեղեցու կողմից (որոշ փոփոխություններով ու այլ իմաստ հաղորդվելով): Արևը մարդուն հետաքրքրել է նաև նրանով, որ ամեն օր մեռնում ու հարություն է առնում: Արևի մեռնելը, անհետանալը անվանվել է մայրամուտ, իսկ նորից ծագելը, հարություն առնելը՝ արևածագ: Մարդը նկատում էր, որ ինչպես արևն է մեռնում (արևամուտ) ու հարություն առնում (արևածագ), այնպես էլ տարին է մահանում (ձմեռ) ու մահից հետո հարություն առնում (գարուն): Մահվան ու հարության այս գաղափարը չէր կարող անտարբեր թողնել հայ մարդուն, և նա իր գլխավոր աստծուն՝ ԱՐ-Արային, բնության նման օժտել է նաև մեռնող-հառնող հատկությամբ: Եվ արևի ԱՐ Աստվածը ձեռք է բերել նաև գարնան, բնության ու զարթոնքի աստվածության հատկանիշներ⁶: Այս իմաստով պատահական չէ, որ հայոց լեզվում ար-ով սկսվող բազմաթիվ բառեր կան, որ կյանք, գարուն, զարթոնք, ծառ, վար ու ցանք իմաստն ունեն: Այդպիսի բառեր են՝ արյուն, արտ, արոր, արոտ, արթ-որթ, արոս, արխ-առու, արգավանդ, արահետ, արագիլ, նաև հառնել, զարթնել, արթնանալ և այլն: Համեմատության համար նշենք նաև հունարեն *ar-o* "վարում եմ", "ցանում եմ", լատիներեն *ar-o* "վարում եմ", ռուսերեն *арая*, §H³c6xIII »III| μ³ñ»cB7 " ³B|ŃḶ:

Մահվան ու հարության գաղափարին հանդիպում ենք նաև Արա Գեղեցիկի, ու Պլատոնի հերոսներից մեկի՝ Էր Արմենիոսի կերպարներում, որն անշուշտ ԱՐ Աստծո պաշտամունքի ուշ շրջանի արձագանք էր (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ): Որպես գերբնական ուժ, ամենագոր էակ Արև-Աստվածը շարունակում էր գարմացնել մարդուն: Մարդը հաճախ ակնատես էր լինում երկնքում կատարվող այլ հետաքրքիր տեսարանների. ամեն ինչ խաղաղ է, երկինքը ջինջ ու պայծառ է, արևը լույս ու ջերմություն է հաղորդում երկրին ու մարդկանց: Հանկարծ երկինքը մթնում է, հայտնվում են ամպ-վիշապներ, որոնք կուտակվելով հարձակվում են արևի վրա, ծածկում նրան և փորձում կուլ տալ: Լսվում է սրի նման փայլատակող որոտի ձայնը, փայլում են հրեղեն նետ-կայծակները, և խաղաղ երկնքում սկսվում է մարտը արևի ու ամպ-վիշապների միջև: Քիչ հետո ավարտվում է այն, լռում են ձայները, ամպերը ցրվում են, և աշխարհին ու մարդկանց նորից ժպտում է հաղթող Արև-Աստվածը: Մեր նախնիները չէին կարող անտարբեր լինել երկնքում կատարվող այս տեսարանի հանդեպ և պատկերում են դրանք ժայռերի (ժայռապատկերներ), խեցեղենի ու գարդերի վրա: Այս տեսարանն է հիմք հանդիսացել նաև Վահագն Վիշապաքաղի կերպարը ստեղծելու համար, երբ ավելի ուշ ԱՐ Աստծուն փոխարինած արևի աստված Վահագնը մենամարտում հաղթում է վիշապներին և ձեռք բերում Վահագն Վիշապաքաղ մականունը: Արևի ԱՐ Աստվածը որպես գարնան, բնության ու զարթոնքի աստված միշտ հաղթում է ցուրտ ու դաժան ձմռանը, ուրեմն նա ոչ միայն գեղեցիկ է, այլև ուժեղ և որպես հաղթող աստված ձեռք է բերում նաև ռազմի մեծ ու հզոր աստվածության նկարագիր (արևի ու նրա խորհրդանշանների բազմաթիվ պատկերներ կան հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված գենք-գրահին, ռազմական հանդերձանքին): Անկասկած, ԱՐ Աստծո բնութագրի այս հատկանիշն է շեշտում հայոց արի բարը, որը քաջ, հերոս իմաստն ունի: Նույն իմաստն ունեն նաև արիաբար, արիական, արիասիրտ, արեացի (կտրիճ) բառերը, իսկ անարի նշանակում է թուլակամ, թուլասիրտ⁸ և այլն:

Արևին ու ԱՐ Աստծուն նվիրված բազմաթիվ տոներ ու տոնակատարություններ են եղել որոնք կատարվել են մեծ հանդիսավորությամբ: Հայկական լեռնաշխարհում արևին նվիրված արարողությունները կատարվել են լեռներում, արևածագին, երբ արևի առաջին ճառագայթները դիպչում էին լեռների գագաթներին ու լուսավորում շրջակայքը: Լեռները, որոնց թիկունքից ամեն օր ծագում ու որոնց թիկունքում ամեն օր մայր է մտնում արևը, որոնք հաճախ նաև կրակ ու բոց են ժայթքել (Նեմրոս, Թոնդրակ, Միս ու Մասիս) խորհրդավորությամբ են պարուրել մարդուն, դառնալով պաշտամունքի ու սրբազան արարողությունների վայր: Մեր նախնիների պատկերացմամբ աստվածները ծնվել են լեռներում (հաճախ լեռներից) ու ապրել են լեռներում: Վերևում արդեն նշվել է աստվածների բնակավայր Աթոռ Անահտա, Արագած (Արայի գահ), Մեհոգած (Միհրի գահ) լեռնագագաթների մասին: Հիշենք նաև Նեմրոս լեռան վրա կառուցված սրբատեղին, ուր աստվածները (Արամազդ, Վահագն, Միհր, Անահիտ) պատկերվել են գահին նստած: Լեռը դիտվել է նաև որպես գահ, աթոռ, որի վրա բազմել են աստվածներ: Լեռներում են կառուցվել նաև արևի ու այլ աստվածների բնակավայրերը՝ տաճարները: Արևին ու ԱՐ Աստծուն նվիրված արարողությունները կատարվել են մեծ շուքով: Դրան հատուկ փայլ են տվել հանդիսություններին մասնակցող թագավորը,

քրմերն ու ազնվականները: Նրանք աչքի են ընկել իրենց ճոխ հանդերձանքով: Թափորի մեջ իր, է՛լ առավել շքեղ հանդերձանքով առանձնացել է թագավորը, որը հանդիսությանը մասնակցել է ծաղիկներով զարդարված ու սպիտակ ձիեր լծված մարտակառքով: Քրմերի ուղեկցությամբ թափորը հասնում էր տաճար (կամ պաշտամունքի ու սրբազան արարողությունների այլ վայրեր) ու սկսվում էր արարողությունը: Քրմերից կազմված երգչախումբը երգում էր արևին ու ԱՐ Աստծուն նվիրված արևագալի "սրբազան ու դյուրիչ երգեր" և հանդիսավոր հիմներ:

Հայկական լեռնաշխարհի ու հայկական ցեղերի (խուրրիներ) հետ մշակութային սերտ կապեր ունեցող խեթերի գրավոր աղբյուրներում գրական այլ ստեղծագործությունների հետ պահպանվել են նաև հիմներ ու աղոթքներ՝ նվիրված արևին ու Արև-Աստծուն: Տեղն է հիշել, որ խուրրիական մշակույթը մեծ ազդեցություն է ունեցել խեթական մշակույթի ստեղծմանն ու ձևավորմանը: Դա զգացվում է աստվածների պաշտամունքների, առասպելների, գրույցների, պաշտամունքային արարողությունների, ծեսերի ու այլ հարցերում: Այդ ազդեցությունը հասկապես զգացվում է Արև-Աստծո պաշտամունքի ժամանակ: Հայտնաբերված հնագույն խեթական տեքստերում մեծ թիվ են կազմում արևին ու Արև-Աստծուն նվիրված հիմներն ու աղոթքները: Արևին նվիրված հիմնում Արև-Աստվածը երկնքի ու երկրի լուսավոր, արդարադատ տիրակալն է, արքան, մարդկության հովիվը, որի առջև խոնարհվում են երկնքի ու երկրի բոլոր աստվածները:

Արքայական հերոս, բարերար Արև:
Աստվածների մեջ միայն դու ես փայլում,
Քեզ է տրված իշխանությունը մեծ:
Կառավար տիրակալ, արդարադատ:
Նախահայր մթին աշխարհի
Արքայական հզոր Աստված Արևի⁹:

Ընդունված կարգի համաձայն, արարողությունների ժամանակ հայերը սիրելի աստվածներին նվիրաբերել են նաև "սպիտակ ցուրք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորուովք, ոսկեղեն ու արծաթեղեն զարդուք..."¹⁰, ուռենու և արմավենու ճյուղեր, պտուղներ, ծաղիկներ և այլն: Ներկայացնում ենք նաև իրանցիների արևին նվիրված հանդիսավոր արարողության նկարագրությունը, որը մեծ ընդհանրություններ է ունեցել հայոց նմանատիպ արարողությունների հետ: Այդ մասին վկայում է նաև Ստրաբոնը: Նա գրում է. "Պարսից բոլոր աստվածությունները պաշտվում են նաև մարաց և հայոց կողմից"¹¹: Այս վկայությունը կարելի է հասկանալ նաև՝ որ պարսիկները, մարերն ու հայերը պաշտում էին նույն աստվածներին¹²: Արարողության նկարագրությունը այսպիսին է. "Արևին մատուցվելիք ողջույնի թափորը արևածագեն առաջ կկազմվեր: Քահանայապետը թափորը կառաջնորդեր՝ անոր կիստևեին Մոզերու երկար շարան մը անբիծ ձերմակ հագնված: Տաղեր կերգեին ու արծաթյա բուրվառներուն մեջ սուրբ կրակ կտանեին: Մոզերուն կիստևեին 365 պատանիներ՝ կարմիր հագած, որոնք կներկայացնեին տարվա 365 օրերը և կրակը: Ասոնց կիստևեին Արևին կառքը, թափուր, ծաղկեպսակներով զարդարված, ընդ որում լծած կլլային հոյակապ ձերմակ ձիեր-գուտ ոսկյա ասպազենով: Հետո կուգար փառավոր ձերմակ ձի մը, որին ճակատը ակունքով (զարդեր) զարդարված կըլլար..., ձերմակ ձիուն կիստևեին թագավորը ոսկեզարդ փղոսկրյա կառքին մեջ նստած"¹³: Թափորը կազմվում էր արևածագից առաջ ու երկրպագում էին Արև-Աստծո երկրի վրա ընկնող առաջին ճառագայթները: Մարդը չէր կարող անտարբեր լինել լույս ու ջերմություն պարզևող, կյանք արարող արևի հանդեպ, չէր կարող չաստվածացնել այն: Այս մասին Ղևոնդ Ալիշանը գրում է, որ մարդը "զԱրեգակն աստված համարեր ու անոր նայելով զաստված պաշտեին"¹⁴:

Մեր նախնիները տաճարներում ու մեհյաններում դնում էին նաև արեգակի ու լուսնի արձաններ: Այս մասին վկայություն ունի Խոբենացին: Նա գրում է, որ հայոց Վաղարշակ թագավորը¹⁵ "մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդիս հաստատե արեգական, և լուսնի և իւրոց նախնեացն"¹⁶:

Հայտնի է, որ յուրաքանչյուր անուն ու երևույթ ունի իմաստ, բացատրություն: Փորձենք պարզել, թե ինչ է նշանակում ար և ինչպիսին է եղել ար-ի նախնական իմաստը:

19-րդ դարի վերջերին անգլիացի արևելագետ Ա. Մեյլը առաջարկում է Արայի մեջ տեսնել ինչ հայկական Արև-Աստծո (Sun god) անունը¹⁷: Գ. Ղափանցյանը ԱՐ(ա) Աստծո անունը բացատրում է երկու ձևով: Նախ ar(a) անունը նա համարում է գոյական (անտառ, բույս, ցորեն, արտ), որի ժամանակ բառը նմանվում է բաբելերեն ar-u "անտառ" նշանակությամբ չստուգաբանված բառին և շումերեն ar "արտ" բառին: Ղափանցյանը ar (a) անունը բխեցնում է նաև հնդեվրոպական ar "բարձրանալ, հաննել,

աճել, գոյություն ստանալ, լինել, ծնվել" բայից, որը կապվում է վար ու ցանքի, զարթոնքի, պտղաբերության հետ¹⁸:

20-րդ դարի կեսից ուսումնասիրողները այլ բացատրություններ են տալիս ar բառի համար: Հնդիրանական լեզուներում հանդիպում են rag-արագ (պահլավերեն), ravi-արագ, աշխույժ (գենդերեն), raghu-վազող, թեթև (սանսկրիտ) բառերին և այլն: Հիշենք նաև հայերեն արագ բառը, որ "շուտ, փութով" իմաստն ունի: Վ. Իվանովը և Թ. Գամկրելիձեն գտնում են, որ ar-ը r` հնդեվրոպական արմատն է և "շարժվել, հոսել" իմաստն ունի¹⁹: Այս բացատրությունը ճիշտ կարելի է համարել գետերի (ջրանուններ) համար, սակայն ընդունելի չէ Ար-ով սկսվող աշխարհագրական անունների, անձնանունների, նաև առանձին բառերի համար: Ար-ի նախնական իմաստը հասկանալու հարցում մեծապես կարող են օգնել ար- արմատն ունեցող հայերեն հնագույն արև, արփի, արշալույս, արուսյակ, արծաթ, արագիլ և այլ բառեր, որոնք "սպիտակ, փայլուն, լուսավոր" իմաստն ունեն: Ի դեպ, գրաբարում արև բառը "արեգակն տեսանելի լոյսը կնշանակել"²⁰:

Այս առումով հետաքրքիր է նաև արծաթ բառը, որը հնդեվրոպական շատ լեզուներում նույն "սպիտակ, փայլուն" իմաստն ունի: Այսպես. "արծաթ, սպիտակ" իմաստն ունեն rajata (սանսկրիտ), ardata (հին պարսկերեն), arazata (գենդերեն), arkjant (թոխարերեն), argentum (լատիներեն), apyvos (հունարեն), argent (ֆրանսերեն), argento (իտալերեն), argent (ռումիներեն), argat (հին իռլանդերեն), archant (անգլերեն) բառերը²¹: Իսկ խեթերը, որ հայերի հնագույն ու մերձավոր հարևաններն են եղել, արծաթին անվանել են harki, որը նաև "սպիտակ" իմաստն է ունեցել²²: Հետաքրքիր են նաև ար- արմատով կազմված հունարեն aryoc "փայլուն, սպիտակ, ցուլուն", սանսկրիտ arjuna "սպիտակ", rej "հուր, փայլ", լատիներեն arguo "լուսաբանել", argutus "իմաստուն, լուսամիտ" բառերը²³:

Հետևաբար կարելի է ասել, որ ար-ը իր նախնական իմաստով նշանակել է "լույս, փայլ, ցուլ, սպիտակ": Ամբողջովին լույս, փայլ ու ջերմություն է նաև արևը (ար-և): Արևը ջերմացրել ու լուսավորել է բոլորին, բայց բոլոր ցեղերը չէ, որ պաշտել են այն: Եղել են ցեղեր (սեմական), որոնց մոտ արևի աստվածը երկրորդական նշանակություն է ունեցել: Այսպես, բաբելական դիցարանի գլխավոր աստվածը Մարդուկն էր, Ասորեստանի գերագույն աստվածը՝ Ասուրը (Ասուր) կամ Աշշուրը (Աշուր) և այլն: Իսկ արևի աստված Շամաշը ասորեստանցիների և բաբելացիների մոտ սովորական աստված է եղել: Ի տարբերություն հարևանների, Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայկական ցեղերը առանձին սեր ու պաշտամունք են ունեցել արևի ու Ար Աստծո հանդեպ: Ար Աստվածը իր բնույթով խաղաղ, գեղեցիկ նկարագիր ու համամարդկային հատկանիշներ է ունեցել: Արևի Ար Աստծո պաշտամունքը, որ լույսի, ջերմության, պայծառ ու անբիծ մաքրության պաշտամունք էր, անկասկած մեծ ազդեցություն է ունեցել կազմավորվող հայկական ցեղերի մտածողության, բարոյական չափանիշների, բարքերի և հոգևոր այլ արժեքների ձևավորման ու զարգացման վրա: Երբ Ար Աստծուն համեմատում ենք փոքրասիական ու միջագետքյան այլ աստվածների հետ, անմիջապես նկատելի է դառնում Ար Աստծո նկարագրի խաղաղ բնույթը: Այսպես. Բել-Մարդուկ, Թամնուգ, Ատտիս, Մոլոք և այլ աստվածների տոնահանդեսների ժամանակ տեղի էին ունենում ինքնաձայնակն ու ինքնաներքինիացման արարողություններ, իսկ Մոլոք աստծուն զոհաբերում էին հարգված որևէ ընտանիքի սիրված զավակին: Ասորեստանի թագավորները իրենց արձանագրություններում (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ -- մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ) պատմում են հանուն Ասուր աստծո և նրա հովանավորությամբ իրենց ձեռնարկած արշավանքների մասին, որն ուղեկցվել է ավերածություններով, թալանով ու դաժան սպանություններով: Ի տարբերություն Միջագետքի աստվածների, հայոց աստվածները չէին խրախուսում դաժանություններն ու սպանությունները մարտի դաշտում: Հնագույն գրավոր աղբյուրները, ինչպես նաև բանավոր գրույցները մեզ են հասցնում հայ ռազմիկի բարոյական բարձր կերպարը: Նա մարտի է գնում ոչ թե կոտորելու, թալանելու, դաժանորեն սպանելու, այլ հաղթելու համար: Հիշենք հայոց "Մասնա ծոեր" դյուցազնավեպի հերոսներից մեկին՝ Մասունցի Դավթին, որը թշնամու վրա հարձակվելուց առաջ երեք անգամ որոտաձայն գոչում է.

- է հե՛յ,

Ով քնած է՝ արթուն կացեք,

Ով արթուն է՝ ձիեր թամբեք,

Ով թամբել է՝ զենքեր կապեք,

Ով կապել է՝ էլեք, հեծեք,

Չա՛սեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գնաց²⁴:

Հայոց արքաները ևս դիմել են իրենց աստվածներին, զոհեր մատուցել նրանց ու հաջողություն հայցել հայոց զենքի հաջողության համար:

Արարատ--Ուրարտուի արքա Ռուսա 2-րդը (665-645) իր արձանագրություններից մեկում հայտնում է, որ պաշտամունքային արարողությունների ժամանակ զոհեր է մատուցել աստվածներին նաև "Խալդյան զենքերի" հաջողության համար²⁵: Հայտնի է, որ ուրարտական դիցարանում Ալդի/Խալդի աստվածը նաև ռազմի աստվածն էր: Հայոց մեկ այլ թագավոր Տրդատ 1-ինը (63-88) իր հրովարտական հատուկ շեշտում էր. "Քաջութին հասցե ձեզ ի քաջեն Վահագնե ամենայն Հայոց աշխարհիս"²⁶: Հնդեվրոպացիները ունեցել են ակունքային մի ընդհանուր մշակույթ, որը յուրաքանչյուր ցեղ զարգացրել է յուրովի, բաժանվելով մայր ցեղից: Ընդհանուր մշակութային արժեքներից կարևորվում են հոգևոր արժեքները, հատկապես աստվածների և գլխավոր աստծո, տվյալ դեպքում ԱՐ Աստծո պաշտամունքը, որը ցեղի գլխավոր աստվածն էր և ցեղի տարածման հետ տարածվել է նաև նրա պաշտամունքը:

Նոր պայմաններում նախնիների գլխավոր աստվածը միշտ չէ, որ պահպանում էր իր նախնիին հատկանիշները, նա ենթարկվել է տեղի և ժամանակի ազդեցությանը, ձեռք բերել նոր որակ և բովանդակություն: Սակայն չնայած փոփոխություններին, նկարագրի մի փոքրիկ հատկանիշ հաճախ բավական է նոր աստվածների մեջ ճանաչելու հայկական/արիական ցեղերի հնագույն ԱՐ Աստծուն: Այսպես. Թրակիա-Սպարտա-Հունաստանում գոյություն է ունեցել Ares²⁷ (Թրակիայում Aras ձևով), (գարնան ու ռազմի աստված), Hermes (հովիվների և երկրագործների աստված, ավելի ուշ Ջևսի սուրհանդակը), Eros (գարնան աստված), Մակեդոնիայում՝ Aras (արևի ու ռազմի աստված), Իրանում՝ Ahuramazd (գրադաշտության գլխավոր աստված), Հռոմում՝ Mars (ռազմի աստված), սլավոնների մոտ՝ շԸ-շԸՌսՈ-շԸՌսՏ²⁸ (բուսականության, երկրագործության, ավելի ուշ նաև ռազմի աստված)²⁹, գերմանացիների մոտ՝ Ertag³⁰, Հնդկաստանում՝ Ram աստվածների պաշտամունքը և այլն:

Իրենց բնույթով ԱՐ Աստծո հետ մեծ հարազատություն են ցուցաբերում հունական Ares (Aras), սլավոնական շԸ, նաև հռոմեական Mars աստվածները: Ares, Aras, շԸ աստվածները ևս նախ եղել են արևի, այնուհետև գարնան, բուսականության, երկրագործության ու ռազմի աստվածներ: Հռոմեական Mars աստվածը եղել է գարնան ու երկրագործության աստված, իսկ մ.թ.ա. 3-րդ դարում նույնացվել է հունական Ares-ի հետ և դարձել ռազմի աստված:

ԱՐ Աստծո պաշտամունքը (արաիզմ) տարածված է եղել նաև հարևան երկրներում: Եգիպտոսում տարածված էր Ra³¹ (արևի), Վրաստանում՝ Arali, Aralu (երկրագործության) աստվածների պաշտամունքը³²: Ասորեստանում և Բաբելոնում եղել է Aara և Aria (բուսականության) աստվածների պաշտամունք³³: Այս երևույթի մասին անզլիացի արևելագետ Ա. Սեյսը գրում է. "Արայի պաշտամունքը, նաև Էր-Արմենիոսի լեգենդը ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում, ապա տարածվել հին աշխարհի բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների դիցարանը"³⁴: ԱՐ Աստծո պաշտամունքի այս տարածվածությունը բացատրվում է նրա խոր հնությանը, նկարագրի գեղեցիկ հատկանիշներով ու խաղաղ բնույթով:

Այսպիսով արևի ԱՐ Աստծո պաշտամունքը ծագել է Հայաստանում, մարդկության պատմության արշալույսին, ապա տարածվել դեպի Միջագետք, Փոքր Ասիա ու ավելի հեռուներ:

1. Օգտագործվում են աստծո անվան ն՝ ԱՐ, և՛ ԱՐԱ ձևերը:
2. Ազգագրական հանդէս, Ա, էջ 242, 327:
3. Է. Դանիելյանը հնարավոր է համարում, որ գան արմատը պահպանվել է պագանել բառում և "երկրպագել" իմաստն ունի (Է. Դանիելյան, 1997, էջ 19):
4. И. Канева, ВДИ, 1964, 4, стр. 208.
5. Արևագալի երգերը կատարվում էին ոչ միայն տաճարներում քրմերի կողմից, այլև գուսանների (Գողթն գավառ), շինականների ու այլոց կողմից: Պաշտամունքային նշանակությամբ արևագալի երգերը չեն մոռացվել անգամ քրիստոնեության ժամանակ: Նրանք մուտք են գործել եկեղեցական ժամերգություն և այսօր էլ կատարվում են արարողությունների ժամանակ:
6. Այս հարցերի մասին խոսում է Գ. Ղափանցյանը "Արա Գեղեցիկի պաշտամունքը" աշխատության մեջ: Նա մեծ ուշադրություն է դարձնում ԱՐ Աստծո բուսական-գարնանային բնույթին, շեշտելով հատկապես նրա մեռնող-հառնող բնույթը: Ղափանցյանը միաժամանակ անտեսում է ԱՐ Աստծո արևի աստված լինելու հանգամանքը:

7. Գ. Ղափանցյան, 1945, էջ 94:
8. Նշենք, որ լատիներեն գենքը կոչվում է arma, իսկ arm, armus-ը հնդեվրոպական բազմաթիվ լեզուներով նշանակում է "արմունկ, բազուկ, ուս, թև" (Հ. Աճառյան, 1971, էջ 328-329):
9. ՀԱՊ, էջ 172:
10. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 26
11. Ստրաբոն, 44 (16):
12. Ստրաբոնի այս վկայությունը չի կարող հիմք հանդիսանալ ասելու, որ հայոց հեթանոսական աստվածները (կամ աստվածների մի մասը) իրանական ծագում ունեն: Հայերը, պարսիկներն ու մարերը նույն արիական ցեղերն էին, սնվում էին մշակութային նույն ակունքներից, պաշտում էին նույն աստվածներին և ապրում էին հարևանությամբ:
13. Մ. Ֆերահյան, Քրիստոնեության և հին հեթանոս կրոններու բաղդատականը, էջ 470-471:
14. Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 93:
15. Վաղարշակ թագավորը նույնացվում է Տրդատ 1-ին Արշակունու հետ (63-88):
16. Մ. Խոբենացի, էջ 132:17. A. Sayce. The cuneiforme inscription of Van, 1882, էջ 415-416: Գ. Ղափանցյան, 1945, էջ 18:
18. Գ. Ղափանցյան, 1945, էջ 93-95:
19. Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, стр. 317-940
20. Մ. Էմին, Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեանց, 1875, էջ 34:
21. Հ. Աճառյան, 1971, էջ 317:
22. Т. Гамкрелидзе, В. Иванов, 1984, стр. 713.
23. Հ. Աճառյան, 1971, էջ 319:
24. Սասունցի Դավիթ, էջ 268:
25. ՀԺՊՔ, էջ 91: Տես նաև Ս. Հմայակյան, "Վանի թագավորության պետական կրոնը" աշխատությունը, Երևան, 1990, էջ 27-29:
26. Ագաթանգեղոս, էջ 80:
27. Գերմանացի գիտնական Վելկկերը Արես անունը կապում է հայերեն արև բառի հետ (Ն. Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, "Հայրենիք" (ամսագիր), 1926, թիվ 2, էջ 76):
28. Գ. Ղափանցյանը գտնում է, որ սլավոնական ՅԱԸ (Յարիլո, Յարիլա) աստծո անունը կապված է ԱԸ Աստծո անվան հետ, "ա" ձայնավորը ավելի ուշ առջևից ստացել է "յ" հնչյունը, իսկ "իլա", "իլո" մասնիկները հետո են ավելացել արմատին, ունենալով փաղաքշական իմաստ (Գ. Ղափանցյան, 1945, էջ 84):
29. Տոնակատարությունների ժամանակ Բելոռուսիայում Յարիլոյին պատկերում էին սպիտակ ձիու վրա նստած մարդ, որը աջ ձեռքում բռնել է մարդու գլուխ, իսկ ձախում՝ մի փունջ ցորենի հասկ: Գլուխը Յարիլոյին ներկայացնում էր որպես ռազմի աստված, իսկ հասկը՝ բուսականության ու երկրագործության աստված (ըին, 1931, Ց. 65):
30. Ա. Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 326:
31. Ուսումնասիրողները (Լ. Քինգ, Վ. Ֆլինդերս) գտնում են, որ Ռա-ն Եգիպտոսի ծնունդ չէ, այլ մուտք է գործել Սիրիայի (Հս. Միջագետք) կողմերից (Մ. Գավուքյան, 1973, էջ 96):
32. Գ. Ղափանցյանը "Արա Գեղեցիկի պաշտամունքը" աշխատության մեջ խոսում է հունական Արաս, Արես, եգիպտական Ռա, իսթական Արա, վրացական Արալի, լիդական Արմաս ու հայոց Ար-Արա աստվածների միջև եղած ընդհանրությունների և նմանությունների մասին:
33. Ասորա-բաբելական միջավայրում հիշատակված Aara և Aria աստվածների պաշտամունքը, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Մատիկյանը, կամ փոխառություն է հայոց ԱԸ-Արայից, կամ հայկական գաղութի ներդրում տվյալ բնակավայրի պանթեոնում (Ա. Մատիկյան, 1930, էջ 319, ծանոթ. 3):
34. A. Sayse, 1882, էջ 414-415:

Ար Աստծո Պաշտամունքի Հետքերը Պատմագրության Մեջ Ար Աստվածը Եվ Արա Գեղեցիկ Թագավորը

Հայ պատմագրության մեջ քիչ տեղեկություններ կան Ար Աստծո պաշտամունքի մասին: Ար-Արա անունը առաջին անգամ հիշատակվում է Մովսես Խորենացու "Հայոց պատմություն" աշխատության մեջ (5-րդ դար): Խորենացին հիշատակում է Նոյի որդի Հաբեթից սերված 11 հայ նահապետների, այդ թվում՝ Արամի որդի Արա Գեղեցիկին: Հայտնի է, որ Խորենացին իր պատմությունը գրելիս օգտվել է ժողովրդական բանահյուսությունից և ասորի պատմիչ Մար Աբաս Կատինայի աշխատությունից, իսկ վերջինս էլ չպահպանված ինչ-որ գրավոր աղբյուրներից: Խորենացու շնորհիվ մեզ է հասել "Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցը, որի բովանդակությունը հետևյալն է. Ասորեստանի արքա Նինուսի կինը՝ Շամիրամը լսած լինելով հայոց արքա Արայի գեղեցկության մասին, իր ամուսնու մահվանից հետո պատգամախոսներ է ուղարկում Արա Գեղեցիկի մոտ, առաջարկելով կնության առնել իրեն, փոխարենը խոստանալով Ասորեստանի գահը: Մակայն մերժվում է Արայի կողմից: Մաստիկ չարանալով Շամիրամը մեծ գորքով գալիս է Հայաստան: Տեղի ունեցած ճակատամարտում Արան սպանվում է: Շամիրամը հրամայում է Արայի մարմինը դնել ապարանքի վերնատանը, որպեսզի իր աստվածները վերակենդանացնեն նրան: Երբ դա չի հաջողվում, Շամիրամը հրամայում է թաղել Արայի դին, իր հոմանիսներից մեկին հագցնում է նրա զգեստները և զայրացած ժողովրդին հանգստացնելու համար հայտարարում, որ իր աստվածները վերակենդանացրին Արային¹: Խորենացին հայտնում է նաև, որ հետագայում Շամիրամը հայոց գահը հանձնել է Արայի որդուն՝ Արայան Արային: Հայ պատմագրության մեջ "Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցին անդրադարձել են նաև Ագաթանգեղոսը, Անանուն պատմիչը, Սեբեոսը, Փավստոս Բուզանդը, Թովմա Արծրունին և ուրիշներ: Ե՛վ Խորենացու, և՛ մյուս պատմիչների աշխատություններում Արան չի վերակենդանանում: Ուսումնասիրողների մի մասը (Մ. Էմին, Գ. Ղափանցյան, Ն. Ադոնց) դա կապում է քրիստոնեության հետ և գտնում, որ քրիստոնյա պատմիչները չէին կարող թույլ տալ, որ Արան Քրիստոսի նման հարություն առներ: Նկատենք սակայն, որ և՛ Խորենացին, և՛ մյուս հայ պատմիչները Արա Գեղեցիկին իրական, պատմական անձ են համարել: Հետևաբար, նա չէր կարող մահվանից հետո հարություն առնել և մահանում է ինչպես հասարակ մահկանացու, այլ բան է, որ Արա Գեղեցիկը իր մեջ ներառել է Ար Աստծո նկարագրի շատ հատկանիշներ (գեղեցիկ է, բարի, քաջ), իսկ ժողովուրդը հետագայում նրան օժտել է մեծող-հառնող հատկությամբ, շատ ցանկանալով, որ սիրելի արքան ևս վերակենդանանա, ինչպես Արևի Ար Աստվածը:

"Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցի այլ տարբերակներ ևս գոյություն ունեն, որոնք մեզ են հասել հույն հեղինակների միջոցով: Դրանից մեկը, որ հայտնի է Բեռլինի պապիրուսների հավաքածուից, հրատարակել է գերմանացի արևելագետ Վիլլբրեն 1893 թվականին²: Այդ պապիրուսների մի մասը չի ընթերցվում ճշգրտորեն լինելու պատճառով: Ընթերցվող մասի բովանդակությունը հետևյալն է. 17 տարեկան Նինուսը սիրահարվում է իր մորաքրոջ 13 տարեկան աղջկան: Մակայն Նինուսին թույլ չեն տալիս ամուսնանալ, քանի որ աղջիկը փոքր է: Երկու մայրեր խորհրդակցում են: Նինուսը մեծ գորքով (70.000) արշավում է Հայաստան: Սկսվում է պատերազմ: Պատմության շարունակությունը անհայտ է: Ուսումնասիրելով այս սիրավեպը Ն. Ադոնցը գրում է. "Արշավանքի ուղղությունը ցույց է տալիս, որ աղջկա սերը Հայաստանում էր"³: Պապիրուսների չընթերցվող մասում կարդացվում են "o Eros" և "Armeni" բառերը, "ուրեմն ախոյանը ոչ միայն հայոց թագավորն է թվում, այլև հավանորեն ինքն Արան, որի անունը տեղի է տված և նույնացած քաջահայտ Էրոսին"⁴ եզրակացնում է Ն. Ադոնցը: Աղջկա անունը ոչ մի տեղ չի հիշատակված հավանաբար այն պատճառով, որ բնագիրը ամբողջական չէ, սակայն աղջկա մոր Դարկեա անունը հիշեցնում է հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլիացու պատմության Դերկետոյին, որը Շամիրամի մայրն է:

Այս սիրավեպի մեկ այլ տարբերակում (մ.թ.ա. 1-ին դար) Սիկիլիացին բազմաթիվ մանրամասներ է հայտնում Շամիրամի կյանքից: Նա ուշադրություն է դարձնում նրա ծագումնաբանությանը, պատմում Շամիրամի մոր Դերկետո դիցուհու մասին: Սիկիլիացին այնուհետև պատմում է Նինուսի արշավանքների մասին, նախ դեպի Արաբիա, որի թագավորն էր Արայոսը, այնուհետև՝ Հայաստան, որի թագավորը Բարզանեսն էր⁵: Ն. Ադոնցը ենթադրում է, որ տեղի է ունեցել անունների շփոթություն և Արայոսը Հայաստանի թագավորի անունն է⁶:

Հույն հեղինակներից հետաքրքիր է նաև Պլատոնի պատմությունը Er Armenios-ի մասին: Պլատոնը (մ.թ.ա. 4-րդ դար) իր "Հանրապետություն" աշխատության մեջ (10-րդ գլուխ) պատմում է ծագումով պամփուլացի (Կիլիկիա) խիզախ մի մարդու՝ Արմենիոսի որդի Էրի մասին, որն ընկնում է մարտի

դաշտում: Դիակները հավաքելուց հետո, 12-րդ օրը, երբ նրա մարմինը դնում են թաղման խարույկի վրա, նա վերակենդանանում է և սկսում պատմել հանդերձյալ կյանքի մասին⁷:
Ա. Մելյը և՛ Էր Արմենիոսին, և՛ լեզենդի ծագման ակունքը համարում է Հայաստանը: Նա գրում է. "Թեպետ Պլատոնը Էր-ին պամփուլացի է համարում, բայց նրա հոր Armenios անունը վերաբերում է Հայաստանին և Հայաստանից է, որ այդ լեզենդան ծագում է"⁸:

Էր-Արայի այս պատումի մեջ հանդիպում ենք ԱՐ Աստծո մեռնող-հառնող բնույթին, որը հավանաբար ԱՐ Աստծո պաշտամունքի հետ կապված ուշ շրջանի արտահայտություն է: Հնագույն գրավոր արձանագրություններում վկայված են Ար-Էր-ով սկսվող այլ անուններ ևս: Այսպես. Ասորեստանի թագավոր Թուկուլթի Նինուրթայի ժամանակներին (1244-1208) պատկանող մի արձանագրության մեջ հիշատակվում է Errimena անունով մի օտարերկրացի⁹: Ուրարտուի Ռուսա 3-րդ (617-609) թագավորն իր արձանագրություններում ինքն իրեն կոչում է Rusa Erimenahi¹⁰ "Ռուսա որդի Էրիմենայի": Ի. Մեշանինովը այն կարծիքն է հայտնում, որ Rusa Erimenahi նշանակում է "Ռուսա Հայորդի"¹¹: Գ. Ղափանցյանի կարծիքով Ռուսայի Էրիմենա հայրանունը "թե հատուկ անուն կարող է լինել՝ նման մեր Արմենակին, թե ցեղանուն" և որ Ռուսան կարող էր լինել Ermina կամ Armina հայ ցեղից սերված, այդ ցեղին պատկանող¹² և այլն: Իսկ Ռուսայի Էրիմենա հայրանունը միայն մեկ բացատրություն կարող է ունենալ. այն հայոց թագավորի հայրանունն է (Արմենակ), Էրիմենա տարբերակով:

Եվրոպայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ կելտերի դիցաբանության մեջ վկայված են Er, Eriy և Eremon անուններով հերոսներ¹³: Իսկ Բրիտանական հանրագիտարանից տեղեկանում ենք, որ գոյություն ունեցող իռլանդական մի առասպելի համաձայն Հունաստանի կողմից եկած մի խումբ արկածախնդիրներ (թե ռազմիկներ) գրավել են Իռլանդիան, հաղթելով ավելի վաղ այդ տարածքներում բնակություն հաստատած Դանու աստծո ցեղին: Եկվորների մեջ եղել են Ire և Eremon եղբայրները (այլ տարբերակով՝ հայր ու որդի): Ire-ը հռչակվել է երկրի թագավոր ու երկրին թողել իր անունը՝ Ireland¹⁴: Հետաքրքիր է նաև հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի (1-ին դար մ.թ.ա.) մի վկայությունը: Նա հայտնում է, որ Դավիթը (հրեա) շարժվում է Ծոփաց Ադրազար թագավորի՝ Արայի որդու դեմ¹⁵: Պատմիչը թագավորին հայ կամ արմեն կոչելու փոխարեն կոչում է Արայի որդի:

Սրանք են այն հիմնական աղբյուրները, որ տեղեկություններ են հաղորդում ԱՐ-ԷՐ-ԱՐԱՅԻ մասին: Վերոհիշյալ բոլոր սիրավեպերն ու գրույցներն անկասկած պատմական հիմք ունեն, որի արձագանքները հասել են մինչև 19--20-րդ դարերը, երբ ժողովուրդը բանավոր ձևով դեռ շարունակում էր պատմել Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին¹⁶:

Ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է Խորենացու հետևյալ մի վկայությունը ևս: Խոսելով Արա Գեղեցիկի հայր Արամի քաջագործությունների մասին, պատմահայրն այնուհետև գրում է. նրա "մահվանից հետո Նինոսի վախճանվելուց քիչ տարիներ առաջ իր հայրենիքի խնամակալ դարձավ Արան"¹⁷: Պատմագրության մեջ Նինոսը նույնացվում է Ասորեստանի թագավոր Սարգոն 1-ինի (980-948) հետ¹⁸: Նինոսը նույնացվում է նաև Սալմանասար 3-րդի (858-824) հետ¹⁹: Ուրարտուի առաջին թագավոր Արամը (Արամե), որ վկայված է Սալմանասար 3-րդի արձանագրության մեջ, նույնացվում է Մ. Խորենացու աշխատության մեջ հիշատակված Արամի հետ (Արա Գեղեցիկի հայրը): Ասորեստանի թագուհի Շամիրամը (Մեմիրամիս) Շամշի-Ադադ 5-րդ (823-810) թագավորի կինն է, որը ամուսնու մահից հետո փոքրահասակ որդու փոխարեն իշխել է մ.թ.ա. 810-806 թթ.: Շամիրամի իշխանության տարիները համընկնում են Մենուայի (810-786) իշխանության տարիներին: Հայտնի է, որ Վանի հռչակավոր ջրանցքը կառուցվել է Մենուայի ժամանակ: Այդ մասին են պատմում Մենուայի արձանագրությունները²⁰: Սակայն Խորենացին ջրանցքի կառուցումը վերագրում է Շամիրամին²¹: Այս փաստը՝ Մենուայի կառուցած ջրանցքը Շամիրամին վերագրելը, վկայությունն է այն իրողության, որ մ.թ.ա. 9-րդ դարի սկզբներին բարեկամական հարաբերություններ են եղել Հայաստանի ու Ասորեստանի միջև (հավանաբար Շամիրամը օգնել է Մենուային կառուցելու ջրանցքը):

Ինչպես տեսնում ենք, եղել է պատմական այն հիմքը, որի հիման վրա Խորենացու աշխատության միջոցով մեզ է հասել Շամիրամի սիրավեպի պատմությունը հայոց արքայի (սովյալ դեպքում Արա Գեղեցիկ) հանդեպ: Հայտնի է, որ Մենուային հաջորդել է որդին՝ Արգիշտի 1-ինը (786-764, գուցե՞ Արա Գեղեցիկ): Կարծում ենք ավելի ուշ Արգիշտի-Արա Գեղեցիկ միասնականացումը լիովին հնարավոր էր: Այս դեպքում կարելի է մտածել, որ պատմական հիմքի վրա ստեղծվել է "Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցը, ներկայացնելով Հայաստան-Ասորեստան երկարատև հարաբերություններից մի դրվագ²²:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Արա Գեղեցիկը, Շամիրամը և մյուսները պատմական, իրական անձեր են և գործել են մ.թ.ա. 9--8-րդ դդ.:

Հայ ուսումնասիրողներից Մ. Էմինը²³ և Ն. Ադոնցը²⁴ Պլատոնի Էրին նույնացնում են Արա Գեղեցիկի, իսկ Արմենիոսին՝ Արամ թագավորի հետ:

Հայ պատմագրության մեջ Արա Գեղեցիկը որպես պատմական անձ կամ ընդունվում է (Մ. Էմին, Ռ. Իշխանյան), կամ մերժվում (Գ. Ղափանցյան, Ն. Ադոնց, Ա. Մատիկյան): Արա Գեղեցիկի պատմականությունն ընդունողները, հենվելով Խորենացու, ինչպես նաև հայ և օտար հեղինակների վկայությունների վրա, գտնում են, որ Արա Գեղեցիկը պատմական, իրական անձ է, եղել է Հայաստանի թագավոր և գործել է մոտավորապես մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին (Մ. Էմինի հաշվարկներով մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին): Արա Գեղեցիկի պատմականությունը մերժողները նրան համարում են միայն զարնան, զարթոնքի ու ռազմի աստված, իսկ "Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցը՝ առասպել: Նրանք շեշտում են հատկապես Արայի մեռնող-հառնող բնության աստված լինելու հատկանիշը, համեմատելով նրան բաբելական Թամուզի, փյունիկյան Ադոնիսի (որը հետո անցավ հույներին), եգիպտական Օզիրիսի, փռուզիական Ատտիսի, սեմիտական Էշմունի ու մեռնող-հառնող այլ աստվածների հետ:

Համարիտ լինելով Արա Գեղեցիկի իրական, պատմական անձ լինելուն, նկատենք սակայն, որ նա ուշ շրջանի պատմական դեմք է և կապ չունի անհիշելի ժամանակներից Հայկական լեռնաշխարհում տարածված արևի աստված ԱՐ-ԱՐԱՅԻ պաշտամունքի հետ, բացի միայն անունից, որը Հայկական լեռնաշխարհում դարձել էր սիրված ու տարածված անուն: Հետևաբար, Հայկական լեռնաշխարհում եղել են ԱՐ-ԱՐԱ Աստված (անհիշելի ժամանակներ) և Արա Գեղեցիկ թագավոր (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբ): Արդեն հիշատակված Արայան Արա, Էր-Արմենիոս, Այր-Էրեմոն անունները ևս անկասկած կապ ունեն ԱՐ Աստծո անվան հետ և արձագանքն են այդ աստծո պաշտամունքի ու տարածվածության:

Հայաստանում տարածված աշխարհագրական ու անձնական անունները (երբ անունների մեծ մասում անունը հնչում է Ար- ձևով), ինչպես նաև այլ ժողովուրդների մոտ ընդունված ու պահպանված ԱՐ Աստծո (Ares, Arina, շԸ, Aria) անունները հուշում են, որ աստծո նախնական անունը եղել է ԱՐ: Գ. Ղափանցյանը գտնում է, որ "ինչ-որ ժամանակ հայերը աստծուն կոչել են ԱՐ"²⁵: Մ. Գավուրջյանը ևս ընդունում է աստծո հնագույն ԱՐ անունը:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայկական ցեղերի հնագույն ու գլխավոր աստվածը արևի ԱՐ Աստվածն էր: Պատմագրության մեջ վկայություններ չկան ԱՐ Աստծո պատվին կառուցված տաճարների, սրբավայրերի ու նրան նվիրված տոնակատարությունների մասին, իսկ որ դրանք եղել են, անկասկած է: Հայտնի է, որ հայոց հնագույն հոգևոր կենտրոններ են եղել Արդիինի (Մուսասիր, Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մաս) և Աշտիշատ (Հարք գավառ) քաղաքները: Բացառված չէ, որ այս քաղաքներում եղել են ԱՐ Աստծուն նվիրված տաճարներ: Չնայած Արդիինի հիշատակվում է ուրարտական արձանագրություններում, անկասկած այն ավելի հին ու ընդունված հոգևոր կենտրոն է եղել, հակառակ դեպքում, ապահովության համար, այն պետք է գտնվեր պետության կենտրոնում և ոչ պետության հարավային սահմանների մոտ, որի նկատմամբ մեկ անգամ չէ, որ սոսնձություններ են կատարել ասորեստանցիները:

Անկասկած, ԱՐ Աստվածը տարվա մեջ ունեցել է տոնակատարության իր օրը: Ամենայն հավանականությամբ այն նշվել է մարտի 21-ին՝ զարնանային գիշերահավասարի օրը, երբ Հայկական լեռնաշխարհի ցուրտ ձմեռը տեղի է տալիս, նրան հաջորդում է զարունը և սկսվում է ցերեկվա, լույս ու արևի հաղթանակը գիշերվա ու խավարի դեմ: ԱՐ Աստվածը արևի, զարնան, բնության ու զարթոնքի աստվածն էր և բնական էր, որ նրա տոնը նշվեր հենց զարնանային արևադարձի օրը՝ մարտի 21-ին: Ըստ որոշ աղբյուրների, մեր նախնիները այդ օրը համարել են նաև նոր տարվա սկիզբ: Այդ մասին է վկայում Մատենադարանում պահպանվող տոմարական մի պատառիկ (թիվ 1999 ձեռագիրը), որտեղ գրված է հին հայկական ու հռոմեական ամիսների զուգահեռ ցանկը: Այդ փաստաթղթի վերնագիրն է "Ամիսք Հայոց և Հռոմի հանդեպ միմեանց", ցանկը սկսվում է նավասարդից, "Նավասարդի, որ է մարտի, Հռոմի ապրիլի..." և վերջանում է "Հռոտից փեպրուարի"²⁶ ամսով: Հնդեվրոպացիներից իրանցիները պահպանել են Նոր տարին մարտի 21-ից սկսելու նախնիների կարգը: Հայոց հեթանոսական տոմարի մեջ ևս պահպանվել են արևի ԱՐ Աստծո պաշտամունքի հետքերը: Այսպես, հեթանոսական տոմարի 6-րդ ամիսը կոչվել է Արաց, "այն նշանակել է արերի (արմեններ) օրեր և նվիրված էր ԱՐ Աստծո տոնակատարություններին"²⁷: Ա. Մատիկյանը գտնում է, որ "Արաց" պիտի նշանակի "Արայի օրեր": Հետաքրքիր է նաև, որ Թեսալիայի (Հունաստան) տոմարով մարտ ամիսը կոչվում էր Արես և համընկնում էր հայոց փետրվար-մարտ ամիսներին, եթե հունվարը օգոստոսից է

հաշվվում²⁸: Հռոմում ևս գարնան առաջին ամիսը, գարնան, զարթոնքի ու երկրագործության (մ.թ.ա. 3-րդ դարից ռազմի աստված) Mars աստծո անունով կոչվել է մարտ: Այդ ամսին են կատարվել նաև նրան նվիրված տոնակատարությունները²⁹: ԱՐ Աստծո պաշտամունքի հետ մեծ հարազատություն ցուցաբերող սլավոնական արևի, գարնան, բերքի ու ռազմի աստված շՐ աստծուն նվիրված տոներն ու տոնակատարությունները ևս նշվել են վաղ գարնանն ու ամռանը³⁰: Հետաքրքիր են շՐ աստծո նկարագրի վերոհիշյալ հատկանիշները բնութագրող яркий "պայծառ", яровои "գարնանային", ярыи "կատաղի" բառերը և այլն: Հայոց հեթանոսական տոմարի 8-րդ ամիսը՝ Արեգը ևս կապ ունի արևի պաշտամունքի հետ: Արեգ է կոչվել նաև յուրաքանչյուր ամսվա առաջին օրը: Ուրարտուի Բշպուհինի թագավորի (825-810) արձանագրության մեջ կարդում ենք "Բշպուհինեն սահմանեց կարգ. Արև ամսին տոնակատարություն կատարել Խալդեին, Թեյշեբային, Շիվինին և աստվածներին բոլոր"³¹:

Թե որ ամիսն է Բշպուհինին արև-ամիս համարել, հայտնի չէ, կարևորն այն է, որ եղել է այդ ամիսը: Ամենայն հավանականությամբ Ալդի-Խալդիին ու մյուս աստվածներին (Թեյշեբա, Շիվինի) նվիրված տոնակատարությունները ևս կատարվել են մարտ ամսին:

Մեզ չի հասել նաև ԱՐ Աստծո պատկերը, անշուշտ դարձյալ խոր հնության պատճառով, սակայն ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ ԱՐ Աստվածը կարող էր պատկերվել այնպես, ինչպես Խալդին է պատկերվել իր ուղեկից առյուծի, նաև արծվի ու ցուլի հետ (ավելի հաճախ՝ կանգնած առյուծի մեջքին): Ուրարտական բնակավայրերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են մշակութային բազմաթիվ արժեքներ, որոնց վրա Խալդին պատկերված է առյուծի մեջքին՝ հաճախ ունենալով արծիվի թևեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՐ Աստվածը պատմական ինչ-որ ժամանակահատվածում իր տեղը զիջել է այլ աստվածների (Արամազդ, Վահագն, Միհր, Ալդի-Խալդի): Հայոց ուշ շրջանի հեթանոսական դիցարանը գլխավորում էր Արամազդը, Վահագնը ժառանգել էր արևի ու ռազմի, իսկ Միհրը՝ կրակի (արև) հատկանիշները: Ինչպես տեսնում ենք, այդ աստվածներից յուրաքանչյուրը ժառանգել էր ԱՐ Աստծո նկարագրի ինչ-որ հատկանիշ: Այդպես չէ Խալդիի դեպքում: Երբ համեմատում ենք ԱՐ Աստծո և Ալդի-Խալդիի նկարագրի հատկանիշները, նկատում ենք, որ Խալդին ժառանգել էր ԱՐ Աստծո նկարագրի համարյա բոլոր հատկանիշները (արևի, ռազմի, երկնքի, բուսականության): Նշենք նաև, որ Կելիշինի (Ուրմիա լճի հարավարևմտյան մաս) երկլեզվյան արձանագրության ուրարտական տարբերակում աստծո անունը վկայված է Aldi, իսկ ասուրական տարբերակում՝ Haldi ձևով³²: Ալդի (Խալդի) աստծո անունը և նկարագրի վերոհիշյալ հատկանիշները - թույլ են տալիս մտածելու, որ Ալդի աստվածը կարող էր իր մեջ թաքցնել ԱՐ Աստծո անունն ու պաշտամունքը: Ժամանակի ընթացքում, միանգամայն հնարավոր էր ԱՐ Աստծո անվան փոփոխությունը. Ար-դի=Ալ-դի³³: Այս դեպքում ավելի է ամրապնդվում այն կարծիքը, որ ԱՐ Աստվածը կարող էր պատկերվել այնպես, ինչպես Ալդի-Խալդին է պատկերվել՝ կանգնած առյուծի մեջքին, արծվի թևերով կամ առանց թևերի: Ուրարտական դիցարանում եղել է Ar-a-a անունով աստված(ուհի), որն արդեն մեծ ու հզոր չէ: Բացի այս աստծուց, ուրարտական դիցարանի բազմաթիվ այլ աստվածներ ևս կրում են Ար-ով (նաև Էր, Ուր) սկսվող անուններ. Արսիմելա, Արծիբիդինի, Արդի, Արածա, Էրինա, Ուրա, նաև Աիրաինի և այլն:

Հնագույն բոլոր աստվածները հանդես են գալիս իրենց գույգերի հետ. Դումուզի--Ինանա (Շումեր), Թամուզ--Իշտար (Բաբելոն, Ասորեստան), Օզիրիս--Իզիդա (Եգիպտոս), Ատտիս--Քեբելե (Փռուզիա), Ադոնիս--Աֆրոդիտե (Հունաստան) և այլն: Հետևաբար, Հայկական լեռնաշխարհի հնագույն ԱՐ Աստվածը ևս պետք է ունենար իր գույգը: Ուսումնասիրությունները, հատկապես ազգագրական (անուններ, գրույցներ, ծիսական երգեր), հուշում են, որ շատ վաղուց Հայաստանում գոյություն է ունեցել Նար աստվածուհու պաշտամունք: Այս աստվածուհու մասին ևս շատ քիչ տեղեկություններ կան, ամենայն հավանականությամբ դարձյալ խոր հնության պատճառով: Ցավոք քիչ տեղեկություններ կան նաև հայոց հնագույն դիցարանի մասին: Այդ առումով հետաքրքիր է մեր հնագույն հարևանների դիցարանը: Շումերները ունեցել են արևի Բաբբար և լուսնի Նաննար³⁵ աստվածները: Ասորեստանում եղել է Նար աստվածուհի, որն ըստ մի շարք ուսումնասիրողների (Դեյմել, Գ. Ղափանցյան)³⁶, ջրերի ոգին էր: Այս դեպքում կարող ենք հիշել "Սասնա ծռերի" Օռվինարին, որը հենց ջրից էլ հղիացավ: Փռուզիացիները ունեցել են Նանե³⁷ աստվածուհի, հույները՝ Նանե հավերժահարս, սկանդինավյան ժողովուրդները՝ Նանա³⁸ դիցուհի:

Հայերը ունեցել են Նանե աստվածուհի, որն Արամազդի դուստրն էր³⁹: Հայաստանի շատ շրջաններում (Արցախ, Ուտիք, Լոռի) մորը, նաև մեծ մորը այսօր էլ անվանում են նան, նանի, նանե: Նանա սանսկրիտ նշանակում էր մայր⁴⁰:

Հիշենք, որ Մասունցի Դավիթը կորեկի արտի տեր պատավին, որ նաև իր հոր վաղեմի ընկերուհին էր, անվանում էր նաև: Մ. Խորենացու վերոհիշյալ աշխատության մեջ Արա Գեղեցիկի կնոջ անունը Նուարդ է: Մ. Գավուքյանը անդրադարձալով Նուարդին գրում է. "Նուարդ պիտի նշանակի Արդ-Արայի Նու-Անահիտը կամ Արևի սիրելի Լուսինը"⁴¹:

Գ. Ղափանցյանը ևս Նուարդ անունը կապում է ԱՐ Աստծո պաշտամունքի հետ: Ըստ նրա, Նուարդ անունը կազմված է նու (նավ, նոր) և վարդ, ծաղիկ բառերից, որ "նոր ծաղիկ" իմաստն ունի⁴², իսկ դա համապատասխանում էր ԱՐ Աստծո գարնան, բնության ու զարթոնքի նկարագրին: Լուսնի աստվածուհու անունը Վանի Միերյան դռան վրայի արձանագրության մեջ կարդացվում է Sielardi, նաև Sinuardi, Նուարդ⁴³:

Նար աստվածուհու պաշտամունքի հետ է կապված ազգագրական երգի մի պատառիկ, որը դարեր շարունակ երգվել ու պահպանվել է հայ ժողովրդի մեջ: Պահպանված սովորույթի համաձայն անձրև ակնկալելու խնդրանքով երեխաները նար/նուր տիկնիկի հետ շրջում էին տները և երգում.

Նուրին, Նուրին եկել է
Աչպա հուրին եկել է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր գոտի կապել է,
Յուղ տվեք, վարսը քսենք,
Չու տվեք, ձեռքը դնենք:

Ժամանակի ընթացքում հանդես են եկել այլ աստվածուհիներ (Նանե, Անահիտ), որոնք իրենց վրա են վերցրել Նար աստվածուհու բնութագրի հատկանիշները: Եզիպտացիների Իսիսը, ասորեստանցիների Միլիտան, փյունիկեցիների Աստարտան, հույների Արտեմիսը և ուրիշներ հաճախ են պատկերվել լուսնի մահիկով: ՆԱՐ աստվածուհուն ավելի ուշ շրջանում փոխարինած Անահիտ աստվածուհին ևս նախ եղել է լուսնի աստվածուհի, իսկ հետագայում նաև՝ պտղաբերության ու սիրո աստվածուհի: Մատաղից հայտնաբերված նրան վերագրվող բրոնզե արձանիկի ճակատին թափված են երկու խոպոպիկներ լուսնի մահիկի տեսքով:

Այսպիսով, վերոհիշյալ բոլոր անունները (Նանար, Նար, Նանե) նաև Հայաստանում տարածված կանացի հնագույն Ծովինար, Հեղնար, Էլինար, Ոսկինար և այլ անուններ հուշում են, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն աստվածուհին ՆԱՐ աստվածուհին էր:

Հետևաբար, Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայկական ցեղերի արևի ԱՐ Աստծո գույգն էր լուսնի հնագույն ՆԱՐ⁴⁴ աստվածուհին: Հիշենք Խորենացու այն վկայությունը, որ հայոց մեհյաններում դրվել են արևի ու լուսնի արձաններ:

1. Սեբեոսի աշխատության մեջ Արայի վերքերը լիզում են Շամիրամի արալեզ աստվածները (Սեբեոս, էջ 6):

2. Վիլքեն պապիրուսները թվագրում է ոչ ուշ քան մ.թ.ա. 1-ին դար, ելնելով այն հանգամանքից, որ դրանց վրա կարդացվում է Տրայանոս կայսեր (53-117 թթ.) անունը: (Wilcke, Ein neuer griechischer Roman, Hermes, 28, էջ 161-193, Ն. Ադոնց, Հին հայոց աշխարհայացքը, 1926, էջ 43-45):

3. Ն. Ադոնց, Հայաստանի Պատմություն, Երևան, 1972, էջ 376:

4. Ն. Ադոնց, 1972, էջ 376:

5. Դիոդորոս Միլիդիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985, էջ 16:

6. Ն. Ադոնց, 1972, էջ 376,

7. Платон, Республика, Москва, 1929, стр. 614, Platon, R. P., X 614.

8. A. Sayce, 1882, էջ 417: Ա. Ղափանցյան, 1945, էջ 60:

9. Г. Фрайданк, Новые данные об отношениях среднеассирийского царство с северными и северо-западными странами, "Древний Восток", 2, 1976, стр. 87-88.

10. УКН, 287-295.

11. И. Мещанинов, К анализу имени Еримена, "Язык и мышление", I, стр. 37-42.

12. Գ. Ղափանցյան, 1940, էջ 221-225: Մակայն Ռուսայի Էրիմենայի որդի (հայի որդի) լինելը, նրա հայկական ծագումը Ղափանցյանը բացատրում է այն հանգամանքով, որ սկսվել էր արմենների ներթափանցումը Ուրարտու, որի ժամանակ "նրանց հաջողվել էր վերցնել իշխանությունը":

13. МНМ, I, стр. 54, II, стр. 636.

14. Մ. Գավուքյան, 1973, էջ 365-366 (E. C. Quiggin, Encyclopedica Britannica 13 ch Ed, 1926, Ireland):

15. Հ. Փլավիոս, *Antiq Jud, Lib. 7, car 51*:
16. Երվանդ Լալայանը Ուզունլար (այժմ Օձուն) գյուղում ապաստանած կարնեցի Մահակ Մահակյանից գրի է առել "Արա Գեղեցիկ և Շամիրամ" գրույցի մեկ այլ տարբերակ, որի բովանդակությունը հետևյալն է. Արամ թագավորը, որը ապրում էր Մոսուլում, երեք տղա ուներ: Կրտսերը Արա Գեղեցիկն էր, որը հոր տկարացած աչքերի համար դեղ է բերում Շամիրամից: Այնուհետև Արան ամուսնանում է Չվարթի հետ, բայց Շամիրամը գորքով գալիս է Հայաստան: Ճակատամարտում Արան սպանվում է: Այնուհետև կրկնվում է Խորենացու պատմությունը (Ազգագրական հանդես, 9-րդ գիրք, 1902):
17. Մ. Խորենացի, էջ 59:
18. Լ. Շահինյան, Գիրքը դարերի խորքից, Երևան, 1984, էջ 57:
19. Մ. Չամչյան, Հայոց պատմություն, 1984, հ. 3, Ժամանակագրություն, էջ 22-32:
20. УКН, 43-56.
21. Մ. Խորենացի, էջ 65:
22. Այլ տեսակետի համաձայն Արևելյան Հայաստանում գոյություն է ունեցել հայկական թագավորություն (մ.թ.ա. 11--9-րդ դդ.), Արմավիր կենտրոնով, որտեղ իշխել են Արամը, Արա Գեղեցիկը և մյուսները (Վ. Խաչատրյան, էջ 102-117):
23. Մ. Էմին, Վեպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, էջ 91:
24. Ն. Ադոնց, 1972, էջ 373:
25. Г. Капанцян, Хеттские боги у армян, Ереван, 1940, стр. 27.
26. Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 99:
27. Մ. Գավուրջյան, 1973, էջ 123:
28. Ա. Մատիկյան, 1930, էջ 314:
29. Брокгауз-Ефрон энциклопедия, 36, стр. 689, ,Зу³м³Э³П³Э м³н³с³Э, չз 36:
30. ըհն, 1931, Ց. 65.
31. ՀԺՊՔ, էջ 45:
32. УКН, 19.
33. Հայերենում "դի", "դիք" բառերը աստված իմաստն ունեն (Հ. Աճառյան, 1971, էջ 672): Հայերենում աստվածները հոգնակի ձևով կոչվում են դիք, եզակի ձևով՝ դի (Է. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 303): Ուրարտական արձանագրություններում ևս "դի" մասնիկը հանդես է գալիս աստված իմաստով, հանդիսանալով դիցանվանակերտ մասնիկ. Ալ-դի, Արծիբի-դի-նի և այլն:
34. ձԽձ, 27 (22).
35. Մ. Գավուրջյանը հետաքրքիր բացատրություն է տալիս Բաբբար և Նաննար անուններին: Նա գտնում է, որ Բաբբարը կազմված է հայր (պապ) և Ար բաղադրիչներից, իսկ Նաննարը՝ նան (լուսին) և Ար բաղադրիչներից, որ նշանակում է Արի Նանն (լուսին) (Մ. Գավուրջյան, 1973, էջ 109):
36. Г. Капанцян, 1940, стр. 42-43.
37. Մ. Երեմյան, Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը, հոդված "Գիտություն և տեխնիկա" ամսագրում, 1985, 4, էջ 32:
38. Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 220:
39. Գ. Ագաթանգեղոս, էջ 443:
40. Վ. Բդոյան, էջ 220:
41. Մ. Գավուրջյան, 1973, էջ 106:
42. Գ. Ղափանցյան, 1945, էջ 107:
43. Sielardi անունը ստուգաբանվում է siel կամ sel "գիշեր" և ardi "արև" բառերով, որը "գիշերվա արև" իմաստն ունի (Գ. Ղափանցյան, 1940, էջ 46): Գ. Ջահուկյանը ardi-ն մեկնաբանում է "ուժ, իշխանություն, աստված" իմաստով, իսկ sel-ը կապելով հունարեն լուսին, լույս, փայլ բառերի հետ, sielardi-ն մեկնում է "լուսնաստված" իմաստով (Գ. Ջահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում (հոդված), ՊԲՀ, 1986, թիվ 1, էջ 49-50):
44. Գ. Ղափանցյանը հետաքրքիր կապ է տեսնում սլավոնական Մարինա և Նար անունների միջև: Նա գտնում է, որ ռուսաց ջրային պաշտամունքի հետ կապված Մարինա, Մարենա կամ Մարան կանացի խրտվիլակի անունը առաջացել է չլահպանված Նարինա անունից (Գ. Ղափանցյան, 1945, էջ 86):

Ար Անվան Արտագույունը Հայոց Անձնական Ու Աշխարհագրական Անուններում

Աշխարհի ոչ մի երկրում հնարավոր չէ հանդիպել Ար-ով սկսվող այնքան շատ անձնական ու աշխարհագրական անունների, որքան Հայաստանում: Հայոց հնագույն շատ անձ-անուններ ու տեղանուններ հայոց ցեղանունների և երկրանունների նման ունեն Ար, նաև Էր, Իր, Ուր բաղադրիչները: Նախ խոսենք անձնանունների մասին: Գրավոր հիշատակված Ար-ով սկսվող անձնական անունների հանդիպում ենք մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսից սկսած: Դրանք Խուրրի Միտանիի արքաների անուններն են: Նշենք այդ անուններից մի քանիսը. Արտատամա, Արտաշումարա, Արտամանյա (վասալ իշխան): Այս անունները գրված են արքայ-բարեկարգ լեզվով ու սեպագրերով, որն ազդել է անվան ճիշտ գրության ու արտասանության վրա, քանի որ անունները հարմարեցվել են օտար լեզվի ու սեպագրերի:

Մ. Խորենացու "Հայոց պատմություն" աշխատության մեջ հիշատակվում են 11 հայ նահապետների անուններ, որոնցից 5-ը սկսվում են Ար-ով՝ Արամայակ, Արամայիս, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ: Հիշատակվում են նաև Արտավազդ, Արտաշես, Արշակ, Արշամ, Արտավան, Արքեղայոս, Արշավիր անունները: Վերոհիշյալ անուններին ավելացնենք Արմենակ, Արտան, Արգամ, Արբակ, Արծրուն անունները և այլն: Վանի թագավորության արքաների արձանագրություններում հանդիպում են Արամե, Արգիշտի, Էրիմենա, նաև Ռուսա-Ուրսա անունները, պարսից Դարեհ 1-ին արքայի արձանագրության մեջ՝ Արախա անունը և այլն:

Ար-ով սկսվող բազմաթիվ անուններ կան նաև հին հույների և հին իրանցիների¹ մոտ: Աշխատությունը անուններով չճանաբաժնելու համար դիմենք միայն հույն պատմիչ Հերոդոտին: Նրա "Պատմություն" աշխատության մեջ հանդիպում ենք Ար-ով սկսվող կանացի և տղամարդու բազմաթիվ իրանական և հունական անունների: Իրանական անուններ. Արտայունտե, Արիստոնե (կանացի), Արիոբիզնես, Արտայուկտե, Արիումարդոս, Արտեմբարես, Արտայոս, Արտյուփիոս, Արսամես, Արյուանդես, Արտաքայես, Արտաբագոս, Արտանես, Արտաբանոս, Արտյուփոս, Արտաքսերքսես, Արիագոս... (տղամարդու): Հունական անուններ. Արիադնա, Արգեյա, Արտեմիս (կանացի), Արիստեսա, Արգեսոս, Արիստոդեմոս (տղամարդու): Անշուշտ իրանական անունները հունական ձևով են ներկայացված: Եվ էթե այժմ հույները սակավ են օգտագործում այդ անունները, ապա իրանցիները համարյա մոռացել են դրանք: Ի տարբերություն իրանցիների և հույների հայերը այսօր էլ շարունակում են պահպանել իրենց հնագույն անունները:

Ար արմատով կազմված բազմաթիվ անձնանուններ (նաև ազգանուններ) են պահպանվել նաև հնդեվրոպական այլ ժողովուրդների մոտ²: Այսպես. գերմանական խերուսկ ցեղի առաջնորդին, որն ապստամբել էր հռոմեացիների դեմ, կոչում էին Արմենիուս³ (1-ին դարի սկիզբ): Գոթերի առաջնորդին, որը հաղթել էր սլավոնական վենետներ ցեղին, կոչում էին Էրմանարիխ⁴ (6-րդ դար): Թվարկենք նաև այլ անուններ. Արմայակ, Արմին, Արման, Արմանդ (Հարմանդ), Արթեն, Արթենգ, Գերման (Հերման), նաև Յարուլավ, Յարումիր, Յարուպոլ, Յարիգա, Յարիգին, Յարովոյ և այլն:

ԱՐ Աստծո անունով են կոչվել ոչ միայն ցեղն ու բնօրրանը, այլև Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ աշխարհագրական անուններ, գետեր, լեռներ, ավաններ, շեներ ու քաղաքներ: Հայտնաբերված հնագույն գրավոր աղբյուրներում (խեթական, ասուրական, ուրարտական, հունական) Ար-ով սկսվող բազմաթիվ աշխարհագրական անուններ են հիշատակվում Հայկական լեռնաշխարհի գանազան մասերում: Ար-ով սկսվող տեղանուններ են հիշատակվում նաև Հայկական լեռնաշխարհից դուրս, սակայն դրանք համեմատաբար քիչ են⁵:

Արդեն խոսել ենք Արատտա, Արարադ, Արմանի, Արմե, Արմենիկ, Արմինա, Ուրմե, Ուրարտու անունների մասին: Աքաղական աղբյուրներում հանդիպում ենք Արավաննա և Արաունա երկրամասերի անուններին: Հնագույն խեթական աղբյուրները հիշատակում են Արաունա, Արավանա, Արաց, Արացաշտիա, Արմատան, Արիպսա, Արնիա կամ Արնիս երկրամասերի ու քաղաքների մասին⁶: Խեթական թագավորության արևելյան սահմանագլխին հիշատակվում են Արան (Առանիա) և Արանի ճանապարհային կայանները: Խեթերի երկրում հիշատակվում է Արինա երկրամասը (քաղաքը): Հայկական լեռնաշխարհում Ար-ով սկսվող տեղանունները հատկապես շատ են հանդիպում ասուրական գրավոր աղբյուրներում: Դրանք երկրամասեր են, մեծ ու փոքր բնակավայրեր, լեռներ, գետեր, բերդաքաղաքներ և այլն: Հիշատակենք դրանց մի մասը. երկրամասեր - Արմալի, Արմանգու, Արմարիլի, Արմե (Ուրմե), Արսիանիշ, Արամալե կամ Արամալի, Արանիա, Արգաբիա, Արգավ, Արգոն, Արգուն, Արթուինի, Արիանի, Արումու, Արքունի, Հարիա, ..., բնակավայրեր, բերդաքաղաքներ -- Արմունու, Արնա, Արնիա, Արսի, Արտկուն, Արմալի, Արամե (ամրոց), Արբու, Արդինի, Արդուպա,

Արգաբիա, Արգանիա, Արգաշկու, Արիդու, Արինու, Արցանիա (Արգն քաղաքը), Արցաշկու (Արծն), Արուրա, ..., լեռներ, լեռնագագաթներ -- Արսաբիա, Արսիա, Արսիդու, Արարադ, Արդիկշի, Արդյուսի, Արգանիբու, Արկանիա, Արուա, Արունա, Արունի, Արուտ, ...: Ուրարտական արձանագրություններում ևս հանդիպում ենք Ար-ով սկսվող բազմաթիվ տեղանուններ: Դրանք դարձյալ երկրամասեր են՝ Արամալե կամ Արամալի, Արիաինի, Արկուկի, Արիի, Արմարիլու կամ Արմալի, Արսուինի, Արտազիանի, Արտաշկու, ..., քաղաքներ՝ Արմալի, Արա(տ)նի, Արինա, գետ՝ Արգանի (Արածանի) և այլն:

5-րդ դարից սկսած հայկական գրավոր աղբյուրներում ևս հանդիպում ենք Ար-ով սկսվող տեղանունների -- Արմավիր (քաղաք), Արաման, Արամանա (գյուղեր), Արամանյակ, Արտագերս (բերդեր), Արման-Արմանա (Արմե-Շուպրիա), Արմատաս-Ամարա (Արցախ) երկրամասերի անուններին և այլն:

Հունական աղբյուրները հիշատակում են Արանիա (Արանե, Արանիա), Արանգաս քաղաքները, Վանա լճի համար հույն պատմիչները օգտագործում են Արեսթուսա, Արեստիա, Արսեն (Արսենե) անունները, Արաքս գետի համար՝ Արես անունը և այլն:

Շարունակենք թվարկել այլ անուններ ևս. գյուղեր - Արամիս (Զանգեզուր), Արամո (Կիլիկիա), Արամոն (այժմ՝ Արամուս), Արաշատ (Վասպուրական), Արբատ (Արևմտյան Հայաստանում և Երևանի նահանգում), Արգո (Խարբերդի նահանգ), Արտոս և այլն:

Երկրամասեր - Արագունի կամ Արեգունի, Արան-Առան, Արանիա, Արմանու, Արցի, քաղաքներ - Արբելա, Արգինա, Արգիշա, Արգոս, Արգանգան (Երզնկա), լեռներ - Արտոս և այլն: Հիշենք նաև Արարատ, Արագած, Արաքս, Արածանի, Արեգունի, Արտագ, Արենի, Արմավիր⁷, Արտաշատ, Արճեշ, Արուճ, Արցախ, Արմաշ, Արծն, նաև Երիզա, Երզնկա, Երևան անունները և այլն:

Ար-ով սկսվող տեղանունների այս բազմազանությունը և տարածվածությունը Հայկական լեռնաշխարհում բոլորովին էլ պատահական չէ: Այն սերտորեն կապված է արևապաշտության՝ արևի ու ԱՐ Սաստճ պաշտամունքի հետ: Ժողովուրդը հազարամյակներ շարունակ սիրելի աստճո անունով է կոչել իր գավակներին և աշխարհագրական շատ անուններ:

Ար-ով սկսվող բազմաթիվ աշխարհագրական անուններ կան նաև Եվրոպայում: Առանց մեկնաբանելու թվարկենք այդպիսի անուններ՝ գետեր - Արա, Արմա, Վարմենա, Առնո, Արմանթիա, Արագոն, Արախս⁸, նաև Ալմա, Ալբինա, Ալմանա, Ալարա, Էլբա (1-ր անցում), լեռներ - Արալար, Արամո, Արամուր, Արաքսամենդի (Իսպանիա), բնակավայրեր - Արմորիկա, Հարմինա (Ֆրանսիա), Արագ, Արիա, Արան, Արանգո, Արանիխո (Իսպանիա) և այլն: Ավելացնենք, Իրան (Արան), Ալանիա (1-ր անցում) և այլն:

Հունաստանում ևս եղել են Ար-ով սկսվող բազմաթիվ աշխարհագրական անուններ: Նշենք մի քանիսը. (ըստ Հերոդոտի) քաղաքներ - Արտակե, Արմատիդես, Արգոլիս (Արգոս), գետեր - Արտանես, Արտեսկոս, Արարես և այլն:

Հայ և օտար ուսումնասիրողներին միշտ հետաքրքրել է հայոց 13-րդ մայրաքաղաքի Երևան անունը:

Գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ, որտեղ հեղինակները տարբեր բացատրություններ են տվել Երևան անվանը: Նորից անդրադառնանք այդ հարցին և փորձենք նորովի մեկնաբանել Երևան անվան ծագումը:

1. Է. Գրանտովսկու "Ранняя история иранских племен Передней Азии" աշխատության մեջ որպես հին իրանական անուններ հիշատակվում են մ.թ.ա. 9--8-րդ դդ. ասուրական գրավոր աղբյուրներում վկայված Արտասարի, Արտաշտուա, Արշամա, Արտասիրարու, Արդիմանիս, Արդարա, Երվանդ անունները և այլն (Э. Грантовский, стр. 119, 121, 212, 214): Է. Գրանտովսկին ևս նշում է իրանական անձնանունների և տեղանունների աղավաղված լինելը ասուրական աղբյուրներում:

2. Ներկայացվում են միայն Ար-ով սկսվող անուններ:

3. Մ.թ. 9 թ. Արմենիուսը Թևթորուրգյան անտառում հաղթել է հռոմեացիներին: Տակիտոսի վկայությամբ, Արմենիուսը քաջարի ու ազնիվ էր մարտում, հանկարծակի, առանց նախազգուշացման չէր հարձակվում, չէր կռվում կանանց ու ծերերի դեմ և այլն (Tacite, Analles, գիրք I, II, XII, XIII): Համեմատության համար հիշենք նմանատիպ հատկություններով օժտված հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպի հերոս Սասունցի Դավթին:

4. Н. Карамзин, Об истории государство России, Москва, 1990, стр. 14.

5. Այդ բնակավայրերը կարելի է դիտել նաև որպես հայկական գաղութներ, որոնք հիմնադրել են տեղաշարժեր կատարող հայկական ցեղերը (նաև Ուրր, Ուրուկ, Ուռհա, Արրապխա):

6. Տեղանունների մասին տես "Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան" աշխատությունը, Երևան, 1986, հեղինակներ՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան:
7. Մ. Գավուքչյանը Արմավիր անունը ստուգաբանում է որպես Արմա-Էրի "Արմա ցեղի քաղաք" (Մ. Գավուքչյան, 1973, էջ 143), Վ. Խաչատրյանը՝ "տոհմիկ իշխան" (Վ. Խաչատրյան, էջ 103), Հ. Կարազեռոյանը՝ "լուսնաքաղաք" (Հ. Կարազեռոյան, էջ 56):
8. Գետանունների և ջրանունների մասին տես նաև Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի աշխատությունը, 1984, էջ 953:

Ար Աստծո Անունը Երեվան Անվան Մեջ

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է: Նրա տարածքում կատարված հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ մարդն այստեղ ապրել է տասնյակ հազարավոր տարիներ առաջ: Հատկանշական է այն փաստը, որ Երևանի տարածքը անընդհատ բնակեցված է եղել: Ուսումնասիրությունները պարզել են, որ քաղաքի տարածքում, տարբեր ժամանակներում առաջացել և տարբեր պատճառներով կործանվել են բազմաթիվ բնակատեղիներ (բնակավայրեր): Ժամանակագրական առումով քաղաքի տարածքում հայտնաբերված հնագույն բնակավայրը Երևանյան կամ Հրազդանյան քարայրն է (Երևանյան լճի մոտակայքում, Հրազդան գետի ափին): Պեղումների ժամանակ քարայրում հայտնաբերվել են նյութական մշակույթի 5-6 շերտեր, որոնցից հնագույնը թվագրվում է հին քարե դարի մուստերյան շրջանով (100.000-35.000 տարի առաջ): Այնուհետև, Երևանի տարածքում մարդու բնակության հետքերը հայտնաբերվում են նոր բնակավայրերում, ստեղծելով պատմական հուշարձանների մի ամբողջական շղթա: Թվարկենք դրանք. Շենգավիթ (մ.թ.ա. 4--2-րդ հազարամյակներ), Ծիծեռնակաբերդ, Կայարանամերձ հրապարակ (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ), Արին բերդ (Էրեբունի), Կարմիր բլուր (մ.թ.ա. 1-ին հազարամյակ), Ավան-Առինջ (մ.թ.ա. 2--1-ին դդ.), Կարմիր բերդ (մ.թ. 1--10-րդ դդ.), Երևանի բերդ (մ.թ. 7-րդ, 16-րդ դդ.) և այլն: Ուսումնասիրողներին Երևանը հետաքրքրել է հատկապես իր անվամբ: Մեզ են հասել Երևան անվան բազմաթիվ տարբերակներ: Հիշատակենք դրանք Երևան, Արիվան, Արեւան, Էրիվան, Էրեվան, Ըրեվան, Բեվան և այլն:

Գոյություն ունեն Երևան անունը մեկնող բազմաթիվ բացատրություններ ու ավանդություններ: Ամենահին ու ամենատարածված բացատրությունը կապված է Նոյ նահապետի անվան հետ: Ժողովրդի մեջ պահպանված ավանդության համաձայն, ջրհեղեղից հետո, երբ ջրերը հետ են քաշվել, Նոյ նահապետը Արարատ սարից տեսել է ցամաք ու բացականչել, "Երևաց, երևաց", որն էլ հետագայում ձևափոխվելով դարձել է Երևան:

Ուսումնասիրողներից ոմանք (Մ. Չամչյան, Հ. Նալյան) Երևան անվան ծագումը կապել են Երվանդյան հարստության վերջին թագավոր Երվանդ 4-րդի անվան հետ (մոտ. մ.թ.ա. 220-201): Բացատրությունների շարքում պարզապես կարելի էր անտեսել թուրք-պարսկական մի ավանդություն, ըստ որի Երևան անունը ծագել է պարսիկ խան Ռևան-Ղուլիի անունից: Այս ավանդությունը ժամանակ առ ժամանակ փորձում են չարաշահել հատկապես աղբբեջանցի պատմաբանները, բայց դա անընդունելի է հենց միայն այն պատճառով, որ Ռևան-Ղուլի խանը Երևանում իշխել է 16-րդ դարի սկզբներին, իսկ Երևան անունը հազարամյակների պատմություն ունի: 19--20-րդ դդ. Հայաստանի տարածքում հայտնաբերված հայոց հնագույն պետություններից մեկի՝ Ուրարտուի արքաների սեպագիր արձանագրությունների ընթերցումը հնարավորություն տվեց ոչ միայն ճշգրտել մի շարք աշխարհագրական անուններ, այլև նոր ձևով բացատրել դրանց իմաստը: Ուրարտական արձանագրություններում ընթերցվում են Էրիանի, Էրիախի, Էրեբունի անունները: Ռուսա 1-ին թագավորի (735-713) արձանագրության մեջ, որ հայտնաբերվել է Սևանա լճի մոտ գտնվող Ծովինար գյուղում, 22 երկրանունների հետ հիշատակվում է նաև Էրիանի (Երիանի) անունը: Ռուս հնագետ Մ. Նիկոլսկին Էրիանին տեղադրել է Երևանի տարածքում և Երևան անունը բխեցրել Էրիանիից¹: Այս տեսակետը պաշտպանել են Ե. Շահագիրը, Հ. Սանդալյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ: Էրիանին տեղադրել են նաև Սևանա լճի շրջակայքում (Բ. Մեջանինով, Գ. Մելիքիշվիլի, Գ. Ղափանցյան), այնուհետև՝ Կուրայրիի շրջակայքում: Գ. Ղափանցյանը Երևան անունը բխեցնելով Էրիա ցեղի անունից, միաժամանակ դա առեղծվածային է համարում, գտնելով, որ չպետք է անվերապահորեն ընդունել այդ վարկածը²: Վարկածների և տեսակետների այս շարքում Գ. Ղափանցյանը հպանցիկ ձևով առաջ է քաշում նաև այն տեսակետը, որ Երևան անունը կարելի է բացատրել "Էրի աւան" իմաստով³:

1951 թ., Արին բերդ բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են երկու սեպագիր արձանագրություններ, որոնց մեկի վերձանումից պարզվել է, որ Արգիշտի 1-ին թագավորը (786-764) մ.թ.ա. 782 թ. հիմնադրել է բերդ և կոչել Էրեբունի (ընթերցվում է նաև Իրբունի, Էրբունի, Իրպունի, Երեբունի)⁴: Սա Երևան (Էրեբունի) անվան մինչ այժմ հայտնի հնագույն հիշատակությունն է գրավոր աղբյուրներում: 1950-ական թվականներից գերիշխող է դառնում այն տեսակետը, որ Երևան անունը ծագել է Էրեբունի անունից (Բ. Պիտրովսկի, Մ. Բարայեյան, Կ. Հովհաննիսյան), իսկ Մ. Բարայեյանը կարծիք է հայտնում, որ Էրեբունի նշանակում է "հաղթանակ"⁵: Այս բացատրությունները տարիներ շարունակ ընդունվել կամ մերժվել են ուսումնասիրողների կողմից⁶:

Արդեն նշվել է, որ Հայաստանում Ար-ով սկսվող բազմաթիվ բնակավայրեր կան և որ այս երևույթը կապված է ԱՐ Աստծո անվան ու պաշտամունքի հետ: Մի քիչ ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ Արիվան, Էրիվան, Երևան անունները ևս կապված են ԱՐ Աստծո անվան հետ⁷:

Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ բնակավայրեր կան, որ ունեն -վան վերջավորությունը. Վան, Նախիջեվան, Իջեվան, Դիցավան, Մեվան, Օթեվան, Ավան, Վանք և այլն: Բոլոր օրինակներում վանը տեղի, բնակավայրի իմաստ ունի: Երևան անվան մեջ ևս հանդիպում ենք -վան վերջավորությանը (բաղադրիչին), իսկ անվան Ար-Էր բաղադրիչը ԱՐ Աստծո անունն է (Ար-Էր անցումների բազմաթիվ օրինակներ կան հայերենում. Արգրում-Էրգրում, Արաքս-Երասխ, Արիմենա-Էրիմենա): Հետևաբար Արիվան, Էրիվան անունները կազմված են Ար-Էր և -վան բաղադրիչներից, որն ԱՐ (ԷՐ) Աստծուն պաշտող մարդկանց՝ արիների բնակավայր (քաղաք) իմաստն ունի: Ի դեպ, Արգիշտի 1-ի արձանագրության մեջ հիշատակվող Էրեբունի անունը ևս խոսում է վերոհիշյալ բացատրության օգտին: Ուրարտական սեպագրերում eban-ն "երկիր" իմաստն ունի⁸: Ուսումնասիրողները նույնիմաստ բառեր են համարում հայերեն աւանը և ուրարտական արձանագրություններից հայտնի eban-ն⁹: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում էլ Էրեբունին կարելի է կարդալ Ար-Էրի աւան (բնակավայր, երկիր):

Այսպիսով, հայոց մայրաքաղաքի Երևան անունը ևս կապված է Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների հնագույն ԱՐ Աստծո անվան հետ:

1. М. Никольский, Клинообразные надписи Закавказья, "Материалы по археологии Кавказа", Москва, 1896, стр. 97.
2. Երևանի համալսարան, Գիտական աշխատություններ, 1940, հ. 14, էջ 322:
3. Գ. Ղափանցյան, 1945, էջ 151 (ծանոթագրությունը):
4. ձԽԾ, 138.
5. Մ. Իսրայելյան, Էրեբունի բերդ-քաղաքի պատմությունը, Երևան, 1971, էջ 13:
6. Երևան անվան բացատրության այլ տարբերակ է առաջարկում Հ. Կարազեռոյանը: Նա Արգիշտի 1-ինի վերոհիշյալ արձանագրության մեջ բնակավայրի անունը կարդում է Երեբունե (Երեբուն չվկայված ձևից) և գտնում, որ Երեբունեն բաղկացած է եր կամ երե և բոն (բույն) բաղադրիչներից, որը նշանակում է "երջանիկ քաղաք" (Հ. Կարազեռոյան, էջ 79-81):
7. Է. Դանիելյանը ենթադրում է, որ Էրեբունի անունը ծագել է Արա Գեղեցիկի անունից (Է. Դանիելյան, Հին հայոց առասպելաբանական պատկերացումները աստղային երկնքի մասին, ՊԲՀ, 1989, 3, էջ 111 (ծանոթագրություն)):
8. УКН, 28 (նաև էջ 393):
9. Գ. Ջահուկյան, 1987, էջ 428:

Արել-Աստծո Պաշտամունքի Հետքերը Հնագիտության Մեջ

Հայկական լեռնաշխարհում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ պատրաստված են մեծ վարպետությամբ և աչքի են ընկնում իրենց զարդաքանդակներով: Հայտնաբերված հնագիտական արժեքների մեջ մեծ թիվ են կազմում արեգակի ու նրա խորհրդանշանների պատկերները: Մեր նախնիները արևը պատկերել են երկրաչափական մարմինների (խաչ, սվաստիկա, շրջանակ), կենդանիների ու թռչունների (առյուծ, ձի, ցուլ, խոյ, արծիվ), իսկ ավելի ուշ մարդկային կերպարանքով (ԱՐ, Արամագո, Վահագն, Միհր): Արևի ու նրա խորհրդանշանների ուսումնասիրության համար կարևոր են հայկական ժայռապատկերները (Արագած, Գեղամա լեռներ, Սյունիք, Նախիջևան, Մեծամոր), որոնց ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները (Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Ս. Պետրոսյան) դրանք թվագրում են մ.թ.ա. 6--3-րդ հազարամյակներով¹: Ժայռապատկերներին արևը պատկերվել է ճառագայթավոր անիվից մինչև խաչ ու սվաստիկա (նկ. 4): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ և՛ Հայաստանում, և՛ հին աշխարհի այլ երկրներում (Շումեր, Բաբելոն, Եգիպտոս, Ասորեստան) ամենից ավելի տարածված էր արևի գունդը պատկերող անվաճն սկավառակը: Արևը իր պտույտի պահին պատկերվել է որպես անիվ, ճառագայթները՝ ճաղեր, իսկ ընթացքը՝ անիվի պտույտ: Ժայռապատկերներին բազմաթիվ են Արև-Աստծո և ամպ-վիշապների պայքարը ներկայացնող տեսարանները: Հետաքրքիր են նաև արև-լուսին կապն արտահայտող պատկերները: Հաճախակի հանդիպող պատկերներից են մակույկաձև լուսինը և նրա մեջ պատկերված արև-խաչը:

Արևի ու Արև-Աստծո տարածված խորհրդանշաններից են խաչն ու սվաստիկան², որոնց վաղագույն նմուշներին հանդիպում ենք հայաստանյան ժայռապատկերներին: Հանդիպում ենք արև-խաչ խորհրդանշանի քառաթև, շրջանակի մեջ առնված, առանց շրջանակի, հավասարաթև ու անհավասարաթև պատկերների: Խաչի հնագույն նմուշներ են Գեղամա ժայռապատկերների հավասարաթև և անհավասարաթև խաչերը: Արևը խորհրդանշող հետաքրքիր ու տարածված խորհրդանշան է նաև սվաստիկան, որը խաչի նման է, սակայն թևերի չորս ծայրերը ուղիղ անկյունով թեքվում են դեպի աջ կամ ձախ³, հանդիպում են նաև բազմաթև, եռաթև, կորածայր, միոլոր, բազմոլոր սվաստիկայի պատկերներ և այլն: Սվաստիկայի պատկերը անընդհատ շարժման տպավորություն է թողնում, խորհրդանշելով արևի շարժումը: Հավանաբար, սվաստիկան տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անվանումներ է ունեցել, սակայն 19-րդ դարից տարածվում է սանսկրիտ սվաստիկա անվանումը: Հայաստանում տարածված են սվաստիկայի կեռախաչ, ճանկախաչ, խաչաթև, հավերժության նշան և այլ անվանումները: Սվաստիկայի նկատմամբ միշտ մեծ հետաքրքրություն է եղել աշխարհում: Բազմաթիվ ուսումնասիրողներ (դր Մորգան, Մուրիե, Լիտտրե, Դիվմուրտիե, Մ. Մյուլլեր) զբաղվել են սվաստիկայի առեղծվածով: Գրվել են հոդվածներ, ուսումնասիրություններ, որտեղ հիմնականում հեղինակները համակարծիք են եղել սվաստիկան արևապաշտների՝ արիական ցեղի հին խորհրդանիշ լինելու և այդ ցեղի հետ նրա տարածման հարցում: Ըստ վերոհիշյալ գիտնականների, սվաստիկան կազմված է սանսկրիտ սու "լավ, բարի" և ասթի "լավ լինել" բաղադրիչներից, որ նշանակում է "բարեկեցություն, երջանիկ վիճակ", (կա-ն մասնիկ է)⁴:

Նոր ուսումնասիրությունները թույլ են տալիս սվաստիկա բառը ստուգաբանել նաև այլ ձևով: Դիմենք հնագույն գրավոր աղբյուրներին՝ հնդկական վեդաներին և իրանական "Ավեստային": Հին հնդկական վեդայական գրականության մեջ (սանսկրիտ) հանդիպում է svar, suar բառը "արև, լույս, փայլ, ցուլ" իմաստներով: "Ավեստայում" հանդիպում է hvar բառը "արև, արևի լույս" իմաստով⁵: Ինչպես տեսնում ենք, svar, hvar բառերը "արև, լույս" իմաստն ունեն: Հիշենք նաև ռուսերեն р2а3 բառը: Հնդեվրոպական "ագո", "աստ" բառարմատները նշանակում են "ուժ, զորություն"⁶, իսկ ուժ, զորություն ունենում են աստվածները: Հետևաբար, մի քիչ ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ սվաստիկա բառը կազմված է svar, suar (արև, լույս, փայլում) և asti (աստված) բաղադրիչներից, որը արևի, լույսի, աստված իմաստն ունի (կա-ն մասնիկ է):

Սվաստիկայի ուսումնասիրման համար շատ կարևոր են Գեղամա և Սյունյաց ժայռապատկերները: Սվաստիկայի բազմաթիվ պատկերներ կան հատկապես Գեղամա լեռներին:

Արև-Աստվածն ու իր խորհրդանշանները մեծ քանակությամբ ու բազմապիսի ձևերով պատկերված են նաև հնագույն խեցեղենին, զարդերին, զենքերին և այլն:

19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին Հայաստանում կատարված հնագիտական պեղումների ժամանակ (Ռեսլեր, Ն. Մառ, Յ. դը Մորգան, Է. Շանտր, Խ. Մամվելյան, Հ. Օրբելի) հայտնաբերվել են բազմաթիվ իրեր արևի ու նրա խորհրդանշանների պատկերներով: Այդ իրերին արևը հաճախ պատկերվել է ուղեկից կենդանիների (առյուծ, ձի, խոյ, ցուլ, արծիվ) հետ: Ուսումնասիրողները (Գ. Ղափանցյան, Հր. Աճառյան, Հ. Մարտիրոսյան) պնդում են, որ թռչունները (ծիծեռնակ, արագիլ) ներկայացնում են գարնան արևը, առյուծը՝ ամռան արևը, իսկ ձին "արևի մշտնջենական, անփոփոխ ուղեկիցն է տարվա բոլոր եղանակներին"⁷:

Մեր նախնիների պատկերացմամբ արևի գունդը երկնակամարում շարժվում էր առյուծների, ձիերի, ցուլերի և այլ արագավազ ու հզոր կենդանիների օգնությամբ: Հետաքրքիր է, որ հայտնաբերված հնագիտական իրերին ձիերը միշտ պատկերված են շարժման, վարգի ընթացքում, իսկ այդ վիճակը համապատասխանում է արևի շարժման ընթացքին: Հայոց մատենագրության մեջ նույնիսկ նշվում են ձիերի անունները՝ Էնիկ, Մենիկ, Բենիկ, Սենիկ⁸, որոնք լծված էին Արև-Աստծո կառքին և որոնց օգնությամբ կառքը շարժվում էր երկնքում: Զիերի օգնությամբ Արև-Աստծո շարժման տեսարան է պատկերված Լճաշենից հայտնաբերված բրոնզե գոտու մի բեկորի վրա (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես), Սանահին գյուղում հայտնաբերված բրոնզե գոտու վրա և այլն:

Այսպիսով, մեր նախնիների պատկերացմամբ Արև-Աստվածը իր շրջապտույտը կատարել է ամենաարագավազ կենդանու՝ ձիու կամ ձիեր լծված կառքի միջոցով: Այդպես է նաև վեղայական գրականության մեջ: Ըստ "Ռիզվեղայի" արևի աստված Մուրիան երկնքում շարժվում էր արագավազ ձիերի օգնությամբ: Արևի ճառագայթները պատկերվում էին իբրև յոթ նժույզներ, որոնք տանում էին արևի կառքը: Այդպես է նաև հունական դիցաբանության մեջ. արևի աստված Հելիոսը երկնքում շարժվում էր ձիեր լծված կառքի միջոցով: Ջևսը նույնպես հանդես է գալիս կառքով ու ձիերով: Որպես ուղեկից կենդանի շատ հաճախ Արև-Աստծո հետ հանդես է գալիս նաև առյուծը: Ախթարքում (գողիակ) առյուծը փոխարինում է հուլիս-օգոստոս շատ տաք ամիսներին, իսկ այդ ամիսները պատկերվել են առյուծի կերպարանքով: Վանի թագավորության ժամանակաշրջանի (մ.թ.ա. 9--7-րդ դդ.) ռազմական հանդերձանքի՝ վահանների ու գոտիների վրա պատկերված են բազմաթիվ առյուծներ, այդ թվում՝ թևավոր առյուծներ: Կենդանիներից ցուլը ևս կապվել է արևի պաշտամունքի հետ: Ավելի ուշ արևի ԱՐ Աստծուն փոխարինած արևի ու կրակի աստված Միհրը հանդես է գալիս ցուլի ուղեկցությամբ:

Արև-Աստվածը հանդես է եկել նաև որպես թռչող աստվածություն: Հանդիպում ենք թևավոր առյուծների, ձիերի, ցուլերի պատկերների և այլն:

Արև-Աստվածն ու նրա խորհրդանշանները մեծ քանակությամբ պատկերված են նաև պեղումների ժամանակ հայտնաբերված խեցեղեն իրերի վրա: Այդպիսի բազմաթիվ իրեր են հայտնաբերվել Շիրակում, Իջևանում, Տավուշում, Լճաշենում և այլ վայրերում կատարված պեղումների ժամանակ: Խեցեղենի վրա արևի ամենից ավելի հաճախ հանդիպող խորհրդանշանները դարձյալ խաչի ու սվաստիկայի պատկերներն են: Սվաստիկայի պատկերով հնագույն խեցանոթը հայտնաբերվել է Շենգավիթ բնակավայրից (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ): Այն սև, փայլեցված, գծանախշ թաս է: Ներսից բաց դեղնավուն ֆոնի վրա պատկերված են օձեր, թռչուններ, շրջանակներ ու սվաստիկա: Կենտրոնում եռաթև պատկեր է՝ առնված շրջանակի մեջ:

Հայտնաբերված խեցանոթների մեջ հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնց վրա սվաստիկան պատկերված է հատակին, արտաքին մասում: Հանդիպում են նաև երկճյուղ և եռաճյուղ թեքումներով սվաստիկաների: Այդպիսիք հայտնաբերվել են Արթիկից, Քարաշամբից, Վանաձորից:

Հայտնաբերված խեցանոթներին շատ են նաև խաչի պատկերները: Խաչի պատկերներով հնագույն խեցանոթը հայտնաբերվել է Էջմիածնի մոտ գտնվող Թեղուտ բնակավայրից (մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակներ): Խաչեր են պատկերված նաև Սևանից հայտնաբերված ոչ մեծ կարմիր խնոցու իրանին՝ կանթից վերև ու ներքև (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես): Խաչի պատկերներով զարդարված խեցանոթների մեջ ևս հանդիպում են նմուշներ, որոնց վրա խաչը պատկերված է հատակին՝ արտաքին մասում: Հնարավոր է, որ խաչի, սվաստիկայի ու արևի պատկերներով զարդարված այս խեցանոթները օգտագործվել են Արև-Աստծուն նվիրված ծիսակատարությունների ու արարողությունների ժամանակ: Խաչի ու սվաստիկայի պատկերներ հանդիպում են նաև կենցաղային իրերին, քարե կուռքերին և այլն: Խաչի, սվաստիկայի և Արև-Աստծո այլ խորհրդանշաններով պատկերներ մեծ քանակությամբ հանդիպում են նաև պեղումների ժամանակ հայտնաբերված մետաղե իրերին: Դրանք զենքեր են, զարդեր, կենցաղային իրեր և այլն:

Լոռի բերդի, Լճաշենի, Շիրակի, Իջևանի և այլ բնակավայրերի պեղված դամբարանների մեջ մեծ թիվ են կազմում ռազմական առաջնորդների և ռազմիկների դամբարանները, որտեղից հայտնաբերվել են մեր

նախնիների ռազմական արվեստը ներկայացնող բազմաթիվ հետաքրքիր նմուշներ: Դրանք զրահաշապիկի մնացորդներ են, դաշույններ, ճակատակալներ, պատյաններ, ճարմանդներ, վահաններ, վահանակ-սկավառակներ, կռճակներ և այլ իրեր, որոնք զարդարված են գեղեցիկ փորագրություններով ու քանդակներով: Պատկերված են առյուծներ, վիշապներ, արեգակ, խաչ, սվաստիկա և այլն: Հայտնաբերված այս նյութերը ցույց են տալիս, որ մեր նախնիների մոտ ռազմական արվեստը զարգացման բարձր մակարդակ է ունեցել: Հայաստանը համարվում է մետաղների մշակման հայրենիքը (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից, վաղ բրոնզ), հետևաբար հայ ռազմիկները զինված են եղել ժամանակի լավագույն մետաղե (բրոնզ, երկաթ) զենքերով և ունեցել են լավագույն ռազմական հանդերձանքը: Եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը համարվում է նաև ձիու ընտելացման հնագույն տարածքներից մեկը (մ.թ.ա. 7--6-րդ հազարամյակներ) և այստեղ վաղ են սկսել ձիւ ու մարտակառքը օգտագործել ռազմական նպատակներով, ապա պարզ կդառնա մեր նախնիների՝ հայկական ցեղերի ռազմական հաջողության պատճառը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ ռազմիկների սիրված խորհրդանշաններն են եղել խաչն ու սվաստիկան: Արթիկից, Սևանի ավազանից, Լոռի բերդից (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես) և այլ վայրերից պեղումների ժամանակ հայտնաբերվել են խաչի, սվաստիկայի, նաև դրանց միացյալ պատկերներով զենք ու զրահի բազմաթիվ նմուշներ (դաշույններ, սրեր, սրի պատյաններ, մարտական սակրեր, զրահի բեկորներ, գոտիներ, ճակատակալներ): Սվաստիկան հանդիպում ենք և՛ աջ և՛ ձախ թեքումներով, իսկ խաչը՝ հավասարաթև ու անհավասարաթև ձևերով:

Արև-Աստվածը իր խորհրդանշաններով պատկերվել է նաև զարդերի վրա: Մեծ քանակությամբ այդպիսի ակնաջողեր, կախազարդեր, կռճակներ, գոտու մասեր, ապարանջաններ ու այլ զարդեր են հայտնաբերվել Վանաձորից (Դիմաց թաղ), Լոռի-բերդից, Իջևանից, Արթիկից և այլ հնավայրերից: Շատ հետաքրքիր են Վանաձորից հայտնաբերված ծարիրե կախազարդերը (մ.թ.ա. 11--10-րդ դարեր), որոնք զարդարված են խաչի, սվաստիկայի ու արևի պատկերներով: Նշենք, որ հայոց արքաների թագերը նույնպես զարդարվել են արեգակի և նրա խորհրդանշանների՝ հիմնականում արծվի պատկերներով (Տիգրան 2-րդինը):

301 թ., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, հայ վարպետները շարունակել են արևը, խաչն ու սվաստիկան օգտագործել որպես խորհրդանիշ ու զարդանախշ: Խաչը շարունակում է հարատևել նաև հայկական նշանագրերում, սակայն ժամանակի հետ կորցնում է արևի խորհրդանիշ լինելու իմաստը և ստանում "քրիստոնեական խաչ" նշանակությունը: Միջնադարյան հայ ձեռագիր մանրանկարները զարդանախշված են նաև սվաստիկաներով: Սվաստիկա է պատկերված 12-րդ դարի Ախթամարի ձեռագիր մի ավետարանի լուսանցքում և այլն:

Հայ վարպետները խաչ ու սվաստիկա են պատկերել նաև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներ Անիի պարիսպներին, Դվինի եկեղեցիներին և այլն: Ինչպես տեսնում ենք, Հայաստանում հայտնաբերված հնագիտական իրերին ամենից հաճախ հանդիպող արևի խորհրդանշանները խաչի ու սվաստիկայի պատկերներն են: Հավանաբար, մեր նախնիները այս խորհրդանշանները դիտել են նաև որպես հմայիլներ, որոնք պետք է պահպանեին կրողին, հաջողություն ու երջանկություն բերելով նրան:

Խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշներ հայտնաբերվել են նաև այլ երկրներում: Սվաստիկայի նմանությամբ (տարբերվում են սվաստիկայի ընդունված, դասական ձևերից) վաղ նմուշներ են հայտնաբերվել Մամարայում (Հյուսիսային Միջագետք, մ.թ.ա. 5-րդ հազարամյակ), Հնդկաստանում, Իրանում, Հունաստանում (մ.թ.ա. 2--1-ին հազարամյակներ) և այլն: Սվաստիկա է դրոշմված Արտեմիս, Հերա, Դեմետրե, Աստարտե, Նանա աստվածուհիների արձանիկներին, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակով:

Խաչի հնագույն նմուշներ հայտնաբերվել են Չաթալ հույուքում (Փոքր Ասիա), Եգիպտոսում, Հռոդոսում (Կիպրոս), Էտրուրիայում (Իտալիա), Ասորեստանում: Եգիպտական փարավոնները իբրև աստվածային նշան վզից կախում էին բրոնզե խաչ, իսկ զգեստներին պատկերում էին խաչեր: Բրոնզե խաչեր են կրել փարավոն Ամենհոտեպ 3-րդը (1455-1419), Ամոն-արև քուրմը և այլն: Իսկ եգիպտական թագուհի Նեֆերտիտի (խորրի-միտանական ծագումով) թագին պատկերված է թևավոր խաչ: Խաչ է կրել նաև Ասորեստանի Շամշի-Ադադ թագավորը (824-812): Վանից հայտնաբերված Արուբանի (Բակրարտու) աստվածուհու արձանիկի պարանոցից կախված է խոշոր խաչ (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ): Հին Հռոմի տաճարներում անշեջ կրակը վառ պահող վետաալուհիները ևս իրենց պարանոցին կրում էին խաչեր: Խաչեր են դրոշմված հին հռոմեական զենքերին, պոնտական, հունական, հռոմեական դրամներին և այլն:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում հայտնաբերված խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշները թվագրվում են մ.թ.ա. 5--3-րդ հազարամյակներով, որը ժամանակագրական առումով նույնանում է

հյուսիսմիջագետքյան ու փոքրասիական հնագույն նմուշների հետ: Հետևաբար, հայաստանյան ժայռապատկերներին ու խեցեղենին պատկերված նմուշները երբևէ հայտնաբերված խաչի ու սվաստիկայի հնագույն նմուշներից են:

Հայկական լեռնաշխարհի բազում հրաշալիքներից մեկն էլ "վիշապ" կոչվող քարակոթողներն են, որոնք հայտնաբերվել են բարձր լեռներում, արոտավայրերում, լճերի ու աղբյուրների մոտ:

Ուսումնասիրողներից ոմանք (Մմիռնով, Ն. Մառ, Բ. Պիտրովսկի) գտնում են, որ դրանք պտղաբերության ու ջրի աստվածներ են: Մ. Աբեղյանը դրանք համարում է Աստղիկ աստվածուհու արձանները⁹, որոնք նաև ձկնակերպ աստվածության պատկեր են ունեցել: Գր. Ղափանցյանը առաջ է քաշում այն միտքը, որ քարակոթողները նվիրված են ԱՄ աստծուն, որը "սինկրետիկ բնույթի աստված էր և իր մեջ միացնում էր այն ամենը, ինչ ակնկալում էր գյուղացին. գարուն, բույս, ցորեն, վար ու ցանք, նաև ջուր"¹⁰: Ղափանցյանը գտնում է նաև, որ Արայի քարակոթողները ստեղծվել են երկաթե գործիքներով, հետևաբար վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակին¹¹: Գ. Սրվանձտյանը և Մ. Աբեղյանը հետաքրքիր և ընդունելի տեսակետ են առաջ քաշում: Նրանք գտնում են, որ այս քարակոթողները "ցասման խաչեր" են "և դրվել են տարերային զանազան արհավիրքներից ու աղետներից պաշտպանվելու, ինչպես նաև աստծո "ցասման դեմն առնելու" համար:

Արևը ոչ միայն ջերմացրել ու լուսավորել է մարդուն, այլև ցույց է տվել օրվա պահերը: Դիտելով արևի ընթացքն ու դիրքը երկնականարում, մարդը զանազանել է օրվա պահերը՝ առավոտ, կեսօր, իրիկուն: Մարդը կարողացել է նաև նրա ստվերի օգնությամբ մոտավորապես որոշել օրվա ժամերը: Այսպես է ստեղծվել արևի առաջին պարզունակ ժամացույցը: Մեծամորից հայտնաբերվել են ֆալլիկ-մարդակերպ արձաններ, որոնք կարող էին օգտագործվել ժամանակը որոշելու համար: Միջնադարյան հայոց եկեղեցիների վրա պատկերված են ավելի կատարելագործված արևի ժամացույցներ: Զվարթնոցի տաճարին պատկերված է արևի ժամացույց, որտեղ ժամանակը ցույց տալու համար օգտագործվել են հայոց այբուբենի տառերը (7-րդ դար): Մասնագետները գտնում են, որ Հայաստանը արեգակնային և լուսնային ժամացույցների հայրենիքն է, Բաբելոնը՝ ջրի, իսկ Եգիպտոսը՝ ավազի¹²:

Այսպիսով, Հայաստանում հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արև-Աստծո խորհրդանշաններին հանդիպում ենք վաղ բրոնզի դարաշրջանից (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ) մինչև ուշ միջնադար (17--18-րդ դդ.) ընկած ժամանակաշրջանում (նաև ավելի ուշ): Այս երևույթը հետաքրքիր է նրանով, որ հազարամյակներ շարունակ պահպանվել ու սերնդեսերունդ է փոխանցվել ոչ միայն արևի պաշտամունքը, այլև այն պատկերելու բազմազան ձևերը:

1. ՀԺՊ, 1971, էջ 263:
2. Բազմաթիվ ուսումնասիրողներ (Գ. Գեղոզա, Ա. Նեյհարդ, Դեշելետ, Ա. Միլլեր, Բ. Պիտրովսկի, Ստ. Եսայան) գտնում են, որ հենց խաչն ու սվաստիկան են ավելի հաճախ հանդիպում հնագիտական իրերի վրա՝ որպես արևի խորհրդանշաններ:
3. Կարելի է մտածել, որ աչ թեքվող սվաստիկան կյանքի ու հավերժության՝ իսկ ձախ թեքվող սվաստիկան՝ մահվան խորհրդանիշն է:
4. Ա. Եգեկյան, Սվաստիկա, Ազգագրական հանդես, գիրք 17, 1908, էջ 145:
5. Հ. Աճառյան, 1971, էջ 311:
6. Հ. Աճառյան, 1971, էջ 85:
7. Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 137:
8. Ղ. Ալիշան, 1910, էջ 88:
9. Մ. Աբեղյան, Վիշապներ կոչվող կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո աստվածուհու արձաններ, Երևան, 1941, էջ 167:
10. Գ. Ղափանցյան, 1945, էջ 150:
11. Գ. Ղափանցյան, 1945, էջ 153:
12. Հ. Մարտիրոսյան, 1978, էջ 133:

Արել-Աստծո Պաշտամունքի Հետքերը Ժողովրդական Բանահյուսության Մեջ

Հարատևող հայ ցեղի հիշողությունը պահպանել ու մեզ է հասցրել հոգևոր մշակույթի բազմաթիվ արժեքներ, որոնց մեջ շատ են արևի պաշտամունքի հետ կապված ավանդությունները, գրույցները, հեքիաթները, երգերը, աղոթքները, երդումները և այլն: 19--20-րդ դդ. հայ բանասերներն ու ազգագրագետները (Գ. Սրվանձտյան, Ե. Լալայան, Խ. Սամվելյան, Մ. Աբեղյան, Վ. Բոլոյան) պատմական Հայաստանի տարբեր գավառներում հավաքել, գրի են առել ու պահպանել ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում երկնային լուսատուներին, հատկապես արեգակին նվիրված նմուշները¹: Արդեն նշվել է, որ հայոց "Մասնա ծոեր" դյուցազնավեպը պատմական խոր արմատներ, խորքային հնագույն շերտեր ունի, որի հերոս-հերոսուհիները հաճախ մարմնավորում են տիեզերական տարբեր երևույթներ, բնությունը, նրա ուժերը և այլն: Այսպես, արևային զծեր ունի "Մասնա ծոերի" հերոսուհիներից մեկը՝ Քառսուն Դեղձուն ճյուղ ծամը, որի մագերի գույնը և ճոխությունը հիշեցնում են արևը և արևի ճառագայթները: Ժողովրդի մեջ պահպանված հնագույն գրույցներից մեկի համաձայն Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են: Մի օր քույր Արևը ասում է, որ ինքը գիշերները վախենում է երկնքում ման գալուց, իսկ ցերեկները չի կարող դուրս գալ, քանի որ ամաչում է իր մերկությունից: Լուսին եղբայրը որոշում է գիշերները ինքը շրջել ու լույս տալ մարդկանց, իսկ ցերեկները՝ Արև քույրիկը: Սակայն խորհուրդ է տալիս քույրիկին, որ իր հետ մի բուռ ասեղ վերցնի և ծակծկի իրեն նայողների աչքերը, որպեսզի մարդիկ չտեսնեն իրեն (Բանանց): Կամ Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են, և իրենց մոր հետ ապրում են երկնքում: Մի անգամ, երբ մայրը խմոր էր հունցում, Լուսինը գայրացնում է նրան ու նա խմորոտ ձեռքով ապտակում է Լուսնին, որի հետքերը մինչև օրս մնում են նրա այտին (Բանանց): Նոր Բայազետի (Գավառ) գավառում տարածված էր նույն գրույցի մեկ այլ տարբերակ. Արևն ու Լուսինը քույր ու եղբայր են: Քույր Արևը ամաչկոտ է, վախկոտ, այդ պատճառով էլ երկու պահապան հրեշտակ ունի, որոնք ցերեկը երկրի երեսով, իսկ գիշերը՝ տակով ման են ածում նրան²:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական գրույցներում արեգակն ու լուսինը հաճախ են հանդես գալիս միասին: Լուսինը հիմնականում արական սեռ է, արեգակը՝ իգական: Որոշ գավառներում ընդհակառակն է: Հնդեվրոպական այլ ժողովուրդների մոտ ևս արևը հանդես է գալիս մերթ որպես արական, մերթ որպես իգական աստվածություն: Հունական դիցաբանության մեջ Արևն (Հելիոս) ու Լուսինը (Մելենե) քույր ու եղբայր են: Հելիոսը ցերեկներն է լույս տալիս մարդկանց, իսկ քույր Մելենեն՝ գիշերները³: "Ռիզվեդայում" արևի աստված Սուրիան արական աստվածություն է, որը ձգտում է հասնել արշալույս Ուշասին: Հիշենք, որ Հայաստանում Խորենացու վկայությամբ պատրաստվել են նաև արեգակի ու լուսնի մարդակերպ արձաններ: Մեզ է հասել լուսնի արական աստվածության պատկերը Փառնակ անունով: Պոնտոսում և Վրաստանում ևս լուսնի աստվածը կոչվել է Փառնակ: Հետաքրքիր է հայկական ժողովրդական մի գրույց՝ ըստ որի արևը նստած առյուծի մեջքին սլանում է երկնակամարով, իսկ երեկոյան հանգստանում մոր գրկում: Առյուծը իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից⁴ (հիշենք Էրեբունի ամրոցի որմնանկարներից մեկը, որտեղ Ալդի-Խալդի աստվածը կանգնած է առյուծի մեջքին): Հայտնի է նաև, որ ժողովրդական հավատալիքների համաձայն արևը իր շրջապտույտը կատարում է հրեղեն ձիեր լծված կառքով և այլն:

Մ. Աբեղյանը Վանի շրջանում գրի է առել արևի մասին հրաշալի մի գրույց, որտեղ շատ գեղեցիկ ներկայացված է արևը արևածագից առաջ և արևամուտից հետո: Ծանոթանանք այդ գրույցին: Արեգակը երեկոյան մայր է մտնում Վանա ծովում, լողանում է, որպեսզի օրվա պտույտից հետո հանգստանա: Հավատում են, որ նրա մահիճը գտնվում է լճի հատակում՝ փրփուրների վրա, իսկ ձյունաթույր ու շառագույն ամպերը արևի ննջարանի վարագույրներն են: Արևածագից առաջ հրեշտակներն արևին հագցնում են հրեղեն զգեստներ և հարդարում մահիճը: Երբ արևը լվանում է երեսը՝ սարերն ու դաշտերը ջրի ցողով են ցողվում: Թռչունները քնից վեր են թռչում և սկսում են ծվլվալ: Արևելքում՝ բարձր լեռներից սկզբում դուրս են գալիս Արև-արքայի 12 թիկնապահները, որոնք իրենց գլուխներն են խոնարհում Արև արքայի առաջ: Այն ժամանակ արևը հանկարծ ցույց է տալիս հրեղեն վարսերով շրջափակված ոսկե գլուխը, ողջունում է ողջ բնությանը և բարձրանում երկնակամար⁵: Արև-արքայի 12 թիկնապահները հավանաբար տարվա 12 ամիսներն են:

Ժողովրդի մեջ արևածագի պահը սուրբ, արդար ժամ է համարվել, երբ կարելի էր ցանկություն, փափագ արտահայտել այն կատարված տեսնելու ակնկալիքով: Այս երևույթը պահպանվել է մինչև մեր օրերը: Այսպես, Բանանցում արևածագին, երբ երևում էին արեգակի առաջին ճառագայթները, կանայք ծնկի էին գալիս ու աղոթում. "Աստծո ցնցուղն տված ըրիզնակ, իմ երեսը քու ոտի տակ, դու իմ

հիվանդին լավացրու" կամ "Այ սուրբ ըրեգնակ, իմ էրէսը քու ոտի տակ, դու օգնի իմ բալին" և այլն: Նոր Բայազետում առավոտյան աղոթելիս սրբերին դիմելուց հետո դառնում էին դեպի արեգակը և ասում. "Ով մերը մեր արեգակ, դու հասնիս օգնության"⁶: Լոռիում, երբ էրեխան ծնվում էր, տատները բարուրը դուրս էր բերում, դառնում դեպի արևելք և ասում. "Սուրբ րեգնակ, էս էրէխի փայը տաս, երկընթիցը ցօղ ցողայ, գետնիցը պտուղ ստանայ, մենք էլ՝ մեղավորներս, սրա շուքումը ուտենք, կերակրուինք"⁷:

Բանանցում ծանր հիվանդին փրկելու համար հարազատներից մեկը (մայրը, տատը) արևի առաջին ճառագայթների հետ ծնկի էր գալիս և դիմելով նրան (արևին) խնդրում էր օգնել իր հիվանդին, խոստանալով գոհ մատուցել՝ մատաղ անել: Այս դեպքում հին ու նոր կրոնները (Արև, Քրիստոս) խառնվել են, հին հավատը չի մոռացվել, բայց նորն են պաշտում (մատաղը արվում էր եկեղեցում): Այս առումով հետաքրքիր է մի անեծք՝ "Հին ըրեգնակը դառնա քո տունը" (Բանանց): Հավանաբար այս անեծքը նկատի ունի այն, որ քրիստոնեության ժամանակ քանդվել են արևի տաճարները (տունը): Երբ մեկի արտը լավ բերք է տվել, ասել են. "Ըրեգնակը թինկնա տվել (թիկնել է) արտում" (Բանանց): Սովորություն է եղել նաև մահացող մարդուն շրջել դեպի արևը, որ չտանջվի և հոգին շուտ ավանդի (Բանանց): Հետաքրքիր են նաև իրենց մշակութային ինքնատիպությունը պահպանած բաակ ժողովրդի բանահյուսական արժեքները: Արևը բասկերի մոտ համարվել է բարձրագույն աստվածություն՝ Ատաու անունով: Նրան աղոթել են և՛ արշալույսին, և՛ մայրամուտին: Իսկ աղոթքները այսպիսին էին. "Ով սուրբ արեգակ, տուր մեզ լույսը կյանքի և լույսը մահվան" կամ "Ով սուրբ արեգակ, վաղն էլի արի, ճիշտ ժամին արի"⁸ և այլն:

Աշխարհի ոչ մի ժողովուրդ արևով երդվելու այնքան օրինակներ չունի, որքան հայ ժողովուրդը. իմ արև, մորս արև, հորս արև, արևս վկա, արևդ սիրեմ, արևիդ մեռնեմ, արևդ սիրես, արևդ ապրի...: Այդպես են երդվել մեր նախնիները հազարավոր տարիներ առաջ, այդպես են երդվում նաև այժմ: Հայտնի է, որ հայոց Վաղարշակ 1-ին թագավորի գորապետ Բարգավիրանը "դաշանց հարստության համար՝ նախ կերդնու յԱրեգակն, յետոյ ամենայն երկնաւոր և երկրաւոր պաշտելեաց"⁹: Անեծքի ժամանակ ասում էին. արևդ թաղեմ, արևդ մեռնի, արևդ խավարի, օր ու արև չտեսնես...: Բանահյուսական այլ նմուշներում ևս (ասացվածքներ, առածներ) հանդիպում ենք արև-հերոսին: "Արևը որ հելնի, աստղերը կը խավարեն" (Աշտարակ), "Արևն իրան լույսն ունի, լուսնյակն էլ իրանը" (Շիրակ)¹⁰ և այլն: Արևի կլոր շրջանակներ են հիշեցնում հայոց շուրջպարերը, երբ պարողները պարում են կլոր շրջան կազմած:

Մինչև 20-րդ դարի սկիզբը Վանում պահպանվել էր հետաքրքիր մի սովորություն կապված արևի պաշտամունքի հետ: Պսակի հաջորդ օրը, առավոտյան, հարսանքավորները հարսի և փեսայի, հաճախ քահանայի առաջնորդությամբ բարձրանում էին տան կտուրը կամ որևէ բարձր տեղ, որտեղից երևում էր արևածագը և ամուրիների խումբը դիմելով արևին երգում էր.

Էգ բարև, այ էգ բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տայ թագաւորին շատ արև
Վահէ, Վահէ

Էգ բարև, այ էգ բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տայ թագուհուն շատ արև
Վահէ, Վահէ¹¹:

Ամենայն հավանականությամբ այս երգը ստեղծվել է հեթանոսական ժամանակներում և նվիրված է եղել ավելի ուշ շրջանում արևի Ա.Բ Աստծուն փոխարինած Վահագն-Վահէ արևի ու կրակի աստծուն: Գր. Նարեկացու Վարդավառին նվիրված տաղերից մեկը սկսվում է արևի ճառագայթների շատ գեղեցիկ նկարագրությամբ:

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից¹²:
(Գոհար վարդը վառվում էր
Արևի վեհ վարսերից):
(Թարգմ. գրաբարից Վ. Գևորգյանի)

Ն. Շնորհալին նաև արեգակի ծնունդը և մահը պատկերող գեղեցիկ հանելուկ է առաջարկում.

Տեսի մանուկ մի, որ ծնաներ,
Եւ ի նոյն օրըն մեռաներ,
Յետ թաղելոյն դարձեալ յառնէր
Ի՛ ա՛յլ գեղեցիկ զինք ցուցանէր¹³:

Հետաքրքիր է նաև արևին ուղղված մի աղոթք.

Աշխարհին՝ խեր ու խաղաղութեն,
Թագավորներուն՝ բարիչութեն,
Հացին՝ յեժանութեն,
Իմ տղեկներուն արևշատութեն,
Իմ հոգուն՝ արքայութեն¹⁴:

Հայերը տիեզերական այս մեծ լուսատուի համար օգտագործում են արև և արեգակ բառերը: Բազմաթիվ ուսումնասիրողներ զբաղվել են այս բառերի ծագման ու բացատրության հարցերով: Արև բառի բացատրության մասին 1843 թ. Պոլսի "Արշալույս Արարատյան" թերթում գրված է. "Արև բառը կազմված է ար/հուր արմատից, և-ը առավելական է"¹⁵: Արդեն նշվել է, որ գրաբարում "արևը արեգակնան տեսանելի լույս կնշանակեր": Արև բառը բացատրվում է նաև "կյանք, կենդանություն" իմաստով¹⁶:

Հայ պատմագրության մեջ փորձեր են արվել բացատրելու նաև արեգակ բառի իմաստը: Սամուել Կամրջաձորեցին (10-րդ դար) իր "Տոնական բանից" աշխատության մեջ գրում է. "Արեգակն անուանեցաւ, այսինքն լուսոյ ակն"¹⁷: Վանական վարդապետը իր "Տարեմուտ" գրքում գրում է. "Արեգակն, մեծ ակն ասի կամ տուրնջեան աստղ, կամ լուսոյ ակն": Վարդան վարդապետ պատմիչը Սաղմոսաց մեկնության մեջ գրում է. "Արեգակն, լուսոյ ակն զի լուսոյն սեռն և յստակ լույսն ի նմա է"¹⁷: Մխիթար Աբբահայրը արեգակը բացատրում է իբրև "արևու ակն"¹⁸: Մ. Էմինը արեգակը բացատրում է իբրև "արևու աչք"¹⁹: Նա միաժամանակ համեմատություններ է անցկացնում, այսպես. պարսիկները արեգակը համարում են Արամազդի աչքը ("Ձենդ Ավեստա"), հնդիկները՝ Միթրայի աչքը ("Ռիգվեդա"), եգիպտացիները՝ Տիմուրիտի (աշխարհաստեղծ ուժ) աչքը, հույները՝ Դիոսի աչքը, գերմանացիները՝ Վուոդանի աչքը և այլն: Ն. Շնորհալին արեգակը կոչում է պայծառ կարկեհան (սոնաքար), իսկ հյուսիսային Գերմանիայի բնակիչները՝ երկնքի գոհար: Ղ. Ալիշանը ևս անդրադարձել է արեգակ բառի ստուգաբանությանը. "Ինչպես աղբեր-ակն՝ ջրոց բղիտուն ցուցնէ, սա ալ տաքութեան ու լուսոյ"²⁰: Մ. Աբեղյանը գրում է. "Արևը, սակայն սկզբնապես ըմբռնվում է որպես մի լուսավոր քար, - ինչպես ցույց է տալիս արեգակ (արեգ և ակն - թանկագին քար) բաղադրյալ բառը"²¹:

Ինչպես տեսնում ենք, պատմիչները և ուսումնասիրողները հիմնականում ընդունում են, որ արեգակ նշանակում է "լույսի, արևի ակն" (աչք): Հետևաբար արևի ակն (աչք) արեգակը կարելի է մեկնել որպես Արևի Աստված ԱՐ-ի աչք (ակն): Մ. Էմինի բերված օրինակներից երևում է, որ այլ ժողովուրդների մոտ ևս արեգակը համարվում էր աստծո աչքը: Այսպիսով, արև նշանակում է "լույս" (ջերմություն, ճառագայթ), իսկ արեգակ՝ "լույսի, արևի ակն" (աչք): Այժմ տեսնենք, թե ինչպես են կոչել արեգակը Հայաստանի տարբեր գավառներում. արեգա կ (Նոր Ջուղա), արեգ՝ ակ (Կարնո բարբառ), արե՛ գագ (Թիֆլիս), արեքագ (Մուշավա), արեքակ (Երևան), արեքագ (Խարբերդ, Նոր Նախիջևան, Ռոդոսթո), արեքագ (Պոլիս), արեգ՝ ոկ, յերգ՝ ոկ (Ուզմի ենթաբարբառ), արեկ՝ ոկ (Վան), արեքագ (Տիգրանակերտ), արիգ՝ օգ (Ձեյթուն), էրեկոկ (Մոկս), Ըրրեքնակ (Գորիս, Գանձակ), ըրի քնակ ըրի յինակ (Արցախ), ըրա յնակ, արեքա ք (Ագուլիս)²²: Արև բառը ևս տարբեր գավառներում տարբեր ձևով է հնչում. արել (Ալաշկերտ, Մուշ, Ջուղա, Վան), արել (Ակն, Գորիս, Երևան, Խարբերդ, Կարին, Արցախ, Նոր Նախիջևան, Շամխոր, Պոլիս, Ռոդոսթո, Մերաստիա), որե՛վ (Սալմաստ), արիվ (Ագուլիս, Ձեյթուն, Համզեն, Թիֆլիս), այել (Հաճն)²³ և այլն: Հետաքրքիր է նաև, թե ինչպես է հնչում արև-արեգակ բառը հնդեվրոպական տարբեր լեզուներով. svar, ravi, arka (սանսկրիտ), - rev (հնդեվրոպական նախալեզու), - aurv, hvaro (գենդերեն), - rev (պարսկերեն), - eark (իռլանդերեն), - rauos (գոթերեն), - rot (հին, բարձր գերմաներեն)²⁴ և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արևն ու կրակը հաճախ միասնականացվել են: Արևը լույս ու ջերմություն էր տալիս, բայց անհասանելի էր մարդուն, այն հնարավոր չէր շոշափել, մոտ գնալ կամ ցանկացած ժամանակ օգտվել նրա լույսից (գիշերը), ջերմությունից (ձմռանը): Իսկ կրակը լույս ու ջերմություն էր տալիս ցանկացած պահի և մարդիկ սկսեցին այն ընկալել որպես արևի փոխանորդ, ներկայացուցիչ երկրի վրա ու պաշտելով կրակը պաշտում էին արևը: Ավելի ուշ ԱՐ Աստծուն փոխարինած Վահագն և Միհր աստվածները հանդես են գալիս որպես արևի ու կրակի աստվածներ: Խարոյաշ, խարույկ, խարան, խարկել և այլ բառեր հուշում են, որ հար-խարը օգտագործվել է նաև "հուր, կրակ" իմաստով:

Արևապաշտության հետ կրակապաշտությունը ևս երկար է պահպանվել ոչ միայն հայերի, այլև հին իրանցիների և հնդիկների մոտ: Այսպես. դարեր շարունակ Հայկական լեռնաշխարհում տարածված սովորույթի համաձայն հայերը կրակով երդվել են, կրակի վրա ջուր չեն լցրել: Բացօթյա վայրում կրակը հանգցրել են, որպեսզի սաստանաները կրակից չտանեն, իսկ հանգցնելու ժամանակ կրակը խաչակնքել են և հետո միայն վրան ջուր լցրել: Կրակին չեն խփել, կրակի վրայից չեն անցել, գիշեր ժամանակ կրակը դուրս չեն տվել: Մեր նախնիները կրակին հավասար թոնրին ու օջախին ևս հարգանք են մատուցել: Հարսանիքին նորապսակները համբուրել են օջախը և պտտվել թոնրի շուրջը: Կառուցված նոր տան օջախի կրակը վառել է ընտանիքի տարեց անդամը, վերցնելով այն հին տան օջախից²⁵ և այլն: Համեմատության համար նշենք նաև հին իրանցիների և հնդիկների կրակապաշտության հետ կապված մի շարք սովորույթներ: Այսպես. կրակի պաշտամունքը հին իրանցիների մոտ բարձրացված էր այն աստիճանի, որ արգելվում էր կրակի մեջ անմաքուր իր, առարկա գցելը (փտող, լուծվող նյութեր), իսկ կրակին մոտենալիս քիթն ու բերանը ծածկում էին շորով, որպեսզի շնչառությունը չդիպչի ու չպղծի կրակը: Հնդիկները ոչ միայն պաշտում էին կրակը, այլև ունեին կրակի աստված՝ Ագնին (հուր, կրակ), որը մարդու պաշտպանն էր ու կյանք պարգևողը: Ինչպես տեսնում ենք հայկական/արիական ցեղերը հազարամյակներ շարունակ պաշտել են և՛ արեգակը, և՛ կրակը:

301 թ., երբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, Քրիստոսն ու քրիստոնեությունը ընդունվեցին հայ մարդու կողմից: Քրիստոսը այս դեպքում ընկալվեց որպես ԱՐ, Արամազդ, Վահագն, Միհր, Արեգակ, Լույս, որպես միակ աստված, որի պաշտամունքը մեծ ընդհանրություններ ուներ հայոց աստվածների հետ: Պատահական չէ, որ հայոց միջնադարյան հոգևոր շարականներում հաճախ ենք հանդիպում "Արեգակ", "Արեգակն արդար" արտահայտություններին, որն Արեգակ-Քրիստոսի փառաբանությունն էր: Հիշենք Ն. Շնորհալու գեղեցիկ շարականներից մեկը.

Առաուտ լուսոյ
Արեգակն արդար
Առ իս լույս ծագեա²⁶:

Հայոց հին աստվածները խոր արմատներ են ունեցել ժողովրդի մեջ: Հազարամյակներ շարունակ հայը պաշտել էր իր աստվածներին՝ ԱՐ-Արային, Արամազդին, Վահագնին, Անահիտին և մյուսներին: Այս դեպքում հայոց եկեղեցին մեծ ճկունություն հանդես բերեց ու որպես ազգային եկեղեցի հին հավատքի որոշ տոներ քրիստոնեացրեց: Այսպես. Բարեկենդանի հիմքում ընկած է ձմեռվա ավարտը, նրա մահվան գաղափարը: Տեսնընդառաջ (տրնդեգ, տերնդեգ) կոչվող տոնը, որ նշվում է փետրվարի 13-ին, եկեղեցին կապեց Քրիստոսի գալստյան հետ, իսկ տոնի ժամանակ վառվող ծխական խարույկը (կրակապաշտություն) համարվեց ուղեցույց: Չատիկը վերածննդի, հարության, պտղաբերության գաղափարն էր արտահայտում: Ծաղկի ու Համբարձման տոնը, որ մայիսին էր տոնվում, նույնպես նվիրված էր ԱՐ Աստծուն, նրա զարթոնքին ու հարությանը: Հին հավատքից՝ արևապաշտությունից նորին՝ քրիստոնեությանն անցան նաև ծխական տարրեր՝ արևելք դառնալով աղոթելը, եկեղեցիները և գերեզմանները դեպի արևելք կողմնորոշելը և այլն: Սակայն եղան մարդիկ, նաև ամբողջ համայնքներ, որոնք չհրաժարվեցին հին հավատքից: Պատմիչները նրանց անվանում են արևորդիներ կամ արևորդիք: Ն. Շնորհալուն Սամոստիա քաղաքի արևապաշտների արևորդիք է անվանում և հոգևոր առաջնորդներին համոզման մեթոդն է առաջարկում նրանց "սատանայապաշտ, դիվապաշտ" վիճակից հանելու համար: Դավիթ Ալավկա որդին պավլիկյաններին արևորդիների "ազգ" էր համարում: Եզնիկ Կողբացին, բանավիճելով հեթանոսության դեմ ու փառաբանելով քրիստոնեությունը, տալիս է պաշտվող արեգակի շատ գեղեցիկ նկարագրությունը. "Եւ այնու կենդանությանը, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենեն կախյալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախյալ կան: Եւ ինքն մի է և բազում, և բազում է և մի, որպէս արեգակն մի է և բազում. զի անիվ է և բազում ճառագայթք"²⁷:

Փաստորեն բնության մեջ ամեն ինչ կախված էր արևից, որը մի անիվ էր ու բազմաթիվ ճառագայթներ, իսկ արևի այս պատկերին (արև-անիվ) հանդիպում ենք Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ նմուշների վրա, ժայռապատկերներից մինչև միջնադարյան կենցաղային իրեր ու զարդեր:

Մխիթար Ապարանցին գրում է. "Մոքա (արևորդիք) ոչ ունին գիր և դպրություն, այլ ավանդությամբ ուսուցանեն հարքն զորդիսն ի վրեանց զոր նախնիք նոցա ուսեալք էին ի Զրադաշտ մոզէ անդրուշանին պետէ. և ընդ որ (կողմն) երթայ արեգակն ընդ այնմ երկրպագեն, և պատուեն զծառն բարտի և զշուշան ծաղիկն և զբամբակին և զայլն... Սոցա առաջնորդն կոչի Հագրպետ..."²⁸:

Ինչպես տեսնում ենք, արևորդիք աղոթում էին դեմքը դեպի այն կողմ ուղղելով, որտեղ այդ պահին գտնվում էր արեգակը: Աղոթելիս նրանք պաշտելի բարդի, շուշան և բամբակենի էին բռնում արեգակի դեմ: Արևորդիները գտնում էին, որ մարդը Արևի զավակն է, իսկ Լուսինը նրա բարի քեռին, որին պետք է հարգել, հակառակ դեպքում լուսնոտությամբ կհիվանդանային և հիվանդությունը կանխելու համար կախում էին լուսնաձև հմայիլներ²⁹:

Արևապաշտությունը հայոց մեջ երկար է պահպանվել, հասնելով մինչև ուշ միջնադար և ավելի: Այն տարածված էր ոչ միայն Հայաստանում այլև ամբողջ Միջագետքում: 14-րդ դարի վերջերին Լենկթեմուրը Մերտիննու կողմերը չորս գյուղերի մեջ (Շուլ, Շմբրշախ, Սաֆարի և Մարագի) արևապաշտներ գտնելով փորձում է մահմեդական դարձնել, բայց չկարողանալով ավերում է քաղաքը և գյուղերը, գրում է Թովմա Մեծոփեցին, իսկ այնուհետև շարունակում է. "և յետոյ դարձյալ սատանայի հնարիվք՝ բազմացան ի Մերտին և ի յԱմիդ"³⁰: Իսկ 1288 թ. միջնադարյան մի տոմարագիր ի հեճուկս հեթանոսների արեգակը ներկայացրել է անբան և անիմաստ մարդու կերպարանքով՝ կանգնած զույգ հրեղեն երիվարների միջև³¹:

Պետք է նշել, որ արևի ու արևապաշտների նկատմամբ եղած այս վերաբերմունքն է եղել պատճառը, որ հայկական հնագույն դիցարանի ու արևի պաշտամունքի մասին շատ քիչ տեղեկություններ կան մեր մատենագրության մեջ: Մակայն ժողովրդի մեջ, ինչպես տեսնում ենք, շատ խորն է եղել արեգակի պաշտամունքը: Այդ պաշտամունքը հազարամյակներ շարունակ հարատևել է՝ արտահայտվելով ԱԲ-Արեգակ, Վահագն-Արեգակ, Միհր-Արեգակ, իսկ այնուհետև Քրիստոս-Արեգակ աստվածների պաշտամունքներում:

Այսպիսով, հնդեվրոպական տարբեր ժողովուրդների մեջ պահպանված զրույցները, ավանդությունները, սովորությունները, արևի ու կրակի պաշտամունքների հետ կապված արարողություններն ու ծեսերը մեծ հարազատություն են ցուցաբերում, մեկ անգամ ևս փաստելով, որ հնդեվրոպացիները ունեցել են մի ընդհանուր մշակույթ, որի ակունքները պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհում:

1. Բանահյուսական նմուշների մի մասը հավաքվել է Գարդմանի Բանանց գյուղում:
2. Ազգագրական հանդես, գիրք 16, 1, 1908:
3. Ն. Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1972, էջ 80:
4. Ազգագրական հանդես, գիրք Բ, 1897, էջ 216:
5. Մ. Արեղյան, Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 41:
6. Ազգագրական հանդես, գիրք 17, 1, 1908, էջ 94:
7. Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 199:
8. Բասկյան ավանդագրույց, Երևան, 1996, էջ 10-11:
9. Ղ. Ալիշան, 1910, էջ 97:
10. Ա. Ղանալանյան, Առաձանի, Երևան, 1960, էջ 161, 309:
11. Վ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 27:
12. Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, Երևան, 1971, էջ 56:
13. Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 111:
14. Վ. Մելիք-Փաշայան, էջ 80:
15. Հ. Աճառյան, 1971, էջ 311:
16. Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի, հ. 1, Երևան, 1979, էջ 352:
17. Հ. Աճառյան, 1971, էջ 311-312:
18. Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի, էջ 352:
19. Մ. Էմին, 1875, էջ 24:
20. Ղ. Ալիշան, 1910, էջ 95:

21. Մ. Աբեղյան, 1975, էջ 40:
22. Հ. Աճառյան, 1971, էջ 313:
23. Հ. Աճառյան, 1971, էջ 313:
24. Հ. Աճառյան, 1971, էջ 311:
25. Ազգագրական հանդես, գիրք 10, 1903, էջ 183-184:
26. Մարգարիտներ հայ քնարերգության, 1971, էջ 81:
27. Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 142:
28. Ղ. Ալիշան, 1910, էջ 103:
29. Վ. Բդոյան, էջ 206:
30. Ղ. Ալիշան, 1910, էջ 102:
31. Վ. Բդոյան, էջ 205:

Ար Աստվածը Եվ Արայան Հնագույն Աստվածները

Հազարամյակներ շարունակ ԱՐ Աստվածը, լինելով Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների հնագույն ու գլխավոր աստվածը, պատմական ինչ-որ ժամանակահատվածում իր տեղը զիջել է այլ աստվածների (Արամազդ, Վահագն, Միհր, Ալդի-Խալդի), նրանց փոխանցելով իր նկարագրի շատ հատկանիշներ: Այսպես. Արամազդը բոլոր աստվածների հայրն էր, երկնքի ու երկրի արարիչը, Վահագնը՝ արևի, կրակի ու ռազմի աստվածն էր, Միհրը՝ արևի ու կրակի, Ալդին (Խալդի) գլխավոր աստվածն էր (կյանքի, բնության ու ռազմի)¹:

ԱՐԱՄԱԶԴ -- Արամազդը ուշ հեթանոսական շրջանի հայոց դիցարանի գլխավոր աստվածն էր, երկնքի ու երկրի արարիչը: Այդ մասին Ագաթանգեղոս պատմիչը գրում է. "Զմեճն և զարին Արամազդ, զարարիչն երկնի ու երկրի և հայր դիցն ամենայնի"²:

Արամազդը Անահիտ և Աստղիկ դիցուհիների ու Միհր աստծո հայրն էր: Թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում է Արամազդը դարձել հայոց դիցարանի գլխավոր աստվածը, հնարավոր չէ ստույգ պատասխանել: Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից արդեն տարածված էր Արամազդի պաշտամունքը: Շատ ուսումնասիրողներ գտնում են, որ հայկական Արամազդը պարսկական Ահուրամազդի տարբերակն է, իսկ աստծո պաշտամունքը Հայաստան է անցել Իրանից: Ընդունված է, որ Ահուրամազդ անունը կազմված է Ահուրա "տեր" և մազդա "գերագույն իմաստնություն" բաղադրիչներից: Այս բացատրությունը ընդունելի չէ հայոց Արամազդի համար: Արամազդը Հայկական լեռնաշխարհում ստեղծված տեղական, հայկական աստված է, այդ է վկայում նրա անունը, որը կազմված է Արամ և ազդ (աստ, աստված) բաղադրիչներից: Հետևաբար Արամազդը կարելի է ստուգաբանել Արամ-աստված իմաստով:

Արամազդը սիրված աստված էր, նրա պաշտամունքը երկար է պահպանվել հայոց մեջ: Կարելի է մտածել, որ Ագաթանգեղոսի "զմեճն և զարին Արամազդ" արտահայտությունը նշանակում է արի ցեղի՝ արիների Արամազդ աստված: Այս արտահայտությունը նաև հուշում է, որ Արամազդը Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայ-արմենների հնագույն աստվածներից էր: Նրան նվիրված տոնակատարությունները կատարվել են մեծ հանդիսավորությամբ, նավասարդի սկզբներին (օգոստոս): Այդ տոնահանդեսների ժամանակ զոհաբերվել են սպիտակ նոխազներ, ջորիներ ու ձիեր: Հայոց հեթանոսական տոմարի՝ ամիսների 15-րդ օրը կոչվել է Արամազդի անունով: Արամազդի գլխավոր մեծիանը գտնվում էր Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Անի (Հանի) բնակավայրում: Մեծիաններ են եղել նաև Բագավանում, Պաղատո լեռան վրա և այլն:

Արամազդի պաշտամունքը լայնորեն տարածված էր նաև Իրանում (Ահուրամազդ) և Վրաստանում (Արմազի):

ՎԱՀԱԳՆ -- Հայոց դիցարանի սիրված աստվածներից է Վահագնը: Նա արևի, ռազմի, ամպրոպի ու կայծակի աստվածն էր: Վահագնը հանդես է գալիս նաև Վիշապաքաղ մականունով: Գեղամա և Մյունյաց լեռների ժայռապատկերներին (մ.թ.ա. 6--3-րդ հազարամյակներ) հանդիպում ենք վիշապաքաղ (վիշապասպան) Վահագնի բնույթին համապատասխանող բազմաթիվ պատկերների: Վահագնը նախ եղել է ամպրոպի ու կայծակի սովորական աստված, իսկ ավելի ուշ՝ ժառանգելով ԱՐ Աստծո նկարագրի արևային ու ռազմի հատկանիշները, դարձել է հզոր աստված: Հավանաբար այդ ժամանակ է ստեղծվել ու Խորենացու միջոցով մեզ հասել արեգակ-Վահագնի ծնունդը պատկերող վերևում հիշատակված "Վահագնի ծնունդը" ստեղծագործությունը:

Ղ. Ալիշանը, վկայակոչելով հին վարդապետներից մեկին, գրում է. "Ոմանք զԱրեգակն պաշտեցին եւ Վահակն կոչեցին"³: Հայ ուսումնասիրողներից Ա. Մատիկյանը, Մ. Արեղյանը, Ն. Ադոնցը և ուրիշներ նույնպես գտնում են, որ Վահագնը փոխարինել է արևային բնույթ ունեցող տեղական ավելի հին մի աստվածության՝ Արային:

Ուսումնասիրողներից ոմանք (Վինդիշման, Լազարդ, Գելցեր) հայոց Վահագնին նույնացրել են իրանական "Ավեստայում" հիշատակված Վերեթրանայի (Վրթրագնա) հետ և նրան վերագրել իրանական ծագում: Ի տարբերություն օտարների հայ ուսումնասիրողները հիմնականում համակարծիք են Վահագնի տեղական, հայկական ծագման հարցում:

Հայ պատմագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ Վահագն անունը առաջացել է հնդեվրոպական Բահագին (աստված) անունից, "բ" հնչյունը "վ"-ի վերածվելու օրինաչափությամբ⁴: Հնդեվրոպական մի շարք լեզուներում bah (vah) արմատը "աստված" իմաստն ունի, ինչպես պահլավերեն՝ bag, ռուսերեն՝ нСъ օրինակներում է և այլն: Հայոց Բագին, Բագավան, Բագառիճ, Բագարան անունների մեջ ևս բազ արմատը "աստված" իմաստն ունի: Bah (vah) արմատը Վահ-ագն

անվան առաջին մասն է, իսկ անվան երկրորդ ազն մասը հուշում է, որ դարձյալ գործ ունենք հնդեվրոպական բառարմատի հետ: Ազն արմատին ուշադրություն է դարձրել նաև Ղ. Ալիշանը. "Հնդկերեն (սանսկրիտ) Ակնի, լատիներեն՝ gnis-հուր, հուներեն՝ Ayvos, արդյո՞ք սրանք հոմանիշ չեն" - հարցնում է մեծավաստակ գիտնականը: Այժմ, երբ գիտենք, որ հնդեվրոպացիները ունեցել են նախահայրենիք և նախալեզու, կարող ենք միանշանակ ասել, որ վերոհիշյալ բոլոր բառերը, նաև ռուսերեն՝ СЗСВ и հայերեն՝ կրակ (ագ) բառերը հոմանիշներ են, ազգակից լեզուներ և նշանակում են "հուր, կրակ": Հետևաբար Վահագն անունը կազմված է Վահ- "աստված" և -ագն "հուր, կրակ" բաղադրիչներից, որ կրակի, հրի (արև) աստված իմաստն ունի:

Վահագնը, ինչպես արդեն նշվել է, նաև հայոց ռազմի աստվածն էր: Հայ թագավորներն ու զորավարները այլ աստվածների շարքում դիմում էին նաև Վահագնին ու նրա զորությանը: Նորից հիշենք Տրդատ 1-ին թագավորի հրովարտակը՝ ուղղված հայ ռազմիկներին. "Քաջութին հասցե ձեզ ի քաջեն Վահագնէ, ամենայն Հայոց աշխարհիս":

Վահագնը հայոց սիրված աստվածներից էր: Նրա գույգը սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկն էր: Վահագնին նվիրված գլխավոր մեհյանը գտնվում էր Տարոնի Աշտիշատ ավանում: Մեհյաններ են եղել նաև Վարագա լեռան մոտ, Ահնական գյուղում, Բարձր Հայքի Դերջան գավառում և այլն:

Հայաստանում եղել է Վահագնին նվիրված քրմական տոհմ՝ Վահունիք, որոնք պարտավոր էին ծառայել Վահագն աստծուն⁵, նրան նվիրված տաճարներում:

ՄԻՀԸ -- Հայոց դիցաբանում արևի ու կրակի աստվածն էր Միհրը: Ուշ հեթանոսական շրջանի հայոց դիցաբանության մեջ Միհրը Արամազդի որդին է և պատահական չէ, որ ժառանգել է ԱԸ-Արայի ու Արամազդի նկարագրի արևային գիծը:

Գրավոր աղբյուրներում Միհր աստծո անվանը առաջին անգամ հանդիպում ենք Խուրրի-Միտանիի թագավոր Մատիուազայի (մ.թ.ա. 1350 - անհայտ) և խեթական թագավոր Սուպիլուլիումայի (1380-1346) միջև կնքված դաշնագրի տեքստում Mitra ձևով⁶:

Չնայած մատենագրական քիչ տեղեկություններ կան Միհրի մասին, այնուամենայնիվ հայոց հին առասպելների ու դիցաբանության մեջ շատ են Միհրի նկարագրին համապատասխանող հերոսները (Արտավազդ, "Մասնա ծոերի" Մեծ ու Փոքր Միհրներ): Արտավազդը, որ հետագայում վեր է ածվում չար ուժի, շղթայվում է Մասիս լեռանը, Փոքր Միհրը փակվում է Վանի մոտակայքում գտնվող վիթխարի քարածայրի՝ Ագռավաքարի մեջ (նաև Միհրի դուռ): Սակայն ժողովուրդը հավատում է, որ նրանք դուրս են գալու փակված տեղից և փրկելու են աշխարհը:

Միհրի մասին հետաքրքիր մի առասպել գոյություն ունի, որի բովանդակությունը հետևյալն է. Միհրը Արամազդի որդին է, ծնվել է ժայռից և դաստիարակվել հովիվների մոտ: Նա բազմաթիվ սխրանքներ է գործել, կռվել է չար ուժերի դեմ և հաղթել: Նրա գլխավոր հերոսությունը Արամազդի նախաստեղծ ոսկե ցուլի սպանությունն է, որի արյունից առաջ է եկել երկրի պտղաբերության ողջ զորությունը: Ի վերջո Միհրը համբարձվում է երկինք և այնտեղից հսկում մարդկանց ու երկիրը: Բայց նա գալու է նորից, որ փրկի մարդկությանը չարից ու ստեղծի երանելի թագավորություն⁷: Այս գրույցը հիշեցնում է ԱԸ Աստծո նկարագրի հատկանիշներից մեկը՝ հարություն առնելու հատկանիշը (նաև մեռնող-հառնող բնության աստվածն էր ԱԸ-ԱԸԱՆ):

Միհրի պաշտամունքը տարածված է եղել նաև Հնդկաստանում, Իրանում, Հունաստանում, Հռոմում, Վրաստանում, Ադվանքում և այլն: Միհրի համընդհանուր պաշտամունքի հիման վրա մ.թ.ա. 4--2-րդ դարերում ձևավորվել է միհրականությունը, որի հիմնական գաղափարը բարի աստծո՝ Միհրի երկրորդ գալուստն է: Միհրը համարվել է փրկիչ, մեսիա: Ըստ միհրապաշտների նրա երկրորդ գալուստյամբ աշխարհն ազատվելու է չար ուժերից, մահից և ստեղծվելու է երկրային երանելի թագավորություն, որտեղ Միհրի անեղ դասաստանին են արժանանալու բոլոր ննջեցյալները՝ մեղավորները պատժվելու են, իսկ արդարները հարություն են առնելու:

Միհրի ծննդյան տոնը նշվել է դեկտեմբերի 25-ին: Քրիստոնեությունն իր մեջ շատ տարրեր է ներառել միհրականությունից (Քրիստոսի ծնունդը, համբարձվելը, երկրորդ գալուստը): Քրիստոնեությունը վերցրել է նաև Միհրի ծննդյան օրը (դեկտեմբերի 25), այն դարձնելով Քրիստոսի ծննդյան օր (հայոց եկեղեցին չընդունեց դա, Քրիստոսի ծննդյան օր համարելով հունվարի 6-ը): Միհրին նվիրված տոնը Հայաստանում նշվել է մեծ շուքով: Հույն պատմիչ Մտրաբոնը, ինչպես արդեն նշվել է, վկայում է, որ այդ օրը զոհաբերվել են շատ ձիեր: Հայոց տոմարի 7-րդ ամիսը կոչվել է Մեհեկան, իսկ յուրաքանչյուր ամսվա 8-րդ օրը՝ Միհր: Վանական վարդապետը Մեհեկան անունը բխեցնում է մահ բառից, քանի որ այդ ամսին բնությունը ձյունածածկ է, բույսերը, ծառերը չեն աճում և մահացածի տպավորություն են

թողնում: Հիշենք, որ հնում ԱՐ-ԱՐԱՆ արևի (կրակ) Աստված լինելուց բացի, նաև մեռնող-հառնող բնության աստվածն էր, իսկ Միհրը ժառանգել է ԱՐ Աստծո հենց այս հատկանիշը: Հետաքրքիր է, որ Միհրին նվիրված բոլոր տոները նշվել են ձմեռվա ամիսներին (դեկտեմբերի 25, փետրվարի կեսեր՝ տրնդեգ), երբ մեռած է բնությունը: Կարելի է ենթադրել, որ Միհր (Միեր) անունը Մահ-ԷՐ (ԱՐ) իմաստն ունի: Ձմռանը հաջորդում է գարունը և մահացած բնությունը նաև սիրելի աստվածը նորից հարություն են առնում (ԱՐ-Արայի մեռնող հառնող բնությոը, Միհրի երկրորդ գալուստը մահվանից հետո): Հայաստանում Միհրի գլխավոր տաճարը գտնվում էր Բարձր Հայքի Դերջան գավառի Բագառիձ ավանում: Տաճարներ են եղել նաև Վասպուրականում, Տարնում, Մյունիքում և այլն: Ի դեպ հեթանոսական տաճարը Հայաստանում կոչվել է նաև մեհյան, որը ուսումնասիրողները (Մ. Էմին, դե Լեգարտ) բխեցնում են Միհր աստծո անունից⁸:

ԱԼԴԻ-ԽԱԼԴԻ - Ի տարբերություն հայոց հեթանոսական դիցարանի շատ աստվածների, հայոց հնագույն պետության՝ Ուրարտուի գլխավոր աստված Խալդիի (նաև Ալդի, Հալդի) մասին կան շատ ու բազմազան տեղեկություններ, հայտնաբերված արձանագրությունների և մշակութային այլ արժեքների (որմնանկարներ, բարձրաքանդակներ, զենքեր, զարդեր) շնորհիվ:

Խալդին պետության գլխավոր աստվածն էր: Նա կյանքի, բուսականության, երկրագործության, շինարարության ու ռազմի աստվածն էր: Նա նաև մեռնող-հառնող աստված է, ինչպես ԱՐ-ԱՐԱՆ: Չնայած ուրարտական դիցարանը ունի արևի աստված (Շիվինի)⁹ Խալդին նաև արևի աստված է եղել, քանի որ ունի այն բոլոր հատկանիշները, որ հատուկ են արևի աստծուն. նրա ուղեկիցներն ու խորհրդանիշներն են առյուծը և արծիվը, նա պատկերվել է իբրև թևավոր աստվածություն և այլն: Խալդիի անունով են սրբագործվել ուրարտական արքաների շինարարական աշխատանքներն ու ռազմական արշավանքները: Խալդիի գլխավոր տաճարը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավային մասում գտնվող Արդինի (ասորեստանյան տարբերակով Մուծածիր կամ Մուսասիր) քաղաքում: Այդ տաճարը կոչվել է նաև "Վահանի տուն"¹⁰, քանի որ տաճարի ճակատային մասերից և պուներից կախված են եղել վահաններ, իսկ մուտքի երկու կողմերում տեղադրված են եղել երկու մեծ նիզակներ ու աղոթող դիրքով երկու արձաններ: Տաճարի համամասնությունը պահպանելու նպատակով շենքի երկթեք տանիքի կենտրոնում տեղադրվել է ավելի խոշոր ու կարճ մեկ այլ նիզակ: Քանի որ Արդինին գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավային մասում, որը հաճախ նույնիսկ չի մտել Ուրարտուի կազմի մեջ, կարելի է մտածել, որ Արդինին Հայկական լեռնաշխարհի հնագույն ու ընդունված սրբատեղին է եղել Ուրարտու պետության կազմավորումից շատ առաջ: Նշենք, որ այս տաճարում էին թագադրվում Ուրարտուի թագավորները: Այդտեղ էին պահպանվում նաև արքունական գանձերը: Արդեն նշվել է, որ Ալդի (Խալդի) աստվածը ամենայն հավանականությամբ ժառանգել է ԱՐ Աստծո անունն (ԱՐ=Ալ-դի, լ-ր հնչյունափոխություն) ու նկարագրի համարյա բոլոր հատկանիշները: Այս դեպքում կարելի է մտածել, որ Ար-դի-նի անունը ևս կապ ունի ԱՐ աստծո անվան հետ և նշանակում է ԱՐ Աստծո քաղաք (հայերենում դի, դիք բառերը աստված իմաստն ունեն, իսկ ուրարտական շատ բնակավայրեր ունեն նի, նե վերջավորությունը. Էրեբունի, Թեյշեբաինի, Էթիունի): Մի շարք ուսումնասիրողներ (Կ. Լեման-Հաուպտ, Գ. Մելիքիշվիլի, Բ. Պիոտրովսկի, Ն. Մառ) այն տեսակետն են արտահայտում, որ Խալդի անվան հիմքը խալն է, որը ստուգաբանում են "երկինք" բառով և ընդունում, որ Խալդին նաև երկնքի աստվածն է եղել¹¹:

Այսպիսով ԱՐ-ԱՐԱ, Արամագո, Վահագն, Միհր, Ալդի-Խալդի աստվածները տեղական, հայ-արիական աստվածներ են, որոնց պաշտամունքը ծագել է Հայկական լեռնաշխարհում և հարատևել հազարամյակներ շարունակ: Տարածվող ցեղը մշակութային այլ արժեքների հետ տարել է նաև իր այս աստվածների պաշտամունքը:

1. Հայոց հնագույն աստվածներ Արամագոյի, Վահագնի, Միհրի, նաև Ալդի-Խալդիի մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ ու աշխատություններ: Նորից անդրադառնալով այդ աստվածներին, նպատակ ունենք ցույց տալ նրանց տեղաբնիկ լինելը և կապը հնագույն ԱՐ Աստծո հետ:
2. Ազաթանգեղոս, 1983, էջ 46:
3. Ղ. Ալիշան, 1910, էջ 96:
4. ՀՄՀ, հ. 11, էջ 242:
5. Մ. Խորենացի, էջ 131:
6. Ա. Խաչատրյան, (գրքի հավելվածը), էջ 483:
7. Ղ. Ալիշան, 1910, էջ 305:
8. Թ. Ավդալբեկյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929, էջ 2:

9. Ուսումնասիրողները Շիվինիին խեթական ծագում են վերագրում (Գ. Меликишвили, Наир-Урарту, Тбилиси, 1954, стр. 368):
10. РДд, 1971, չ3 407:
11. Б. Пиотровский, 1959, չ3 224:

Գլուխ Չորրորդ

Հայաստան. Մշակույթի Հնագույն Ակունքներում

Նյութական մշակույթ

Հայկական լեռնաշխարհում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի հարուստ ժառանգությունը վկայում է հնագույն քաղաքակրթության ստեղծման մեջ հայկական ցեղերի գործուն մասնակցության մասին: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են հին քարի դարի ստորին պալեոլիթի ժամանակաշրջանի (800 000 - 100 000 տարի առաջ, Արագած լեռան համակարգ, Արցախի Ագոխ, Հարք գավառի Լիզք (այժմ Բուլանըխ) բնակավայրեր, Հրազդան գետի միջին հոսանքների շրջան) հնագույն մարդու բնակության բազմաթիվ հետքեր, որն առանց ընդհատումների հասնում է մինչև մեր օրերը, իր մեջ ընդգրկելով միջին հին քարի դարը՝ միջին պալեոլիթ (100 000 - 40 000 տարի առաջ, Գեղամա լեռներ, Երևան-1, Նուռնուս), հին քարի դարի ուշ շրջանը՝ վերին պալեոլիթ (40 000 - 12 000 տարի առաջ, Հրազդան գետի ավազան, Նուռնուս, Ջրաբեր, Արգնի), միջին քարի դարը՝ մեզոլիթ (մ.թ.ա. 10--8-րդ հազարամյակներ, Արտին լեռ, Թալինի շրջան), նոր քարի դարը՝ նեոլիթ (մ.թ.ա. 8--5-րդ հազարամյակներ), պղնձի քարի դարը՝ էնեոլիթ (մ.թ.ա. 5--3-րդ հազարամյակներ), բրոնզի դարը (մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներ), երկաթի դարը (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես - մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ) և ավելի ուշ, հասնելով մինչև մեր օրերը: Խոսելով հնագիտական պեղումների մասին, պետք է նշել, որ միասնական հայկական պետության բացակայությունը Հայկական լեռնաշխարհում թույլ չի տալիս ամբողջացնելու, ի մի բերելու այդ տարածքում հայտնաբերված ողջ հնագիտական նյութը: Պատմական Հայաստանի տարբեր մասերից հայտնաբերված հնագիտական նյութերը օտար ուսումնասիրողների կողմից հաճախ առանձնացվում ու ներկայացվում են որպես անատոլիական, միջագետքյան, կովկասյան կամ փոքրասիական մշակույթներ: Այս պայմաններում մեծ աշխատանք են կատարում հայ հնագետները, որոնք հավաքում են Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում կատարված պեղումների արդյունքների մասին եղած տեղեկությունները (մասնագիտական հանդեսներ, հոդվածներ, ուսումնասիրություններ, անձնական կապեր), ի մի բերում նյութերը ու խոսում Հայկական լեռնաշխարհում ստեղծված միասնական մշակույթի մասին:

Առաջավոր Ասիայում, նաև Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերվել են նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ: Մշակութային հարուստ ժառանգությամբ աչքի է ընկնում նոր քարի դարը՝ նեոլիթը (մ.թ.ա. 8--5-րդ հազարամյակներ): Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված նեոլիթյան վաղագույն բնակավայրը Աղձնիքի (այժմ Դիարբեքիի շրջան) Արգունա գյուղի տարածքում գտնվող Չոյունու-թեփեսի հուշարձանն է (Խարբեքիի հովիտ): Այս հնավայրի պեղումների ժամանակ բացվել է մշակութային հինգ շերտ, որոնցից հնագույնը թվագրվում է մ.թ.ա. 8-րդ հազարամյակով: Այս հուշարձանը այն եզակի բնակատեղի է, որտեղ հայտնաբերվել են մետաղից պատրաստված առաջին կենցաղային իրերը՝ պղնձե ասեղներ, ուլունքներ, ծակիչներ և կոփածո պղնձի կտորներ¹:

Նեոլիթյան բնակավայրեր են հայտնաբերվել նաև Արագած լեռան և Արտին լեռան կայաններում, Թալինի շրջանում (Ջաղա, Բառոժ), Արարատյան դաշտավայրի բնակատեղիներում (Կոզակ բլուր, Մաշտոցի բլուր, Վերին Խաթունարխ), Անի Պեմգայում և այլն: Այս հուշարձանների հետ մշակութային ու ժամանակագրական աղերսներ ունեն Փոքր Ասիայի Չաթալ-հույուք (Քոնիա, մ.թ.ա. 7--6-րդ հազարամյակներ), Հաջիլար (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ), Հայկական Միջագետքի Հալաֆ (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ), Հասունա, Սամարրա (մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներ), Կիլիկիայի Մերսին, Տարսուս (մ.թ.ա. 5-րդ հազարամյակ), նաև Հորդանանի Երիքով (մ.թ.ա. 8--7-րդ հազարամյակներ) հնավայրերը և այլն:

Նոր քարի դարի մշակույթը Հալաֆ բնակավայրի անունով կոչվում է հալաֆյան (նաև Հասունյան մշակույթ՝ Հասունա բնակավայրի անունով): Ուսումնասիրողները հալաֆյան մշակույթի, հատկապես նուրբ, փայլուն, գծանախշ խեցեղենի ծագման կենտրոն են համարում Հայկական Միջագետքը², ավելի ստույգ Եփրատի աղեղից (Կարքեմիշ) մինչև Տիգրիսի վտակ Մեծ Ջաբ ընկած տարածքը: Հասունյան մշակույթի ծագման կենտրոնը նույնպես ուսումնասիրողները կապում են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերի ու Հայկական Միջագետքի հետ, տեղադրելով այն Մարդինի և Դիարբեքիի (Ամիդ) շրջանում³: Այս փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ Տիգրիսի ակունքների հովիտներում

և Եփրատի հոսանքի միջին շրջանում էր գտնվում նստակյաց երկրագործների և անասնապահների այն մշակույթը, որն ընկած է Միջագետքի քաղաքակրթության հետագա բոլոր նվաճումների հիմքում⁴: Այդ մշակույթը ինչպես արդեն նշվել է թվագրվում է մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներով և կոչվում է հալաֆ-հասունյան մշակույթ: Հասունյան մշակույթի բարձրագույն էտապը Մամարրյան մշակույթն է (Տիգրիսի հոսանքի միջին մասում): Ի դեպ ընդունված է, որ Մամարրյան մշակույթը կրող ցեղերն են յուրացրել Ստորին Միջագետքը, հիմք դնելով շումերական քաղաքակրթությանը⁵:

Նոր քարի դարում մարդիկ պատրաստում են հղկված քարե գործիքներ, սովորում են կառուցել քարե հիմքով ու աղյուսե պատերով հարմար ու պաշտպանված կացարաններ և այլն: Այս ժամանակաշրջանում կատարված կարևորագույն հայտնագործությունը կավե ամանների պատրաստման գյուտն էր, որը մարդուն թույլ էր տալիս կենցաղում և տնտեսության մեջ պատրաստել ու օգտագործել նոր սննդատեսակներ:

Հնագիտական պեղումները վկայում են, որ նոր քարի դարում վերոհիշյալ բոլոր բնակավայրերի բնակիչները և՛ Հայկական լեռնաշխարհում, և՛ Հայկական Միջագետքում, և՛ Փոքր Ասիայում, և՛ Առաջավոր Ասիայի այլ բնակավայրերում զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ ու որսորդությամբ: Իսկ շատ վաղ (մ.թ.ա. 10--9-րդ հազարամյակներ) երկրագործության ու անասնապահության կենտրոններ են համարվում Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերը՝ Զագրոսի լեռնային հովիտներն ու հարթավայրերը (Շանիդար, Զարգի, Զարմո): Վերոհիշյալ բոլոր այս հայտնի (հավանաբար նաև դեռ անհայտ) բնակավայրերում մոտավորապես 9-10 հազար տարի առաջ ձևավորվեցին վաղագույն երկրագործական ու անասնապահական կենտրոնները, ուր աճեցնում էին ցանովի հացաբույսեր՝ ցորեն, գարի և ընտելացնում կենդանիներ՝ այծ, ոչխար, խոզ և այլն: Այդ են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված ցանովի հացաբույսերի և ընտելացված կենդանիների մնացորդները: Ի դեպ, Հայաստանում այսօր էլ կարելի է հանդիպել կենդանիների (այծ, ոչխար) և հացաբույսերի (ցորեն, գարի) վայրի տեսակների:

Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են վանակատից ու կայծքարից պատրաստված մեծ քանակությամբ աշխատանքային գործիքներ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհի բնական հարստություններից մեկից՝ վանակատից (օբսիդիան) պատրաստված մեծ քանակությամբ բազմազան իրեր (դաշույններ, դանակներ, նիզակի ծայրեր, նաև հայելիներ) են հայտնաբերվել Չաթալ-հույուքում, Հաջիլարում, Միջագետքում և Առաջավոր Ասիայի այլ հնավայրերում: Ինչպես տեսնում ենք "Օբսիդիանի ճանապարհը" լեռներով ու անապատներով 1000-ավոր կիրճներով ձգվում էր դեպի Առաջավոր Ասիայի հեռավոր անկյունները:

Հայտնաբերված նեոլիթյան խեցեղենը միագույն է (դեղնավուն, կարմիր), հազվադեպ հանդիպում է նաև նախազարդ խեցեղեն (Հաջիլար, Հալաֆ, Չոյունու-թեփեսի): Հետաքրքիր է, որ Չաթալ-հույուքից հայտնաբերված խեցեղենին և փայտե կենցաղային իրերին (քրեղաններ, ափսեներ) պատկերված են պարուրաձև արևանշաններ ու եռանկյունիների համադրությամբ խաչի պատկերներ, որոնք շատ նման են Հայկական լեռնաշխարհում տարածված նույնատիպ զարդանախշերին (Շենգավիթ, Շրեշ բլուր): Հայտնաբերված (Չաթալ-հույուք, Չոյունու-թեփեսի) մետաղե առաջին մշակված իրերը պղնձից ու կապարից պատրաստված պերճանքի առարկաներ են (մ.թ.ա. 8--7-րդ հազարամյակներ):

Նշենք, որ հայաստանյան նեոլիթյան բնակավայրերը շատ հաճախ մշակութային ստորին շերտեր ունեն (Արագած լեռան համակարգ, Ագոխ, Լիզք, Հրազդան գետի ավազան, Երևան-1, Նուռնուս և այլն), որը քիչ է հանդիպում Առաջավոր Ասիայի մյուս հնավայրերում:

Մարդկային հասարակության պատմության զարգացման հաջորդ փուլը մետաղի մշակման ժամանակաշրջանն է՝ էնոլիթը՝ պղնձի քարի դարը (մ.թ.ա. 5--3-րդ հազարամյակներ): Հայկական լեռնաշխարհը, որ հարուստ է տարբեր մետաղահանքերով (պղինձ, կապար, արծաթ) համարվում է մետաղահանության ու մետաղամշակության հնագույն կենտրոններից մեկը⁶:

Առաջին մետաղե աշխատանքային գործիքները պատրաստվել են մաքուր պղնձից, որը սակայն փափակ էր և շուտ էր ջարդվում: Այդ պատճառով մարդիկ պղնձե գործիքների հետ շարունակում են օգտագործել քարե գործիքներ: Էնեոլիթյան բնակավայրեր են հայտնաբերվել Երևանում (Շենգավիթ), Աբովյանում, Վանաձորում, Էջմիածնում (Մոխրաբլուր, Սև-բլուր), Վանում (Շամիրամալթի), Խարբերդում (Նորշուն-թեփե), Նախիջևանում (Քյուլ-թափա-1), Բագրևանդում, Ուրմիա լճի ավազանում (Գեոյ-թափա) և այլն: Այդ բնակավայրերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են ոչ միայն մետաղե իրեր (կացիններ, տեգի ծայրեր, գնդասեղներ, ապարանջաններ), այլև կավե ու քարե կաղապարներ, հալոցների ու խարամի մնացորդներ (Շենգավիթ, Գառնի, Նախիջևանի Քյուլ-թափա, Արտաշավան), որոնք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված մետաղե իրերը

ձուլվել ու պատրաստվել են տեղում: Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան բնակավայրերից հայտնաբերված հնագիտական նյութը շարունակում է ընդհանրություններ ունենալ Փոքր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի և Առաջավոր Ասիայի այլ հնավայրերից հայտնաբերված նույն ժամանակաշրջանի հնագիտական նյութերի հետ: Շամիրամալթից, Արարատյան դաշտավայրի Խաթունարխ, մերձուրմյան Գեոյ-թափա, Նախիջևանի Քյուլ-թափա և Հայկական լեռնաշխարհի այլ հնավայրերի ստորին շերտերից հայտնաբերվել են մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակներով թվագրվող վանակատից և կայծքարից պատրաստված բազմաթիվ աշխատանքային գործիքներ, ոսկորներից պատրաստված բրիչներ, քերիչներ, սրածայր ասեղներ, գարդեր, այլ մանր գործիքներ, նաև պղնձե հերուններ, ասեղներ, շեղբեր, նետասլաքներ, կարթեր և այլ իրեր, որոնք իրենց գույգեղեցիկները ունեն Չաթալ-հույուքի, Ալան-հույուքի, Հաջիլարի, Ալիշարի, Միրիա-Պաղեստինի (Երիքով, Ռաս-Շամրա, Տախունե) և հալաֆ-հասունյան մշակույթի այլ նեոլիթյան ու էնեոլիթյան հնավայրերից հայտնաբերված մշակութային արժեքների հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղե իրերի վաղագույն նմուշները, ինչպես նաև հումքը՝ մաքուր պղինձը Միջագետք, Եգիպտոս ու այլ երկրներ են թափանցել Հայկական լեռնաշխարհից: Այդ են վկայում ոչ միայն մշակութային ընդհանրությունները, այլև մետաղահանքերից գուրկ Միջագետքից (Ուր, Քիշ քաղաքներ), Փոքր Ասիայի արևմտյան մասերից (Տրոյա-2), Իրանի Թեփե-հիսար և Առաջավոր Ասիայի այլ հնավայրերից հայտնաբերված աշխատանքային գործիքների, զենքերի ու գարդերի ձևերի նմանությունները Շենգավիթից, Գառնիից, Նախիջևանի Քյուլ-թափա բնակավայրից հայտնաբերված պղնձե նույնատիպ իրերին: Այդ է վկայում նաև այն փաստը, որ հնդեվրոպական բազմաթիվ լեզուներում պղինձը, բրոնզը, արծաթը, երկաթը և այլ մետաղներ իրենց անուններով կապվում են Հայաստանի հետ (տես N6 տողատակը):

Ինչպես տեսնում ենք նեոլիթի և էնեոլիթի ժամանակներում տնտեսական ու մշակութային սերտ կապեր են գոյություն ունեցել Հայաստանի, Միջագետքի ու Փոքր Ասիայի միջև, որն էլ անշուշտ ապահովել է տնտեսության ու մշակույթի զարգացման բարձր մակարդակ Առաջավոր Ասիայում: Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերից - 3-րդ հազարամյակի սկիզբ ընկած ժամանակաշրջանում, որն ընդգրկում է նաև վաղ բրոնզի դարը, Հայկական լեռնաշխարհում նկատվում է արտադրության միջոցների նոր կատարելագործում և մշակույթի զարգացման էլ ավելի բարձր մակարդակ: Հալաֆյան մշակույթին հաջորդում է վաղ բրոնզեդարյան մշակույթը, որը հայտնի է կուր-արաքսյան (հնագետ Բ. Կուֆտինի առաջարկով) կամ շենգավիթյան մշակույթ անունով: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված կուր-արաքսյան մշակույթի հնավայրերը տեղաբաշխված են ընդարձակ տարածքում: Մշակութային այդ գոտին սկսվում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնից և տարածվելով դեպի ծայրամասեր, հարավ- արևելքում հասնում է Ուրմիա լիճ (Գեոյ-թափա, Յանդ-թեփե), հյուսիսում՝ Թոռեղ (Թրիպլեթ), հարավում՝ Ասորիք (Ամուկ 1, 2) ու Պաղեստին (Կիրբեթ-Կերակ, Բեթ-Շան), իսկ արևմուտքում՝ Եփրատ գետ:

Այս ժամանակաշրջանում բարձր զարգացման է հասնում հատկապես խեցեգործությունը, որի բնորոշ հատկանիշներից մեկը խեցու երկգույն լինելն է, արտաքինից սև, փայլուն (հաճախ մետաղափայլի աստիճան), ներսից՝ կարմիր-վարդագույն, որոնք զարդարված են ռելիեֆ կամ ներձկված զարդանախշերով: Կուր-արաքսյան խեցեղենի բնորոշ հատկանիշներից է նաև խեցու միայն մի կողմից նախշազարդված լինելը:

Հայտնաբերված հուշարձաններից լավ ուսումնասիրվել ու հայտնի են Շենգավիթը, Երևանի կայարանամերձ հրապարակը, Էջմիածնի շրջանում՝ Մոխրաբլուրը, Շրեշ բլուրը, Կոտայքում՝ Գառնին, Էլարը, Նախիջևանում Քյուլ-թափա 1-ը, Էրզրումում Կարազը (Արծն), Ուրմիա լճի ավազանում՝ Գեոյ-թափան, Ադդամի մոտ՝ Ուզերիկ-թեփեն, Ախալցխայում՝ Ամիրանիս գորան, նաև Լոռի բերդ, Հառիճ, Ջրահովիտ, Թոռեղ բնակավայրերը և այլն:

Կուր-արաքսյան մշակույթը Հայկական լեռնաշխարհում ստեղծված տեղական մշակույթ է: Այդ է ապացուցում այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհից դուրս այն չի կապվում մշակութային նախորդ շերտերի հետ: Նկատվում է նաև, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված խեցեղենի զարդամոտիվները ավելի հարուստ ու բազմազան են: Պղնձե բնակավայրերից ու դամբարաններից հարուստ խեցեղեն հավաքածուների հետ հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ մետաղե (ոսկե, արծաթե, բրոնզե) իրեր, զենքեր, գարդեր, կենցաղային իրեր և այլն:

Հայկական լեռնաշխարհից դուրս կուր-արաքսյան մշակույթի հայտնաբերված հուշարձաններից առավել հայտնի են Կիրբեթ-Կերակյան (Պաղեստին), մերձսևծովյան շրջանների (Մայկոպ, Նովոսվոբոդնոյե) ու հարավային Օսեթիայի (Պրինեվի) հուշարձանները: Կիրբեթ-կերակյան մշակույթը թվագրվում է մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներով, իսկ հայտնաբերված խեցեղենին հատուկ է սև, փայլեցված մակերեսը, վարդագույն աստառը, շուրթից սկսվող կանթը, ռելիեֆ (ելուստ, գծավոր)

գարդանախշերը, ընդ որում դարձյալ գարդարված է անոթների միայն մի կողմը (ինչպիսին Շենգավիթի և Խարբերդի խեցեղենն է): Ուսումնասիրողները Կիրբեթ-Կերակյան խեցու ակունքների երկիր ու հայրենիք են համարում Հայկական լեռնաշխարհը⁷: Գիտական աշխարհում ընդունված է, որ այս մշակույթը ստեղծել են կուր-արաքսյան մշակույթը կրող խուրրիական ցեղերը, որոնք մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին թափանցել են Սիրիա ու Պաղեստին և ստեղծել այն մշակույթը, որը հայտնի է Կիրբեթ-Կերակյան մշակույթ անունով: Ընդունված է նաև, որ մ.թ.ա. 18--15-րդ դդ. Սիրիա-Պաղեստինի բնակչության մեծագույն մասը խոսում էր Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ խուրրիների լեզվով⁸:

Հյուսիսային Կովկասի հնավայրերից լավ է ուսումնասիրված Մայկոպի դամբարանաբլուրը (Կուրգան), որը թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջով: Պեղված դամբարաններից հայտնաբերված նյութերը թույլ են տալիս ասելու, որ այդ մշակույթը կրողները զբաղվել են անասնապահությամբ, երկրագործությամբ, մետաղագործությամբ, օգտագործել են ձի, ունեցել են անվավոր փոխադրամիջոցներ և այլն: Հայտնաբերվել են նաև առաջնորդների ու ռազմիկների դիակիզմամբ թաղման դամբարաններ: Հարավային Օսեթիայի Պրինեվի բնակավայրերից հայտնաբերված խեցեղենը (սև, փայլեցված, ձգված շեղանկյուններով ու զիգագազ գծերով դրոշմագարդ խեցեղեն) շատ նման է Թոնեխքի ու Արցախի Ուզերիկ-թեփե (Ադդամ) բնակավայրից հայտնաբերված նյութերին: Առաջավոր Ասիայում մ.թ.ա. 8--4-րդ հազարամյակներում մարդու կողմից ստեղծվել է հզոր մի մշակույթ (հալաֆ-հասունյան, կուր-արաքսյան կամ կիրբեթ-կերակյան): Սա այն ժամանակաշրջանն է, երբ գիր, գրավոր տեքստեր ու վկայություններ չեն հայտնաբերվել (չհաշված ժայռապատկերները, իսկ հնագույն գրավոր տեքստերը շումերական սեպագիր տեքստերն են, որ թվագրվում են մ.թ.ա. 28--27-րդ դդ.): Այս պայմաններում դժվար է ասել, թե ովքեր էր են ստեղծել այս մշակույթը, կամ ո՞ր ցեղերն են կանգնած հնագույն այս քաղաքակրթության ստեղծման ակունքներում: Փորձենք պատասխանել այս հարցերին (նշենք, որ պատասխանը խոր ուսումնասիրության կարիք ունի): Հիշենք, որ Փոքր Ասիայի մ.թ.ա. 7--6-րդ հազարամյակներով թվագրվող հնագույն հուշարձանները (Չաթալ-հույուք, Ալան-հույուք, Հաջիլար) ժամանակագրական ու մշակութային ընդհանրություններ ունեն Կիլիկիայի (Մերսին, Տարսուս), Արագած լեռան կայանների, Արարատյան դաշտավայրի բնակավայրերի (Մաշտոցի բլուր, Կղզյակ բլուր, Տերտերի ձոր), Թալինի (Ջաղա, Բառոժ) և այլ հուշարձանների հետ: Մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներով թվագրվող հալաֆ-հասունյան մշակույթի հայրենիքը Հայկական լեռնաշխարհի հարավային մասերն ու Հայկական Միջագետքն են: Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներով թվագրվող շենգավիթյան կամ կուր-արաքսյան (նաև Կիրբեթ-կերակյան) մշակույթի հայրենիքն է նաև: Հնագույն այս մշակույթներից ոչ մեկը հանկարծակի կամ պատահականորեն ստեղծված մշակույթ չէ: Նրանք շարունակում և լրացնում են իրար այնպես, որ զգացվում է ինչ-որ ցեղերի անընդհատ մասնակցությունն այդ մշակույթների ստեղծման գործում: Այս առումով հետաքրքիր տեսակետներ են արտահայտում ուսումնասիրողները: Տեսակետներից մեկի համաձայն՝ "Անդրկովկասի, Հյուսիսային Իրանի, Իրաքի, Սիրիա-Պաղեստինի քարեդարյան մշակույթը մի ընդհանուր ծագում ունի և այդ տարածքները քարի դարի վերջին շրջանում զբաղեցրել են համարյա նույն մշակույթն ունեցող, թերևս նույն էթնիկ խմբավորումները կազմող ցեղերը"⁹, կամ "Առաջավոր Ասիայի նեոլիթյան և էնեոլիթյան մշակույթները ստեղծել են Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի բնակիչները՝ խուրրիները"¹⁰ (նաև սուբարիներ)¹¹: Ուսումնասիրողների կողմից վաղուց ընդունված է, որ խուրրիները ծագումով Հայկական լեռնաշխարհից են¹²: Ընդունված է նաև, որ խուրրիները մ.թ.ա. 7--4-րդ հազարամյակներում (նաև ավելի վաղ) խաղաղ ձևով տարածվել են Տիգրիսից արևելք ու Եփրատից արևմուտք ընկած տարածքներում¹³: Ընդունված է նաև, որ հալաֆ-հասունյան մշակույթը կրող (Մամարյան մշակույթ) ցեղերն են մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներում յուրացրել Ստորին Միջագետքը¹⁴: Եփրատ գետի հոսանքով իջնելով նրանք հասել են Պարսից ծոցի ափեր (Էրեղու, ապագա Շումեր պետությունը): Այս առումով հետաքրքիր տեսակետ են արտահայտում Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը: Նրանք գրում են. "հալաֆ-հասունյան մշակույթը կրողները վաղ տեղաշարժեր կատարող հնդեվրոպական ցեղեր էին"¹⁵:

Խուրրիների խաղաղ թափանցումը Առաջավոր Ասիայի այլ տարածքներ շարունակվել է նաև հետագա հազարամյակներում, հավանաբար մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակ, երբ Առաջավոր Ասիայի հարավային մասերում՝ Միջագետքում հայտնվեցին սեմական ցեղերը և սկսվեցին Հայկական լեռնաշխարհ--Միջագետք ռազմական ընդհարումները:

Իբրև եզրակացություն կարելի է ասել, որ Առաջավոր Ասիայի նեոլիթյան և էնեոլիթյան (մ.թ.ա. 7--4-րդ հազարամյակներ) մշակույթները կապվում են մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներից հայտնի էթնիկական

մի ամբողջության՝ սուբարի-խուրրիական (հայկական) ցեղերի վաղ գործունեության ու տեղաշարժերի հետ:

Այսպիսով, մ.թ.ա. 7--4-րդ հազարամյակներից (հավանաբար նաև ավելի վաղ) սկսած Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայկական ցեղերը, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից հայտնի են խուրրի և սուբարի անուններով, խաղաղ ձևով տարածվել են դեպի Կիլիկիա, Միջերկրական ծովի արևելյան ափեր՝ Սիրիա-Պաղեստին, նաև Աշշուր, Բաբելոն, Ստորին Միջագետք և այլն: Այս տեղաշարժերը Հայկական լեռնաշխարհից կատարված մեզ հայտնի հնագույն էթնիկական տեղաշարժերն են:

Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայկական ցեղերի այս և հետագա տեղաշարժերը անհնարին կլինեին առանց անվավոր փոխադրամիջոցների: Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում կատարված հնագիտական պեղումների արդյունքները վկայում են, որ մեր նախնիներն այդ ժամանակներում (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ) շատ կարևոր մի հայտնագործություն են կատարել, այն է. սկսել են օգտագործել անվավոր փոխադրամիջոցներ լծկանների օգնությամբ (ձի, եզ, ցուլ): Կարևոր էր հատկապես ձիու ընտելացումն ու օգտագործումը ինչպես տնտեսության մեջ, այնպես էլ ռազմական նպատակներով: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը ձիու ընտելացման հնագույն տարածքներից է: Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 7--4-րդ հազարամյակներով թվագրվող համարյա բոլոր պեղված բնակավայրերից (Ադա բլուր, Թեղուտ, Շրեշ բլուր-1, Շենգավիթ-1, Մոխրաբլուր-1, Քյուլ-թափա-1, Մեծամոր, Կարազ-Արծն) հայտնաբերվել են ընտելացված ձիու ոսկորներ, նաև ձիու կավե ու քարե արձանիկներ: Ուսումնասիրողները (Ս. Մեջրումյան) պնդում են, որ Հայաստանում ձիու ընտելացման պրոցեսը սկիզբ է առել մ.թ.ա. 7-րդ հազարամյակից¹⁶: Քյուլ-թափայում (Նախիջևան) հայտնաբերված ձիու քարե արձանիկի մեջքին կա ծածկոց, որը վկայում է ձին հեծնելու մասին¹⁷, իսկ Մոխրաբլուր-1-ից հայտնաբերված ձիու մաշված ատամները վկայում են սանձի օգտագործման մասին¹⁸ և այլն:

Հայկական լեռնաշխարհի բնակիչների մոտ գոյություն է ունեցել նաև ձիու պաշտամունք: Հայտնի է, որ այն որպես բարձրարժեք կենդանի զոհաբերել են արևի ԱՐ Աստծուն: Այդ սովորույթը պահպանվել է շատ երկար և մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերին հայերը շարունակում էին ձի զոհաբերել իրենց Արև-Աստծուն: Այդ մասին վկայում է հույն պատմիչ Քսենոփոնը: Նշենք, որ այս սովորույթունը անցել է նաև ալթայյան ցեղերին, ու նրանք արիական ցեղերի օրինակով ձի են զոհաբերել իրենց աստվածներին¹⁹: Ձիու (նաև ցուլ, եզ) ընտելացումն ու օգտագործումը մեծ չափով նպաստել է անվավոր փոխադրամիջոցների հայտնագործմանը: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված առաջին անվավոր սայլերն ու անիվները (մանրակերտեր) թվագրվում են մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներով: Ձիեր լծված քառանիվ սայլերի բազմաթիվ պատկերներ կան Գեղամա և Սյունյաց ժայռապատկերներին, որոնք նույնպես թվագրվում են մ.թ.ա. 6--3-րդ հազարամյակներով: Ձի է պատկերված նաև Շենգավիթից հայտնաբերված կճուճներից մեկի վրա (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ): Միջագետքի հնագույն գրավոր աղբյուրները ևս վկայում են Հայկական լեռնաշխարհում ձիերի վաղ օգտագործման մասին: Շումերական դյուցազնավեպի "Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը" վիպերգում վկայություն կա այն մասին, որ հայոց հնագույն պետության՝ Արատտայի բնակիչները իրենց ապրանքները փոխադրել են ձիերով²⁰:

Նշենք նաև, որ մեզ է հասել Խուրրի Միտանիի բնակիչ Կիկկուլիի խուրրիերենից խեթերեն թարգմանված գիրքը՝ "Տրակտատ ձիու մասին" վերնագրով: Այս ձեռնարկը վկայությունն է այն իրողության, որ ձիաբուծությունը իրոք տարածված է եղել Հայկական լեռնաշխարհում այնքան, որ անհրաժեշտություն է եղել գիրք գրել ձիաբուծության ու ձիամարզության մասին:

Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայկական ցեղերը շատ վաղ են ընտելացրել ձին (մ.թ.ա. 7--6-րդ հազարամյակներ)՝ օգտագործելով այն տնտեսության մեջ և մարտի դաշտում: Միջագետքում, Էլամում, Բալկաններում, հյուսիսամերձսևծովյան շրջաններում ևս հայտնաբերվել են ձիու հնագույն մնացորդներ, պատկերներ ու անվավոր փոխադրամիջոցների մնացորդներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներով: Նշենք նաև Ֆերգանայի լեռներից (Սայմալի թաշ), հարավային Սիրիայից և Մոնղոլիայից հայտնաբերված ժայռապատկերների մասին (մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներ), որտեղ պատկերված են անվավոր սայլերին լծված քաշող ձիեր²¹: Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են նաև Միջագետքում ու Խեթական պետության մեջ ձիերի օգտագործման մասին: Մ.թ.ա. 21-րդ դարով թվագրվող շումեր-աքադական հիմնում Շուլգի արքային նվիրված պոեմում վկայություն կա այն մասին, որ Շուլգին թեթև մարտակառքով մեկ օրում անցել է 150 կմ տարածություն²²: Խեթական Կուսասարի քաղաք-պետության թագավոր Անիտասի արձանագրության

մեջ (մ.թ.ա. 19-րդ դարի 2-րդ կես) վկայություն կա խեթական ոչ մեծ մարտակառքերի ջոկատի մասին և այլն²³:

Հայտնաբերված հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհում տարածված են եղել անվավոր փոխադրամիջոցների բազմաթիվ տեսակներ: Եղել են երկանիվ մարտակառքեր, որոնցով մարտի են գնացել թագավորները, առաջնորդներն ու ազնվականները: Եղել են նաև քառանիվ, վեցանիվ սայլեր: Մարտակառքը շատ բարձր է գնահատվել և՛ Հայկական լեռնաշխարհում, և՛ հին աշխարհի այլ երկրներում: Հնդկական վեդաների "Ռիգվեդայի" հիմներից մեկը ամբողջովին նվիրված է մարտակառքին, որտեղ այն համարվում է աստվածային ու արժանի պաշտամունքի առարկա լինելու, իսկ մարտակառք վարողները հեծյալների հետ Հայաստանում համարվել են առանձին, արտոնյալ դասի ներկայացուցիչներ: Իր մարտունակությամբ ու հմտությամբ հայտնի հենց այս դասն էր, որ ըստ հնդկական վեդաների, կոչվում էր mariani - "երիտասարդ հեծյալ":

Միջին բրոնզի դարաշրջանից (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսեր), հավանաբար նաև ավելի վաղ, հայերը սկսում են օգտագործել ձիեր լծված թեթև մարտակառքերից բաղկացած ջոկատներ, որը հեշտությամբ կարողանում էր ճեղքել հակառակորդի հետևակ զորքը (Լճաշենի և Լոռի բերդի դամբարանաբլուրներում գտնվել են երկանիվ, թեթև մարտակառքերի մնացորդներ և դրանց բրոնզե մանրակերտերը): Հայկական լեռնաշխարհում պատրաստվել են նաև ծածկասայլեր, որոնք նախատեսվել ու հարմարեցվել են երկարատև ճանապարհներ գնալու, անգամ քնելու համար (Լճաշենի սայլերը): Այնպիսի ամուր սայլեր, որոնցով հնարավոր լինելու էր հազարավոր կիլոմետրեր ճանապարհ կտրել, կարող էին պատրաստվել հաստաբուն, ամուր ծառատեսակներ և զարգացած մետաղամշակություն ունեցող երկրում (ամուր ծառատեսակը կարելի էր մշակել միայն մետաղե գործիքներով): Որպես այդպիսի տարածք Վ. Իվանովն ու Թ. Գամկրելիձեն առաջարկում են Հյուսիսային Միջագետքը (Հայկական Միջագետք) կամ Վան-Ուրմիա լճերի միջև ընկած տարածքները²⁴ (Հայկական լեռնաշխարհի հարավային մասեր):

Ինչպես տեսնում ենք, մեծ մասշտաբի տեղաշարժեր կատարելու համար Հայկական լեռնաշխարհում եղել են բոլոր անհրաժեշտ պայմանները: Մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներից ավելի է ընդարձակվում ծածկասայլերի ու մարտակառքերի աշխարհագրական միջավայրը: Այդպիսիք հայտնաբերվել են Կովկասում և հյուսիսմերձսևծովյան շրջաններում (Բեդենի, Մայկոպ), Հնդկաստանում՝ (Մոհենջո-Դարո), նաև մերձուրալյան, մերձվոլգյան շրջաններում (Գերասիմովկա ավան, Կազան, Չելյաբինսկի մարզի Ռիմնիսկ ավան), ինչպես նաև Հունգարիայում, Ավստրիայում, Հյուսիսային Իտալիայում և այլն: Հիշենք նաև Ֆերգանայի լեռներից, Հարավային Սիբիրից ու Մոնղոլիայից հայտնաբերված անվավոր փոխադրամիջոցներով ժայռապատկերները²⁵:

Այսպիսով, մշակութային ընդհանրությունները, հատկապես ձիերի, մարտակառքերի ու ծածկասայլերի մնացորդների հայտնաբերումը Առաջավոր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս, վկայում են հայկական/արիական ցեղերի տեղաշարժերի ու տարածման մեծ մասշտաբների մասին:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից Հայկական լեռնաշխարհում ստեղծված, բարձր զարգացման հասած ու մշակութային լայն գոտի ընդգրկած շենգավիթյան (կուր-արաքսյան) մշակույթին (պոլինա և վաղ բրոնզ) հաջորդում է միջին բրոնզեդարյան մշակույթը:

Հայկական լեռնաշխարհում բրոնզի դարաշրջանը բաժանվում է զարգացման երեք փուլերի. վաղ բրոնզի դար (մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներ), միջին բրոնզի դար (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ - 2-րդ հազարամյակի կես) և ուշ բրոնզի դար (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես - 2-րդ հազարամյակի վերջ):

Պոլինա իր փափկության պատճառով այնքան էլ գործածական չէր և իր փնտրտուքների մեջ մարդը սովորում է պղնձին անագ ավելացնելով ստանալ ավելի ամուր մետաղ՝ բրոնզ, որը շատ արագ տարածվում և լայն կիրառություն է գտնում տնտեսության բոլոր ճյուղերում: Այս ժամանակաշրջանի բոլոր բնակատեղիներում հայտնաբերվել են մեծ քանակությամբ բրոնզե իրեր: Հատկապես մեծ նշանակություն ունեն Մեծամորի և Ձողի հուշարձանները: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ այս բնակավայրերը մետաղների մշակման կենտրոններ են եղել: Հայտնաբերվել են մետաղ հալելու հնոցներ և այլ հարմարանքներ, ինչպես նաև բրոնզե բազմաթիվ իրեր: Կացարանների շինարարությունը հիմնականում նույնն է. քարե հիմքերի վրա բարձրանում են հուս աղյուսե պատեր: Նկատվում է նաև բնակչության կենտրոնացում խոշոր բնակավայրերում և դրանց շրջակայքում:

Հայտնի են Լճաշեն, Հոռոմ, Մեծամոր, Արթիկ, Լոռի բերդ և այլ խոշոր բնակավայրերը, որոնք ունեցել են միջնաբերդեր, փողոցներ և առանձին թաղամասեր:

Խեցեգործությունը ևս նոր զարգացում է ունենում: Շենգավիթյան խեցեղենը իր տեղը զիջում է գունազարդ խեցեղենին: Հայտնաբերվել են դուրզի վրա պատրաստված, լավ թրծված, փայլուն, հարուստ զարդանախշերով գունավոր խեցեղենի բազմաթիվ նմուշներ: Այս խեցեղենը հենց այդպես էլ կոչվում է՝ գունազարդ խեցեղեն:

Բրոնզեդարյան հարյուրավոր բնակատեղիներ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում, Արարատյան դաշտավայրից, Սևանի ավազանից մինչև Մալաթիա, Վան ու Տարոնի դաշտավայր:

Հայկական լեռնաշխարհից դուրս (ընդ որում մեծ հեռավորության վրա) շարունակում են հանդիպել բրոնզեդարյան բնակավայրեր ու դամբարաններ, որտեղից հայտնաբերված մշակութային արժեքները դարձյալ նույնություն են ցուցաբերում Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված նույն ժամանակներով թվագրվող նյութական արժեքների հետ: Այսպես. Չեյաբինսկի մարզի Ռիմնինսկ ավանի դամբարանից հայտնաբերվել են մարտակառքի մնացորդներ՝ առաջնորդների և ռազմիկների աճյուններով: Հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ զոհաբերված կենդանիների, հիմնականում ձիերի (նաև եզ, այծ, ոչխար) մնացորդներ, բրոնզե իրեր և այլ արժեքներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2--1-ին հազարամյակներով: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսով է թվագրվում Հնդկաստանում (Հարապպա) հայտնաբերված դիակիզումով հնագույն դամբարանը²⁶: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներով է թվագրվում Չինաստանում հայտնաբերված դամբարանը (վերագրվում է թոխարներին) նույնատիպ գտածոներով՝ մարտակառքի մնացորդներ, զոհաբերված ձիերի մնացորդներ, Արև-Աստծո կառքին լծված սրբազան ձիերի պատկերներ և այլն²⁷: Առաջավոր Ասիայից և Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնաբերված վերոհիշյալ և նմանատիպ այլ դամբարանները դիտվում են որպես տարածվող հայկական/արիական ցեղերի հետքեր:

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերով - 1-ին հազարամյակի սկզբներով թվագրվող դամբարաններից ու բնակավայրերից (Ալթին-թեփե, Կարմիր բլուր, Արգիշտիխինիլի, Թոփրախ-կալե) բրոնզե իրերի հետ հայտնաբերվել են նաև երկաթե իրեր (աշխատանքային գործիքներ, կենցաղային իրեր, զենքեր): Սկսվում է երկաթի մշակումը, որը հեղաշրջող դեր է ունեցել մարդու կյանքում: Այն նոր զարգացում է ապահովել երկրագործության, արհեստների, ռազմական գործի բնագավառում և այլն:

Հայկական լեռնաշխարհում կատարված հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութական մշակույթը (հնագույն մարդու կացարաններ, վանակատից, պղնձից, բրոնզից ու երկաթից պատրաստված աշխատանքային գործիքներ, զարդեր, զենքեր), որն ընդգրկում է մարդկության պատմության զարգացման ողջ ժամանակաշրջանը՝ ստորին վաղ հին քարե դարից մինչև մեր օրերը, վկայում է, որ կյանքը Հայկական լեռնաշխարհում սկիզբ առնելով հազարավոր տարիներ առաջ, երբեք չի ընդհատվել: Հատկանշական է այն փաստը, որ բազմաթիվ բնակավայրեր (Արտին լեռ, Արեգունի, Ագոխ, Շենգավիթ) ունեն մշակութային մի քանի շերտեր և մարդկային տասնյակ սերունդներ ապրել են նույն բնակատեղիներում: Այս հանգամանքը ավելի է կարևորում այդ բնակավայրերի դերն ու նշանակությունը, քանի որ թույլ է տալիս անմիջականորեն հետևելու մարդու գործունեությանն ու առաջընթացին շատ երկար պատմական ժամանակահատվածում (աշխատանքային գործիքների ու զենքերի բարդացում, մշակույթի, հողագործության, անասնապահության զարգացում):

Ամփոփենք. Հայկական լեռնաշխարհը մարդու հնագույն բնակավայրերից է: Հայտնաբերված հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներից Հայկական լեռնաշխարհում նկատվում է հողագործության, անասնապահության, խեցեգործության, աշխատանքային գործիքների ու զենքերի, ինչպես նաև կլոր, կից քառանկյուն կացարաններով բնակավայրերի ընդհանրություն: Կարելի է արձանագրել, որ հյուսիսամիջագետքյան և հայաստանյան հզոր օջախներին են պատկանում մետաղագործության, խեցեգործության, անիվի, բրուտագործական դուրզի, կուլտուրական հացաբույսերի մշակման և մի ամբողջ շարք այլ կարևոր հայտնագործությունների պատիվը, հայտնագործություններ, որոնք մուծվեցին համամարդկային մշակույթի գանձարան²⁸:

Հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է միասնական, հետաքրքիր ու ինքնատիպ մի մշակույթ, որին բնորոշ տարրեր են հայտնաբերվել Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններում, Փոքր Ասիայում, Միջագետքում, ավելի ուշ Կովկասում, մերձսևծովյան նաև մերձուրալյան ու մերձվոլգյան շրջաններում: Հայկական լեռնաշխարհում ստեղծված մշակույթին

բնորոշ շատ տարրեր դիտվում են որպես արիական մշակույթի տարրեր: Ընդհանրացնելով ներկայացված նյութը նշենք այդ տարրերը: Արեգակի պաշտամունք (արևի ու նրա խորհրդանշանների՝ խաչի, սվաստիկայի, ձիու, առյուծի, արծվի պատկերների առկայություն հնագիտական իրերին): Ինքնատիպ ձևերով ու զարդանախշերով խեցեղեն (սև, փայլեցված, վարդագույն աստառով, նաև նկարագարդ ու գունագարդ խեցեղեն): Ձիու ընտելացում և օգտագործում տնտեսության մեջ ու ռազմական նպատակներով: Անվավոր փոխադրամիջոցների հայտնագործում և օգտագործում (մարտակառքեր, սայլեր, ծածկասայլեր): Մետաղների մշակում (պղնձե, բրոնզե, երկաթե իրերի վաղագույն նմուշներ): Թաղման յուրահատուկ ձևեր (հանգուցյալի աճյունը դրվել է սայլի վրա - Ալաջա-հույուք, Լճաշեն, Թռեխք, Ռիմնինսկ, դիակիզված աճյունասափորը դրվել է սայլի վրա - Արուճ, Վանաձոր Արծվաբերդ, Մոհենջո-Դարո, դիակիզված մոխիրը ցանվել է դամբարանի հատակին - Քարաշամբ, Թռեխք, Մայկոպ) և այլն:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված մշակութային արժեքների ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ Հայկական լեռնաշխարհը քաղաքակրթության ծագման վաղ կենտրոններից է և հայկական/արիական մշակույթի ստեղծման նախնական տարածքը՝ հայրենիքը:

1. Э. Ханзадян, О древней металлургии Армянского нагорья и городище Мецамор, вопросы геологии четвертичного периода Армении, Ереван, 1983, стр. 106, Սո. Եսայան, Հայաստանի հնագիտություն, Երևան, 1993, էջ 66:
2. Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва, 1982, стр. 65, ИДВ, I, стр. 74.
3. Дж. Мелларт, стр. 112, Л. Вулли, Забытое царство, Москва, 1986, стр. 20: ЁЯ»Эщ, бс Ш»ЙЙ³спБ ы-п³-бсНбхЩ չ ՏԳбхсщ³П³Э ШЗз³.»пщ! ³Эн³ЭбхЩБ (ИДВ, I, չ 3 66):
4. ИДВ, I, չ 3 66:
5. ИДВ, I, չ 3 72:
6. Հնդեվրոպական բազմաթիվ լեզուներում պղինձը, բրոնզը, երկաթը և այլ մետաղներ իրենց անուններով կապվում են Հայաստանի հետ: Այսպես. հունարեն Χalkos (ավելի ուշ նաև aes) բառը "պղինձ, բրոնզ" իմաստն ունի, սանսկրիտ *ayas*-ը՝ "պղինձ", ավելի ուշ նաև "երկաթ", գոթերեն *aiz*-ը՝ "բրոնզ, լատոն", գերմաներեն *erz*-ը՝ "երկաթ", անգլերեն *ore*-ն՝ "երկաթ", լատիներեն *aes*-ը՝ "պղինձ" իմաստն ունեն և այլն (Հ. Աճառյան, 1973, էջ 59: В. Иванов, Т. Гамкрелидзе, Древняя Передняя Азия и индоевропейская проблема, ВДИ, 3, 1980, стр. 10, С. Дикшит, 1960, стр. 455-456): Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ բառերը (նաև արծաթ բառը) իմաստով և անունով կապվում են ն՝ իրար հետ, և՛ ար ու հայ անունների հետ (*ar, er, ayas, aes* ձևերով):
7. Л. Вулли, стр. 24, հեղինակը օգտագործում է նաև հարավային Կովկաս անվանումը: Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1968, էջ 228:
8. ИДВ, II, стр. 203, 211:
9. В. Любин, Палеолит Турции и проблема раннего расселения человечества, СА, 1957, 2, стр. 71-90.
10. И. Дьяконов, 1967, стр. 113.
11. И. Дьяконов, 1968, стр. 20.
12. ИДМ, стр. 186.
13. ИДМ, стр. 187.
14. ИДВ, I, стр. 74.
15. Т. Гамкрелидзе, В. Иванов, 1984, стр. 892:
16. Ս. Մեջլումյան, Լոռի բերդի դամբարանադաշտի հնէակենդանաբանական նյութը (1989-90 թթ.), Զեկուցումների թեզիսներ, 1991:
17. Ս. Եսայան, 1993, էջ 148:
18. Ս. Եսայան, Կառնարտիկ գորամասերը և հեծելագորը Հին Հայաստանում, Երևան, 1994, էջ 11:
19. Т. Гамкрелидзе, В. Иванов, 1984, стр., 939.
20. И. Канева, ВДИ, 1964, 4, стр. 208.
21. Այս ժայռապատկերները վերագրվում են հ.ե. թռխարական ցեղերին և հայտնաբերվել են արիական ցեղերի դեպի արևելք տարածման ճանապարհին: Բալկաններում, Միբիրում, Միջին Ասիայում և Մոնղոլիայում հայտնաբերված հնագույն հուշարձանների թվագրումը խիստ մոտավոր է, հաճախ չափազանցված: Այդ մասին նշում են նաև Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը իրենց վերոհիշյալ աշխատության մեջ, էջ 735:
22. И. Дьяконов, 1968, стр. 42.

23. И. Дьяконов, 1968, стр. 38.
24. Т. Гамкредидзе, В. Иванов, 1984, стр. 733.
25. Անվավոր փոխադրամիջոցների տարածվածության մասին տես Վ. Իվանով - Թ. Գամկրելիձեի, Ս. Մարդարյանի և Ս. Եսայանի վերոհիշյալ աշխատությունները:
26. Т. Гамкредидзе, В. Иванов, 1984, стр. 915. С. Дикшит, стр. 380.
27. Т. Гамкредидзе, В. Иванов, 1984, стр. 935.
28. ՀԺՊ, 1971, էջ 125:

Հոգևոր մշակույթ

Հնդեվրոպացիները իրենց նախահայրենիքում ունեցել են ակունքային մի ընդհանուր մշակույթ: Հնդեվրոպացիների նախնիները՝ արևապաշտ արիական ցեղերը, իրենց հայրենիքից պարբերաբար կատարել են էթնիկական տեղաշարժեր, որի ընթացքում հեռացող ցեղը իր հետ տարել է նախահայրենիքում ստեղծված նյութական ու հոգևոր մշակույթի բազմաթիվ արժեքներ: Ժամանակը և տարածությունը, նոր հարևանների միջավայրը, մշակութային փոխազդեցությունները, այլ ցեղերի հետ նրանց շփումներն ու ընդհարումները, անգամ նոր վայրերի բնակլիմայական պայմանները ունեցել են իրենց ազդեցությունը նոր հայրենիքում ձևավորվող նոր մշակույթի վրա, սակայն մշակութային մի փոքր հատկանիշ, նկարագրի յուրահատուկ մի գիծ հաճախ բավական է լինում, որ նորի մեջ ճանաչվի արիական հին մշակույթն ու հայրենիքը: Աշխարհի հնագույն ժողովուրդներից շումերները, հնդարիները, իրանցիները և հույները վաղ են ստեղծել իրենց գիրը, որի շնորհիվ գրի են առնվել, պահպանվել ու մեզ հասել նրանց պատկերացումները տիեզերքի, բնության, աստվածների ու մարդկանց մասին: Հայկական լեռնաշխարհում գիրը ստեղծվել է 5-րդ դարում, սակայն ուսումնասիրողները (Չ. Մարտիրոսյան, Չ. Իսրայելյան, Ս. Պետրոսյան) գտնում են, որ մ.թ.ա. 6--3-րդ հազարամյակներով թվագրվող հայկական ժայռապատկերները մարդկության առաջին գրերն են հիերոգլիֆներից ու սեպագրերից առաջ, որոնց "ճիշտ ընթերցումը" մեծ նշանակություն ունի մարդկության պատմության համար¹: Հայկական լեռնաշխարհում ստեղծված դիցաբանական ու կրոնական պատկերացումները, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ, դարեր շարունակ, սերնդեսերունդ բանավոր ավանդվելով, գրի են առնվել 5-րդ դարում, հայոց մեսրոպյան գրերի ստեղծումից հետո: Իսկ ժողովրդական բանահյուսության հրաշալի նմուշ հայոց "Սասնա ծռեր" դրամազանավեպը, որ պատմական խոր արմատներ ունի, գրի է առնվել միայն 19-րդ դարում:

Հնդեվրոպացիների նախնիների՝ արիական ցեղերի հոգևոր մշակույթի, նրանց հասարակական, տնտեսական, կենցաղային և այլ կարգի հարաբերությունների ուսումնասիրման համար մեծ է այն առասպելների, դյուցազնավեպերի, ավանդությունների, զրույցների ու բանահյուսական այլ նմուշների դերը, որոնք մեզ են հասել շումերական "Գիլգամեշ", հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպերի, հնդկական վեդաների, իրանական "Ավեստայի", հունական "Իլիական ու Ոդիսական" պոեմի, սլավոնական, գերմանական ու այլ ժողովուրդների ավանդությունների և զրույցների միջոցով: Երբ ուսումնասիրում ենք այդ ժողովուրդների հոգևոր մշակույթը, նկատում ենք, որ հետաքրքիր գուգադիպություններ, ընդհանրություններ, համեմատության եզրեր կան մշակութային այդ արժեքներում: Փորձենք համոզվել դրանում ուշադրության կենտրոնում պահելով Հայկական լեռնաշխարհը: "Գիլգամեշը" մեզ հայտնի շումերական հնագույն դյուցազնավեպն է (մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկիզբ), որն ընդհանրություններ, համեմատության եզրեր ունի հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպի և բանահյուսական այլ նմուշների հետ: "Գիլգամեշ" դյուցազնավեպի բովանդակությունը համառոտ հետևյալն է. Գիլգամեշը մահկանացու մարդու և աստվածուհի Նինսուտի որդին է: Նա Ուրուկ (Հին Կտակարանում՝ Արեգ) քաղաքի թագավորն է, որը կատարում է բազմաթիվ քաջագործություններ:

Աստվածները վախենալով նրա ուժից և քաջագործություններից ստեղծում են մեկ այլ հսկայի՝ Էնկիդուին, որը պետք է հաղթեր Գիլգամեշին, բայց անսպասելիորեն երկու հսկաները եղբայրանում են և կատարում նոր սխրանքներ: Իշտար աստվածուհու խնդրանքով, որի սերը մերժել էր Գիլգամեշը, աստվածները որոշում են պատժել նրանց և մահ են ուղարկում Էնկիդուի համար: Կորցնելով հավատարիմ ընկերոջը Գիլգամեշը հասկանում է, որ ինքն էլ մահկանացու է և սարսափելով մահվան գաղափարից, որոշում է անմահություն ձեռք բերել: Դրա համար նա լինում է շատ երկրներում, քաղաքներում, հաղթահարում շատ դժվարություններ և հասնում անմահների երկիր՝ Արատտա, ուր ապրում են աստվածները և նրանց կամքով անմահություն ստացած Նոյ նահապետի նախատիպը հանդիսացող Ուտնապիշտինը: Գիլգամեշը Ուտնապիշտիից ստանում է անմահության ծաղիկը, սակայն վերադարձի ճանապարհին այն հափշտակում է օձը: Հոգնած ու հիասթափված Գիլգամեշը վերադառնում է իր քաղաքը՝ Ուրուկ: Այս դյուցազնավեպում հանդիպում ենք մարդուն միշտ հետաքրքրող անմահության գաղափարին: Հայկական ժողովրդական հեքիաթներում, զրույցներում ևս անմահություն և անմահական ջուր ձեռք բերելու համար հերոսները լինում են հեռու երկրներում, հաղթահարում շատ դժվարություններ, հասնում աստվածներին, ստանում խորհուրդներ և անմահական ջուր: Շումերական դյուցազնավեպում Գիլգամեշն ու Էնկիդուն եղբայրներ են (ոչ հարազատ), եղբայրներ են նաև հայ դյուցազուներ Սանասարն ու Բաղդասարը: Էնկիդուն Սասունցի

Դավթի նման մեծանում է շատ արագ (հունական դիցաբանության մեջ՝ պատանի Հերակլեսը), նա ևս հովիվ է, ապրում է բնության գրկում, վազվզում, խաղում, ընկերություն է անում տարբեր կենդանիների հետ:

Գիլգամեշը հայոց դյուցազնավեպի մեկ այլ հերոսի՝ Մեծ Միերի նման կովում է առյուծի հետ և հաղթում նրան (հունական դիցաբանության մեջ Հերակլեսն է հաղթում առյուծին): Հիշենք նաև հայոց Արա Գեղեցիկ թագավորի մասին գրույցը, երբ Արա Գեղեցիկը մերժում է Ասորեստանի Շամիրամ թագուհու սերը, ինչպես Գիլգամեշն է մերժել Իշտարի սերը և այլն:

"Գիլգամեշ" դյուցազնավեպը հարազատություն է ցուցաբերում նաև հունական դիցաբանության հետ: Վերևում հիշատակվեց Հերակլեսի մասին: Հիշենք նաև Հումբոլդտի գովերգած Տրոյական պատերազմի հերոսներից մեկին՝ Ոդիսևսին, որը Գիլգամեշի նման լինում է շատ երկրներում, հաղթահարում շատ դժվարություններ, արգելքներ և ի վերջո վերադառնում իր քաղաքը՝ Իթակե: Հետաքրքիր մի նմանություն ենք գտնում "Գիլգամեշ" դյուցազնավեպի Հումբաբա հրեշի և սլավոնական անմահ Կաշեյի կերպարներում: Նրանց երկուսին էլ կարելի է հաղթել ոչնչացնելով այն ծառը, ուր գտնվում էր նրանց ուժը:

Հնդեվրոպական ժողովուրդների դիցաբանության մեջ գոյություն է ունեցել սրբազան ծառի պաշտամունքը: Հայկական լեռնաշխարհում սրբազան ծառերի մեծ պաշտամունքի գոյության մասին են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված մշակութային բազմաթիվ արժեքներ (որմնակարներ, կնիքներ, զարդեր): Մ. Խորենացին ևս վկայում է հայոց մեջ տարածված սրբազան ծառի պաշտամունքի մասին: Նա գրում է, որ հայոց աշխարհում սոսի ծառի տերևների սոսափյունով քրմերը գուշակություններ էին անում: Սոսի ծառին նաև մանուկներ են նվիրել, որոնք կոչվել են Սոսանվեր: Հայտնի է, որ հայոց Արա Գեղեցիկ թագավորի որդի Անուշավանը նվիրվել է Արմավիրի Սոսյաց անտառին ու կոչվել Անուշավան Սոսանվեր²: Հայերը իբրև սրբազան ծառեր պաշտել են ոչ միայն սոսին, այլև կաղնին ու բարդին: Հունական դիցաբանության մեջ Ջևսի ծառն է համարվել կաղնին, որի տերևների սոսափյունը դիտվել է իբրև Ջևսի կամքի արտահայտություն: Պատգամներ ստանալու համար Դոդոնայում գտնվող սրբազան կաղնուն այցելում էին շատ բարեպաշտներ:

Արիական ցեղերի վաղ դիցաբանական գրույցների ուսումնասիրության համար անփոխարինելի գրական հուշարձան է հնդկական "Ռամայանա" պոեմը: Այս պոեմի բովանդակությունը շատ համառոտ հետևյալն է. Այոդիս երկրի անժառանգ թագավորը զոհաբերություն է անում, որպեսզի զավակ ունենա: Աստվածները որոշում են, որ Ռավանա հրեշին հաղթելու համար թագավորը պետք է զավակ ունենա: Վիշնու աստվածը ոսկե զավաթով աստվածային խմիչք է մատուցում թագավորի կանանց, որոնցից առաջինը խմում է խմիչքի կեսը, մյուս մասը խմում են մնացած երեք կանայք: Ծնվում են Ռամը ու նրա երեք եղբայրները: Ռամը գեղեցիկ է, ուժեղ, քաջ, կարողանում է օգտագործել Շիվի աստծո արեգակնային հսկա աղեղը: Այնուհետև Ռամը ամուսնանում է գեղեցկուհի Սիդայի հետ: Իմանալով այդ մասին՝ Ռավանան փախցնում է Սիդային: Ռամը ճանապարհ է ընկնում որոնելու կնոջը: Նա գործում է բազմաթիվ սխրանքներ, այնուհետև Ինդրայից ստանում է արեգակնային մարտակառք, նետի հարվածով սպանում է Ռավանային և ազատում կնոջը: Մակայն, անսպասելիորեն Ռամը սկսում է Սիդային մեղադրել անհավատարմության մեջ և հայտարարում է, որ նա կարող է գնալ ուր ուզում է: Վիրավորված Սիդան ցանկանում է ինքնասպան լինել՝ այրվելով խարույկի մեջ, բայց Ագնի աստվածը փրկում է նրան և հաստատում նրա անմեղությունը: Ռամը հայտարարում է, որ ինքը երբեք չի կասկածել նրա հավատարմությանը, բայց ցանկանում էր, որ դրանում համոզվեն նաև ուրիշները:

Ուշադիր լինելու դեպքում նկատում ենք, որ "Ռամայանա" պոեմը պոեմալային նմանություններ ունի հայկական, հունական, սլավոնական և այլ ժողովուրդների հեքիաթների, գրույցների, ավանդությունների և բանահյուսական այլ նմուշների հետ: Հնդկական պոեմում Ռամի սերն ու հավատարմությունը կնոջ հանդեպ հիշեցնում են հայոց Արա Գեղեցիկ թագավորի հավատարմությունը իր կնոջը՝ Նուարդին: Սիրող ու հավատարիմ կին է նաև Սիդան, որը ցանկանում է ամուսնու հետ կիսել նրա բոլոր դժվարությունները (Այոդիսից հարկադրված տարագրվելը, անտառում ապրելը): Այոդիսի հավատարիմ, սիրող կին էր նաև Պենելոպեն հունական դիցաբանության մեջ:

Ե՛վ Արան, և՛ Ռամը ոչ միայն սիրող ու հավատարիմ ամուսիններ են, այլև գեղեցիկ են, քաջ, ազնիվ: Նկատելի է նաև, որ Արա-Արամ և Ռամ անունները նման են իրար, և որ Ռամ անունը կարող էր առաջանալ Արամ (A-ram) անունից³: Որպես դիցաբանական հերոսներ Արան և Ռամը անկասկած արեգակնային հերոսներ են (արևի ԱՐ Աստծո պաշտամունքը), իսկ Նուարդը (նաև Սինուարդի) և Սիդան՝ լուսնային հերոսուհիներ (լուսնի Նար-Նուարդ աստվածուհու պաշտամունքը):

Հնդեվրոպական դիցաբանության մեջ հանդիպում ենք նաև անարատ հղիության օրինակների: Այսպես. Ռամը ծնվել է, երբ մայրը ըմպել է Վիշնու աստծո մատուցած աստվածային խմիչքը: Հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպի հերոսուհիներից մեկը՝ Ծովինարը հղիացել է խմելով մեկ լրիվ և կես բուռ ջուր⁴: Ծնվել են երկվորյակ եղբայրներ Սանասարն ու Բաղդասարը (ընդ որում Սանասարը ավելի կատարյալ էր, քանի որ մայրը խմել էր մեկ բուռ ջուր): Անարատ հղիության հունական տարբերակում Հերան ծաղիկների աստվածուհի Քլոթիսի հանձնարարությամբ հոտոտել է մի ծաղիկ, որից հետո ծնվել է Հեփեստոսը⁵ (այլ տարբերակով Արեսը) և այլն:

Մյուսօրոքային հետաքրքիր նմանություններ կան հնդեվրոպական ժողովուրդների այլ դյուցազնավեպերում և գրույցներում ևս: Բանահյուսական այդ նմուշներում, իրար չճանաչելով հաճախ մենամարտի են բռնվում հայրն ու որդին: Այսպես. Ռամը հանդիպում և մենամարտում է իր որդիներ Լավի և Քուշի հետ, հայոց "Սասնա ծռերի" Դավիթը մենամարտում է իր որդու՝ Փոքր Միերի հետ, իրանական դիցաբանության մեջ Ռոստամը մենամարտում է որդու՝ Ջոհրապի հետ, սլավոնականում՝ Իլյա Մուրոմեցը մենամարտում է որդու՝ Սոկոլնիկի հետ և այլն: Նշենք, որ ի տարբերություն մյուս ավանդագրույցների, հայոց ավանդությունը պահպանում է Փոքր Միերի կյանքը: Մյուսների կառուցվածքի մեծ նմանություն ունեն նաև "Ռամայանա" ու սլավոնական "Ռուլան և Լյուդմիլա" պոեմները (չար ուժերը փախցնում են կնոջը, ամուսինը փնտրում է նրան, կոծում չար ուժերի դեմ, հաղթում և վերադարձնում նրան):

Հնդեվրոպական ժողովուրդների բանահյուսության մեջ հանդիպում են նաև այլ ընդհանրություններ: Այսպես. առասպելներում, հեքիաթներում ու գրույցներում հանդես են գալիս միաչքանի կիկլոպներ (հույների մոտ՝ Պոլիփեմոս, բասկերի մոտ՝ Տարտալո, հայերի մոտ՝ Թափագյոզ), ջրերի ակունքներում նստած վիշապներ, որոնց գոհ պետք է մատուցել (գեղեցիկ աղջիկ, տղա) ջուր ստանալու համար և այլն: Հնդեվրոպական դիցաբանության մեջ վիշապների, չար ուժերի դեմ պայքարի մեջ են մտնում արիական ամենագոր աստվածները: Այսպես. հնդկական վեդաներում տիեզերքի արարիչ, կայծակի ու ամպրոպի աստված Ինդրան հաղթում է վիշապ Վրթրային, որը փակել է երկնքում գտնվող ջրերի ակունքը: Այդ հաղթանակի համար Ինդրան ստացել է Վրթրահան (Վիշապասպան) մականունը: Ինդրայի մենամարտը վիշապի հետ և նրա Վրթրահան-վիշապասպան մականունը հիշեցնում են հայոց կայծակի, ամպրոպի, արևի ու ռազմի աստված Վահագնին, որը նույնպես հանդես է գալիս Վիշապաքաղ (վիշապասպան) մականունով: Վահագնը ևս մենամարտել է վիշապի հետ, հաղթել նրան ու ստացել Վիշապաքաղ (վիշապասպան) մականունը: Ինդրայի և Վահագնի հերոսությունը վիշապների հետ մենամարտը և հաղթանակը արտացոլված է հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպի հերոսներ Սանասարի ու Մեծ Միերի կերպարներում ևս: Այսպես. Սանասարը կռվի է բռնվում խալիֆի ուժը մարմնավորող Կանաչ քաղաքի վիշապի հետ, հաղթում նրան ու դառնում Մասունի տիրակալը: Մեծ Միերը սպանում է աղբյուրի ճանապարհը փակած Ճերմակ դևին և ամուսնանում նրա ամբողջում տառապող գեղեցիկ արքայադուստր Արմաղանի հետ: Հունական դիցաբանությունը ևս պահպանել է մի շարք նմանատիպ գրույցներ: Այսպես. Ջևսի ու 100 գլխանի վիշապ Տիփոնի պայքարը ավարտվել է Ջևսի հաղթանակով, Ապոլոնը հաղթել է Պիթոն վիշապին և ստացել Պիթոն (Մպանոդ) մականունը և այլն: Վերթթանա-Վրթրազնա ռազմի աստված է հիշատակվում իրանական "Ձենդ Ավեստա" կրոնական ժողովածուում: Ինչպես տեսնում ենք Ինդրայի Վրթրահան (Վիշապասպան) մականունը, հայոց Վահագնի Վիշապաքաղ (Վիշապասպան) մականունը, ինչպես նաև իրանական Վերթթանա-Վրթրազնա աստծո անունը հարազատություն են ցուցաբերում: Ակնհայտ է, որ այդ աստվածների (նաև հունական Ջևս, Ապոլոն աստվածների) պաշտամունքներն ու անունները դիցաբանական ու պատմական նույն ակունքներն ունեն:

Հրեշներին, չար ուժերին հաղթելու համար հնդեվրոպական դիցաբանության մեջ աստվածներին հաճախ են օգնում քամիներն ու կայծակները: Այսպես. Առաջավոր Ասիայի հնագույն շումերական դյուցազնավեպի քաղաքական տարբերակում Արևի Աստված Շամաշի կամքով (շումերական տարբերակում՝ Ուտու) Գիլգամեշին օգնելու, նրա հաղթանակը հեշտացնելու համար քամիները փչում են հրեշ Հումբաբայի վրա: Այս դեպքում չենք կարող չհիշել հնդկական վեդաների քամիների ու կայծակների աստվածներ Մարութներին, որոնք օգնում են Ինդրային, հայոց "Սասնա ծռեր" դյուցազնավեպի Չարբահար քամուն և այլն: Հանդիպում ենք նաև բազմազուլիս հրեշներին: Ռավանա հրեշը 10 գլուխ ունի, հունական Տիփոնը՝ 100, որոնց կարելի էր հաղթել աստվածների օգնությամբ ու նրանց տված զենքով: Դարձյալ դիմենք հնագույն ավանդագրույցներին: Հետաքրքիր նմանություններ ենք գտնում "Սասնա ծռերի" հերոսներ Սանասար-Բաղդասար եղբայրների ու հռոմեական Հռոմուլոս-Հոսեմոս եղբայրների միջև: Հայ երկվորյակ եղբայրները հիմնում են Մասուն քաղաքը, իսկ հռոմեացի երկվորյակները՝ Հոմ քաղաքը: Հայ պատմագրության մեջ գոյություն ունեցող նույն լեզենդի այլ

տարբերակի համաձայն երեք եղբայրներ Կուառը, Մեղտեսը և Հոռը (Խոռը) հիմնում են երեք քաղաք և կոչում իրենց անուններով: "Կուառ շինեաց աւան իւր և կոչեց յանուն իւր Կուառս. և Մեղտես շինեաց ի դաշտի անդ աւան և կոչեաց Մեղտի: Իսկ կրտսերն անցեալ ի գավառն Պալունեաց, շինեաց աւան և կոչեաց Հոռեանս" (Խոռեանս)⁶: Այս ավանդագրույցի սլավոնական տարբերակում երեք եղբայրներ՝ Կիյը, Շեկը և Խորիվը հիմնում են քաղաք ու ավազ եղբոր անունով կոչում՝ Կիև⁷:

Հնդեվրոպական տարբեր դիցարաններում հանդիպում ենք նաև հրեղեն, թևավոր ձիերի, որոնք օգնում են բարի ուժերին՝ չար ուժերի դեմ մղված պայքարում: Այսպես, թևավոր է Մասնա դյուցազն Դավթի ձին՝ Քուռկիկ Ջալալին, որը կարող է մարդու նման խոսել, հողմից արագ սլանալ, թռչել դեպի արևը, իջնել երկիր, ընկղմվել ծովի հատակը (տիեզերական պտույտ): Հունական դիցաբանությունից հայտնի է թևավոր ձի Պեգասը, սլավոնական դիցաբանությունից՝ Կուզիկ-Քուռկիկը, որի համար թևեր չեն հիշատակվում, բայց նա ևս խոսում ու թռչում է:

Հիշենք նաև շղթայված հերոսների մասին ավանդությունները, որոնց հանդիպում ենք հայկական, հունական, իրանական, սերբական, գերմանական և այլ տարբերակներով: Հայոց բանահյուսությունը մեզ է հասցրել այս ավանդության երկու տարբերակ: Տարբերակներից մեկը վկայված է Խորենացու աշխատության մեջ, ըստ որի հայոց Արտաշես արքայի մահվան ժամանակ, հեթանոսական սովորույթի համաձայն, կամավոր շատ ինքնասպանություններ են եղել: Արտաշեսի որդի Արտավազը բողոքել է դրա դեմ և ասել.

Երբ դու գնացիր
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ինչպես թագավորեմ:

Մրա համար Արտաշեսը անիծել է որդուն՝ ասելով.

Թե դու հեծնես որսի գնաս
Ազատն ի վեր, դեպի Մասիս,
Քաջքերը քեզ բռնեն տանեն
Ազատն ի վեր, դեպի Մասիս.
Այնտեղ մնաս, լույս չտեսնես⁸:

Մի օր, երբ Արտավազը որսի է գնում Մասիսի լանջերը, քաջքերը նրան բռնում և շղթայում են Մասիս լեռան քարանձավներից մեկում: Երկու շներ (սև, սպիտակ) կրծում են նրա շղթաները, որպեսզի նա ազատվի, դուրս գա ու վերջ տա աշխարհին: Սակայն հայ դարբինները յուրաքանչյուր կիրակի 3-4 անգամ մուրճով խփում են սալին, որպեսզի էլ ավելի ամրանան Արտավազի շղթաները, ու նա չկարողանա դուրս գալ քարայրից: Ավանդության հաջորդ տարբերակը մեզ է հասել "Մասնա ծոեր" դյուցազնավեպի միջոցով: Մասնա դյուցազն Փոքր Մհերը դարձյալ հոր անեծքով, երբ մայր հողը այլևս չի պահում նրան, իր ձիու՝ Քուռկիկ-Ջալալիի և Թուր-Կեծակիի հետ փակվում է Վանի մոտ գտնվող Ագռավաքարի մեջ (նաև Մհերի դուռ): Տարվա մեջ երկու անգամ, Վարդավառին և Համբարձման օրը Փոքր Մհերը դուրս է գալիս, փորձում գետնի ամրությունը և համոզվելով, որ այն չի դիմանա իր ծանրությանը, նորից փակվում է Ագռավաքարում⁹: Սակայն ժողովուրդը հավատում է, որ և՛ Արտավազը, և՛ Փոքր Մհերը դուրս են գալու փակված տեղից և փրկելու են աշխարհը: Արտավազի մասին Եզնիկ Կողբացին գրում է. "Հայոց կռապաշտները հավատում են, թե Արտավազ անունով մեկը բանտարկված է դևերի կողմից, որը մինչև այժմ կենդանի է, նա էլ ելնելու և տիրելու է աշխարհը"¹⁰: Իսկ "Մասնա ծոեր" դյուցազնավեպը հայտնում է Փոքր Մհերի երկրորդ գալստյան ժամանակը:

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Յեբոր ցորեն էղավ քանց մասուր մի
Ու գարին էղավ քանց ընկույզ մի¹¹:

Մայր հողը դժվարությամբ է պահում նաև ռուս դյուցազն Սվյատոգորին: Սակայն ի տարբերություն հայոց ավանդագրույցի ռուսական բիլինաներում դյուցազն Սվյատոգորը մահանում է: Բիլինաների տարբերակներից մեկում Սվյատոգորը մահանում է իր փորձն ու թուրը հանձնելով Իլյա Մուրոմեց դյուցազնին¹²: Այլ տարբերակում՝ Սվյատոգորը ցանկանում է բարձրացնել երկրագունդը, բայց ոտքերը խրվում են հողի մեջ, և նա մահանում է¹³:

Շղթայված հերոսների մասին հունական ավանդությունը կապված է Ջևսի ու Պրոմեթևսի հետ: Ջևսի կամքին հակառակ տիտան Պրոմեթևսը Օլիմպոսից կրակը փախցնում և տալիս է մարդկանց: Իմանալով այդ մասին Ջևսը Պրոմեթևսին շղթաներով գամում է Կովկասյան լեռներին: Հզոր մի արծիվ ամեն առավոտ կտցահարում է նրա լյարդը, որը գիշերը նորից վերականգնվում է: Բազում տառապանքներից հետո միայն, երբ Հերակլեսը սպանում է արծվին, Պրոմեթևսը ազատվում է իր այդ վիճակից¹⁴:

Այս առասպելի իրանական տարբերակում դյուցազն Ֆրեդունը (Հրուդեն) հաղթում է եռազուխ վիշապ Աժդահակին և շղթայում Դրմավենդ լեռանը: Նա պետք է միշտ շղթայված մնա, որովհետև ազատության մեջ մեծ չարիք կարող է պատճառել մարդկանց: Աժդահակի շղթայման օրը Դրմավենդ քաղաքի բնակիչները նշում են իբրև տոն¹⁵: Մերբական տարբերակում դյուցազն Մարկոն հոր փառքին նախանձելու համար անհիծվում է նրա կողմից: Այդ անեծքի պատճառով Մարկոն մարտի դաշտում հայտնվում է ծանր վիճակում: Նա խնդրում է աստծուն օգնել իրեն: Աստված խղճում է նրան և օգնում, որ Մարկոն իր ձիու ու թրի հետ փակվի քարայրում (հիշենք, որ Փոքր Միերը ևս իր ձիու Քուտկիկ Ջալալիի և Թուր-Կեծակիի հետ էր փակվել քարայրում): Մերբական տարբերակը ևս հայտնում է իր հերոսի դուրս գալու ժամանակը. երբ թուրը կազատվի քարի միջից, իսկ Շարան ձին կսպառի քարայրում եղած ամբողջ մամուռը¹⁶: Գերմանական տարբերակում Տոր (Թոր) աստվածը դյուցազն Բալդրին սպանելու պատճառով հսկա Լյուցիֆերին շղթայում է քարայրում: Նրա գլխավերևում գտնվող որդերը լորձ ու թույն են թափում նրա երեսին: Լյուցիֆերը մինչև աշխարհի վերջը պետք է մնա շղթայված, որ չկարողանա պատժել աստվածներին ու մարդկանց: Դրա համար Ջալցբուրգի ու Տիրոլի դարբինները իրենց աշխատանքը ավարտելուց հետո, օրվա վերջում մուրճով խփում են սալին, որ էլ ավելի ամրանան Լյուցիֆերի շղթաները¹⁷:

Ինչպես տեսնում ենք, տարբեր ժողովուրդների բանահյուսական նմուշներն ու ավանդազրույցները բացահայտորեն հարազատություն են ցուցաբերում, մեկ անգամ ևս փաստելով, որ հնդեվրոպացիները ունեցել են ակունքային մի ընդհանուր մշակույթ:

Այդ համոզմանն ենք հանգում ուսումնասիրելով նաև արիական ցեղերի հասարակությունը նրա կառուցվածքն ու ներքին սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ըստ պահպանված գրավոր աղբյուրների (վեդաներ, "Ավեստա", "Բլիական" ու "Ողիսական" պոեմներ, հայոց մեջ պահպանված սովորույթներ ու ավանդություններ):

Արիների հասարակության հիմքը ընտանիքն էր ("Ավեստայում"՝ *dmana*), հոր՝ նահապետի բացարձակ իշխանությամբ: Ընտանիքը պատասխանատու էր իր յուրաքանչյուր անդամի լավ կամ վատ արարքի համար: Ընտանիքի ունեցվածքը հոր մահից հետո անցնում էր ավագ որդուն: Արիները հասկանում էին, որ երջանիկ, ամուր և կայուն ընտանիք ունենալու համար անհրաժեշտ է սեր և փոխադարձ հարգանք ամուսինների միջև: Աղջկա և երիտասարդի ամուսնությունը, որը հիմնված էր երկուսի փոխադարձ համաձայնության վրա, կոչվում էր երկնային ներդաշնակություն¹⁸: Սակայն կնոջը արգելվում էր ամուսնու մահից հետո նորից ամուսնանալ, որի համար նա կատարյալ երանություն պետք է գտներ հանդերձյալ կյանքում:

Ընտանիքում հոր և մոր դերերի մասին ասված էր. հայրը տիեզերքի արարչի պատկերն է (հմմ. Արարիչ ԱՐ Աստված), մայրը՝ սնուցիչ երկրի (հմմ. Հայա Աստվածուհի): Հայրը ավելի արժեք ունի, քան հարյուր դաստիարակ, մայրը ավելի արժեք ունի, քան հազար հայր, ով որ նրանց չի հարգում, նրանց մյուս բարեպաշտական գործերը նշանակություն չունեն, ծնողներին հարգելը առաջին պարտականությունն է, մնացածները երկրորդական բաներ են:

Կանայք արիների հասարակության մեջ հարգված էին: Այնտեղ, որտեղ կանայք հարգված են, հասարակությունը բախտավոր է: Այսպես էր սահմանում Մանուն: Սակայն կնոջ նկատմամբ նաև այլ սահմանումներ կային: Նրան համարում էին թույլ բնավորության տեր և սահմանում էին, որ կինը երբեք չպետք է իրեն այնպես պահի, ինչպես ինքն է ցանկանում և այլն:

Այլ օրենքներ պատվիրում էին կարեկցանք հասարակության թույլ ու թշվառ անդամների, երեխաների, ծերերի, աղքատների ու հիվանդների նկատմամբ: Այս օրենքները այնքան նման են հայոց ավանդական, նահապետական օրենքներին, որ կարելի է կարծել, թե դրանք գրվել են Հայաստանում, հայերի համար: Նույն հասարակությունն է՝ թագավոր, կրոնի սպասավորներ, նախարարներ, զինվորներ, արհեստավորներ, երկրագործներ: Նույն ավանդապահ ընտանիքն է՝ ընտանիքի նահապետի՝ հոր բացարձակ իշխանությամբ: Տեսնում ենք նաև նույն հարգանքը մոր ու կնոջ նկատմամբ: Հիշենք, որ հայ կինը երբեք որպես իր, առարկա չի դիտվել, նա միշտ իր պատվավոր տեղն

է ունեցել ընտանիքում և հասարակության մեջ: Հայոց մեջ ևս մեծ հարգանք են վայելել ծերերը, որոնց պատվում էին, լսում նրանց խոսքը, խորհուրդն ու խրատը: Տեսնում ենք նույն կարեկցանքը թույլերի, հիվանդների նկատմամբ: Հայոց ընտանիքներում ևս ամբողջ ընտանիքը պատասխանատու էր իր անդամի լավ ու վատ արարքների համար: Հայոց մեջ ևս զավակները պարտավոր էին լսել ու հարգել հորը, մորը և մյուս մեծերին: Ի դեպ, նահապետական հայ ընտանիքի լավագույն օրինակ է Հայկ նահապետի գերդաստանը, որը բաղկացած էր նրա մերձավոր (որդիներ, թոռներ) և հեռավոր արյունակիցներից: Գերդաստանը կարող էր բաղկացած լինել հարյուրավոր անդամներից: Գերդաստանը արյունակից անդամներից բացի ուներ նաև ոչ արյունակից անդամներ (սպասավորներ, մշակներ), որոնք իրենց ընտանիքի անդամների հետ չունեին այն իրավունքները, որ ունեին տան արյունակից անդամները:

Իրանական "Ավեստան" մարդկանց պատվիրում էր լինել աշխատասեր, ճշմարտախոս և մաքրասեր: Հին իրանցիները հատուկ վերաբերմունք են ունեցել հացի նկատմամբ: Այն սրբություն է համարվել: Ըստ "Ավեստայի" ով հաց է ցանում, նույնն է թե սրբություն է ցանում: Հացը սրբություն է եղել նաև հայոց մեջ: Այսօր էլ կարելի է հանդիպել հայ մարդու, որը վերցնում է փողոցում ընկած հացը, համբուրում և դնում որևէ բարձր տեղ:

"Ավեստան" մարդկանց պատվիրում էր նաև չկեղծել, երբեք սուտ չխոսել, լինել ազնիվ և պարտաճանաչ: Ծանր հանցանքներ էին համարվում խաբեությունը, գողությունը, պայմանագիրը դրժելը, պարտքը չվերադարձնելը, որոնց համար խիստ պատիժներ էին սահմանված: Այդ հանցանքների համար պատժվել կարող էին նույնիսկ հանցագործի մոտիկ ազգականները: Հիշենք, որ արիական սովորույթի համաձայն ընտանիքը պատասխանատու էր իր անդամի յուրաքանչյուր լավ կամ վատ արարքի համար: Վերոհիշյալ բոլոր պատվիրանները գործել են նաև հայոց մեջ: Ընդ որում Հայկական լեռնաշխարհում դրանք սերնդեսերունդ փոխանցվել են բանավոր ձևով և ունեցել են չգրված օրենքի ուժ¹⁹:

Ինչպես տեսնում ենք արիական ցեղերի հասարակական, տնտեսական, կենցաղային և այլ կարգի հարաբերությունների մասին իրենց տեղեկություններով իրանական "Ավեստան", հնդկական վեդաները և հայոց մեջ գործող սերնդեսերունդ փոխանցված սովորույթներն ու ավանդույթները հարազատություն են ցուցաբերում: Ակնհայտ է, որ և՛ "Ավեստայի", և՛ վեդաների ստեղծման համար աղբյուր է հանդիսացել պատմական նույն միջավայրը՝ նախահայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը:

1. Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, էջ 17:
2. Մ. Խորենացի, էջ 77:
3. "Ռիզվեդայում" Արաքս գետը հիշատակվում է Ռասա, իսկ "Ավեստայում" Ռահ ձևով: Կորյունի աշխատության մեջ ևս Արաքս գետը հիշատակվում է գալիս Ռահ անունով (Կորիին, Պատմութիին վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Թիֆլիս, 1913, էջ 17): Ինչպես տեսնում ենք բոլոր դեպքերում առջևի "ա" հնչյունը սղվել է:
4. Սասունցի Դավիթ, 1990, էջ 14-16:
5. Դիցաբանական բառարան, էջ 133:
6. Ջենոբ Գլախ Աստրի և Հովհ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 109:
7. С. М. Соловьев, Чтения и рассказы по истории России, Москва, 1989, стр. 33.
8. Մ. Խորենացի, էջ 232-233:
9. Սասունցի Դավիթ, էջ 369:
10. Եզնիկ Կողբացի, էջ 81:
11. Սասունցի Դավիթ, էջ 369:
12. Բիլինաներ, Երևան, 1970, էջ 20:
13. БСЭ, том 50, стр. 523.
14. Ն. Կուն, էջ 103-115:
15. Ա. Ղանալանյան, 1969, ճկթ:
16. Ա. Ղանալանյան, ճկթ:
17. Ա. Ղանալանյան, ճկթ:
18. "Մանուկ օրենքները" ժողովածուի այս և հետագա բոլոր մեջբերումները "Բուդդհա եի իիր վարդապետութիւնը" աշխատությունից են, Թիֆլիս, 1897:
19. Հայոց իրականության մեջ եկեղեցական կանոնների հիման վրա առաջին գրավոր օրենքները գրի են առնվել Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսի կողմից 11-րդ դարի սկզբներին: Այն կոչվում էր

"Հայոց կանոնագիրք": 1184 թ. Մխիթար Գոշը գրել է նոր օրենքների ժողովածու՝ "Դատաստանագիրքը", ուր տեղ են գտել կանոնական և աշխարհիկ օրենքներ:

Մարդաբանություն

Հայերը Հայկական լեռնաշխարհի ու շրջակա տարածքների հնագույն բնակիչներն են: Այս տարածքներում նրանք ապրել ու ապրում են անհիշելի ժամանակներից: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողները մեծ ուշադրություն են դարձրել հայերի մարդաբանական կերպարին: Հայերի մարդաբանական կերպարի կազմավորման հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ գիտնականներ (Է. Շանտր, ֆոն Լուշան, Ա. Գյոտցե, Վ. Բունակ, Գ. Դեբեց, Վ. Ալեքսեն)¹, զգալով դրա կարևորությունը Առաջավոր Ասիայի ժողովուրդների, ինչպես նաև հնդեվրոպական ժողովուրդների պատմության ուսումնասիրման համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը գտնվում է երկրի այն մասում, ուր ձևավորվել է "եվրոպեոիդ" մարդաբանական տիպը: Այդ տիպի մի ճյուղը գերմանացի գիտնական ֆոն Լուշանը կոչել է "արմենոիդ", որն ընդունվել ու գիտական շրջանառության մեջ է դրվել (մարդաբանական այդ տիպը անվանում են նաև "առաջավորասիական")²:

"Արմենոիդ" տիպին հատուկ են կլոր գանգը, տափակ ծոծրակը, մարմնի խիտ մագածակոյթը, ալիքաձև մագերը, բարձր քթոսկրը և այլն: "Արմենոիդ" տիպի հնագույն նմուշներ են Լագաշից (Շումեր) հայտնաբերված տուֆակերտ ցածրաքանդակները (մ.թ.ա. 3-րդ հազարամյակիվերջ, նկ. 6), որոնց վրա պատկերված են մեծ, կլոր աչքերով, սափրած դեմքերով, արծվաքիթ մարդկանց պատկերներ: Հայաստանում հայտնաբերված հնագույն "արմենոիդ" տիպ են Շենգավիթից հայտնաբերված գանգերը (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ): Նույնատիպ գանգեր են հայտնաբերվել նաև Հարավային Միջագետքի Ալ-Ուբայիդ գյուղից, Տրոյա 2-րդ շերտից, Թեփե-հիսար (Հյուսիսային Իրան) բնակավայրից, Միջագետքի Ուր, Քիշ քաղաքների պեղումներից և այլն: Կարճագանգ (բրախիկեֆալ) "արմենոիդ" այս տիպը հանդիպում է նաև Պաղեստինում, Կիպրոսում, Փոքր Ասիայի հյուսիսում (Ալիշար բլուր), ինչպես նաև հին եգիպտական (գերի վերցված խեթերի պատկերներ), Ջինջիրլիի (Մալաթիա-Անտիոք հատված, Ամուկի հովիտ), Բողազքեոյի (Անկարայի մոտ, խեթերի հին մայրաքաղաք Խաթթուսաար) որմնաքանդակներում, որմնանկարներում (մ.թ.ա. 4--2-րդ հազարամյակներ) և այլն: Այս մասին Մարկվարտը գրում է. "Հայերը իրենց մարդաբանական տիպով նման են այն ժողովուրդներին (կերպարին), որոնք պատկերված են Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում հայտնաբերված քանդակներում"³:

Մարդաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ խուրրի-ուրարտական ցեղերի տիպը շարունակում է ապրել Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի ժամանակակից ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ⁴: Ուրարտական ժամանակաշրջանի (մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կես) գանգաբանական նյութերը սակավաթիվ են, սակայն նրանց պատկանելիությունը "արմենոիդ" տիպին ակնհայտ է⁵, (Մավանասար 3-րդի ժամանակ կատարված Բալավաթյան դռների բարձրաքանդակները, այլ որմնանկարներ ու քանդակներ): Հետագա մարդաբանական, հատկապես գանգաբանական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ "Հայկական բարձրավանդակում բնակվող խուրրի-ուրարտացիները ժամանակակից հայերի նախնիներն են"⁶:

"Արմենոիդ" մարդաբանական կերպարը, որ այսօր էլ շարունակում է բնութագրել հայերին, ցավոք վատ է ուսումնասիրված Հայկական լեռնաշխարհի մեծ մասում:

Արևելյան Հայաստանում հայտնաբերված մարդաբանական նյութերից մեծ կարևորություն ունեն Սևանա լճի ավազանից հայտնաբերված նյութերը: Վերոհիշյալ կարճագանգ (բրախիկեֆալ)

"արմենոիդ" կերպարից բացի, հայերի մարդաբանական կերպարի հետ է առնչվում նաև եվրոպական տիպի երկարագանգ (դոլիխոկեֆալ) մարդաբանական կերպարը: Այդպիսիք հայտնաբերվել են Նոր Բայազետի (Գավառ), Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղի (մ.թ.ա. 4--2-րդ հազարամյակներ) և Սևանի ավազանի Լճաշեն գյուղի դամբարաններից (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ - մ.թ.ա. 12-րդ դար):

Հատկապես լավ են ուսումնասիրվել Լճաշենից հայտնաբերված գանգերը, որոնք վերականգնվել են պրոֆ. Ա. Ճաղարյանի լաբորատորիայում: Դրանք քիչ երկարավուն, ձվաձև, կլոր ակնակապիճներով, բարձր քթով, փոքր-ինչ դուրս ցցված այտուկներով դեմքեր են: Կարելի է ասել, որ Լճաշենից հայտնաբերված բրոնզեդարյան գանգերը օժտված են "եվրոպեոիդ հատկությունների մաքսիմալ հատկություններով"⁷ ("արմենոիդ" կերպարի բնորոշ հատկությունները):

Սևանի ավազանից հայտնաբերված մարդաբանական նյութերը թույլ են տալիս նաև հետաքրքիր եզրահանգումներ անել հայերի մարդաբանական կերպարի մասին և վկայում են, որ հայերի ցեղասերման մեջ առկա են էթնիկ երկու խմբեր՝ կարճագանգ "արմենոիդ" (Ցամաքաբերդ, Նորադուզ) և երկարագանգ "եվրոպեոիդ" (Ջրառատ, Լճաշեն, Կամոյի շրջան):

Արևելյան Հայաստանում, մասնավորապես Սևանի ավազանում հայտնաբերված մարդաբանական նյութերի հիման վրա հայ և օտար ուսումնասիրողները նաև շատ հետաքրքիր տեսակետներ են առաջ քաշել: Այսպես. մի շարք ուսումնասիրողներ (Վ. Բունակ, Հ. Ազիզյան, Ս. Սարդարյան) նշում են, որ "արմենոիդ" կարճագանգ մարդաբանական տիպը, որի գլխավոր կենտրոնը Հայկական լեռնաշխարհն է, Իրանի արևելյան սահմանից Փոքր Ասիայով տարածվում է դեպի Բալկանյան թերակղզի, առնչվում նաև կենտրոնական Եվրոպայի ու Միջերկրականի ափերի բնակչության հետ: Այս մասին Ս. Սարդարյանը գրում է. "Պետք է ընդունել կենտրոնական Եվրոպայի կարճագանգ ("արմենոիդ") բնակչության առաջավորասիական ծագումը"⁸:

Ժամանակակից շատ մարդաբաններ (Ալեքսեն, Աբդուշելիշվիլի, Հերլիխ, Դեբեց) ևս գտնում են, որ եվրասիական կամ "եվրոպեոիդ" մեծ ռասայի Բալկանո-Կովկասյան փոքր ռասայի ռասակազմավորման օջախի կենտրոնը Փոքր Ասիան է, ուր առանձնանում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակով թվագրվող խիստ արտահայտված "եվրոպեոիդ" հատկանիշներով օժտված "արմենոիդ" ("առաջավորասիական") տիպը (Ալ-Ուբաիդ, Թեփե-հիսար, Ալիշար):

"Արմենոիդ" մարդաբանական տիպը, իր ծագումով կապված լինելով Առաջավոր Ասիային, այնուհետև տարածվել է դեպի Կովկաս, Հյուսիսային Իրան, ապա որոշ փոփոխություններով՝ Աֆղանստան ու Հյուսիսային Հնդկաստան:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդաբանական "արմենոիդ" ("առաջավորասիական") կերպարը իր հատկանիշներով ժամանակակից ժողովուրդներից հիմնականում պահպանվել է "գենետիկորեն արտակարգ միատարր"⁹ հայերի մեջ:

Ուրարտական ժամանակաշրջանի արվեստի բազմաթիվ ստեղծագործություններում, միջնադարյան հայոց մանրանկարներում, որմնանկարներում ու բարձրաքանդակներում հանդիպում են կլոր դեմքերով, խոշոր սև աչքերով ու խարտյաշ վարսերով հերոս-հերոսուհիների պատկերներ: Մակայն հնարավոր չէ միանշանակ ասել, որ վերոհիշյալ հատկանիշները բնութագրական են բոլոր հայերի համար: Ի տարբերություն հնագիտական նյութերի, հայոց բանահյուսությունը հարուստ է և՛ թուխ մազերով ու սև աչքերով, և՛ շեկ վարսերով ու կապույտ աչքերով հերոս-հերոսուհիների կերպարներով: Հայոց հնագույն աստված-աստվածուհիները (ԱԸ-Արա, Վահագն, Անահիտ, Աստղիկ), սիրված հերոսները, նաև դիցաբանական ու առասպելական հերոսները (Հայկ, Արա Գեղեցիկ, Մասնա Մհեր, Դավիթ, Քառսուն Դեղձուն Ճոխ Օամ) խարտյաշ ու կապուտայա են: Իսկ այսօրվա հայերը օժտված են "եվրոպեոիդ" ռասային բնորոշ բոլոր հատկություններով:

Այսպիսով, հայ ցեղի մարդաբանական կերպարի ձևավորումը ընթացել է Հայկական լեռնաշխարհում և Առաջավոր Ասիայում տարածված "եվրոպեոիդ" ռասայի երկարագանգ ու կարճագանգ կերպարների ձուլման ճանապարհով, որի արդյունքում միջնադարից սկսած հայոց մեջ սկսում է զերակշռել կլորագանգ "արմենոիդ" տիպը: "Եվրոպեոիդ" ռասայի այս երկու կերպարները հատուկ են նաև այսօրվա հնդեվրոպացիներին: Հետաքրքիր է նաև, որ մարդաբանական "արմենոիդ" տիպի առաջացման ու տարածման սահմանները հիմնականում համընկնում են լեզվաբանական ուսումնասիրություններին, այն է, հնդեվրոպական լեզվաընտանիքի ժողովուրդների նախահայրենիքին ու հնդեվրոպական լեզուների տարածման սահմաններին: Հետևաբար, մարդաբանական ուսումնասիրությունները ևս թույլ են տալիս ասելու, որ Հայկական լեռնաշխարհը հայկական/արիական ցեղերի հայրենիքն է:

1. Фон Лушан, Народы, расы и языки, Ленинград, 1925, т. 1. Г. Дебец, Происхождение человека и древнее расселение человечества, Москва, 1951. В. Бунак, Черепа железного века из северного района Армении, Русский антропологический журнал, XVIII, в. 3-4, 1929: Վ. Ալեքսեն, Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության երկու խմբի մասին, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964: Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1968:

2. Ռասաների հարցի վերաբերյալ չկա միասնական կարծիք: Տեսակետներից մեկի համաձայն մարդկային ռասաները առաջացել են աշխարհի տարբեր կետերում, տարբեր նախնիներից: Դրանք պոլիցենտրիստներն են: Այլ տեսակետի համաձայն բոլոր ռասաները առաջացել են մի տեսակ նախնուց, երկրագնդի ինչ-որ մասում, իսկ այնուհետև տարածվել են և եվոլյուցիոն պրոցեսների հետևանքով վերածվել տարբեր ռասաների: Այս տեսակետի կողմնակիցները կոչվում են մոնոցենտրիստներ: Ուսումնասիրողները զբաղվել են նաև գանգերի դասակարգմամբ: Մարդաբան Ա. Ռետցիուսը առաջարկել է բոլոր ժողովուրդներին բաժանել դոլիխոկեֆալների (երկարագլուխներ) և բրախիկեֆալների (կլորագլուխներ):

3. Б. Пиотровский, 1959, стр. 122.
4. ՀԺՊ, 1971, էջ 147 (ծանոթագրություն): Բաժինը գրել է Ի. Դյակոնովը, որը սակայն այդ հանգամանքը որոշիչ չի համարում մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակների Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի էթնիկական պատկանելիության հարցը որոշելու համար:
5. Ռ. Հարությունյան, Ն. Քոչար, Հայ ժողովրդի մարդաբանություն և էկոլոգիական գենետիկա, Երևան, 1996, էջ 60 ("Մեր գեների անցյալն ու ներկան" բաժինը գրել է Ն. Քոչարը):
6. Ռ. Հարությունյան, Ն. Քոչար, էջ 60:
7. Ռ. Հարությունյան, Ն. Քոչար, էջ 54:
8. Ս. Սարգսյան, էջ 254:
9. Ռ. Հարությունյան, Ն. Քոչար, էջ 115:

Լեզվաբանություն

Աշխարհի խոշորագույն լեզվաընտանիքներից մեկը հնդեվրոպական լեզվաընտանիքն է, որով խոսում է աշխարհի բնակչության մոտ կեսը: Նրանք ապրում են Եվրոպայից Հնդկաստան ընկած տարածքներում (նաև Ամերիկա և Ավստրալիա աշխարհամասերում):

Հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնում են 15 լեզվախմբեր կամ ճյուղեր:

Ուսումնասիրությունները պարզել են, որ հայերենը այդ լեզվաընտանիքի առանձին ճյուղերից մեկն է ու սերտ կապեր ունի իրանական և հունական լեզվախմբերի հետ:

Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող կենդանի (հնդիրանական՝ սանսկրիտ և "Ավեստայի" լեզու, հայերեն, հունարեն, սլավոնական, քալթյան, կելտական, իտալյան, գերմանական...) և մեռած (թուրքական, իսթա-լուվիական կամ անատոլիական, փոյգիական, թրակյան...) լեզուների հիման վրա վերականգնվել է մի լեզու, որն ընդունված է անվանել "հնդեվրոպական լեզու, հնդեվրոպական նախալեզու կամ էլ հնդեվրոպական հիմք-լեզու": Լեզվաբաններին հաջողվել է վերականգնել հնդեվրոպական լեզվի մոտ 2000 արմատ (հայերենի հնդեվրոպական արմատների քանակը կազմում է վերականգնված արմատների մեկ երրորդը)¹: Կատարված մեծ հետազոտությունները, սակայն հնարավորություն չեն տալիս վերականգնված այս լեզվի միջոցով ստույգ պատասխան տալ շատ կարևոր մի հարցի. հնդեվրոպացիները ունեցել են մե՞կ միասնական, նախնական լեզու, թե՞ ի սկզբանե խոսել են տարբեր բարբառներով:

Հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին գրված բազմաթիվ հոդվածներում և աշխատություններում ուսումնասիրողները մեծ ուշադրություն են դարձնում լեզվաբանությանը: Օգտագործելով լեզվաբանական ընդհանրությունները, լեզուների միջև եղած փոխազդեցություններն ու փոխառությունները՝ նրանք փորձում են հիմնավորել իրենց տեսակետները հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին: Սակայն առաջ քաշված բազմաթիվ տեսակետներն ու տարբերակները երբեք միանշանակ չեն ընդունվել ուսումնասիրողների կողմից: Այսպես. 19-րդ դարի կեսերից առաջ է քաշվել այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը Եվրոպան է՝ Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքները: Այս տեսակետը երկար ժամանակ իշխում էր գիտական աշխարհում և հնդեվրոպացիներին վերաբերող բոլոր հարցերն ու տեսակետները պտտվում ու հարմարեցվում էին այս կարծիքին: Այդպես է եղել նաև հայագիտության մեջ, երբ 20-րդ դարի համարյա բոլոր հայ ու օտար հայագետները (Չ. Աճառյան, Չ. Մանանդյան, Ն. Ադոնց, Ա. Մեյե, Չ. Հյուբշման) իրենց աշխատություններն ու ուսումնասիրությունները գրել են՝ ելնելով հայերի Եվրոպայից՝ Բալկանյան թերակղզուց եկած լինելու վարկածից: Սակայն այս տեսակետին վիճակված չէր լինել վերջնական: Դեռևս 19-րդ դարի վերջերին մի շարք գիտնականներ (Յ. Շմիդտ, Ջ. Ֆայստ) առաջ են քաշել այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Առաջավոր Ասիայում:

Այս տեսակետը նոր զարգացում և հիմնավորում ունեցավ 20-րդ դարի 70-ական թվականներին, երբ լույս տեսան լեզվաբաններ Վ. Իլլիչ-Սվիտիչի, Օ. Շիրոկովի, Ա. Դոլգոպոլսկու, Վ. Իվանովի, Թ. Գամկրելիձեի և այլոց հոդվածներն ու աշխատությունները նվիրված այս հարցերին: Նրանք հնդեվրոպացիների նախահայրենիքը հիմնականում տեղադրում են Առաջավոր Ասիայի արևելյան մասում (Հայկական լեռնաշխարհ և շրջակա տարածքներ): Այս խնդրի լուծման համար մեծ է համեմատական լեզվաբանության դերը, որն էլ իրենց հոդվածներում և աշխատություններում օգտագործել են լեզվաբաններ Օ. Շիրոկովը, Գ. Կլիչկովը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն և ուրիշներ: Այս ուղղությամբ մեծ ծավալի աշխատանք են կատարել Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը իրենց "Индоевропейский язык и индоевропейцы" աշխատության մեջ: Հայ լեզվաբանները (Չ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Ռ. Բշխանյան, Գ. Ջահուկյան) ևս զբաղվել են համեմատական լեզվաբանության հարցերով, հիմնականում քննության առնելով հայոց լեզվի փոխառությունների, փոխազդեցությունների և փոխադարձ շփումների հարցը²: Լեզվաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց լեզվի բառապաշարի հնագույն շերտը հնդեվրոպական կամ բնիկ հայկական է և արտացոլում է Հայկական լեռնաշխարհի կենդանական ու բուսական աշխարհը, նրա կենցաղային, մշակութային առանձնահատկությունները և այլն:

Ուսումնասիրելով տարբեր լեզվաընտանիքների մեջ մտնող լեզուները, լեզվաբանները նկատել են, որ հեռավոր ցեղակցություն գոյություն ունի նրանց միջև: Այս երևույթը անվանվել է նոստրատիկ լեզվաբանություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հնդեվրոպական ու սեմական, քարթվելական, ֆիննաուգրական և այլ լեզուներում կան նույն իմաստն ունեցող բազմաթիվ բառեր (համեմատական լեզվաբանության մեջ ընդունված է, որ ընդհանուր բառերը մի քանի կարգի են՝

բնաձայնական, մանկական, մշակութային, կենցաղային նաև բույսերի, կենդանիների անուններ և այլն): Բազմաթիվ ընդհանուր բառեր կան նաև Միջագետքի հնագույն լեզուներից մեկի՝ շումերերենի ու հնդեվրոպական լեզուների (նաև հայոց լեզվի) միջև: Նախ խոսենք շումերերենի և հայոց լեզվի միջև եղած ընդհանրությունների մասին: Ուսումնասիրողները շումերերենում և հայերենում նշում են մոտ 50 բառ, որոնք իրենց իմաստով ու հնչողությամբ մոտ են իրար³: Նշենք այդպիսի մի շարք բառեր:

շումերերեն	հայերեն
ama - մայր	մա-մայր
a.d, a.d-da - ադե	ադե (մայր, բարբառ)
agar - ագարակ	արտ, ագարակ
gu(d) - եզ	եզ, կով
bad - պարիսպ	պատ
kus - կաշի	կաշի
kam - ցանկանալ, կամենալ	կամենալ, ցանկանալ
pay - փակել, բանտարկել	փակել
arikkilim - երկարասրունք թռչուն	արագիլ
mud - մուշ	մուշ
tunur - թոնիր	թոնիր
nanga - նահանգ, մարզ	նահանգ, մարզ
nagga - անագ	անագ
pap - պապ	պապ, մեծ հայր
gin - գնալ	գնալ ⁴ և այլն:

Հետաքրքիր է, որ երբ շումերերեն բառը համեմատվում է արադերենի և հայերենի հետ, նույն բառը հնչողությամբ, իմաստով ու նշանակությամբ ավելի նման է հայերենին, քան արադերենին:

շումերերեն	արադերեն	հայերեն
ab	tamtu	ափ
agar	ugaru	ագարակ (ակ)
ara	alaktu	արա (հետ)
bad	duru	պար
igi	ini	ակ(ն), աչք(ք)
tur	ereley	դուռ և այլն:

Մա լավագույն վկայությունն է այն բանի, որ շումեր-հայկական կապը հնագույնն է ու անմիջական, առանց որևէ միջնորդության:

Հայերենում և շումերերենում կան նաև քերականական նմանություններ. me "եմ", mu "իմ", mene "մենք", eneir "երա", aba "ով", (բ-վ հնչյունափոխությամբ), ana-su "ինչու" և այլն: Նշենք նաև, որ շումերերեն ki "տեղ, երկիր" նշանակությամբ նախածանցը հայերենում հանդես է գալիս որպես "ք" մասնիկ⁵: Հայք, Վիրք, Պարսք, Աղվանք և այլն:

Մեմական (աքադերեն, արամեերեն, ասուրերեն, հրեերեն, արաբերեն) և հնդեվրոպական լեզուներում (նաև հայերենում) լեզվաբանները նշում են նույն իմաստն ունեցող բազմաթիվ բառեր: Նշենք մի շարք նույնիմաստ բառեր արադերենում և հայերենում.

արադերեն	հայերեն
dhona - հացահատիկ, հաց	դոն - հացի տեսակ (գրաբար)
anutu - անոթ	անալթ, անոթ
gwern - երկանք	երկան
gaggadu(m) - գագաթ, գլուխ	գագաթ
naw - նավ	նավ
abaru(m) - կապար	կապար
(a)ster - աստղ	աստղ
gimahu - կմախք	կմախք
gunugu(m) - կնիք	կնիք
suru - հագուստ	շոր

gisrinnu - կշեռք
gzer - կղզի
hurru - խոր
masku - կաշի, մաշկ
patu(m) - սահման, շրջան
kumru - քուր

կշեռք
կղզի
խոր, հոր
մաշկ, կաշի
պատ
քուր⁶ և այլն:

Հայերենը ընդհանրություններ ունի նաև ասուրերենի, արամեերենի, արաբերենի հետ: Ուսումնասիրողները (Պ. Ենսեն, Գ. Ղափանցյան, Հ. Աճառյան, Ն. Մարտիրոսյան, Ա. Կամեննուբեր, Գ. Ջահուկյան) մեծ ուշադրություն են դարձրել հնդեվրոպական խեթա-լուվիական լեզուների (սեպագիր խեթերեն, պալայերեն, լուվիերեն՝ մ.թ.ա. 17--13-րդ դդ., հիերոգլիֆ լուվիերեն՝ մ.թ.ա. 10--8-րդ դդ.) ու հայերենի միջև եղած ընդհանրություններին: Այդ ընդհանրությունները ավելի շատ են հայերենի և խեթերենի միջև: Նշվում են բրուտ (հայերեն) - purut "կավ" (խեթերեն), գորգ (հայերեն) - kurka "ծածկոց" (խեթերեն), ընթրիք (հայերեն) - etri "ուտելիք" (խեթերեն), ծուխ (հայերեն) - tushhu(ua)i "ծուխ" (խեթերեն), փախ/փախչել (հայերեն) - parh "հալածել, քշել" (խեթերեն) բառերը և այլն: Նշվում են նաև անձնանուններ՝ Մուշեղ - Mursilis (խեթերեն), Տորք - Tarhuna (խեթերեն), Tarhund (լուվիերեն), Tarhu (հիերոգլիֆ լուվիերեն)⁷ և այլն:

Հայերենը շփման մեջ է եղել նաև քարթվելական լեզուների հետ (վրաց-գանյան և սվանական լեզվախմբեր): Նշվում են դա, այդ (հայերեն) - te/ti "սա, այդ" (քարթվելական լեզուներ), իմ, ինձ - me "կեր, կոկորդ", gorg, սիրտ (հ.ե. - kerd) - mkerd "սիրտ, կուրծք", տի "մեծ" - did "մեծ", կաքավ - kakab, կկու - gugul "կկու", բակ - baki "ցանկապատ, փարախ", լակոտ - lakuti⁸ ընդհանուր բառերը և այլն: Որտե՞ղ և ե՞րբ կարող էին նշված լեզուներով խոսող ցեղերը շփվել իրար հետ: 20-րդ դարի 2-րդ կեսից ուսումնասիրողները փորձում են պատասխանել այս հարցերին: Լեզվաբանները (Վ. Իլլիչ-Սվիտիչ, Ա. Դոլգոպոլսկի, Օ. Շիրոկով, Գ. Կլիչկով, Վ. Իվանով, Թ. Գամկրելիձե) առաջ են քաշում և պատմահամեմատական լեզվաբանության միջոցով հիմնավորում այն տեսակետը, որ հնդեվրոպական լեզուներով խոսող ցեղերը սեմական ու քարթվելական լեզուներով խոսող ցեղերի հետ շփվել կարող էին Առաջավոր Ասիայի արևելյան մասում: Շումերների դեպքում հիշենք, որ շումերները Միջագետքի հարավային մասում հայտնվել են մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակներում: Ենթադրվում է, որ շումերների նախնական բնակության վայրերը գտնվել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասում: Այս դեպքում օրինաչափ են լեզվական ու այլ կարգի ընդհանրությունները շումերների և Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայերի միջև: Շումեր - Հայկական լեռնաշխարհ անմիջական կապերը, որ արտացոլված են նաև շումերական դիցազանավեպում՝ "Գիլգամեշում", թույլ են տալիս ասելու, որ դրանք ամենահինն են (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ): Խեթա-լուվիական մեռած լեզուների հետ հայոց լեզուն շփվել կարող էր միայն Առաջավոր Ասիայում մինչև խեթական պետության կործանումը (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ): Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից սեմական ցեղերը սկսում են թափանցել Միջագետք (ցեղակից սեմա-քամական լեզուների սկզբնական բնակության վայրերն են Հյուսիսային Աֆրիկան և Արաբական թերակղզին): Իսկ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից սեմական ցեղերը (աքադացիներ) հայտնվում են Հյուսիսային Միջագետքում, ապա՝ Հարավային Միջագետքում: Մ.թ.ա. 24--23-րդ դարերում աքադացիների առաջնորդ Սարգոն Հինը նվաճում և միավորում է Միջագետքը, որի արդյունքում շումեր ժողովուրդը անհետանում, ձուլվում է սեմական ցեղերին: Ժողովուրդն անհետանում է, սակայն նրա ստեղծած մշակույթը (նաև լեզուն) չի անհետանում: Աքադական մշակույթը ստեղծվում և ծաղկում է ապրում իր մեջ կրելով շումերական (նաև Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդների) մշակույթի բազմաթիվ տարրեր (աստվածների պաշտամունք, դիցաբանական գրույցներ, պատկերացումներ տիեզերքի, բնության և մարդկանց մասին)⁹:

Աքադական լեզուն ևս հարստանում է շումերերենից վերցնելով բազմաթիվ մշակութային, կենցաղային և այլ բնույթի բառեր, նաև աշխարհագրական անուններ: Սարգոն Հին նվաճումներից հետո, Միջագետքի հատկապես հարավային մասում սկսում է գերակշռել սեմական տարրը: Այս ժամանակաշրջանից էլ (մ.թ.ա. 24--23-րդ դարեր և ավելի վաղ) Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայկական ցեղերը՝ սկսում են շփվել սեմական ցեղերի հետ: Իրենց աշխատություններում լեզվաբաններ Վ. Իլլիչ-Սվիտիչը, Վ. Գեորգիևը, Օ. Շիրոկովը և ուրիշներ մանրամասն քննարկելով հնդեվրոպացիների և սեմական ցեղերի միջև եղած հնագույն լեզվական, մշակութային և այլ կարգի շփումները հանգում են այն եզրակացության, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվում էր Առաջավոր Ասիայում, սեմական ցեղերի հարևանությամբ:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայկական ցեղերը շումերների հետ շփվել կարող էին մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներում, սեմական ցեղերի հետ՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսից, խեթա-լուվիական լեզուների հետ՝ մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերս ընկած ժամանակաշրջանը Փոքր Ասիայի հարավային, արևելյան ու այլ մասերում:
 Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզվական փոխազդեցություններ կան նաև հնդեվրոպական և ֆիննաուգրական, հնդեվրոպական և ալթայյան լեզուներով խոսող ցեղերի միջև: Ֆիննաուգրական լեզուները սամոդիական լեզուների հետ կազմում են ուրալյան լեզվաընտանիքը: Այս լեզվաընտանիքի նախահայրենիքը Արևմտյան Սիբիրի հյուսիսային մասը՝ Ուրալյան լեռների և Օբ գետի միջև ընկած տարածքներն են: Ընդունված է, որ ֆիննաուգրական ցեղերը մ.թ.ա. 4-րդ հազարամյակում սամոդիական ցեղերից բաժանվելուց հետո հարևանություն են արել հնդեվրոպացիների հետ, որի ժամանակ էլ կատարվել են լեզվական փոխառությունները: Հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուներում նշվում են.

հայերեն	ֆիննաուգրական լեզուներ
աղ (հ.ե. sal)	suola - աղ
կոկոն	kukka - ծաղիկ
գետ (հ.ե. wed)	vete - ջուր
խուտուտ	kutitta - խուտուտ տալ (ֆին.)
մեռնել (հ.ե. mer)	marras - մահ, մեռած
փուք, փչել	puhua - փչել
որբ (հ.ե. orbho)	orpo - որբ
բույս	puu - ծառ (ֆին.)
կեչի	kaski - կահչի (վոլուգ.), կաշի (կարելեր.)
զագաթ	kiire - լեռնագագաթ (ֆին.)
կռունկ	kurke - կռունկ (ֆին.)
մեղր	mol - քաղցր, փայտանյութ (ուդմուրտ.) ¹⁰

Լեզվական ընդհանրություններ կան նաև ալթայյան լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների (թյուրքական, մոնղոլական, տունգուս-մանջուրական) և հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների լեզուներում: Ալթայյան ժողովուրդների նախնիները բնակվել են Միջին Ասիայի և Կենտրոնական Ասիայի ընդարձակ տարածքներում (նաև ավելի արևելք՝ մինչև Խաղաղ օվկիանոս): Ալթայյան լեզուներում և հնդեվրոպական լեզուներում նշվում են խնձոր almu - alma (թյուրքական լեզուներ), այծ-koza (սլավոններ), ozka (լիտվերեն) - keci (թյուրքական լեզուներ) բառերը¹¹ և այլն:

Չինարեն լեզվում ևս նշվում են բառեր, որոնք լեզվաբանների կարծիքով այդ լեզվին են անցել հնդեվրոպացիներից, հիմնականում թոխարական ցեղերի միջոցով: Նշվում են մեղր mit, miat (թոխարերեն) - miet (չինարեն), շուն ku (թոխարերեն) - kuan (չինարեն), եգ ko, ki (թոխարերեն) - niu (չինարեն), խոզ suwo (թոխարերեն) - chu (չինարեն) բառերը¹² և այլն: Թոխարական և չինական ցեղերի միջև եղած շփումները թվագրվում են մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբով:

Հնագիտական պեղումների արդյունքները, երբ հայ-արիական մշակույթին բնորոշ տարրեր են հայտնաբերվում Հայկական լեռնաշխարհից Հնդկաստան ու Սիբիր ընկած տարածքներում, թույլ են տալիս ասելու, որ արիական ցեղերի (հնդարիներ, թոխարներ) և ֆիննաուգրական ու ալթայյան ցեղերի միջև փոխադարձ շփումները կատարվել են Առաջավոր Ասիայի արևելյան տարածքներից (Հայկական լեռնաշխարհ ու շրջակա տարածքներ) դուրս, մոտավորապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսին և ավելի ուշ, երբ հնդեվրոպացիների նախնիները իրենց տեղաշարժերի ժամանակ հայտնվել են Ուրալում, Կամա գետի ափերին, Ալթայում և այլ տարածքներում, ուր ապրում էին նախաֆինները, ալթայյան լեզուներով խոսող ցեղերը:

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուները չունեն հնչյունական նույն համակարգը: Հնդեվրոպական լեզուների մի մասը ունի բաղաձայն հնչյուններ, որ չունեն մյուս լեզուները: Կամ նույն ճյուղի մեջ մտնող լեզուները (սլավոնական, ռոմանական) ունեն տարբեր հնչյունական համակարգեր և այլն: Այս առումով հայոց լեզուն (իր բարբառներով) այն եզակի հնդեվրոպական լեզուներից է, որն ունի հնդեվրոպական լեզվաընտանիքին հատուկ բոլոր բաղաձայն ու ձայնավոր հնչյունները: Հայոց լեզուն ունի 36 հնչյուն (39 պատկեր), որոնք լիովին վերարտադրում են ոչ միայն հայոց լեզվի, այլև հնդեվրոպական բոլոր լեզուների հնչյունական

համակարգերը: Հնդեվրոպական այլ լեզուներում բացակայում են շատ հնչյուններ, որ կան հայոց լեզվում: Բացակայող այդ հնչյունները հիմնականում ց, ծ, ձ, դ, ր, տ, հ, կ, փ, թ, ջ բաղաձայն հնչյուններն են: Այս երևույթը միայն մեկ բացատրություն ունի. նախահայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում մնացած ու կազմավորված հայ ազգը պահպանել է (նաև բարբառներում) հնդեվրոպական լեզվաընտանիքին հատուկ բոլոր ձայնավոր ու բաղաձայն հնչյունները:

Այսպիսով, լեզվաբանական ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ հնդեվրոպացիների նախնիների՝ արիական ցեղերի հայրենիքը գտնվում էր Առաջավոր Ասիայի արևելյան մասերում՝ Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում:

Ուշադրություն դարձնենք նաև մեկ այլ փաստի: Լեզվաբանները նկատել են, որ ընդհանրություններ կան, այսպես կոչված, "հայասերենի" և հայերենի, "խուրրիերենի" և հայերենի, "ուրարտերենի" և հայերենի միջև:

Հայտնի է, որ հայասերենը մեզ է հասել խեթական թագավորների արձանագրությունների միջոցով (մ.թ.ա. 14--13-րդ դդ.): Դրանք հիմնականում դիցանուններ, տեղանուններ և անձնանուններ են: Նշենք անունների մի շարք. Այսի(յա), Անի(յա), Հուկաննա, Կարանի, Մարի(յա), Մուտի, Վանի անձնանունները, Բալտաիկ, Զակ(ան), Սիսիլի, Տարումու, Տերիտիունի, Ունագարա դիցանունները, Ազ(զ)ի, Առնի(յա), Արիփսա, Արիտա, Արցի(յա), Գագու, Կումաիս, Ուրա տեղանունները¹³ և այլն: Գրավոր աղբյուրները (աքադերեն, խեթերեն), ուր տեղեկություններ կան խուրրիների մասին, համեմատաբար շատ են ու բազմակողմանի: Խուրրիերենով գրված հնագույն գրավոր հուշարձանը Ուրկեշի (Հյուսիսային Միջագետք) թագավոր Տիշարիի արձանագրությունն է (աքադերեն), որը թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսով: Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Նավարայի¹⁴ (Բաղդադից հյուսիս) թագավոր Արիժենայի արձանագրությունը¹⁵, որը գրված է աքադերենով, բայց թագավորի Արիժենա անունը վկայում է խուրրիական միջավայրի մասին: Խուրրիերեն հաջորդ գրավոր հուշարձանները թվագրվում են մ.թ.ա. 2-րդ - 1-ին հազարամյակներով: Դրանք Խուրրի-Միտանիի արքաների նամակներ են, պայմանագրեր, դիցաբանական, ծիսական, անեծքի, շինարարական տեքստեր և այլն: Արձանագրությունների հիման վրա ուսումնասիրողների հաջողվել է առանձնացնել մոտ 500 խուրրիերեն բառ: Խուրրիերեն և հայերեն լեզուներում նշվում են հետևյալ ընդհանուր բառերը.

խուրրիերեն	հայերեն
ak - ակ (տանել, անցկացնել)	ած(ել), բերել
ar - ար (տալ)	առ(ն-ուլ)
papa - պապա (լեռ)	բաբայ (բլուր)
ananiha - անանիխա	անանուխ
salora - սալորա	սալոր
iza - իզա	ես
anagi - անագ	անագ
haluli - (ինչ որ պտուղ)	խաղող
hinzuri - խնձոր	խնձոր
nuranti - նուռ	նուռն
tuldi - (ինչ որ բույս)	տուղտ (բույսի տեսակ)
ate - հայր	ատտա "մայր" (Ակնի բարբառ), հ.ե. atta "հայր, մայր" ¹⁶
amma - մայր ¹⁷	ամա "մայր" (Գանձակի բարբառ)

Այս ցանկը ավելի ընդարձակ է ուրարտերենի դեպքում, քանի որ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ուրարտական արձանագրություններ (մոտ 600), որոնք գրված են աքադերենով և ասուրական տեղայնացված սեպագրերով: Բազմաթիվ օրինակներից նշենք ընդհանուր բառերի մի շարք.

"ուրարտերեն"	հայերեն
sari - ծառի (ցարի) "այգի"	ծառ
cue - ծուկ "լիճ, ծով"	ծով
suri, sure - սուր "սուր, զենք"	սուր
zilibi - ցիլի(ի)բի "ցեղ, ընտանիք, սերունդ"	ցեղ
burgana - բուրգանա "բուրգ"	բուրգ
ulti - ուլտու "ուղտ"	ուղտ

baba - բաբա "լեռ"
 arsibi - արծիբի "արծիվ"
 ebani - եբանի "բնակավայր"
 astiavazi - աստիած "աստված"

բաբայ "բլուր"
 արծիվ
 ավան, բնակավայր
 աստված¹⁸ և այլն¹⁹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանրություններ կան ոչ միայն հայերենի և "հայասերենի", "խուրրիերենի", "ուրարտերենի" միջև, այլև "խուրրիերենի" և "ուրարտերեն" լեզուների միջև²⁰: Խուրրիերենն ու ուրարտերենը այնպիսի մերձավոր կապի մեջ են, որ ուսումնասիրողները այն անվանում են խուրրի-ուրարտական լեզվաընտանիք: Ընդունված է, որ ուրարտական սեպագրերը ծագում են խուրրի-միտանական գրի ձևից²¹, (խուրրիները աքադական սեպագրերը հարմարեցրել են իրենց լեզվին): Միաժամանակ նշվում է, որ ուրարտական "գրիչները" կրել են ասուրականի ազդեցությունը:

Ե՛վ խուրրիերենում և՛ ուրարտերենում բառարմատը հիմնականում միավանկ է, ուղղագրությանը հատուկ է ձայնավորների գրությունը, ընդ որում խուրրիերենին հատուկ է ավելորդ ձայնավորների գրությունը. օրինակ՝ Me-i-nu-a (խուրրիերեն), Minua (ուրարտերեն) և այլն: Խուրրի-ուրարտական լեզուներում մեծ դեր է խաղում -ne մասնիկը, որը և՛ որոշիչ է, և՛ տեղանվանակերտ՝ օրինակ. ew(e)r-ne Lullue-ne-w տերը (երկրի) Լուլլուի (խուրրիերեն), Ardi-ne, Արդի քաղաք, Haldine Խալդի աստված (ուրարտերեն) և այլն: Նշենք նաև ընդհանուր բառերի մի շարք.

ուրարտերեն

eure
 tarsua
 hurade
 baba
 sajale
 ate
 tun (սարքել, հիմնել)
 has
 jese
 pile
 sela

խուրրիերեն

ewri - տեր
 tarzua - մարդ
 huradi - զինվոր
 paba - լեռ
 sawola - տարի
 atta - հայր
 tun - անել
 haz - լսել
 iza - ես
 pala - ջրանցք
 sala - աղջիկ²² և այլն:

Ինչպես տեսնում ենք՝ "հայասերենը" մեզ է հասել խեթերեն, "խուրրիերենը"՝ հիմնականում աքադերեն ու խեթերեն գրված արձանագրությունների միջոցով, իսկ ուրարտացիները տեղայնացրել ու օգտագործել են ասուրական (աքադական) սեպագրերը: Բոլոր դեպքերում Հայկական լեռնաշխարհի բնիկների լեզուն՝ հայերենը, հարմարեցվել է օտար լեզվի ու սեպագրերի, որը բնականաբար չէր կարող արտահայտել հայոց լեզվի հնչյունական համակարգը և ընթերցելիս թյուրիմացությունների տեղիք է տալիս, քանի որ անունները և բառերը հիմնականում հնչում են ոչ հայերեն: Այդ պատճառով մեծ ջանքեր են պահանջվում մասնագետներից այդ արձանագրությունների մեջ ճանաչելու հայոց դիցանունները, անձնանունները և ընդհանրապես հայերին ու Հայաստանը: Հաշվի առնելով այս հանգամանքը բնական պետք է համարել, երբ այսպես կոչված "հայասերենը", "խուրրիերենը" կամ "ուրարտերենը" հարազատություն են ցուցաբերում և՛ հայերենի հետ, և՛ իրար հետ, ունենալով լեզվական շատ ընդհանրություններ: Այս փաստը լավագույն ապացույցն է այն իրողության, որ Հայկական լեռնաշխարհը անհիշելի ժամանակներից բնակեցված է եղել և շարունակում է բնակեցված լինել հայ-արմեններով: Հետևաբար, վերոհիշյալ բոլոր լեզուները Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայերի գրական կամ խոսակցական (բարբառներ) լեզուներ են և օգտագործվել են տարբեր ժամանակներում և տարբեր հանգամանքներում:

1. Գ. Ջահուկյան, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 41-42:
2. Այս հարցերի պարզաբանման համար մեծ աշխատանք է կատարել լեզվաբան Գ. Ջահուկյանը: "Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան" աշխատության մեջ Ջահուկյանը մանրամասն քննարկել է համեմատական լեզվաբանության շատ հարցեր, ուշադրության կենտրոնում պահելով հայոց լեզվի և հնդեվրոպական այլ լեզուների, ինչպես նաև սեմական ու ֆիննաուգրական լեզուների միջև եղած ընդհանրությունները, փոխառություններն ու փոխազդեցությունները:

3. Մ. Գավուքյան, 1973, էջ 43-56: Ներկայացվող աշխատության մեջ հիմնականում կարևորվել, ուշադրություն է դարձվել տարբեր լեզվաընտանիքների և լեզուների միջև եղած ընդհանրություններին ու փոխազդեցություններին և ոչ թե լեզվական փոխառություններին:
4. Գ. Ջահուկյան, 1987, էջ 451, Գ. Ջահուկյան, 1992, էջ 16, Ռ. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988, էջ 37:
5. Մ. Գավուքյան, 1973, էջ 43-56:
6. Գ. Ջահուկյան, 1987, էջ 469, Մ. Գավուքյան, 1973, էջ 58, Գ. Ջահուկյան, 1992, էջ 17:
7. Գ. Ջահուկյան, 1987, էջ 313, 315:
8. Գ. Ջահուկյան, 1987, էջ 587, 595:
9. Մշակութային այս փոխազդեցություններով, նաև արիական ու սեմական միջավայրում գրված լինելու հանգամանքով կարելի է բացատրել այն, որ Աստվածաշնչյան Նոյից ու նրա որդիներ Սեմից, Քամից ու Հաբեթից են սերվել աշխարհի բոլոր ժողովուրդները:
10. Գ. Ջահուկյան, 1987, էջ 294: Գ. Ջահուկյան, 1992, էջ 21, 32:
11. Т. Гамкредидзе, В. Иванов, 1984, стр. 939.
12. Т. Гамкредидзе, В. Иванов, 1984, стр. 935.
13. Գ. Ջահուկյան, 1992, էջ 48-53:
14. Ուրկեշը և Նավարան Խուրրի-Միտանիի ծայրամասային թագավորություններից էին և ենթարկվում էին կենտրոնին:
15. И. Дьяконов, 1968, стр. 13-14: Ի դեպ, նույն տեղում նշվում է նաև, որ Տիշարիի արձանագրությունների լեզուն հավասարապես կարելի է համարել և՛ հին խուրրիական, և՛ հին ուրարտական, քանի որ այն մոտ է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի խուրրիերենին և մ.թ.ա. 1-ին հազարամյակի ուրարտերենին:
16. Գ. Ջահուկյան, 1987, էջ 426:
17. И. Дьяконов, 1967, стр. 133.
18. Գ. Ջահուկյան, 1992, էջ 58: Ռ. Իշխանյան, էջ 58-61:
19. Ի. Դյակոնովը խոսելով "ուրարտերենի" և հայերենի ընդհանրությունների և բառապաշարների նմանությունների մասին, 1950-ական թվականներին գրում է. "Հայոց լեզվի հնչյունական համակարգը բացահայտորեն ուրարտական բնույթ է կրում" (РДд, 1971, չ3 443, И. Дьяконов, Рецензия на книги Т. Меликишвили "Урарту", Тбилиси, 1951): Դյակոնովը այդ նմանությունները բացատրում է հայ-ուրարտական երկլեզվյան երկարատև գոյակցության փաստով Հայկական լեռնաշխարհի ընդարձակ տարածքում: Այսօր այդ բացատրությունը ընդունելի չէ այն պատճառով, որ հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են, իսկ Ուրարտու-Արարատը հայոց հնագույն պետական կազմավորումներից մեկն էր:
20. 1950--60-ական թվականներից ուսումնասիրողները (Գ. Մելիքիշվիլի, Ա. Կամենհուբեր, Ի. Դյակոնով, Գ. Ջահուկյան) փորձում են խուրրիերենն ու ուրարտերենը ներկայացնել որպես նույն՝ խուրրի-ուրարտական լեզվաընտանիքի լեզուներ: Փորձեր են եղել նաև (Գ. Կլիմով, Ի. Դյակոնով) խուրրի-ուրարտերենը կապել արևելակովկասյան լեզուների հետ, որը սակայն լայն ընդունելություն չի գտել, իսկ Գ. Ջահուկյանի կարծիքով այդ համեմատությունը "բավարար հիմնավորում չունի" (մեծ տարբերություններ կան հնչյունաբանական կառուցվածքներում, օրինակները եզակի են) (Գ. Ջահուկյան, 1992, էջ 57): Ընդունելով խուրրի-ուրարտական լեզվաընտանիքի գոյությունը, Ի. Դյակոնովը գրում է. "Լեզվաբանական տվյալները ստիպում են մտածել, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի խուրրիների և ուրարտացիների նախնիները խոսել են իրար մոտ բարբառներով... այնքան, որ նրանց կարելի է համարել նույն էթնոսը, այդ էթնոսի առանձին ցեղեր (Լ. ԺյՍՏՎՏՁ, 1968, էջ 17, ՀԺՊ, 1971, էջ 148): Սակայն Դյակոնովը բացառում է խուրրի-ուրարտական լեզվաընտանիքի և հնդեվրոպական լեզվաընտանիքի միջև եղած որևէ կապ: Խոսելով Գ. Ջահուկյանի կողմից առաջ քաշված այն տեսակետի մասին, որի համաձայն ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները (հայերենը) գտնվում են հեռավոր ցեղակցության մեջ, Դյակոնովը գրում է. "Դժվար թե այդ հիպոթեզը ընդունվի" (И. Дьяконов, 1968, չ3 19 (πδX³π³II)): Եղած նմանությունները նա համարում է ուրարտացիների և հնդեվրոպացի անատոլիական կամ իսթալուվիական ցեղերի միջև եղած նախապատմական շփումների արդյունք: Հայ լեզվաբաններից Մ. Մկրյանը ևս ուրարտերենը հնդեվրոպական լեզու է համարում, կապելով այն հայոց լեզվի հետ (Մ. Մկրյան, ԲԵՀ, 1967, 1, էջ 49, 57):
21. Գ. Ջահուկյան, 1987, էջ 413: Հ. Կարազեռոյան, էջ 35:
22. И. Дьяконов, 1967, стр. 122.

Գլուխ Հինգերորդ

Հայաստան. Արիական Ցեղերի Հայրենիք Հնագույն Գրավոր Աղբյուրները Արիական Ցեղերի Հայրենիքի Մասին

Առաջավոր Ասիայում, հատկապես Հայկական լեռնաշխարհում ստեղծված մշակույթին բնորոշ տարրեր են հայտնաբերվել (խեցեղեն, մետաղե իրերի վաղագույն նմուշներ, պաշտամունքային իրեր) այդ տարածքից շատ հեռու, այլ վայրերում: Բացահայտորեն զգացվում է, որ այդ մշակույթը կրողները՝ Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայկական/արիական ցեղերը պարբերաբար մեծ տեղաշարժեր են կատարել, կտրել մեծ տարածություններ, հասել Հնդկաստան ու Եվրոպա՝ հայտնվելով իրենց հայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա: Բնականաբար ժամանակն ու տարածությունը շատ մանրամասներ են ջնջել հեռացած ու նոր վայրերում հաստատված ցեղերի հիշողությունից, սակայն պահպանվել են ինչ-որ հիշողություններ (աստվածների պաշտամունք, ծիսական արարողություններ, բանավոր ու գրավոր գրույցներ, գրավոր փաստաթղթեր) նախահայրենիքի ու այնտեղ մնացած ցեղակիցների մասին: Անդրադառնանք նյութական մշակույթի տարրերին, պահպանված հիշողություններին և գրավոր աղբյուրներին:

Միջագետքում կատարված հնագիտական պեղումների արդյունքներին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շումերական քաղաքակրթությունը ստեղծողները հարավային Միջագետքը յուրացնելուց առաջ բնակվել են Ջագրոսի լեռներից արևմուտք ընկած տարածքներում, այն է. Տիգրիսի ակունքների հովիտներում և Վերին Միջագետքում՝ Եփրատի հոսանքների շրջանում (Հայկական լեռնաշխարհի հարավային մասեր): Ընդունված է, որ այս տարածքներում է ստեղծվել նստակյաց հողագործների և անասնապահների այն մշակույթը, որը դրվել է Միջագետքում ստեղծված հետագա բոլոր քաղաքակրթությունների հիմքում:

Պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի (խեցեղեն, օբսիդիանից պատրաստված գործիքներ, խեցեղեն) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ջագրոսի նախալեռներից արևմուտք ընկած տարածքներում ապրող հալաֆ-հասունյան մշակույթը կրող հողագործ-անասնապահ ցեղերը (վաղ բնակավայրեր են Շանիդարը, Ջարգին, Ջարմոն), մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներում, նոր վարելահողեր ու նոր արտավայրեր փնտրելու նպատակով Տիգրիսի հոսանքով տեղաշարժվել են դեպի Ստորին Միջագետքի հարավային մասեր: Եփրատի հոսանքով դեպի հարավ են շարժվել նաև հալաֆ-հասունյան մշակույթը կրող այլ ցեղեր (Մամարյան մշակույթը կրողներ): Միջագետքի հարավային մասերում պայմանները նպաստավոր չեն եղել երկրագործությամբ զբաղվելու համար (տեղումներ քիչ էին լինում): Սակայն դա արգելք չէր, որ նորեկները դարձյալ զբաղվեն երկրագործությամբ: Նրանք ստեղծել են արհեստական ոռոգման սիստեմ (Չոգա-Մամա բնակավայրում հայտնաբերվել է ջրանցքի հետք) և աճեցրել զանազան հացաբույսեր (Թելլ-աս-Մավվա բնակավայրում հայտնաբերվել են հացաբույսերի մնացորդներ՝ գարի, ցորեն, վուշ, որոնք կարող էին աճել միայն ջրովի հողերում): Մ.թ.ա. 6-րդ հազարամյակի վերջին Ստորին Միջագետքն արդեն յուրացված էր երկրագործ Հայկական Միջագետքի հալաֆ-հասունյան մշակույթը կրող ցեղերի կողմից¹: Սկիզբ է դրվում շումերական մշակույթին (շումերներին է վերագրվում Ստորին Միջագետքում մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակների սկզբին ստեղծված Ուբեյդյան մշակույթը): Ավելի ուշ՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբին շումերները հիշում են, որ իրենց մշակած հացաբույսերը բերվել են լեռնային երկրից²: Կարելի է մտածել, որ Ստորին Միջագետքում հանդիպել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից ու Հայկական Միջագետքից տարբեր ժամանակներում տեղաշարժված նույն մշակույթն ունեցող ցեղեր, որոնց միջև հաստատվել են խաղաղ, բարեկամական կապեր (թշնամական վերաբերմունքի կամ ռազմական ընդհարման մասին ոչ մի վկայություն չկա մինչև սեմական ցեղերի հայտնվելը այդ տարածքներում՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կես):

Հին աշխարհի լավագույն գիտականներից մեկը՝ Կ. Կերամը, գրում է, որ շումեր ժողովուրդը եկել ու բնակություն է հաստատել Տիգրիսի ու Եփրատի դելտայում, իր հետ բերելով ձևավորված մշակույթ, դպրություն և օրենքներ³: Որոշ ուսումնասիրողներ (Գ. Կոնտոնոն, Ժ. դը Մորգան) գտնում են, որ Հայկական լեռնաշխարհը մարդաբնակ էր այն ժամանակ, երբ Միջագետքը դեռևս ծովի հատակ էր, իսկ շումեր ժողովուրդն էլ դեռ գոյություն չուներ: Ավելի ուշ, երբ ծովի ջրերը ետ են քաշվել, լեռներում բնակվողները սկսել են աստիճանաբար իջնել ու նվաճել ծովի ջրերից ազատված տարածքները⁴: Հնագիտական պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ շումերները մ.թ.ա. 5-4-րդ

հազարամյակներում, նոր քարի դարից մետաղին (պղինձ) անցնելու ժամանակ արդեն գտնվում էին հարավային Միջագետքում:

Ինչպես արդեն նշվել է, շումերների պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք ունեն շումերական դյուցազնավեպի մեզ հայտնի վիպերգերը (մ.թ.ա. 28--27 դդ.): Այդ վիպերգերում մեծ տեղ է տրված Շումեր և հայոց հնագույն Արատտա պետության միջև եղած մշակութային, տնտեսական և այլ կարգի կապերին: "Գիլգամեշը և անմահների երկիրը" վիպերգում Գիլգամեշը անմահությունն ձեռք բերելու համար ուղևորվում է "անմահների երկիր"՝ Արատտա: Այդ երկիրը տանող ճանապարհը նրան ցույց են տալիս "յոթ ոգեղեն, ամենագետ ու ամենագնաց էակներ".

Նրանք երկնային աստղեր են՝
Երկրի ճանապարհներն իմացող
Երկինքներում աստղերի մեջ փայլող
Դեպի Արատտա ճանապարհը ցույց տվող⁵:

Շումեր-աքադական դյուցազնավեպից հայտնի է դառնում, որ Լուսը, Արևը ծագում են երկվորյակ Մաշու լեռներից.

Արևը ծագելիս փակում են դարպասները,
Արևը մայր մտնելիս բացում են դարպասները,
Արևը մայր մտնելիս դարձյալ փակում են դարպասները,
Դուրս են բերում այնտեղից աստվածները միայն Շամաշին⁶:

Լեռներից (դարպասներ) այն կողմ գտնվում է կախարդական այգին՝ դրախտը, ուր ապրում են աստվածները: Հիշենք, որ Աստվածաշնչյան դրախտը ևս գտնվում էր Հայաստանում՝ Եփրատ, Տիգրիս, Գեհն, Փիստն գետերի ակունքների շրջանում: Շումերների (նաև ամբողջ Միջագետքի) համար լեռների երկիր էր Հայաստանը:

"Էններքարը և Արատտայի գլխավոր քուրմը" վիպերգում Արատտան հանդես է գալիս "բարձր լեռների երկիր", "անմահների երկիր", "սուրբ օրենքների երկիր"⁷ անուններով: Զգացվում է, որ շումերների համար լեռը (լեռներ) մեծ խորհուրդ է ունեցել: Նրանց պատկերացմամբ աստվածները ոչ միայն ապրում էին լեռներում, այլև ծնվում էին լեռներից: Հետաքրքիր է նաև, որ "լեռ" և "երկիր" բառերի համար շումերները (նաև աքադացիները) օգտագործել են նույն սեպանշանը: Այս փաստը վկայում է, որ լեռը և երկիրը շումերների համար նույն իմաստն են ունեցել: Այս առումով պատահական չէ, որ շումերները իրենց սրբավայրերը կառուցել են լեռների նման ու նաև արհեստականորեն կառուցված բարձր վայրերում, որոնք կոչվել են զիկուրատներ: Դրանք քառակուսի հիմքով հսկայական շինություններ էին (3,5 - 7 մետր բարձրությամբ), որոնք հեռվից լեռների տպավորություն են թողել: Հիշենք, որ Հայկական լեռնաշխարհում սրբավայրերը կառուցվել են լեռներում, իսկ քանի որ Միջագետքում լեռներ չեն եղել, ապա շումերները արհեստական բարձունքներ՝ "լեռներ" են կառուցել:

Ինչպես տեսնում ենք, քիչ չեն այն փաստերը, որոնք թույլ են տալիս ասելու, որ Միջագետքի հնագույն բնակիչները՝ շումերները, Միջագետքում բնակվելուց առաջ բնակվել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և "սուրբ" են համարել այն երկիրը, որը նրանց նախահայրենիքն էր: Սա Հայկական լեռնաշխարհից կատարված հայտնի էթնիկական տեղաշարժն էր, երբ ցեղի մի մասը հեռանում է բնօրրանից, հաստատվում այլ վայրում և ստեղծում իր պետությունը:

Հնագույն գրավոր աղբյուրներից արժեքավոր են նաև հնդկական վեդաները և իրանական "Ավեստան", որոնք կարևոր հիշողություններ են պահպանել արիական ցեղերի, նրանց աստվածների ու հայրենիքի մասին (հնդկական վեդաների և իրանական "Ավեստայի" մասին կիսուենք ավելի ուշ, առանձին բաժիններում):

Հայրենիքի մասին հիշողություններ են պահպանվել նաև անգլիական ու գերմանական գրավոր աղբյուրներում: Այսպես. Անգլիայի պատմության մասին հնագույն փաստաթուղթը 8-րդ դարում գրված անհայտ հեղինակի "Անգլո-սաքսոն քրոնիկներ" փաստաթուղթն է: Գոյություն ունեցող չորս ձեռագրերից երեքը ունեն առաջաբան, ուր վկայություն կա այն մասին, որ բրիտանական կղզիների հնագույն բնակիչները եկել են Հայաստանից⁸: Նշանավոր հայագետ Ն. Մառը, ուսումնասիրելով եվրոպական ու փոքրասիական դիցաբանական ավանդույթները, նկատել է, որ "միֆոլոգիական ավանդույթի պահպանները Հայաստանում, ինչպես նաև Եվրոպայում, եղել են կելտական ցեղերը, որոնք բնակվել են հայոց Գոթ-թան կամ Կոլ-թեն գավառում" (Գոդթն)⁹:

10-րդ դարի գերմանական գրավոր աղբյուրները հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում գերմանական ցեղերի, հատկապես բավարացիների ու Հայաստանի միջև եղած կապերի մասին: Այսպես. Froumund անունով մի վանական (10-րդ դար) գրում է Հայաստանում ապրող բավարերեն խոսող ժողովրդի մասին¹⁰: 12-րդ դարի գրավոր աղբյուրները խոսում են Հայաստանը բավարացիների նախահայրենիքը, բնօրրանը լինելու մասին: 1105-1126 թթ. գրված "Annolide" ("Աննոյի երգը") պոեմում վկայություն կա այն մասին, որ Հայաստանը բավարացիների նախահայրենիքն է (stammland): Օգտագործելով հնագույն գրույցներ ու հեթանոսական մատյաններում պահպանվող տեղեկություններ, պոեմում նկարագրվում է բավարացիների հերոսական պայքարը Հուլիոս Կեսարի ու հռոմեական բանակի դեմ (մ.թ.ա. 1-ին դարի 1-ին կես): Պոեմում բավարացիների մասին ասվում է.

310. Գալով լեռնային Հայաստան երկրից,
Որտեղ Նոյը թողեց տապանն իր փրկիչ,
Երբ ստացավ աղավնուց ճյուղը ձիթենու,
Նոյան տապանի հետքերը այսօր էլ դեռ կան
Արարատ լեռան վրա:

315. Ասում են նաև, թե այնտեղ է կեսը այն մարդկանց
Որոնք դեռ խոսում են լեզվով գերման:

310. von Armenien dem Kehren,
da Noa aus der Arche ging,
in der er den Olzweig von der Taube empfing,
Ihre Spuren hat die Arche noch
auf dem Berge Ararat.

315. Man sagt, dort die Halfte noch sei
die deutsch sprechen¹¹.

Կեսարի գերմանական արշավանքների, գերմանական ցեղերի հերոսական դիմադրության ու Հայաստանը բավարացիների նախահայրենիքը լինելու մասին վկայություններ կան նաև 1147-1160 թթ. Ռեգինսբուրգում գրված (մի խումբ հեղինակներ) "Kaiserchronik"-ում: "Kaiserchronik"-ը վկայում է.

315. Սուրը ուժգին հարվածում էր գրահին,
Շատերը ցուցաբերեցին անկոտրում կամք,
Ցեղը բավարացիների
Ծագումով Հայաստանից,
Որտեղ թողեց Նոյը տապանն իր փրկիչ

320. Երբ աղավնուց ստացավ ճյուղը ձիթենու
Տապանի հետքերը մինչև այսօր կարելի է տեսնել
Լեռան վրա, որը կոչում են Արարատ,
Եվ (Կեսարը) բավարների դեմ իր հաղթանակը
Ձեռք բերեց մեծ արյան գնով:

315. Das Schwert schlug man feste durch den Helm,
demjenigen war sein Kampfeifer sehr groz.
Das Geschlecht der Baiern,
hergekommen von Armenien,
wo Noah aus der Arche ging

320. und den Olzweig von der Taube empfing.
Die Spuren der Arche kann man noch sehen
auf den Bergen, die da heißen Ararat.
Den Sieg, den Julius [Casar] über die Baiern gewann,
den mußte er sehr blutig bezahlen¹².

Ինչպես տեսնում ենք և՛ "Annolid"-ի և՛ "Kaiser chronik"-ի վկայությունները նույնն են: Այս փաստը թույլ է տալիս ասելու, որ եղել են ավելի հին գրավոր աղբյուրներ, որոնցից օգտվել են վերոհիշյալ պոեմների հեղինակները: Ի դեպ, այդ մասին վկայություն կա "Annolid"-ում: Պոեմի 300-րդ հատվածում հիշատակվում են ինչ-որ հեթանոսական մատյաններ (heidnischen Buchern), որտեղ գրված են վերոհիշյալ դեպքերի մասին և որոնք վկայակոչվում են ասվածը հաստատելու համար:

Հետաքրքիր է նաև հայկական միջնադարյան ժողովրդական մի երգ (15-րդ դար), որի մեջ հանդիպում ենք հետևյալ տողերի.

Տրդատ եւ սուրբն Գրիգոր
Եկան հիւր եղան հռոմայ
Չորս հարիւր մարդ անդ թողին
Ալամանք կոչեցան նոքայ¹³:

Հայտնի է, որ արեմանները կամ արամանները գերմանական ցեղեր էին, որոնք կարևոր դեր են խաղացել գերմանական ժողովրդի կազմավորման ժամանակ: Հիշենք նաև գերմանական խերուսկ ցեղի առաջնորդ Արմենիուսին, գոթերի առաջնորդ Էրմանարիխին և այլն: Հետաքրքիր են նաև ռուսական բիլինաներում պահպանվող վկայությունները "սուրբ լեռների" և նրանից հյուսիս գտնվող այլ լեռների մասին: Այսպես, "Իլյան և Սվյատոգորը" բիլինայում Սվյատոգորի մասին գրված է.
Հեծավ նժույզ ձին,
Արշավեց-գնաց դեպի սուրբ լեռներ:

.....
.....
Սովորեցրեց Սվյատոգորը Իլյա Մուրոմցուն
Դյուցազունների քաջությունները, հունարներն ամեն.
Ու ճամփու ընկան, գնացին դեպի լեռներն հյուսիսի¹⁴:

Ուշադրության արժանի է այն, որ բիլինաներում նույնն են դյուցազնի անունը՝ Սվյատոգոր ("Սուրբ լեռ") և երկրի անունը՝ Святые горы ("սուրբ լեռներ"), դեպի ուր ուղևորվում է հերոսը: Այս փաստը վկայում է, որ Սվյատոգորի մասին գրույցները խոր հնություն ունեն:
Միջնադարից սկսած իսպանացի և բասկ ուսումնասիրողները (Էստերբան դե Գարիբայ, Անդրես դե Պոսա, Ամադոր դե Լոս Ռիոս) առաջ են քաշել այն տեսակետը, որ Պիրենեյան թերակղզու հնագույն բնակիչների, նաև բասկերի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Նրանց աշխատություններում մեծ տեղ է տրված Պիրենեյան թերակղզում և Հայկական լեռնաշխարհում տարածված աշխարհագրական անուններին, ավանդություններին, սովորույթներին¹⁵, տարագներին¹⁶ և այլն: 1927 թ. լույս տեսած Բեռնարդո Էստորնես Լասայի "Ռոնկալի հովիտը" աշխատության մեջ հիշատակվում է բասկյան մի հին ավանդազրույց, ըստ որի Ռոնկալի հովտի ամենահին գյուղի՝ Բսաբայի հիմնադիրը համարվում է Հայաստանից գաղթած ում Տոբել, որը նաև բասկերի նախահայրն է¹⁷:

Նշենք նաև մեկ այլ փաստի մասին: Ուսումնասիրողները Հայաստանն իրավամբ համարում են աստղագիտության ու մասնավորապես համաստեղության կենդանակերպի նշանների հայրենիքը: Աստղագետ Վ. Օլկոտը դեռ 20-րդ դարի սկզբներին գրում է. "Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինող մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև՝ Արարատ լեռանը մոտիկ շրջաններում"¹⁸:

Հնդկական ու իրանական հնագույն գրավոր աղբյուրներից (վեդաներ, "Ավեստա") հայտնի է դառնում, որ վաղ ժամանակներից իրենք իրենց արի ցեղի մարդիկ են համարել հնդկական ու իրանական ցեղերը:

Նրանք ոչ միայն դարեր շարունակ պահպանել են արի ցեղին պատկանելու գիտակցությունը, արի ցեղին բնորոշ սովորույթներն ու բարքերը, այլև հպարտացել են այդ ցեղին պատկանելու, արիացի լինելու փաստով: Հիշենք պարսից Դարեհ 1-ին արքային, որը մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսին արձանագրում է. "Դարեհ արի, արիներից սերված-Դարայահվաճուշ Արիա, արիա ճիթթա"¹⁹: Նա ինքն իրեն համարում է նաև արիական օրենքների պահպան: Ի տարբերություն հնդարիների և

իրանցիների, բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում մնացած ու կազմավորված հայ ազգը կարիք չի ունեցել անընդհատ հիշելու կամ հպարտանալու դրանով: Դա հայոց իրականությունն էր, հայը ապրում էր իր հայրենիքում՝ Հայաստանում:

Հայ պատմիչները իրենց աշխատություններում օգտագործում են արի բառը և՛ քաջ իմաստով, և՛ արի ցեղին պատկանելու իմաստով: Այսպես. Ագաթանգեղոսը օգտագործել է "Արին Արամագո", Մ. Խորենացին՝ "արի արքա Արտաշես" արտահայտությունները, որոնք արի ցեղին պատկանելու իմաստն ունեն: Արի բառը քաջ իմաստով Մ. Խորենացին օգտագործել է "արիաբար", Հովհ. Ոսկեբերանը՝ "արիական", Նարեկացին՝ "արիանալ", Ղ. Փարպեցին՝ "արեացի", Եղիշեն՝ "անարի" (թուլասիրտ, թուլակամ իմաստով), Սեբեոսը (Անանուն)՝ "Հայկն արի", Հովհաննես Մանդակունին՝ "արանցի" (առնական), Հովհաննես Դրասխանակերտցին՝ "արիական քաջամասնություն" ձևով և այլն: Հետաքրքիր է նաև, որ ար (այր, էրիկ) և հայ (մեր հայր) բառերը հայոց մեջ օգտագործվում են տղամարդ, նաև ամուսին իմաստով: Հայերը հնում տղամարդուն դիմել են տիար (մեծ ԱԸ) ձևով, ի տարբերություն այսօրվա, երբ տղամարդուն դիմում են հիմնականում պարոն և միայն սակավ դեպքերում՝ տիար ձևով:

Վերևում նշվել է, որ արիական ցեղերի դիցաբանական, տնտեսական, կենցաղային և այլ կարգի հարաբերությունների ուսումնասիրության համար անփոխարինելի գրավոր աղբյուրներ են հնդկական վեդաները, իրանական "Ավեստան", հունական պոեմները, դիցաբանական գրույցները և այլն: Մեծ ընդհանրություններ կան այդ գրավոր հուշարձանների միջոցով պահպանված դիցաբանական գրույցների, ավանդությունների, կենցաղային, տնտեսական հարաբերությունների և հայոց մեջ պահպանված սերնդեսերունդ փոխանցված դիցաբանական գրույցների, ավանդությունների և սովորույթների միջև: Հաշվի առնելով այս հանգամանքը, անդրադառնանք Հայաստան-Հնդկաստան, Հայաստան-Իրան և Հայաստան-Հունաստան հնագույն պատմամշակութային կապերին:

1. ИДВ, I, стр. 74.

2. ИДВ, I, стр. 92: Երկիրը, որտեղից իրենց նախնիները հայտնվել են Ստորին Միջագետքում, շումերները անվանում են Դիլմուն (աքադացիները՝ Թիլմուն): Ուսումնասիրողները այս երկիրը տեղադրում են Բախրեյն կղզիներում (Պարսից ծոց): Դիլմունը շումերների պատկերացումներում դրախտի ու անմահների երկիրն էր, ուր բնակություն են հաստատում աստվածների կամքով անմահություն ստացած Զիուսուդրան և Ուտնապիշտին: Դրախտի ու անմահների երկրից էր նաև ծագում ու մայր մտնում արևը (շումեր-աքադական առասպելաբանության մեջ արևը ծագում ու մայր էր մտնում Մաշու (Մասու) լեռներից): Վերոհիշյալ ու նաև մի շարք այլ պատճառներով (շումեր-աքադական դյուցազնավեպում դրախտի ու անմահների երկիր կարելի էր գնալ հաղթահարելով դեպի Արատտա տանող ճանապարհը) Դիլմուն երկիրը կարելի է տեղադրել Տիգրիսի ու Եփրատի ակունքների շրջանում՝ Հայկական լեռնաշխարհում: (Այս մասին տե՛ս նաև Ա. Մովսիսյան, 2000, էջ 24-27): Կարելի է մտածել նաև, որ այս առասպելները նոր հայրենիքի հետ կապելը կարող էր լինել նախահայրենիքից բերված ավանդությունների ու առասպելների տեղայնացում:

3. Կ. Կերամ, Աստվածներ, Դամբարաններ, Գիտնականներ, Երևան, 1971, էջ 315:

4. Ս. Սարգսյան, էջ 250:

5. Поэзия и проза древнего Востока, Москва, 1973, стр. 13. Афанасьева В., Гильгамеш и гора Бессмертного, ВДИ, 1969, 1.

6. ՀԱՊ, էջ 144:

7. И. Канева ВДИ, 1964, 4, стр. 208. Հիշենք նաև հունարեն *aia* բառը, որը "հող, երկիր" իմաստից բացի նաև "տուրք" իմաստն ունի (Древнегреческо-русский словарь, стр. 322):

8. Անգլիա անվան և նույնանուն ցեղի մասին հետաքրքիր ենթադրություն անելու հնարավորություն է տալիս Գ. Ղափանցյանի մի եզրակացությունը, որի համաձայն Հումերոսի "Իլիականում" հիշատակված արիմների երկիրը (բնակավայրը)՝ Արիմը հետագայի հայոց Անգեղ տուն (Angel tun, дом Ангела) գավառն է, և որ Անգղ - Angl բառը հայոց մեջ նախապես նշանակել է "բերդ", "ամրոց" (աքադերեն - ekallu, շումերերեն - egal, "պալատ", այնուհետև "ամրոց", ուրարտերեն- EGAL "ամրոց") (թ. ԽՈՒՈՒՎՓՅՎ, 1948, թՅԲ. 1992): Անգեղ տուն գավառը Մեծ Հայքի Աղձնիք նահանգի մի մասն էր: Կենտրոնն էր Անգղ բերդաքաղաքը: Հայոց հնագույն աստվածներից մեկն էր Անգղը, որի անունը տոտեմական (թռչուն) ծագում ունի (ՀԺՊ, 1971, էջ 484): Հավանաբար Անգեղ տուն գավառը իր անունը ստացել է Անգղ աստծո անունից, որի պաշտամունքը տարածված է եղել այստեղ: Անգեղ տուն գավառում է գտնվել նաև Տորք դյուցազնի գլխավոր սրբատեղին: Այդտեղից էլ՝ Տորք Անգեղ անվանումը (Տորք Անգեղեա-Անգեղի Տորք): "Անգեղ տուն" (Angel tun, дом Ангела) անունը հետաքրքիր ենթադրության տեղիք է տալիս:

Արդյոք կապ չունենան Անգեղ-Անգել անունները Անգլիա անվան հետ: Հիշենք, որ 1-դ անցումների բազմաթիվ օրինակներ կան հնդեվրոպական լեզուներում. Ալեքսանդր-Ադելսանդր, ալփարետ-ադփարետ, Ալշե, Ալզի-Ադձնիք, Ալիշտու (քաղաք)- Ադստև (ավան, այժմ գետ), Հալիս-Ալիս (գետ, աղի իմաստով), Ալբանիա-Ադվանք և այլն: Հիշենք, որ հնում հայերը Անգլիա անունը գրել ու արտասանել են նաև Անգլիա ձևով:

9. И. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 122.

10. E. A. Quitzmann, Die älteste Geschichte der Baiern bis zum Jahre 911, Braunschweig 1873, s. 76: ՀԱ, 1987, էջ 926:

11. M. Rodiger, Deutsche chroniken, 1, Band, Hannover, 1895, s. 121-122: ՀԱ, 1987, էջ 926, (հայերեն թարգմանությունը Ա. Կարապետյանի):

12. Hans Ferd. Massmann, Der Keiser und der kunige buoch oder die sogenannte Kaiserchronik, Quedlinburg und Leipzig, 1849, s. 25-28: ՀԱ, 1987, էջ 928:

13. Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 275:

14. Բիլինաներ, Երևան, 1970, էջ 24, (թարգմ. Հ. Դավթյան):

15. Պիրենեյան թերակղզու (Իսպանիա, Պորտուգալիա) ժողովուրդների պատմության մեջ հայկական տարրի գործուն մասնակցության մասին տե՛ս Ռ. Կյուլպենկյան, "Հայ-պորտուգալական հարաբերություններ" աշխատությունը, Երևան, 1986:

16. Բասկ-հայկական լեզվական ընդհանրությունների և պատմամշակութային կապերի ուսումնասիրությամբ զբաղվել է անվանի հայագետ Ն. Մառը (Ն. Մառ, Հայկական մշակույթը..., Երևան, 1989):

17. Վ. Սարգսյան, Բասկերի հայկական ծագման վարկածը ըստ բասկ-իսպանական աղբյուրների (հոդված) "Գարուն" ամսագիր, 1991, 3:

18. В. Олькотт, Легенды звездного мира, Петербург, 1914, стр. 14.

19. Ա. Խաչատրյան, էջ 162:

Հայաստան – Հնդկաստան

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին արևմուտքից Հնդկաստան են թափանցում ցեղեր, որոնք իրենց անվանում էին ari-ներ, arya-ներ, նաև ayu-ներ և (h)aya-ներ¹: Նրանք օգտագործում էին ձիեր, մարտակառքեր և զինված էին մետաղե զենքերով: Արիական այս ցեղերը նախ հաստատվում են Հնդկաստանի հյուսիսային, ապա՝ կենտրոնական ու հարավային մասերում: Սակայն հեշտ չի եղել Հնդկաստանում հաստատվելն ու ամրապնդվելը: Այդ ժամանակ Հնդկաստանում ապրում էին թխամորթ ցեղեր, որոնց հետնորդները կոչվում են դրավիդներ ու այսօր էլ ապրում են Հնդկաստանի միջին ու հարավային մասերում: Հնդկաստանում ամրապնդվելու ժամանակ արիական ցեղերը հաճախ պայքարի մեջ էին մտնում ոչ միայն թխամորթ այդ ցեղերի, այլև հզոր բնական ուժերի դեմ: Բարձր լեռնագագաթները, անանցանելի անտառները, հեղեղները, երբեմն շատ չոր, հեղձուցիչ կլիման, նաև վայրի գազանները մեծապես խոչընդոտում էին արիական ցեղերի արագ տարածմանը դեպի հարավ: Բայց հաղթահարվում են բոլոր դժվարությունները և մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբին հնդարիները ստեղծում են առաջին պետական կազմավորումները, որոնցից աչքի են ընկնում Մագաթհան և Կոշալան:

Հնդկաստանի պատմության այս շրջանը, երբ արիները փորձում էին թափանցել երկրի խորքերը, արտացոլվել է հնագույն հնդկական գրականության մեջ: Դրանք կրոնական (վեդաներ), օրենսդրական ("Մանուի օրենքները") ժողովածուներ են, դիցաբանական պոեմներ ("Ռամայանա", "Մահաբհարաթա")²:

Հնդկաստան թափանցած արիական ցեղերը ունեցել են դիցաբանական ու կրոնական կայուն պատկերացումներ՝ իրենց ծիսակատարություններով ու արարողություններով: Հնդարիները վաղ են ունեցել իրենց գիրը՝ սանսկրիտը, որը երբեք չի մոռացվել: Նրանք իրենց պատկերացումները տիեզերքի, բնության, աստվածների ու մարդկանց մասին գրի են առել մ.թ.ա. 10-րդ դարում, բայց անկասկած դրանք ստեղծվել են շատ ավելի վաղ:

Մ.թ.ա. 2--1-ին հազարամյակների կեսերն ընկած ժամանակաշրջանում Հնդկաստանում ստեղծված գրականությունը կոչվում է վեդայական, քանի որ դրանց հիմքը վեդաներն են: Վեդաները բաժանվում են չորս խմբի. սահմիթներ, բրահմաներ, արանյակներ, ուպանիշադներ: Ամենամեծ խումբը սահմիթներն են, որոնք իրենց հերթին դարձյալ բաժանվում են չորս խմբի՝ Ռիգվեդա (հիմների վեդա), Սամավեդա (երգերի վեդա), Յաջուրվեդա (գոհաբերությունների վեդա), Աթհարվավեդա (կախարհամքների, մոգությունների վեդա): Վեդա բառացի նշանակում է գիտելիք, իմացություն (ռուսերեն՝ ԶպՊՈՑՖ, հայերեն՝ գետ-ամենագետ, հնագետ): Վեդաներից ամենամեծը և ամենահինը "Ռիգվեդան" է, որը բաղկացած է 1028 հիմնից: Մյուս վեդաները հիմնականում "Ռիգվեդայի" կրկնություններն են: "Ռիգվեդայում"³, որը ստեղծվել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, հավաքված են հիմներ նվիրված արիական հնագույն աստվածներ Ինդրային, Ագնիին, Վարունային, Սոմային, Սուրիային և ուրիշների, որոնց պաշտամունքը բերել էին նախահայրենիքից: Հիշենք, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսին կազմավորված Խուրրի-Միտանի երկրի բնակիչները պաշտում էին Indara, Uruwanass(il), Mitras(il), Nasatia և այլ աստվածներին, որոնց անունները վկայված են խեթական պետության Խաթուսաս մայրաքաղաքից (այժմ Անկարայի մոտ, Բողազքոյ բնակավայրը) հայտնաբերված խուրրիների և խեթերի միջև կնքված դաշնագրի տեքստում:

Վեդայական է կոչվում ոչ միայն այդ ժամանակաշրջանում ստեղծված հնդկական գրականությունը, այլև Հնդկաստանի պատմությունը: Մա այն ժամանակաշրջանն էր, երբ արիները հաստատվել էին Հնդկաստանում, հիմնականում Ինդոս գետի ափերին, ապրում էին նախկին պարզ, նահապետական կյանքով ու դեռ չէին բաժանվել կաստաների:

Հնդարիները օժտված էին վառ երևակայությամբ ու մտածողությամբ: Վեդայական շրջանում, ըստ "Ռիգվեդայի" երկնքի թագավորը ահեղ ու հզոր Ինդրան էր՝ տիեզերքի արարիչը, նաև կայծակի ու ամպրոպի աստվածը: Ինդրայի հերոսությունը չար ուժերը մարմնավորող դև-վիշապ Վրթրայի դեմ տարած հաղթանակն է, որը փակել էր երկնքում գտնվող ջրերի ակունքը:

Հնդարիների գլխավոր աստվածներից էր նաև Ագնին (կրակ, հուր), որը մարդու պաշտպանն ու հովանավորն էր, աստվածների ու կյանքի արարիչը: Ագնին շարժվող ուժ է, կրակ: Նա ամեն տեղ է, երկրի խորքում, արևի ճառագայթներում, մարդկանց մեջ և ամենուր: Հիշենք, որ Հայկական

լեռնաշխարհում ևս կրակը պաշտամունքի առարկա էր, ու տաճարներում այն միշտ վառ էր պահվում: Այդպես էր նաև Իրանում, Հռոմում և այլուր: Հին հնդկական պանթեոնի գլխավոր աստվածներից էր Վարունան, որը երկնքի աստվածն էր, ջրերի տիրակալը: Նա կառավարում էր տիեզերքի կարգն ու ռիթմը, բարոյական օրենքները և զանազան հիվանդություններով պատժում նրանց, ովքեր խախտում էին այդ օրենքները: "Ռիգվեդայի" աստվածներից աչքի է ընկնում նաև արևի աստված Սուրիան⁴, որի ճառագայթները պատկերվում էին իբրև յոթ նծույզներ, որոնք տանում էին արևի կառքը: Սուրիան աստվածների ամենատես աչքն էր, պահում էր երկինքը ու կոչվում էր երկնքի սյուն: Նա պատկերվում էր ճախրող թռչունի կամ թռչող ոզնու տեսքով (փշերը արևի ճառագայթներն էին): Երկնքում Սուրիան շարժվում էր արագավազ ձիերի օգնությամբ: Ոսկեգոծ, լուսավոր ձիերը Սուրիայի, Պաշտելու արժանի - արագ, հրճվանքով Ելնում են երկնքի մակերեսի վրա՝ Մեկ օրում անցնելով երկինքն ու երկիրը⁵:

Չենք կարող չհիշել, որ Հայաստանում մեր նախնիների պատկերացմամբ ևս արևը երկնակամարում շարժվում էր հզոր ու արագավազ կենդանիների (առյուծ, ձի) օգնությամբ: Հունական դիցաբանության մեջ արևի աստված Հելիոսը երկնքում շարժվում էր ձիեր լծված կառքի միջոցով: Ջուսը ևս հանդես է գալիս կառքով ու ձիերով: Սուրիային նվիրված հիմնում հետաքրքիր է նաև հետևյալ հատվածը, ուր շատ գեղեցիկ նկարագրվում է, թե ինչպես է արեգակ Սուրիան ծագում ու լուսավորում երկինքն ու երկիրը: Բարձրացավ լուսավոր դեմքն աստվածների-աչքը Միթրայի, Վարունայի և Ագնիի Սուրիան՝ շարժվողի ու անշարժի ոզին, Ողողեց երկինքն ու հողը և տարածությունն օդային:

"Ռիգվեդայում" Սուրիան հանդես է գալիս որպես արևի արական աստվածություն, որը ձգտում է հասնել երկնային գեղեցկուհի Ուշասին: Ուշասը ունի նաև այլ անուն՝ Arushi - Արուշի (արշալույս): Ուշաս-Արուշին լույսի դիցուհին էր, երկնքի դուստրը, որը բոլորին կյանք և ուրախություն էր պարգևում: Վեդայական գրականությունը եզրափակում են "Ուպանիշադներ" կոչվող հիմները, որոնցից մեկը կոչվում է "Աշխարհն իբրև զոհաբերության ձի": Այս հիմնում ձիու իրանի տարբեր մասերը համեմատվում են տիեզերքի, երկնային լուսատուների և բնության այլնայլ երևույթների հետ: ՕՍ⁶ արշալույսի աստղը գլուխն է զոհաբերվող ձիու, Արևը՝ աչքը, քամին՝ շնչառությունը...

Ձին ամենաբարձրաթեք կենդանին էր արիների մոտ և զարմանալի չէ, որ հենց նրան էին զոհաբերում աստվածներին: Այս փաստը մեզ դարձյալ տեղափոխում է Հայկական լեռնաշխարհ, ուր, նույնպես ձի էին զոհաբերում աստվածներին: "Ռիգվեդայի" աստվածներից աչքի է ընկնում նաև Մոման, որը բույս է և որի հյութը աստվածային խմիչք էր աստվածների՝ հատկապես Բնդրայի համար: Այն հոգեկան և ֆիզիկական մեծ ուժ էր տալիս այդ աստծուն (իրանական "Ձենդ Ավեստայում" այդպիսի աստվածային խմիչք է Հոմա-սուրբ բույսը): Հայտնի են նաև Աշվինները՝ երկու եղբայրներ, որոնք արևի կառքով սլանում են երկնքով և զանազան բարիքներ պարգևում մարդկանց: Բնդրային հաճախ են օգնում քամիների ու կայծակի աստված Մարութները, որոնք անձրև են բերում մարդկանց (հիշենք, որ Մարութա անունով սար ու Մարութա վանք կա Սասունում): "Ռիգվեդայում" հիշատակվում են նաև Արյաման և Արանյա աստվածները: Արյամանը հաճախ է օգնում Վարունային և Միթրային: Արյամանն է կարգավորում մարդկանց սոցիալական, տնտեսական հարաբերությունները: Նա նաև ընտանեկան օջախի ու երջանիկ ամուսնության պաշտպանն ու պահապանն է⁷: Վիշնուն, որ հնդարիների գլխավոր աստվածներից էր և աշխարհի պահապանը, հինդուիզմի ժամանակ (մ.թ. 10-րդ դար) դառնում է նոր աստծո երեք սկզբունքներից մեկը (Բրահմա, Շիվա, Վիշնու): Ինչպես նախահայրենիքում՝ նոր հայրենիքում ևս հնդարիները բնությանն ու նրա ուժերին երկրպագելուց բացի երկրպագում էին նաև մեռած նախնիների հոգիներին: Մարդը չէր կարող ընդունել, որ կյանքը ժամանակավոր երևույթ է և մահից հետո ինքն անհետ կորչելու է: Նա մտածում է, որ կյանքը հավերժական է, և որ իր մահով ինքը չի ոչնչանում, որ իր հոգին տեղափոխվում է այլ կենդանի արարածի մեջ, երկար թափառումներից հետո դարձյալ գալիս, միավորվում է մարդկային մարմնին:

Չծնված, մշտական, հավերժ, սկզբնական,
Նա չի կործանվում, երբ կործանվում է մարմինը:
Եթե սպանողը կարծում է, թե սպանում է,
Եթե կործանվողը կարծում է, թե կործանվում է,
Երկուսն էլ մոլորվում են հավասարապես:
Մեծից մեծ և փոքրից փոքր,
Աթմանը* թաքնված է սրտի գաղտնարանում:

Մարդը մտածում էր, որ կրած տառապանքներն ու վշտերը իր նախորդ կյանքի անկատարության հետևանքն են և որ իմացությամբ, առաքինի վարքով ու գործերով իր համար կարող է ապագա լավ կյանք ապահովել: Կյանքն ու մահը անվերջ կրկնվում են մարդու (հոգու) մեջ: Իր ապրած կյանքերից յուրաքանչյուրում մարդն ունենում է անցյալի փորձը (Կարմայի օրենքը) և այլն: Ինչպես տեսնում ենք, արիները հավատում էին, որ հոգին անմահ է և մարդու մահից հետո այն կրկին ծնվում է՝ տեղափոխվելով այլ մարմնի մեջ:

Հաջորդ գրական հուշարձանը, որի շնորհիվ պատկերացում ենք կազմում արիական ցեղերի կենցաղի, ընտանեկան հարաբերությունների, հասարակական ու քաղաքական կյանքի մասին, "Մանուի օրենքները" օրենսդրական ժողովածուն է, որ ստեղծվել է մ.թ.ա. 3-րդ - մ.թ. 3-րդ դարեր ընկած ժամանակահատվածում: Սա այն ժամանակաշրջանն է, երբ արիները Ինդոսի արևելյան տարածվում են արևելք (Գանգեսի հովիտ) և դեպի հարավ: Այս ժամանակաշրջանը կոչվում է "Բրահմանական" պատմական շրջան:

Երբ արիական ցեղերը հայտնվեցին Հնդկաստանում և սկսեցին շփվել թխամաշկ դրավիդների հետ, հասկացան, որ հեշտությամբ կարող են խառնվել նրանց հետ և կորցնել իրենց մարդաբանական տիպը: Խառնվելու, ձուլվելու դեմն առնելու համար սահմանվեցին խիստ օրենքներ, որոնք ամփոփվեցին "Մանուի օրենքները" ժողովածուի մեջ:

"Մանուի օրենքների" համաձայն հասարակությունը բաժանվում էր չորս կաստաների⁹

(դասակարգեր). բրահմաներ (քրմեր), քշատրիներ (զինվորականներ), վայշիներ (արհեստավորներ, վաճառականներ, երկրագործներ) և շուդրաներ (ստրուկներ):

Բարձրագույն դասը կազմում էին բրահմաները (բրահմա նշանակում է մաքուր), որոնք մեծ իշխանություն և իրավունքներ ունեին: Նրանք ծանոթ էին սուրբ գրքերին և մարդկանց ծանոթացնում ու քարոզում էին կրոն: Նրանց աղոթքը զորավոր էր համարվում: Նրանք թագավորի խորհրդականներն էին ու ապրում էին մյուս դասակարգերի հաշվին:

Հասարակությունը թշնամիներից պաշտպանելը քշատրիների սրբազան գործն էր: Նրանք պետք է լինեին քաջ, մեծահոգի և ունենային բարոյական բարձր հատկանիշներ: Դա զինվորական արիստոկրատիան էր, որ կոչվում էր mariani: Հնդարիները լավ զինվորներ էին, ունեին կազմակերպված ու վարժեցված բանակ, որը բաղկացած էր հետևակից, այրուձիից, մարտակառքերից ու փղերից: Մետաղե զենքերը, ձիերն ու մարտակառքերը հնդարիները իրենց հետ բերել էին նախահայրենիքից, իսկ Հնդկաստանում նրանց հաջողվեց ընտելացնել փղերին ու նրանց օգտագործել նաև ռազմական նպատակներով: Ավելի ուշ փղերին մարտի դաշտում սկսեցին օգտագործել նաև պարսիկները:

"Մանուի օրենքների" դասակարգմամբ հաջորդը վայշիների կաստան էր: Սա այն հիմնական դասակարգն էր, որը սնունդ էր հայթայթում հասարակության համար: Վերջին կաստան շուդրաներն էին՝ թխամորթ բնակիչները, որոնք պարտավոր էին ծառայել առաջին երեք կաստաներին: "Մանուի օրենքները" հատկապես խիստ էին շուդրաների հանդեպ: Շուդրան կուրորեն պետք է հպատակվեր բրահմային: Եթե նա խփեր մյուս երեք դասակարգերից որևէ անդամի, ապա կտրում էին նրա մարմնի այն մասը, որով խփել էր: Եթե ազնվական դասակարգից որևէ մեկը շփվեր շուդրայի հետ (հաց ուտեր, նստեր նույն նստարանին, սուրբ գիրք կարդար), ապա ինքը ևս դառնում էր շուդրա:

Առաջին երեք կաստաների անդամների համար հետաքրքիր արարողություններ ու ծեսեր էին նախատեսված: Երբ հասարակության անդամները հասնում էին պատանեկան տարիքի, կատարվում էին հատուկ կրոնական արարողություններ, որից հետո նրանք ընդունվում էին համապատասխան կաստայի մեջ: Դա համարվում էր նրանց երկրորդ ծնունդը և արարողությունից հետո նրանք կոչվում էին "դվիջատի-արիա", որը նշանակում էր կրկնակի ծնված արիներ: Այդ արարողության ժամանակ նորընծա անդամի ձախ ուսից կրծքի վրայով սուրբ նարոտ (ժապավեն) էին կապում: Բրահմաների նարոտը բամբակի թելից էր գործվում, քշատրիներինը՝ կանեփից, վայշիներինը՝ բրդից: Շուդրաները

նարոտ չունենին: Մի կաստայից մյուսին անցնելը, ինչպես նաև ամուսնությունները տարբեր կաստաների անդամների միջև խստիվ արգելված էին:

Հնդկաստանը աչքի է ընկնում մեկ այլ հետաքրքիր առանձնահատկությամբ ևս: Այստեղ առաջացել և կողք կողքի դարեր շարունակ հարատևել ու հարատևում են բազմաթիվ կրոններ: Այսպես. Հնդկաստանում արիական ցեղերի ամրապնդման ու պետական կազմավորումներ ստեղծելու ժամանակ տարածված էր բրահմանական կրոնը, որն այդ ժամանակ առաջադիմական կրոն էր և մեծապես օգնել է հնդարիներին պահպանելու իրենց կենցաղը, մշակույթը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները և այլն: Մակայն ավելի ուշ, իր քարացած կաստայական սիստեմով այն սկսում է խանգարել հասարակության առաջընթացին, ու նոր կրոնի առաջացման անհրաժեշտություն է առաջանում: Որպես այդպիսին հանդես է գալիս բուդդիզմը, որը փաստորեն գաղափարական բողոք էր հին կրոնի դեմ: Բուդդիզմը ծագել է մ.թ.ա. 6-րդ դարում, իսկ լայն տարածում է ստացել մ.թ.ա. 3-րդ դարից: Մակայն այս կրոնին ևս վիճակված չէր միակը լինել: Մ.թ. 10-րդ դարում Հնդկաստանում առաջ է գալիս նոր կրոն՝ հինդուիզմը, որն իր մեջ է առնում հնդիկ ժողովրդի մինչ այդ ստեղծած գրական ողջ ժառանգությունը՝ "Վեդաները", "Ռամայանա", "Մահաբհարաթա" պոեմները և այլն: Հինդուիզմը եռամիասնական աստվածություն է մեկ աստծո մեջ: Այս աստվածը, որ հայտնի է տրիմուրտի (եռյակ) անունով, երեք կերպ ունի՝ Բրահմա (արարչություն), Վիշնու (պահապան), Շիվա (կործանող): Ժողովրդի մեջ ավելի շատ տարածվեց Վիշնու և Շիվա աստվածների պաշտամունքը: Վիշնուն երկրի ու լույսի աստվածն էր, որը կանոնավորում էր տարվա եղանակները և հովանավորում երկրագործությունը: Շիվան, որ սանսկրիտ նշանակում է "բարեհաճ, գթասիրտ", անձնավորել է պտղաբերությունը, ինչպես նաև բնության ավերիչ, պատժիչ ու կործանարար ուժերը: Քանի որ Շիվան քանդող, կործանարար բնույթ է ունեցել, ապա մարդիկ երկրպագել, գոհեր են մատուցել, որպեսզի նա չզայրանա և չպատժի իրենց: Շիվան պատկերվել է տղամարդու տեսքով, իսկ ավելի հաճախ՝ արևի սկավառակի մեջ՝ սրբազան պար պարելիս: Համեմատության համար հիշենք, որ Վանի թագավորության դիցարանում կար Շիվինի աստված, որը արեգակի և արդարության աստվածն էր: Պահպանված որմնանկարներում Շիվինին պատկերված է գնդին ծնկած, ձեռքերը վեր պարզած տղամարդու տեսքով, իսկ գլխավերևում պատկերված է արևի սկավառակ:

Հնդարիները աստվածներին մարդկային հատկանիշներ են վերագրել: Յուրաքանչյուր աստծո համար առանձնացվել է հատուկ ծառայող, որը հոգ է տարել այդ աստծուն, ինչպես կենդանի մարդու: Առավոտյան նրան արթնացրել է, լվացել, անգամ երգ ու պարով զվարճացրել, այդպես էր նաև Հայաստանում: Համեմատության համար նշենք, որ Արդինի-Մուսասիրում գտնվող Խալդ աստծուն նվիրված տաճարում դրված է եղել նրա մահճակալը, հագուստը և այլ պիտույքներ: Նրան նվիրաբերել են նաև գինի, միս ու հաց¹⁰: Իսկ Մ. Խորենացու վկայությամբ Հայաստանում Վահագն աստծուն նվիրված Վահունիք քրմական տոհմ է գոյություն ունեցել, որի անդամները պարտավոր էին ծառայել այդ աստծուն նրան նվիրված տաճարներում: Նշենք նաև, որ բրահմաններն ու բուդդայականները գիտեին ու օգտագործում էին արևի խորհրդանշաններից մեկը՝ սվաստիկան: Արևմտյան Հնդկաստանի բուդդայականների քարանձավների վեմերի վրայի արձանագրությունները սկսվում կամ ավարտվում են սվաստիկայի պատկերով: Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ "Ռիգվեդայում" (նաև մյուս վեդաներում) ու "Մահաբհարաթայում" Հնդկաստանում հայտնված ցեղերը վկայվում են ոչ միայն ari, arya, այլև ayu, (h)aya, hayhaya ցեղանուններով, որոնք իրենց ar և hay արմատներով կապվում են Հայկական լեռնաշխարհի և հայ-արմենների հետ: Կարծում ենք, հետաքրքիր են նաև հետևյալ փաստերը: Այսպես. Հնդկաստանում միայն արքայական տոհմի անդամները իրավունք ունենին հագնելու ծիրանագույն զգեստ¹¹: Հիշենք, որ Հայաստանում ևս միայն արքան իրավունք ուներ հագնելու ծիրանագույն հագուստ, իսկ հայոց արքայի թիկնոցը կոչվում էր ծիրանի: Հետագայում բուդդայականները ևս հագնում են դեղին հագուստ: Հետաքրքիր է նաև հույն պատմիչ Քսենոփոնի վկայությունը: Նա գրում է, պարսից Կյուրոս թագավորը (558-550) հայոց թագավորից ուղեկիցներ ու միջոցներ է պահանջել, որպեսզի իր դեսպանին ուղեկցեն Հնդկաստան և միջնորդեն, որ հնդիկ թագավորը "մեծաքանակ" դրամ տրամադրի իրեն ռազմական ծախսերի համար¹²: Կյուրոսը համոզված էր, որ հայերն այդ գործի մեջ ամենից ընդունակն են և կարող են թե՛ աջակցել, և թե՛ Կյուրոսի մասին ասել այն, ինչ պատշաճ էր և որ նրանց օգնությամբ ինքն անպայման դրամ կստանա հնդիկ թագավորից: Ամենայն հավանականությամբ Կյուրոսը տեղյակ է եղել, որ Հնդկաստանի թագավորն ու հնդիկները բարյացակամ վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ: Պարզվում է նաև, որ հարյուրամյակներ շարունակ այդ վերաբերմունքը հայերի նկատմամբ չի փոխվել և 18-րդ դարում, երբ անգլիացիները փորձում էին թափանցել Հնդկաստան՝ որպես ուղեկիցներ և միջնորդներ իրենց հետ վերցնում էին հայերին¹³, լավ իմանալով, որ հնդիկները վստահում են հայերին և լավ են տրամադրված նրանց նկատմամբ:

Ինչպես տեսնում ենք, Քսենոփոնից հետո անցած ավելի քան 2000 տարվա ընթացքում հնդիկների վերաբերմունքը հայերի նկատմամբ չի փոխվել: Այս փաստը կարծում ենք ոչ միայն միջին դարերից Հնդկաստանում հաստատված հայերի օրինակելի գործերի, վարք ու բարքերի հետևանքն է, այլև սերնդեսերունդ ժառանգված ինչ-որ հեռավոր հիշողություն նախահայրենիքի և այնտեղ մնացած ցեղակիցների մասին:

Այսպիսով, հնդարիների գրական ողջ ժառանգությունը, դիցաբանական, կրոնական պատկերացումները տիեզերքի, բնության, աստվածների ու մարդկանց մասին հուշում են, որ նրանց հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է՝ Հայաստանը:

1. Ригведа, Москва, 1972, I, 31, 10. I, 130, 6. II, 20, 24. III, 59, 5. Литература древнего Востока, 1984, Махабхарата (63, 65), стр. 58, 318.
2. Հնդկաստանի հյուսիս-արևելքում՝ Ինդոս գետի հովտում, Մոհենջո դարո (Մահվան բլուր) կոչվող վայրում, իսկ ավելի ուշ նաև Հարապպա, Չանխո դարո, Ջուխուկար բնակավայրերում հայտնաբերվել ու պեղվել է հնագույն մի մշակույթ (Հարապպայի մշակույթ), որը թվագրվում է մ.թ.ա. 17--16-րդ դարերով: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ուղղանկյուն կնիքներ, որոնք ձևով ու իրենց վրա փորագրված արձանագրություններով (գրեր) նման են Շումերում գտնված կնիքներին: Այս գրերը կարդալու բազմաթիվ փորձերը դեռևս ոչ մի արդյունք չեն տվել: Ուսումնասիրողներից Հրոզնին ու Լոուկոտան առաջարկում են դրանք կարդալ իսթակյան նշանագրերի օգնությամբ, իսկ պրոֆեսոր Աշ. Աբրահամյանը գտնում է, որ "գարմանալիորեն հայկական նշանագրերը նման են Մոհենջո դարոյի գրություններին" (Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 235): Ենթադրվում է, որ Հարապպայի մշակույթը (բացառելով առանձին դեպքեր) կապ ունի արիների հետ (հ. ԺՌՍՔՌՑ, էջ 373): Նշենք նաև, որ տեսակետներից մեկի համաձայն Ինդոսի հովտի մշակույթը ոչնչացվել է արիների կողմից: Մակայն կատարված նոր պեղումները և ուսումնասիրությունները կասկածելի են դարձնում այս կարծիքը: Մի շարք բնակավայրերում (Պրատխա Պատառ, Կատխիավար) եկվոր մշակույթի հետքեր չկան, սակայն զգացվում է մշակույթի որակական փոփոխություն (Հարապպայի մշակույթը իր տեղը զիջում է այլ որակի մշակույթի): Այս մասին տես նաև С. Дикшит §Введение в археологию՝ աշխատության առաջաբանը, էջ 23 (թարգմանիչ հեղինակներ Գ. Բոնգարդ-Լեին և Ն. Մարպերտ):
3. Հայերեն երգ բառի հոմանիշներն են. սանսկրիտ arka-երգ, և r`k բառերը (Հ. Աճառյան, 1973, էջ 42): Ինչպես տեսնում ենք հայոց երգ-երգ և սանսկրիտ arka բառերը հարազատություն են ցուցաբերում, իսկ "Ռիզվեդան" կարելի է հասկանալ "երգերի գիրք" իմաստով:
4. Հայտնի է, որ կասսիտական Բարեյունում (մ.թ.ա. 17-րդ դար) Արևի Աստվածը կոչվում էր Surijaas: Ենթադրվում է, որ կասսիտները խուրրիներից են փոխ առել Suria աստծո պաշտամունքը: Կարելի է մտածել նաև, որ Մուրիա անվան մեջ առկա է Ար-Ուր-Սուր անցումը:
5. Այս և հետագա բոլոր մեջբերումները "Հին Արևելքի Պոեզիա" գրքից են:
6. "ՕՄ" նշանակում է բարձրագույն բառ:
7. Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев, Москва, 1986, стр. 79.
8. Աթման նշանակում է "ես, հոգի":
9. "Կաստա" բառը պորտուգալական ծագում ունի և նշանակում է "ցեղային ծագման մաքրություն": Հնդկերեն կաստան կոչվում է "ջատի" (ծնյալներ) կամ "վարնա" (գույն):
10. АВИИУ, 49(112):
11. Բուդդիստիկ և իւր վարդապետութիւնը, էջ 46:
12. Քսենոփոն, Կյուրոպեդիա (Հ. Մանանդյան, Երևան, Ա, Երևան, 1977, էջ 398-399, գրքի հավելվածը):
13. Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա., Երևան, 1964, էջ 459, Р. Абрамян, Армянские источники XVIII века об Индии, Ереван, 1968, стр. 14.

Հայաստան - Իրան

Պատմական վկայությունները, փաստերն ու գրավոր աղբյուրները վկայում են, որ շատ վաղ ժամանակներից գոյություն են ունեցել պատմամշակութային սերտ կապեր Հայաստանի ու Իրանի միջև: Այդ հարաբերությունները պայմանավորված չէին միայն հարևաններ լինելու հանգամանքով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք շատ խոր արմատներ ունեն և որ անչափ շատ ընդհանրությունները հայերի ու իրանցիների միջև, որոնք արտահայտվում են լեզվական¹, մարդաբանական, կրոնադիցաբանական և այլ բնույթի հարցերում, միանգամայն օրինաչափ են: Գիտական աշխարհում ընդունված է, որ իրանական ցեղերը (մարեր կամ մեդեր, պարսիկներ, պարթևներ) Իրանում հայտնվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսին²: Փոքր տեղաշարժեր կատարելով իրանական ցեղերը հեռացել են հայրենիքից՝ իրենց հետ տանելով աստվածների պաշտամունքը, կենցաղը, սովորույթները և այլն: Հայրենիքից իրանական ցեղերը տարել են նաև արի ինքնանվանումը: Իրան անունը ("Ավեստայում"³ Արիանա) անկասկած կապ ունի Հայկական լեռնաշխարհի հնագույն ԱՐ Աստծո անվան հետ (Ար-Իր հնչյունափոխություն):

Արիական ցեղերը թափանցելով Իրան, նախ բնակվել են երկրի հյուսիսային ու հարավարևմտյան մասերում³, ապա յուրացնելով այլ տարածքներ, աստիճանաբար տարածվել են դեպի Միջին Ասիայի հարավային մասեր՝ Ֆերգանա, Խորեզմ, Աֆղանստան ու Հնդկաստան:

Իրանի տարածքում վաղ ժամանակներում գոյություն են ունեցել Էլամ և Մանա պետական կազմավորումները, որոնք վաղ ստրկատիրական զարգացած պետություններ էին:

Էլամ (նաև Ելամ, ինքնանվանումը Հաթամթի) պետությունը կազմավորվել է Իրանի հարավ-արևմտյան մասում մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Էլամցիները մուգ մաշկ են ունեցել, որի պատճառով հույն պատմիչները նրանց անվանել են եթովպացիներ: Էլամցիների հետնորդներին այսօր էլ կարելի է հանդիպել Իրանի արևելքում, իսկ ուսումնասիրողները գտնում են, որ սրանք ցեղակից են Հնդկաստանի դրավիդներին:

Մանա պետությունը (ուրարտական սեպագրերում Kur Mana, արադական աղբյուրներում՝ Mat Manna, էլամերենում՝ Har Minia, հին պարսկերենում՝ Ar Mina, Ar Minia, ասուրերենում՝ Ar Meni, եբրայերենում՝ Minni) կազմավորվել է մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերում, Կասպուտան (Ուրմիա) լճի ավազանում: Ուսումնասիրողները գտնում են, որ մանացիները հայկական ցեղեր էին:

Մ.թ.ա. 7-րդ դարի սկզբներին Իրանի հյուսիսարևմտյան մասում, որն արդեն բնակեցված էր հիմնականում իրանական ցեղերով կազմավորվում է Մարաստան (Մեդիա) պետությունը, որը կարճ ժամանակամիջոցում դառնում է Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը:

Իրանական ցեղերի տնտեսության, կենցաղի ու հավատալիքների մասին տեղեկություններ է տալիս մ.թ.ա. 7-րդ դարում գրի առնված գրադաշտական կրոնի "սուրբ" գիրքը "Ավեստան" (հիմունքներ):

"Ավեստայի" հնագույն տարբերակը ոչնչացել է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ: Մասանյանների ժամանակ (3--7-րդ դդ.) բանավոր ավանդությունների հիման վրա պահլավերենով (միջին պարսկերեն) գրի է առնվել "Ավեստայի" տեքստը և մեկնությունը Ջենդը: Այդ պատճառով "Ավեստան" կոչվում է նաև "Ջենդ Ավեստա": "Ջենդ Ավեստան" արժեքավոր տեղեկություններ է տալիս արիական ցեղերի հնագույն Արդվի-Սուրա-Անահիտա, Վահագն, Միհր, Տիր և այլ աստվածների մասին, որոնք մերժվել էին գրադաշտական կրոնի հիմնադիր Ջրադաշտի կողմից: Ջրադաշտը մերժել էր նաև ադոթքը, զոհաբերությունը և իրանական ցեղերի այլ վաղ սովորույթներ: Այս փաստը խոսում է այն մասին, որ այս աստվածների հայրենիքը արիական ցեղերի հայրենիքն էր, և որ այդ աստվածների պաշտամունքը անգամ Մասանյանների ժամանակ դեռ գորեղ էր իրանական ցեղերի գիտակցության մեջ: "Ավեստան" իր տեղեկություններով հնդկական վեդաների նման համընդհանուր հետաքրքրություն է ներկայացնում արիական բոլոր ցեղերի համար: Ըստ "Ավեստայի" իրանական ցեղային համայնքները բաժանվում էին երեք ժառանգական խմբերի՝ քրմեր, զինվորներ, համայնքի անդամներ: Ավելի ուշ ձևավորվել է 4-րդ խումբը՝ կախյալներ:

Զինվորների խումբը (հնդկական վեդաներում mariani - "երիտասարդ հեծյալ") ամենաարտոնյալն էր: Այս խումբն էր տալիս առաջնորդներ ու թագավորներ, որոնք մեծ իշխանություն ունեին: Զինվորները ազատված էին արտադրական աշխատանքներից և քրմերի հետ ունեին եկամտի այլ աղբյուրներ. կրոնական ու իրավական ավանդույթների պահապաններ էին, խորհրդատուներ, պատանիների դաստիարակներ առաջին երեք սոցիալական խմբերի համար և այլն:

Երրորդ խումբը հողագործներն էին: Այս խումբը առաջին երկու խմբերի հետ մասնակցում էր համայնքի պաշտամունքային ծեսերին, իսկ տնտեսապես ինքնուրույն էր: Չորրորդ խմբի անդամները

անիրավահավասար վիճակում էին, նրանք աշխատում էին մյուսների համար (արհեստավորներ, ծառաներ): Արհեստագործությունը համարվում էր անպատվաբեր, եթե վարձ էր վճարվում: Կային նաև ստրուկներ, որոնք իջեցված էին անասունների վիճակի: Տարածված էր "Ունեմ անասուն և մարդիկ" արտահայտությունը:

Հայտնի է, որ իրանական, նաև արիական բոլոր ցեղերի համար սրբազան տարրեր են համարվել կրակը, հողը և ջուրը: "Ավեստան" պատվիրում էր չպղծել բնության այդ սրբազան տարրերը:

Զրադաշտության հիմնական արարողությունը կրակի պաշտամունքն էր, որը հին սովորույթ էր:

Կրակի պաշտամունքը Իրանում բարձրացված էր այն աստիճանի, որ, ինչպես արդեն նշվել է, արգելվում էր կրակի մեջ անմաքուր իր, առարկա գցելը: Իսկ կրակին մոտենալիս քիթն ու բերանը ծածկում էին շորով, որպեսզի շնչառությունը չդիպչի ու չպղծի կրակը:

Հողի նկատմամբ ևս եղել է հատուկ պաշտամունք: Այսպես, որպեսզի չպղծեն սրբազան այդ տարրը՝ հողը, իրանցիները արիական սովորույթի համաձայն իրենց հանգուցյալներին այրել են (այդ սովորույթը պահպանվել է հնդիկների մոտ) կամ գազանների ու թռչունների հոշոտմանը տվել դիակը և ոսկորները (կմախքը) թաղել, որպեսզի հողը զերծ մնա դիակի փտող ազդեցությունից: Նշենք, որ Հայաստանում կմախքի թաղումով դամբարան է հայտնաբերվել Թալինում, որը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջերով:

Իրանցիները սկզբում իրենց աստվածների համար արձաններ ու տաճարներ չեն կառուցել: Այդ մասին վկայություն ունի հույն պատմիչ Հերոդոտը (մ.թ.ա. 5-րդ դար): Նա գրում է, որ պարսիկները

սովորություն չունեն աստվածներին արձաններ, տաճարներ և զոհարաններ կառուցել: Սովորաբար

նրանք Ձևսին (Ահուրամազդ) գոհեր են մատուցում, բարձրացնելով (գոհին) ամենաբարձր լեռները⁴:

Զրադաշտական կրոնի սրբազան առարկան ստրուշանն էր, որտեղ միշտ վառ էին պահում կրակը:

Ավելի ուշ իրանցիները կառուցել են բարձր աշտարակներ, որոնց վերին մասում տեղավորել են

ստրուշանը: Կրոնական ծիսակատարությունները կատարվել են մոզերի կողմից: Հետաքրքիր է, որ

յուրաքանչյուր իրանցի կարող էր դառնալ մոզ, եթե ապրում էր առաքինի կյանքով և լավ

ուսումնասիրել էր "Ավեստան": Չկար մոզերի առանձին կաստա, ինչպես Հնդկաստանում էր:

"Ավեստան" կազմված է մի քանի մասերից, որոնցից առաջինը կոչվում է "Յասնա" (պաշտել, երկրպագել):

Այս բաժնում ներկայացված են Զրադաշտի քարոզներն ու բանաստեղծությունները,

որոնք կոչվում են գաթհաներ (երգեր): Ըստ Զրադաշտի տիեզերքում անընդհատ պայքար է մղվում չար

ու բարի ուժերի միջև (դրանք նաև լույսն ու խավարն են): Տիեզերքի վերին մասերում, լույսի մեջ

ապրում է Բարի ոգին կամ Սուրբ ոգին (Սփանթա-Մանյու), որը հովանավորվում է Ահուրա-Մազդայի

կողմից, իսկ տիեզերքի ստորին՝ խավար մասում ապրում է Չար ոգին (Անգրա Մանյու), որն ավելի ուշ

կոչվել է Ահրիման: Անհատի փրկությունը Զրադաշտը համարում էր "Մոզական խոսքը", որն իր մեջ

ընդգրկում է և՛ Միտքը, և՛ Գործը:

Ի տարբերություն զրադաշտականության հայոց հեթանոսական կրոնում չեն եղել իրար հակադրվող բարի ու չար աստվածներ:

Հայոց հեթանոսական աստվածները բարի են և նրանցից յուրաքանչյուրն ունեւր հասարակական հարաբերությունները կանոնավորող իր խորհուրդը: Մինչդեռ զրադաշտական

կրոնում հանդես են գալիս երկակի աստվածներ: Եթե կա բարի աստված՝ Լույս (Ահուրա-Մազդա), կա նաև չար աստված՝ Խավար (Ահրիման):

Չարը հայոց դիցարանում չի բացարձակացվել և չի առանձնացվել: Հայոց աստվածները մեկ բնույթ ունեն: Նրանք ամենահաղթ, ամենագոր աստվածներ են

լուսավոր բնույթով: Հայերն իրենց դիցարանի գերագույն աստիճանին՝ Լույսին (Բարուն) գուգակից չդարձրին խավարը՝ չարը⁵: Սրանով է հայոց հեթանոսական կրոնը տարբերվել զրադաշտությունից:

Չար և Բարի ուժերի պայքարը Զրադաշտի ու նրա հետևորդների կարծիքով ավարտվելու է Բարու հաղթանակով, երբ հայտնվի Բարի ոգու առաքյալը՝ մեսիան: Դրանից հետո երկրի վրա հաստատվելու է խաղաղություն:

Մեսիայի գալստյան գաղափարը մեզ արդեն ծանոթ է: Հիշենք հայոց դիցաբանական հերոս Արտավազդին և "Մասնա ծոեր" դյուցազնավեպի Փոքր Միերին, որոնցից առաջինը շղթայվել է Մասիս լեռանը, իսկ երկրորդը փակվել է Վանի մոտ գտնվող քարաժայռի՝ Ագռավաքարի մեջ, սակայն ժողովուրդը հավատում է, որ նրանք մի օր հայտնվելու և փրկելու են աշխարհը:

Այս առումով հետաքրքիր է 5-րդ դարի հայ պատմիչ Եզնիկ Կողբացու "Եղծ աղանդոց" աշխատությունը, որտեղ Կողբացին բանավիճելով հեթանոսական բոլոր կրոնների, այդ թվում զրադաշտության դեմ, ժխտում է դրանք և այդ բոլոր կրոնները համարում անընդունելի: Համառոտ

"Եղծ աղանդոցի" զրադաշտությանը նվիրված հատվածի բովանդակությունը հետևյալն է: Երբ գոյություն չունեին ոչ երկինքը, ոչ երկիրը, ոչ արարածները, կար Զրվան (Ժամանակ) անունով մեկը, որը հազար տարի գոհ մատուցեց, ցանկանալով ունենալ Որմիզդ (Ահուրամազդ) անունով որդի, որն

աստեղծի երկինքը, երկիրը ու բոլոր արարածներին: Օսկում են երկու որդի՝ Որմիզդն ու Արհմը (Ահրիման): Ահրիմանը խորամանկելով շուտ է ծնվում, իսկ Ջրվանը իմանալով, որ երկվորյակներ են ծնվելու, որոշել էր թագավոր դարձնել նրան, ով շուտ կծնվի: Եվ որպեսզի չորժի իր խոստումը Ջրվանը որոշում է թագավոր դարձնել Ահրիմանին 9000 տարով, իսկ հետո թագավորությունը պետք է անցնի Որմիզդին: Ինչպես տեսնում ենք դարձյալ սպասվում է մեսիայի՝ փրկիչի գալուստը: Դա Որմիզդն է, որը 9000 տարի հետո պետք է փոխարինի չար Ահրիմանին:

"Ավեստայի" երկրորդ մասը կոչվում է "Յաշտաներ" (զոհերի գիրք): Այստեղ հավաքված են զոհաբերության հետ կապված հիմներ՝ ուղղված տարբեր աստվածների: Երրորդ մասը կոչվում է "Վենդիդատ" (ընդդեմ դևերի): Այս բաժնում ներկայացված են մոգական տեքստեր և հմայություններ ուղղված դևերի ու չար ոգիների դեմ, որոնց դեմ պետք է պայքարի մարդը՝ զինված Ահուրա-Մազդայի պարզևած ճշմարտության կրակով:

Երբ ուսումնասիրում ենք երկու ժողովուրդների՝ հայերի ու իրանցիների հեթանոսական դիցարանը, նկատում ենք, որ դիցարանում զբաղեցրած իրենց դիրքով նույնանում են հայոց դիցարանի գլխավոր աստված Արամազդը իրանական դիցարանի գլխավոր աստված Ահուրամազդի (նաև Ահուրա-Մազդա, Հորմոզ, Որմիզդ), հայոց մայր աստվածուհի Անահիտը՝ իրանական Արդվի Սուրա Անահիտայի, հայոց արևի ու կրակի աստված Միհրը՝ իրանական Միթրայի, հայոց արևի, ռազմի, ամպրոպի ու կայծակի աստված Վահագնը՝ իրանական ամպրոպի ու կայծակի աստված Վերեթրանայի (Վրթրագնա), հայոց դպրության և արվեստի հովանավոր Տիրը՝ իրանական Տիրի հետ և այլն: Այժմ տեսնենք, թե համապատասխանաբար ինչ դիրքեր են զբաղեցրել այս աստվածները՝ հայկական և իրանական դիցարաններում: Այսպես. հայոց հեթանոսական դիցարանը գլխավորում էր "երկնքի ու երկրի արարիչ, բոլոր աստվածների հայր Մեծ և Արի Արամազդը": Ըստ "Ավեստայի" իրանցիների հնագույն աստվածը Ահուրամազդն էր, որը ստեղծել է երկինքը, երկիրը, բնությունը, բոլոր արարածներին և այն ամենը, ինչ զեղեցիկ է ու ճշմարիտ: Ահուրա-Մազդան (իմաստուն տեր) "Ավեստայի" գաթհաներում առնչվում է արևի հետ և շրջապատված է վեց "Անմահ սրբություններով"՝ օգնական բարի ոգիներով: Դրանք են. Վոհու-Մանա (կենդանու ոգի), Արտա (կրակ), Խշատրա (մետաղ), Արմաթի (հող), Խորվաթաթ (ջուր), Ամրթաթ (բուսականություն): Ահուրամազդի այս "արտահայտություններից" շատերը հիշեցնում են հայ-արիական ԱՐ Աստծո արևի, երկրագործության, մեռնող-հառնող բուսականության, ռազմի աստված լինելու հատկանիշները: Ահուրա-Մազդան նաև արարիչ աստված է: "Ավեստան" վկայում է, որ Դաիթի գետի ափին Ահուրա-Մազդան ստեղծել է առաջին երկիրը՝ արիների առասպելական հայրենիքը՝ Արյանա Վեջան, որտեղ իշխում էր բարությունը և որտեղից սկսվում էր բարին (ավելի ուշ միջին պարսկերենով՝ պահլավերենով գրի առնված տարբերակում հայրենիքը կոչվում է Էրինվեջ)⁶:

Ահուրամազդին նախն յաց սովորությամբ զոհեր են մատուցել բարձր լեռներում: Ահուրամազդը իրանցիների շատ սիրված աստվածն է եղել և պարսից արքաները իրենց բոլոր հաջողությունները կապել են նրա հետ: Այսպես. Բեհիսթունյան արձանագրության մեջ Դարեհ 1-ինը շեշտում է, որ ինքը իր հաջողությունները ձեռք է բերել Ահուրամազդի շնորհիվ ու նրա օգնությամբ: Ավելի ուշ պարսից այլ արքաներ Խոսրով II-ը (590-564 թթ.), Վահրամը (մ.թ. 7-րդ դարի 1-ին կես) և ուրիշներ հպարտությամբ նշում են, որ իրենք մեծ Ահուրամազդի ծնունդն են⁷:

Ինչպես տեսնում ենք և՛ հայոց Արամազդը, և՛ իրանական Ահուրամազդը համարվել են երկնքի ու երկրի, ինչպես նաև բոլոր աստվածների հայրը:

Ակնհայտ է Արամազդ և Ահուրամազդ աստվածների մեկ ընդհանուր հնդեվրոպական կրոնադիցաբանական ակունքից ծագելու պարագան: Նույն ակունքից է ծագել նաև հայոց Անահիտ և իրանական Արդվի Սուրա Անահիտա աստվածուհիների պաշտամունքը: Հնագույն այս աստվածուհիների պաշտամունքը աղերսներ ունի փոքրասիական Անունիտ և Անաթու Մայր աստվածուհիների պաշտամունքների հետ:

Հայոց դիցարանի սիրված աստվածուհին է Անահիտը: Նա պտղաբերության, արգասավորության և սիրո աստվածուհին է: Ագաթանգեղոսը շեշտելով Անահիտի մեծությունը, հմայքն ու կարողությունը գրում է. "Նա է բոլոր զգացությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը Մեծ Արի Արամազդի"⁸: Հավատում էին նաև, որ Անահիտ աստվածուհու շնորհիվ գոյություն ունի հայոց երկիրը: Ահա թե ինչպես է այդ մասին արտահայտվել հայոց Տրդատ 3-րդ թագավորը. "... նաև մեծ Անահիտին, որով ապրում է և կենդանություն ունի մեր Հայոց երկիրը"⁹: Անահիտ աստվածուհին մեծարվել է "ոսկեմայր", "Մեծ մայր", "ոսկեծին" և այլ անուններով, որը չենք տեսնում մյուս աստվածուհիների դեպքում: Հայաստանի տարբեր գավառներում Անահիտին նվիրված բազմաթիվ տաճարներ են եղել, ուր դրվել են նրա արձանները՝ հաճախ ոսկե: Ամենից նշանավորը Եկեղյաց

գավառի Երիզա ավանի տաճարն էր, որին նվիրաբերվել են նաև սպասավորներ և սպասուհիներ: Իրենց դուստրերին նույնիսկ մեծահարուստներն են մի քանի տարով նվիրել այդ տաճարին: Միրված աստվածուհի էր նաև Արդվի Սուրա Անահիտան, Իրանում: "Ձենդ Ավեստայի" բաժիններից մեկը ամբողջությամբ նվիրված է այս աստվածուհուն: Անահիտան, հայոց Անահիտի նման, Արամազդ-Ահուրամազդի ստեղծածն է (դուստրը):

Եվ ով Ջրադաշտ, ահա նա, Արդվի Սուրա Անահիտան,
Մազդայի՝ իր ստեղծողի մոտից մեզ մոտ է եկել:
Թվարկվում են նաև աստվածուհու պաշտոնները.

- Արտայի լույսով ողողված, տենչանք հորդողին
Արտայի լույսով ողողված, նախիրների հովանավորուհուն
Արտայի լույսով ողողված, տանուտեղի հովանավորուհուն,
Արտայի լույսով ողողված, ունեցվածքների հովանավորուհուն
Արտայի լույսով ողողված, երկրի հովանավորուհուն¹⁰:

Արդվի Սուրա Անահիտան նաև սիրո, պտղաբերության, մայրության աստվածուհին է եղել: Նրան զոհեր են մատուցել և երջանկություն ու հաջողություն հայցել բոլորը: Բարի մտադրությամբ իրեն դիմողներին անպայման հաջողություն է պարգևել աստվածուհին, իսկ հակառակ դեպքում՝ ոչ: Ի դեպ Արդվի Սուրա Անահիտային զոհեր են մատուցել աստվածների բնակատեղի Խարա (Հարա) սուրբ լեռան գագաթին.

Նրան զոհ մատուցեց Խոշյանգա Փարադատան
Խարայի գագաթին¹¹:

Հիշատակվող սրբազան լեռան Խարա անունը իր Խար (Հար-Ար) արմատով կապվում է Հայկական լեռնաշխարհի՝ հավանաբար սրբազան Արարատ լեռան անվան հետ: Ուշադրություն դարձնենք նաև Արդվի Սուրա Անահիտա անվան Սուրա բաղադրիչին. այն հիշեցնում է հնդկական վեդաների արևի աստված Սուրիային: Հիշենք, որ Սուրիան երկնքում շարժվում էր արագավազ ձիեր լծված կառքի օգնությամբ: Ձիեր լծված կառքի օգնությամբ էր տեղաշարժվում նաև Անահիտան:

Նա չորս ձիեր է լծել, միանման ճերմակ գույնի...
Կառքով Արդվի Սուրա Անահիտան է սլանում...

Բավարարվենք այսքանով: Ինչպես տեսնում ենք ակնհայտ են Արամազդ-Ահուրամազդ աստվածների և Անահիտ-Արդվի Սուրա Անահիտա աստվածուհիների նմանությունները ոչ միայն անունով, այլև հայկական ու իրանական դիցարաններում նրանց ունեցած բացառիկ դիրքով:

Ուշադրության արժանի է նաև անձնանունների մի շարք, որ հնում հավասարապես օգտագործել են և՛ հայերը, և՛ իրանցիները: Հիշատակենք դրանք. Արշակ, Արտաշես, Արտաշիր, Արտավան, Արշավիր, Արգամ, Արգավան, Արտավան, Արբակ, Արտավազդ, Արտեմ, Արտան..., Արիոբարզան, Վահրիճ, Վահրամ, Վահան, Միհրան, Միհրդատ, Միհրներսես, Միհրազատ, Միհրշապուհ, Միհրշատ, Մեհրուժան, Տիգրան, Տրդատ, Տիրիթ, Տիրան, Տիրատուր, Տիրիբազ...: Անկասկած է, որ այս անունները կապված են արիական ԱՐ, Վահագն, Միհր, Տիր աստվածների անունների հետ: Վերոհիշյալ անուններին ավելացնենք Ազատ, Բակուր, Բակկեն, Գուրգեն, Զոհրապ, Զոհրակ, Հրահատ, Խոսրով, Շահեն, Սուրեն, Սանատրուկ, Վասակ, Վաղարշ, Վաղարշակ, Վռամ, Ներսապ, Ներսես... անունները: Ինչպես տեսնում ենք անունները, որոնք դարերի ընթացքում շատ քիչ են փոփոխությունների ենթարկվում, հաճախ ավելին են ասում, քան այսօրվա իրականությունն է:

Այսպիսով, իրանական ցեղերի հնագույն գրավոր աղբյուրները՝ "Ավեստան", "Ձենդ Ավեստան", աստվածների պաշտամունքը, սովորույթները, անձնական անունները և այլ բնույթի ընդհանրություններ, որոնք սերտորեն առնչվում են Հայաստանի ու հայերի հետ, վկայում են, որ իրանական ցեղերի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն ու շրջակա տարածքներն են, իսկ հայ և իրանցի ժողովուրդները կապված են ազգակցական հնագույն կապերով:

1. Լեզվական նմանություններն այնքան ակնհայտ են, որ մինչև 19-րդ դարի վերջը հայերենը դասվում էր իրանական լեզուների շարքը: Միայն շատ մանրակրկիտ ուսումնասիրություններն են պարզել (Հ.

Հյուբլման, Հ. Պեդերսեն), որ հայոց լեզուն հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ ինքնուրույն ճյուղ է կազմում:

2. История Ирана, Москва, 1977, стр. 37.

3. Է. Գրանտովսկին, որ մանրամասն քննարկել է մ.թ.ա. 9--8-րդ դդ. ասորեստանյան գրավոր աղբյուրներում հիշատակված իրանական հնագույն անձնական անուններն ու տեղանունները, եզրակացնում է, որ դրանք հիշատակվում են Մարաստանի արևմտյան շրջաններում, նաև ավելի հեռու տարածքներում ընդգրկելով մերձուրմյան շրջանը, Հայկական լեռնաշխարհը, այժմյան Իրաքի հյուսիսարևելյան շրջանները և այլն (Э. Грантовский, չՅ 334): Ինչպես տեսնում ենք, ուղղվածությունը Հայկական լեռնաշխարհին ու շրջակա տարածքներն են:

4. Հերոդոտ, Պատմություն, Երևան, 1986, էջ 57: Հույն պատմիչները (Հերոդոտ, Ստրաբոն) բոլոր աստվածներին՝ Արամազդին, Ահուրամազդին, նույնիսկ Ամոն-Ռա-ին կոչում էին Ջևա:

5. Է. Դանիելյան, 1997, էջ 13:

6. Արյանա Վեջան տեղադրվում է Արաքս գետի ափերին, Խորեզմում, Ամուդարյա և Սիրդարյա գետերի ափերին, հարավ-ռուսական տափաստաններում և այլն (ՄԾԾ, I, էջ 104):

7. Սերբոս, էջ 91, 98:

8. Ագաթանգեղոս, էջ 41:

9. Ագաթանգեղոս, էջ 45:

10. ՀԱՊ, էջ 358, 359:

11. ՀԱՊ (VI, 21), էջ 362: Խոշյանգա կամ Խառոշյանգա Փարադատան իրանական ցեղերի առաջին օրինական թագավորներից մեկն էր:

Հայաստան - Հունաստան

Հունական ցեղերից մշակութային ու տնտեսական մեծ հաջողություն են ունեցել Հունաստանի հարավում՝ Կրետե կղզում բնակվող ցեղերը: Կղզու բարեբեր հողը, առևտրական ու տնտեսական կապերը այլ երկրների, հատկապես Հին Եգիպտոսի հետ, նպաստել են այնտեղ բնակվող ցեղերի արագ զարգացմանը: Ստեղծվել են նաև առաջին պետական կազմավորումները՝ Կնոսոս, Փեսոս, Մալլիա (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ), որոնք վաղ ստրկատիրական պետություններ էին: Մ.թ.ա. 18-րդ դարից Կրետեն դարձել է միասնական և ուժեղ ծովային պետություն, որն իր տիրապետությունն է հաստատել Էգեյան ծովի կղզիների վրա:

19-րդ դարի վերջերից Հունաստանում սկսվել են հնագիտական պեղումներ Հ. Շլիմանի (Տրոյա, Միկենք) ու Ա. Էվանսի (Կրետե) կողմից: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մշակութային բազմաթիվ արժեքներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներով (այս մշակույթը կոչվում է կրետե-միկենյան):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կրետե-միկենյան մշակութային արժեքները իրենց զուգահեռներն ունեն Փոքր Ասիայում (Ալիշար, Տրոյա), Հայկական լեռնաշխարհում (Շենգավիթ, Գառնի, Էլար, Կարագ-Արծն) և այլն:

Տարածայնությունների տեղիք է տվել կրետե-միկենյան մշակույթը կրող ցեղերի էթնիկական պատկանելիության հարցը: Ուսումնասիրողների մի խումբ (Կ. Պաուլի, Պ. Կրեչմեր, Ա. Ֆիկ) առաջ է քաշում այն տեսակետը, որ Հունաստանի հնագույն բնակիչները՝ նախահույները հնդեվրոպացիներ չեն եղել, իսկ հունական ցեղերը Հունաստանում հայտնվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին:

Կրետե-միկենյան մշակույթը կրողների էթնիկական պատկանելիության հարցը որոշելու համար մեծ դեր էր վերապահված Ա. Էվանսի կողմից Կրետեում հայտնաբերված գրերին, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներով: Կնոսոսի պալատի պեղումների ժամանակ հայտնաբերված գրերը գիտնականները բաժանել են հիերոգլիֆ գիր Ա (մ.թ.ա. 21--19-րդ դդ.), հիերոգլիֆ գիր Բ (մ.թ.ա. 19--17-րդ դդ.) և գծային գիր Ա (մ.թ.ա. 18--15-րդ դդ.), գծային գիր Բ (մ.թ.ա. 15--14-րդ դդ.) մասերի:

Գիտնականներին հաջողվել է վերծանել գծային Բ գիրը, մասամբ նաև գծային Ա գիրը: Նրանց կարծիքով ընթերցված գրերի լեզուն "հունական բարբառ է կամ ինչ-որ հնդեվրոպական լեզու, որը հարազատություն է ցուցաբերում հունարենի հետ":

Հունաստանի տարածքում ստեղծված մշակութային արժեքների ընդհանրությունները (մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներ), ինչպես նաև Կրետե կղզու հնագույն բնակիչների գրավոր լեզուն թույլ են տալիս ասելու, որ կրետե-միկենյան մշակույթը ստեղծել են հունական ցեղերը, որոնք արտագաղթի մի քանի ալիքներով իրենց բնակության նախնական վայրերից՝ Փոքր Ասիայի արևմտյան մասերից (Հոնիա և այլ տարածքներ) մոտավորապես մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներից սկսած հայտնվել են Կրետե կղզում և Բալկանյան թերակղզում:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին հյուսիսային Հունաստանից՝ Թեսալիայից հարավային Հունաստան և Կրետե են թափանցել աքայական ցեղերը, որոնց հաջողվել է ամրապնդվել այդ տարածքներում: Հնաբնակ ցեղերի մի մասը ձուլվել է նորեկ ցեղերին, մի մասն էլ նրանց ճնշման հետևանքով նոր տեղաշարժեր է կատարել: Այդպիսի մեծ տեղաշարժերի մասին են վկայում եգիպտական աղբյուրները՝ խոսելով "ծովի ժողովուրդների" գաղթի մասին, որն ինչպես արդեն նշվել է կատարվել է մ.թ.ա. 13--12-րդ դդ. Էգեյան աշխարհից և Բալկաններից (թրակիա-փռուգիական ցեղեր) դեպի Փոքր Ասիայի արևմտյան ափեր ու Եգիպտոս՝ Նեղոսի դելտա:

Մ.թ.ա. 12-րդ դարի կեսին Բալկանյան թերակղզու հյուսիսից Հունաստան են թափանցել զարգացման համեմատաբար ցածր մակարդակ ունեցող հունական նոր ցեղեր՝ դորիացիները և էոլացիները: Ներքին երկպառակություններից և Տրոյական պատերազմից թուլացած աքայական Հունաստանը ի վիճակի չէր լինում դիմադրելու երկաթե զենքերով զինված այս նոր ցեղերին: Դորիական ցեղերի այս ներթափանցումը հունական ցեղերի՝ հատկապես աքայացիների նոր տեղաշարժերի ալիք է առաջացրել: Աքայացիների մի մասը դուրս է մղվել և տեղաշարժվել դեպի Կիպրոս, Էգեյան ծովի կղզիներ և Փոքր Ասիա: Մի մասը հաստատվել է Ատտիկայում (Աթենք կենտրոնով), մի մասն էլ ձուլվել դորիացիներին: Տեղի էին ունենում ձևավորվող հույն էթնոսի ներքին տեղաշարժեր: Կազմավորվող հույն էթնոսի ձևավորման հետ ստեղծվում են նաև համահունական սրբություններ, աստվածների պաշտամունք, սրբավայրեր (Օլիմպոս, Դելփիք): Հին հույների դիցաբանական պատկերացումների, սոցիալական, տնտեսական, կենցաղային և այլ կարգի հարցերի մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս "Իլիական" (մ.թ.ա. 12--9-րդ դդ.) ու "Ոդիսական" (մ.թ.ա. 12--8-

րդ դդ.) պոեմները, դիցաբանական առասպելները, Հեսիոդոսի "Թեոգոնիա" ("Աստվածների ծագումը") պոեմը, "Աշխատանք և օրեր" կրոնա-բարոյական խրատների ժողովածուն և այլն: Հույների պատկերացումները աստվածների, տիտանների ու հսկաների մասին հիմնականում շարադրված են Հիսիոդոսի "Թեոգոնիա" պոեմում: Ըստ հին հույների ի սկզբանե գոյություն է ունեցել Քաոսը, որից էլ առաջացել են աշխարհն ու աստվածները: Քաոսից են առաջացել երկրի աստվածուհի Գեան, ընդերքի աստված Տարտարոսը, սիրո աստված Էրոսը և այլն: Երկիրը ծնունդ է տվել երկնքին՝ Ուրանոսին, լեռներին ու ծովերին: Ուրանոսի ու Գեայի զավակներ՝ տիտան Հիպերիոնն ու Թեան աշխարհ են բերել Արև-Հելիոսին, Լուսին-Սելենին, Էոս-Արշալույսին և այլն: 100 գլխանի հրեշ Տիֆոնին հաղթելուց հետո ամենագոր Ջևսը² և հունական մյուս աստվածները սկսում են հանգիստ ապրել Օլիմպոս լեռան վրա, կառավարելով աշխարհն ու մարդկանց: Հին հույների պատկերացմամբ աստվածները մարդկանց նման էին իրենց վարք ու բարքով (ինչպես հայերի ու հնդարիների մոտ):

Նրանք ևս ուժեղ են ու թույլ, վրեժխնդիր են, բարեհոգի, նախանձոտ ու փառամոլ: Հույների մոտ ևս կան գլխավոր ու երկրորդական աստվածներ: Շատ ավելի հզոր և ուժեղ են գլխավոր աստվածներ Արեսը, Աթենաս-Պալլասը, Աֆրոդիտեն, Ապոլոնը, Արտեմիսը և ուրիշներ, որոնք բոլորն էլ կապված են ազգակցական կապերով և ապրում են միասնական տոհմով: Տոհմի գլխավորն է Ջևսը՝ աստվածների ու մարդկանց տիրակալը: Աստվածների այս տոհմը, որ այնքան նման է երկրի վրա ապրող նահապետական ընտանիքի, ապրում է Օլիմպոս լեռան վրա, ուր միշտ ամառ է, արև ու լույս (դարձյալ աստվածները ապրում էին բարձր լեռներում): Օլիմպոսի մուտքը փակված է թանձր ամպ-վարագույրով, որը բարձրացնում ու իջեցնում են պահապան օրեադները (բնության ուժերն ու երևույթները անձնավորող երիտասարդ աղջիկներ ու կանայք): Օլիմպոսում, մարդկանց նման, աստվածները ևս կազմակերպում են խնջույքներ, ուր Ջևսը և մյուս աստվածները սիրում են ճաշակել երկնային ամբրոսիա և քաղցրահամ նեկտար:

Հին հույները հավատում էին նաև, որ աստվածների ու մարդկանց բախտը տնօրինում են ճակատագրի աստվածները՝ մոյրաները: Եվ ոչ ոք, անգամ Ջևսը չէր կարող խուսափել իր ճակատագրից: Իսկ աստվածների և մարդկանց ճակատագիրը որոշվում էր հետևյալ կերպ. մոյրաներից մեկը վիճակ էր հանում, իսկ մյուսը՝ երկար փաթեթի մեջ գրի էր առնում այն ամենը, ինչ կանխատեսվել էր³: Գրվելուց հետո ոչ ոք չէր կարող փոխել իր ճակատագիրը: Հայոց դիցաբանության մեջ մարդկանց ճակատագրի գուշակը, նրանց չար ու բարի գործերի գրանցողն էր համարվում Արամազդի դպիր և սուրհանդակ Տիր աստվածը⁴: Համեմատության համար հիշենք, որ շումերները ևս հավատում էին ի վերուստ տրված ճակատագրի գոյությանը: Շումերների պատկերացումներում մարդկանց ճակատագրերը սեպագրերով գրված են օղի, եթերի աստված Էնլիլի մոտ պահպանվող ճակատագրի աղյուսակում⁵:

Հունական դիցաբանի ամենագեղեցիկ, "խարստյալ" ու "ոսկեհեր" աստվածը Ապոլոնն է: Նա սկզբում լույսի աստվածն էր, հետո բնության, կյանքի, արվեստի, նաև՝ հոտերի: Որպես լույսի, արևի աստված նա կոչվում էր Հելիոս: Ապոլոնին է վերաբերում Դելփիքի շուրջը դարանող Պիթոն վիշապի սպանությունը: Ապոլոնի մորը՝ հղի Լետոյին, Հերայի հրամանով ամենուր հալածում էր Պիթոն վիշապը: Լետոն փախչում է Դելոս կղզի, ուր և ծնվում են Ապոլոնն ու Արտեմիսը: Այնուհետև Ապոլոնը որոշում է վրեժխնդիր լինել և սպանել վիշապին, որից սարսափահար փախչում են բոլոր կենդանի արարածները: Տեսնելով Ապոլոնին վիշապը փորձում է կուլ տալ նրան, բայց զրնգում է Ապոլոնի ոսկե նետը և վիշապը անշունչ տապալվում է գետին: Վիշապին սպանելու համար Ապոլոնը ստանում է Պիթոն (Սպանող) մականունը⁶: Այն վայրում, ուր Ապոլոնը սպանում է վիշապին, կառուցում են Դելփյան տաճարը: Ապոլոնի այս հերոսությունը հիշեցնում է հայոց Վահագնի (Վիշապասպաղ-Վիշապասպան մականունով) և հնդկական Ինդրայի (Վրթրահան-Վիշապասպան մականունով) համանման հերոսությունները:

Հին հույների մոտ արևի հնագույն աստվածը Հելիոսն էր, ավելի ուշ, երբ հույներին սկսել է բարբարոսական թվալ անմիջականորեն տիեզերական մարմիններին՝ արևին ու լուսնին պաշտելը, Ապոլոնը դարձել է արևի ու լույսի աստված և կոչվել նաև Հելիոս: Հելիոս-Ապոլոնին նվիրված հանդիսավոր արարողություններից մեկը տեղի էր ունենում Հռոդոս կղզում⁷: Այդ տոնահանդեսի ժամանակ ծով էին նետվում չորս "ձոնեալ" ձիեր, որոնք ամենայն հավանականությամբ Հելիոսի կառքին լծված չորս ձիերն էին խորհրդանշում: Հույները Հելիոս (Արև) աստծուն պատկերում էին կլոր դեմքով, բոցավառ աչքերով, գլխին արևի ճառագայթներով թագ ունեցող, ոսկեհեր, գեղեցիկ պատանու տեսքով: Հույների պատկերացմամբ, առավոտյան, հեռավոր արևելքից ելնում էր Հելիոս-արևի կառքը, որին լծված էին Եթիովպս, Բրոնտե, Էոլս, Ստերովպե անուններով չորս սպիտակափառ ձիեր⁸: Հունական դիցաբանության մեջ ևս Արև-Հելիոս աստծո երևալը երկնքում նկարագրված է շատ

գեղեցիկ: "Չորս թևավոր ձիեր լծած իր ոսկեհուռ երկանիվով Օվկիանոսի ափերից երկինք է բարձրանում ճաճանչափայլ աստվածը: Սարերի կատարները բոսոր են ներկում արևի ճառագայթները, և լեռները վեր խոյանում ասես բոցով ողողված...: Ավելի ու ավելի է բարձրանում Հելիոսի երկանիվը: Ճաճանչափայլ պսակը գլխին ու երկար, շողշողուն զգեստը հագին՝ գնում է երկնքով ու իր կենարար ճառագայթներով ողողում երկիրը, նրան լույս, ջերմություն ու կյանք տալիս:

Կտրելով իր ցերեկային ճանապարհը, արևի աստվածն իջնում է դեպի Օվկիանոսի սրբազան ջրերը: Այնտեղ նրան սպասում է իր ոսկեղեն մակույկը, որով նա լողում է դեպի արևելք, դեպի արևի երկիրը, որտեղ նրա զարմանահրաշ պալատն է գտնվում: Արևի աստվածը գիշերը հանգիստ է առնում այնտեղ, որպեսզի առաջվա փայլով ծագի հաջորդ օրը"⁹: Արևածագի այս նկարագրությունը շատ նման է հայոց նմանատիպ գրույցներին: Հիշենք Վանի շրջանում Մ. Աբեղյանի կողմից գրի առնված նմանատիպ գրույցը, որի մասին խոսվել է վերևում¹⁰:

Հունական աստվածներն ու աստվածուհիները ևս շրջում են (Պոսեյդոնը ծովի վրա) ձիեր լծված երկանիվ կառքերով (այդպես է նաև հայկական, հնդկական ու իրանական դիցաբանության մեջ): Հունական դիցաբանության մեջ ևս արևն (Հելիոս) ու լուսինը (Մելենե) քույր ու եղբայր են: Եղբայր Հելիոսը ցերեկներն է լույս տալիս մարդկանց, իսկ քույր Մելենեն՝ գիշերները: Ամենայն հավանականությամբ Մելենե (հունարեն սելաս "լույս, փայլ, լուսին" բառից) աստվածուհու պաշտամունքը Հունաստան է բերվել Փոքր Ասիայից (հմմ. Միելարդի, Սինուարդի, Նուարդ, նաև Միդա): Ավելի ուշ Մելենեն նույնացվել է Արտեմիսի հետ: Ապոլոնը (Հելիոս) սկսում է ներկայացնել ցերեկվա լույսը (արև), իսկ Արտեմիսը (Մելենե)՝ գիշերվա լույսը (լուսին):

Հունական առասպելաբանությունը ունի Համաշխարհային ջրհեղեղի իր տարբերակը, որը մեզ է հասել Հեսիոդոսի "Աշխատանք և օրեր" պոեմի միջոցով: Հունական տարբերակում աստվածները գոռոզության, չարության ու նախանձի պատճառով մարդկանց չորս սերունդ են ոչնչացրել, որոնք ստեղծվել էին ոսկեդարում, արծաթի դարում, պղնձի դարում և երկաթի դարում: Մակայն վերջին երկաթի դարի ջրհեղեղի ժամանակ փրկվել են Պրոմեթևսի որդի Դեկալիոնը և նրա կինը: Հոր խորհրդով Դեկալիոնը պատրաստել է վիթխարի մի արկղ և կնոջ հետ մտել մեջը: Ինն օր ջրերի վրա տարուբերվելուց հետո արկղը կանգ է առել Պառնաս լեռան Նիս գագաթին: Ավանդությունը այնուհետև պատմում է, որ Ջևսի հրամանով մարդկային ցեղը նորից բազմացել է երկրի վրա¹¹: Հունական հին մի ավանդազրույց պատմում է, որ Դեկալիոնը և նրա կին Պիրրան ունեցել են Հելլեն ու Անդրոպոմոս զավակներին, որոնցից էլ սերվել են հելլենները (Հելլենից) և հայերը (Անդրոպոմոսից)¹²:

Նշենք, որ հայերի ու հույների ազգակցական, արյունակցական կապի մասին նմանատիպ մի գրույց էլ պահպանվել է հայ մատենագրության մեջ: Հովհաննես Դրասխանակերտցին Հայկ նահապետի պապ Թիրասին համարում է թրակիացիների նախահայրը¹³: Այս իմաստով հետաքրքիր է նաև Ստրաբոնի հետևյալ վկայությունը. "Ասում են, թե ինչ-որ թրակացիք (կոչված սարաբարաս, այն է՝ գլուխ կտրող) բնակվել են Հայաստանից վերև՝ Գուրանացոց և Մարաց մոտ"¹⁴:

Տիտան Պրոմեթևսի օգնությունը մարդկանց ցեղին շարունակվում է: Արդեն խոսվել է Պրոմեթևսի կողմից Օլիմպոսից կրակը գողանալու և մարդկանց տալու, նաև նրա շղթայվելու ու Հերակլեսի միջոցով տառապանքներից ազատվելու մասին: Խոսվել է նաև Հերակլեսի ու հայոց "Մասնա ծոեր" դյուցազնավեպի հերոսներ՝ Մեծ Միերի և Դավթի միջև եղած նմանությունների մասին: Նշենք, որ հունական դիցաբանությունը բարեհաճ է գտնվել Հերակլեսի հանդեպ, և նա իր երկրային ուղին ավարտելուց հետո Ջևսի կամքով ձեռք է բերել անմահություն, և բնակեցվել Օլիմպոսում¹⁵, ի տարբերություն շումերական Գիլգամեշի, որին չհաջողվեց ձեռք բերել անմահություն:

Ժամանակագրական առումով հաջորդ գրական հուշարձանը, ուր տեղեկություններ կան հայերի մասին, "Արգոնավորդներ" առասպելն է, որն ստեղծվել է նախահնդեպական շրջանում, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին: Այս առասպելը մեզ է հասել մ.թ.ա. 5-րդ դարի բանաստեղծ Պինդարոսի և ավելի ուշ շրջանի հեղինակներ Ապոլոն Հոդոսոս, Դիոդորոսի, Էվրիպիդեսի և այլոց աշխատությունների միջոցով: Արգոնավորդների առասպելը, ուր նկարագրված դեպքերը կատարվել են Տրոյական պատերազմից մեկ սերունդ առաջ, պատմում է, որ հողմերի աստված Աթամասը ամպերի աստվածուհի Նեփելեից ունեցել է երկու զավակ, որդի՝ Արիքոսոս և դուստր՝ Հելլա: Աթամասի երկրորդ կնոջ ատելությունից և կործանվելուց փրկվելու համար երեխաները նստում են իրենց մոր ուղարկած ոսկեգեղմ ոչխարի վրա և սլանում երկնքով: Ճանապարհին Հելլան ընկնում է ծովը և զոհվում (ծովը նրա անունով կոչվել է Հելեսպոնտոս "Հելլայի ծով", Դարդանելի նեղուցը): Ոսկեգեղմ ոչխարը շարունակում է սլանալ և իջնում է Էա երկրում (Պինդարոսի տարբերակով՝ Կողքիս-Կոլխիդայում), ուր

իշխում էր Այետես (Այետ) արքան: Ոսկեգեղմ ոչխարը զոհաբերում են Ջևսին, գեղմը կախում էայի (նաև Արեսի) սրբազան պուրակում, որը պահպանում էր հուր ժայթքող, մշտաբոն վիշապը: Հույն 50 հայտնի դյուցազուններ, որոնց մեջ էին Հերակլեսը, Թեսևսը, Արգոսը, Արմենոսը և ուրիշներ Թեսալիայի Յուքոս քաղաքի արքայազն Յասոնի գլխավորությամբ "Արգո" նավով ուղևորվում են Էա (ըստ Պինդարոսի՝ Կողքիս) բերելու կենաց ծառից կախված կախարդական ոչխարի ոսկե գեղմը: Բազմաթիվ սխրագործություններից հետո, արքայադուստր Մեդեայի օգնությամբ Յասոնը հափշտակում է ոսկե գեղմը և վերադառնում Հելլադա: Վերևում նշվել է, որ Արմենիոն քաղաքից դյուցազն Արմենիոսի մասնակցությունը արգոնավորողների արշավանքին հիմք է հանդիսացել հայերի Բալկանյան թերակղզուց եկած լինելու տեսակետի համար: Այսօր, երբ հայտնի է, որ հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են և ապրում են այստեղ անհիշելի ժամանակներից, հույն պատմիչների վկայությունները պարզապես ավանդություններ են, որոնք վկայում են ոչ միայն հայերի ու հույների միջև եղած հնագույն կապերի, այլև արյունակից եղբայրներ լինելու մասին: Հունական ցեղերի էթնիկական տեղաշարժերը, նրանց ընդհարումները, երբ կազմավորված պետական փոքր միավորումներից մեկը ցանկանում էր իր գերիշխանությունը հաստատել մյուսի վրա, հիմք են հանդիսացել "Բլիական" (մ.թ.ա. 12--9-րդ դդ.) և "Ողիսական" (մ.թ.ա. 12--8-րդ դդ.) պոեմների ստեղծման համար: Ընդունված է, որ այդ պոեմները գրի է առել կույր երգիչ Հոմերոսը մ.թ.ա. 9-րդ կամ 8-րդ դդ.: "Բլիականում" (նաև "Տրոյական պատերազմ") նկարագրված է մ.թ.ա. 1240 թ. տեղի ունեցած արքայական ցեղերի արշավանքը դեպի Տրոյական թագավորություն և նրա Բլիոն մայրաքաղաք (Տրոյան գտնվում է Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում): Աքայական թագավորների միացյալ բանակը, որի կազմում էին Միկենքի և Արգոսի արքա Ագամեմոնը, Սպարտայի արքա Մինելավոսը, Կրետեի արքա Իդոմենեսը, Մալամինի արքա Այաքսը, նաև բազմաթիվ դյուցազուններ՝ Աքիլեսը, Ողիսեսը և ուրիշներ, նպատակ ունենալով շատ արագ նվաճել Տրոյան: Սակայն Տրոյայի արքա Պրիամոսը օգնություն ստանալով հարևան երկրներից (ըստ Հոմերոսի՝ փռուզիացիներ, լիկիացիներ, թրակիացիներ) ուժեղ դիմադրություն է ցույց տվել արքայացիներին և պատերազմը ձգձգվել է: Երկարատև պաշարումից հետո միայն արքայացիները կարողացել են գրավել Տրոյան: Պատմահայր Մ. Խորենացին հայտնում է, որ Պրիամոս արքայի կողմից պատերազմին մասնակցել է հայ դյուցազն Ջարմայր Նահապետը, որը վիրավորվել է հելլեն քաջերից և մահացել Տրոյայում¹⁶:

Անդրադառնանք նաև "Բլիականում" հիշատակված մի փաստի: Պոեմում վկայություն կա արիմների երկրի մասին, ուր Ջևսը հաղթել է 100 գլխանի հրեշ Տիփոնին:

Գընում էին նըրանք գունդ-գունդ, և ասես թե երկիրը ողջ
Բըռընկվել էր բոց-կրակով, ու տընքում էր գետինն այնպես,
Ինչպես Ջևսը շանթազըված զարկեր երկրին Արիմայսի
Ու հարվածեր փայլատակմամբ Տիփոնեսի մահիճն այնտեղ¹⁷:

Արդեն նշվել է, որ հույն մատենագիրները (Պինդարոս, Պոսեդոնիս) և որոշ ուսումնասիրողներ (Յ. Պարչ, Յ. Մարկվարտ, Հ. Մանանդյան) գտնում են, որ "Բլիականում" հիշատակված հրաբուխների երկիրը՝ հրաշունչ Տիփոնի բնակատեղին Արգեյոս լեռան շրջակայքն է Կիլիկիայում, իսկ այնտեղ ապրող արիմներին Յ. Մարկվարտը, Հ. Մանանդյանը և ուրիշներ իրավացիորեն նույնացնում են արմենների հետ¹⁸: Հետևաբար, "Բլիականում" հիշատակված արիմ-արմենները հայերի մասին առաջին հիշատակությունն են հունական գրավոր աղբյուրներում:

Հունական (հելլենիստական) մշակույթը մեծ զարգացում և տարածում է ունեցել մ.թ.ա. 4-րդ դարի վերջերից: Հելլենիստական մշակույթը իր ազդեցության ոլորտի մեջ է առել ամբողջ Փոքր Ասիան, նաև Հայաստանը: Այդ ազդեցությունը հատկապես նկատելի է դիցաբանության մեջ: Հայոց աստվածները սկսում են համադրվել հունական աստվածների հետ: Այս երևույթը ավելի մեծ տարածում է ունեցել մ.թ.ա. 2--1-ին դարերում և ավելի ուշ, երբ հայոց արքաներ Արտաշես 1-ինը (189-160), Տիգրան 2-ը (95-55) և ուրիշներ Փոքր Ասիայի զանազան վայրերից որպես ավար Հայաստան են բերել հունական աստված-աստվածուհիների արձաններ: Այդ աստվածները նույնացվել են հայոց աստվածների հետ և տեղադրվել համապատասխան տաճարներում: Այսպես, նույնացվել են Ջևսը (Դիոս)՝ Արամազդի, Ապոլոնը (Հելիոս)՝ Միհրի, Հերակլես-Արեսը՝ Վահագնի, Արտեմիսը՝ Անահիտի, Ապոլոնը՝ Տիրի, Աֆրոդիտեն՝ Աստղիկի, Աթենասը՝ Նանեի հետ և այլն: Մեր թվարկության սկզբներին և ավելի ուշ հունական մշակույթի ազդեցությունն այնքան ուժեղ էր Հայաստանում, որ 5-րդ դարից սկսած հայ պատմիչները իրենց աշխատություններում հայոց աստվածների անունների հետ օգտագործում են նաև նրանց համապատասխան հունական անունները: Նշենք, որ հունական ու հայկական աստվածների

այս համադրությունը շատ մոտավոր էր, քանի որ նրանք նկարագրի իրենց հատկանիշներով միշտ չէ որ համընկել են: Օրինակ՝ Անահիտը կամ Վահագնը հայոց դիցարանում ավելի բարձր դիրքեր են զբաղեցրել, քան Արտեմիսը, Հերակլեսը կամ Արեսը հունական դիցարանում և այլն: Այսպիսով, հույն-հայկական հնագույն պատմամշակութային առնչությունները հազարամյակների պատմություն ունեն: Դրանք արտահայտվում են նրանց հոգևոր ու նյութական մշակույթի, կենցաղի, սովորույթների, ավանդությունների, բարքերի մեջ և այլ հարցերում, վկայելով հայ և հույն ժողովուրդների ազգակցական հնագույն կապի մասին:

1. В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958, стр. 77.
2. Հայ մատենագրության մեջ պահպանված մի ավանդության համաձայն Ջևսի հայր Քրոնոսը համարվել է նաև հայոց Արամագո աստծո հայրը (Ազաթանգեղոս, Երևան, 1977, էջ 177 (ծանոթագրություն), Ա. Աբրահամյան, էջ 99):
3. Ն. Կուն, էջ 25:
4. Ազաթանգեղոս, էջ 437:
5. ИДВ, I, стр. 281.
6. Մ. Բարթիկյան, Դիցապաշտ Հելլադան: Հելլեն դիք, Աթենք, 1936, էջ 76:
7. Դիցաբանական բառարան, էջ 23:
8. Մ. Բարթիկյան, էջ 81:
9. Ն. Կուն, էջ 75:
10. Չնայած հայոց ավանդագրույցը գրի է առնվել 19-րդ դարի վերջերին, բայց անկասկած այն խոր հնություն ունի, ինչպես արեգակ-Վահագնի ծնունդը ներկայացնող հեթանոսական հայտնի "Երկներ երկին..." պոեմը:
11. Մ. Բարթիկյան, էջ 32-36:
12. Հ. Տեր-Մովսեսյան, Պատմություն հայոց, Վենետիկ, 1922, էջ 119-120:
13. Հ. Դրասխանակերտցի, էջ 11:
14. Ստրաբոն, XI, 44:
15. Ն. Կուն, էջ 214:
16. Մ. Խորենացի, էջ 107:
17. Հումերոս, Իլիական, Երևան, 1987, էջ 69:
18. Հ. Մանանդյան, 1977, էջ 25: Մ. Խորենացու միջոցով մեզ է հասել նույն վայրում՝ Արգեոս լեռան շրջակայքում տեղի ունեցած մեկ այլ մենամարտի մասին մի պատմություն ևս: Խորենացին վկայում է, որ Հայկյան Արամը (Ջևս) արևմուտք արշավելու ժամանակ Կեսարիայի շրջակայքում հանդիպել է Տիտան Պայապիս Քաադյահին (Տիվոն): Տեղի ունեցած ընդհարումը ավարտվել է Արամի հաղթանակով (Խորենացի, էջ 57): Յ. Մարկվարտը և Հ. Մանանդյանը իրավացիորեն նշում են, որ սա Ջևսի (Արամ) և Տիվոնի (Պայապիս Քաադյա) մենամարտի այլ տարբերակ է:

Վերջարան

Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում և Առաջավոր Ասիայի այլ վայրերում ստեղծված առասպելաբանությունը, հնագույն գրավոր աղբյուրները, նաև նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ (պատկերներ, կնիքադրոշմներ) վկայում են, որ արարչագործության երկիրը, ուր Տիեզերական Արարիչը (ԱԸ Աստված)՝ Հայր Աստվածը արարել է մարդուն, Հայաստանն է, Հայկական լեռնաշխարհը: Հայաստանը ոչ միայն արարչագործության, այլև մարդկության վերածննդի երկիրն է, ուր Նոյի սերունդը փրկվեց ջրհեղեղից, բազմացավ ու սփռվեց աշխարհում:

Հայաստանը նաև հնագույն քաղաքակրթության երկիրն է: Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթը (վանակատից, պղնձից, բրոնզից, երկաթից պատրաստված աշխատանքային գործիքներ, զենքեր, զարդեր, ժայռապատկերներ, որմնանկարներ), որն ընդգրկում է մարդկության պատմության զարգացման ողջ ընթացքը վաղ հին քարի դարից՝ մինչև մեր օրերը, վկայում է, որ կյանքը Հայկական լեռնաշխարհում սկիզբ առնելով հազարամյակներ առաջ, երբեք չի ընդհատվել:

Քաղաքակրթության (վաղ երկրագործություն, անասնապահություն, խեցեգործություն) ծագման հնագույն կենտրոններ են համարվում Ջագրոսի լեռների արևմտյան լանջերն ու հովիտները (մ.թ.ա. 10-9-րդ հազարամյակներ, Շանիդար, Ջարզի, Ջարմո), Հայկական Միջագետքի բլրաշարտ շրջանները (մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներ, հալաֆ-հատունյան մշակույթ) և Հայկական լեռնաշխարհի հարավային մասերը՝ Հայկական Տավրոսից հարավ ընկած տարածքները (մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակներ, Այնթապ, Փիրին, Ադիաման, Ուրֆա)¹:

Ինչպես տեսնում ենք, այս կենտրոնները անմիջականորեն առնչվում, իրենց մեջ են առնում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան, հարավային ու արևմտյան մասերը: Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ու հյուսիսային մասերը ևս մասնակից են եղել վաղ քաղաքակրթության ստեղծմանը (Արարատյան դաշտավայրի բնակավայրեր, Թեղուտ, Թալին, Ագոխ):

Մ.թ.ա. 4-2-րդ հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում տեղի է ունեցել արտադրության միջոցների բուռն զարգացում (աշխատանքային գործիքների բարդացում, մետաղի հայտնագործում, լծկան ուժի օգտագործում տնտեսության մեջ), որն էլ իր հերթին բնակչության ու բնակավայրերի թվի մեծ աճ է ապահովել: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ այդ ժամանակաշրջանի բնակավայրերը գտնվում են մոտ տարածությունների վրա, իսկ լեռնային երկիրը, ինչպիսին Հայաստանն էր, չէր կարող հացահատիկով ապահովել աճող իր բնակչությանը: Մի շարք ուսումնասիրողներ (Ն. Վավիլով) հենց տնտեսական պատճառներով են պայմանավորում Հայկական լեռնաշխարհից սկիզբ առած էթնիկական տեղաշարժերը:

Տեղաշարժերի պատճառ է հանդիսացել նաև զարգացող անասնապահությունը: Անասունների աճող քանակ պահելու համար անհրաժեշտ էին նոր արոտավայրեր: Արտագաղթի պատճառ էր նաև կենտրոնացված, ուժեղ պետության բացակայությունը Հայկական լեռնաշխարհում: Պետական կազմավորումներ ստեղծվում էին Հայկական լեռնաշխարհի այս կամ այն մասում (Խուրրի-Միտանի, Ուրարտու, Տիգրան Մեծի Հայաստան), բայց դրանք չեն կարողացել երկար ժամանակով միավորել բոլոր ցեղերին ու չեն դարձել համահայկական ուժեղ պետություններ:

Մեծ մասշտաբի հեռավոր արտագաղթեր ու տեղաշարժեր կատարելուն մեծապես նպաստել է նաև ձիու վաղ ընտելացումն ու անվավոր փոխադրամիջոցների օգտագործումը հայկական/արիական ցեղերի կողմից: Հայկական/արիական ցեղերի տարածման գործում քիչ դեր չի խաղացել նաև նրանց ու նրանց անմիջական ժառանգներին՝ հայերին այսօր էլ բնորոշ աշխույժ, ակտիվ, հետաքրքրասեր խառնվածքը, որին ձգում էին նոր հորիզոններն ու անորոշ, անձանոթ հեռուները:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ պատմությունը չի հիշում արիական ցեղերի հանկարծակի, դաժան ու թշնամական ներխուժումներ: Փաստերը ցույց են տալիս, որ հիմնականում խաղաղ, բարեկամական հարաբերություններ են հաստատվել արիական ցեղերի և այն ցեղերի միջև, որոնց հարևանությամբ սկսել են ապրել արիները նոր տարածքներում:

Եղել են նաև արիական ցեղերի այլ ցեղերի հետ ձուլվելու դեպքեր (թոխարներ², պարթևներ³, սարմատներ⁴, սկյութներ⁵ և այլն)⁶:

Օգտագործելով Հայկական լեռնաշխարհում, Միջագետքում և Առաջավոր Ասիայի այլ վայրերում կատարված հնագիտական պեղումների արդյունքները, հնդեվրոպական լեզուների և այլ լեզուների միջև եղած լեզվաբանական փոխազդեցությունները, աշխարհագրական ու անձնական անունները, ինչպես նաև հայկական/արիական մշակույթին բնորոշ վերը հիշատակված տարրերը (խեցեղեն,

մետաղե իրերի վաղագույն նմուշներ, ժայռապատկերներ, մարտակառքեր, արևի պաշտամունք, խորհրդանշաններ) փորձենք նշել այն ուղիները, որոնցով տեղաշարժվել, տարածվել են հնդեվրոպական ժողովուրդների նախնիները՝ արիական ցեղերը, հեռանալով հայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից:

Հայկական լեռնաշխարհից կատարված առաջին տեղաշարժերը վերաբերում են մ.թ.ա.7--6-րդ հազարամյակներին, երբ նրանց հետքերը (խեցեղեն, օբսիդիանե գործիքներ, պաշտամունքային խորհրդանշաններ) հայտնաբերվում են Փոքր Ասիայի արևմտյան մասերում (Չաթալ-հույուք, Հաջիլար, Տրոյա, Ալիշար), Միջերկրական ծովի արևելյան մասերում՝ Ամուկի հովտում (Թելլ-Էշ-Շելխ, Ալալախ): Հայտնաբերված մշակութային արժեքները կրում են հալաֆ-հասունյան մշակույթի ազդեցությունը (մ.թ.ա. 6--5-րդ հազարամյակներ), որի կենտրոնը ինչպես նշվել է Հայկական լեռնաշխարհի հարավային մասերն ու Հայկական Միջագետքն են:

Հայկական լեռնաշխարհում ստեղծված մեկ այլ՝ կուր-արաքսյան (նաև շենգավիթյան) կամ կիրբթ-կերակյան մշակույթը կրող ցեղերը մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակներում հայտնվել են Սիրիայում, Պաղեստինում և այլն: Հայկական լեռնաշխարհից կատարված առաջին էթնիկական տեղաշարժը, որի մասին հիշողություններ են պահպանվել գրավոր աղբյուրներում, շումերների տեղաշարժն է, որը կատարվել է Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից մ.թ.ա. 5--4-րդ հազարամյակներում: Հայկական/արիական ցեղերի տեղաշարժերը ավելի հաճախակի են դարձել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից ու հատկապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից: Նրանք շարժվել են դեպի արևելք, արևմուտք և այլն: Հետևեք արևելք շարժվող ցեղերին:

Հնագիտական պեղումները և հնագույն գրավոր աղբյուրները (վեդաներ, "Ավեստա") ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից, ուր ինչպես հայտնի է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսերին կազմավորվել էր Խուրրի-Միտանի պետությունը, ուր գոյություն ուներ Ինդրա, Միթրա, Վարունա, Նասատյա, Վահագն, Սուրիա աստվածների պաշտամունքը, կատարվել է բնակչության էթնիկական տեղաշարժ դեպի Իրանական սարահարթ (մոտավորապես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին), որը հավանաբար պայմանավորված էր Խուրրի-Միտանի պետության թուլացումով և սեմական ցեղերի հաճախակի դարձող ներխուժումներով: Պատմագրության մեջ տեղաշարժին մասնակցող ցեղերին տրվել է հնդիրանցիներ ընդհանուր անունը, իսկ իրենք իրենց այդ ցեղերը, անվանում էին արիներ: Իրանական սարահարթից ցեղի մի մասը շարունակում է շարժվել դեպի արևելք: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին նրանք հայտնվում են Հնդկաստանում (Հնդկաստանի Հարապպա բնակավայրից հայտնաբերված դիակիզումով վաղ դամբարանը թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսով): Ցեղի մի մասը այլ ճանապարհ է ընտրում: Նրանք Կասպից ծովի հարավային ու արևելյան մասերով հասնում են Արալյան ծով, Միքրի հարավային մասեր, Ուրալյան լեռներ (կարելի է մտածել, որ Արալ և Ուրալ անունները կապ ունեն հայ-արիական ԱՐ Աստծո անվան հետ): Մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներով են թվագրվում (նշվել է, որ թվագրման մեջ հնարավոր են անճշտություններ, չափազանցություններ) արդեն հիշատակված Ֆերգանայի լեռներից (Մայմալի-Թաշ), հարավային Միքրից ու Մոնղոլիայից հայտնաբերված ժայռապատկերները (լծված ձիերով սայլեր, մարտակառքեր): Սա նաև այն ճանապարհն է, որով արիական ցեղերը (թոխարներ) հասել են Միջին Ասիա, այնուհետև՝ թուրք-մոնղոլական ցեղերով բնակեցված տարածքներ ու Չինաստան (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ): Արալյան ծովից ու Կասպից ծովի հյուսիսային մասերով ցեղի մի մասը թեքվել է արևմուտք, անցել Վոլգա գետը (Վոլգա գետից արևելք, Գերասիմովկա ավանտում հայտնաբերվել են անվավոր ծածկասայլեր), հասել Սև ծովի հյուսիսային մասեր, Ղրիմ, այնուհետև շարժվել դեպի Եվրոպա: Նշենք, որ Վոլգա գետը արիները կոչել են Ռահ, նախահայրենիքում գտնվող Ռահ (Արաքս) գետի անունով:

Դոն, Դնեպր, Դնեստր, Դանուբ (Դունայ) գետերը ևս անվանակոչվել են արիական ցեղերի կողմից: Հնդկական վեդաներում (Մահիթներ) և "Ավեստայում" գետ իմաստով օգտագործվում է danu բառը, որն էլ ամենայն հավանականությամբ ընկած է վերոհիշյալ գետանունների հիմքում:

Արիական ցեղերը հյուսիսսերձսեծովյան շրջաններ ու Կասպից ծովի հյուսիսարևմտյան մասեր են թափանցել նաև Կովկասով (սարմատներ):

Հայկական լեռնաշխարհից դեպի արևմուտք կատարված տեղաշարժերի ժամանակ ցեղի մի մասը հասել է Փոքր Ասիայի արևմտյան մասեր ու Բալկաններ (կրետե-միկենյան մշակույթը կրող հունական ցեղեր, փռուզիացիներ, թրակիացիներ, էտրուսկներ):

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերից Բալկանները ընդունել են արիական ցեղերի նոր զանգվածներ, որոնք այստեղ էին հասել Սև ծովի հյուսիսային մասերով: Մակայն միշտ չէ, որ նոր հայտնված ցեղերը խաղաղ գոյակցել են ավելի վաղ այդ տարածքներում հայտնված իրենց ցեղակիցների հետ: Հաճախ նորեկների ճնշման հետևանքով հնաբնակ ցեղերը նոր տեղաշարժեր են կատարել: Այդպիսի մեծ

տեղաշարժի մասին են հայտնում եզրիպատական աղբյուրները՝ խոսելով "ծովի ժողովուրդների" գաղթի մասին, որը կատարվել է Էգեյան աշխարհից և Բալկաններից (թրակիա-փռուգիական ցեղեր) դեպի Փոքր Ասիա ու Եգիպտոս՝ Նեղոսի դելտա (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կես): Ինչպես տեսնում ենք հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը Եվրոպա մուտք են գործել և՛ արևելքից (շրջանցելով Կասպից ծովը), և՛ հարավից (Փոքր Ասիայով): Կազմակերպված, լավ զինված, միաձույլ այս ցեղերը տարբեր ժամանակներում հայտնվելով Եվրոպայում ակտիվ շփումների մեջ են մտել ինչպես իրենց ցեղակիցների, այնպես էլ այլ ցեղերի հետ, որոնց հանդիպում էին իրենց ճանապարհին (ֆիննաուգրական, մոնղոլական, ալթայյան ցեղեր): Այս տեղաշարժերի¹⁰ ժամանակ էր նաև, որ առաջանում են հնդեվրոպական բարբառները Եվրոպայում: Կազմավորվում են կելտական, հունական, գերմանական, իլլիրիական, իտալիկյան (այժմ իտալական), սլավոնական, բալթյան լեզվախմբերը և այլն:

Ամփոփենք: Հնագիտական, ազգագրական, լեզվաբանական, մարդաբանական ուսումնասիրությունները, հնագույն գրավոր աղբյուրներն ու փաստերը վկայում են, որ Հայկական լեռնաշխարհն ու շրջակա տարածքները (Իրանի հյուսիսարևմտյան մասեր, Փոքր Ասիայի արևելյան մասեր, Հայկական Միջագետք) այն տարածքներն են, որտեղ արարվել է աշխարհի հնագույն ցեղերից մեկը՝ հայ-արմենների ցեղը: Այդ տարածքում ամենուրեք սփռված են այս ցեղի հետքերը (մշակութային արժեքներ, աշխարհագրական ու անձնական անուններ) և այստեղ կարելի է հետևել այդ ցեղի զարգացման ու առաջընթացի բոլոր փուլերին:

Հայաստանը՝ Հայկական լեռնաշխարհը ոչ միայն արարչագործության՝ մարդու արարման, այլև մարդու գործունեության շնորհիվ ստեղծված քաղաքակրթության հնագույն երկիրն է: Հայկական լեռնաշխարհում ստեղծված քաղաքակրթության հետքերը սփռված են Եվրոպայից Հնդկաստան ընկած ընդարձակ տարածքներում: Այդտեղ ապրող ժողովուրդների՝ հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը բաժանվելուց առաջ (մոտ մ.թ.ա. 5--3-րդ հազարամյակներ) եղել են միասնական ցեղային միության մեջ, ունեցել են նույն հայրենիքը, պաշտել են նույն աստվածներին, խոսել են նույն լեզվով (բարբառներ), ունեցել են նույն պատմությունն ու մշակույթը, նույն կենցաղը, նույն անունները, որոնց հետքերը անցնող հազարամյակները ի վիճակի չեն եղել ջնջելու, մոռացնել տալու: Դարեր շարունակ հնդեվրոպական ժողովուրդները սնվել են պատմամշակութային նույն ակունքներից, որն արտահայտվել է նրանց հետագա բանավոր ու գրավոր գրույցներում, ավանդություններում, դյուցազնավեպերում և այլն:

Այսպիսով, մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներից (նաև ավելի վաղ) սկսած, իսկ մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներից ավելի մեծ թափ ստացած էթնիկական մեծ կամ փոքր տեղաշարժերի հետևանքով Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայկական (արիական) ցեղերը, հայտնվել են այլ տարածքներում, պահպանելով հոգևոր կապը և հեռավոր հիշողություն հայրենիքի՝ Արարատի երկրի ու Արարատ-Մասիս Մուրբ լեռան մասին:

Ինչպես տեսնում ենք, ԱՐ Աստծո երկիրը՝ Արարատը, Հարք-Հայքը բազում գաղտնիքներ ունի իր մեջ պահած: Այդ գաղտնիքներից մեկը դանդաղորեն, բայց հաստատուն կերպով բացահայտվում է: Այն է, սրբազան այս հողը հայրենիքն է հայկական/արիական հնագույն ցեղի, իսկ այսօրվա հայը անմիջական ժառանգն է այդ ցեղի ու պահապանը այս Մուրբ հողի:

1. Հնագույն քաղաքակրթության և դասակարգային հասարակության առաջացման վաղ կենտրոններ են համարվում նաև Նեղոսի հովիտը՝ (մ.թ.ա. 4--3-րդ հազարամյակներ), Գանգեսի հովիտը (մ.թ.ա. 3--2-րդ հազարամյակներ) և այլն:

2. Ապրել են Չինական Թուրքեստանում, որտեղից էլ հայտնաբերվել են թոխարերեն գրված տեքստեր (մ.թ. 5--7-րդ դդ.): Չուվվել են թուրքալեզու ցեղերին:

3. Պարթևների մի մասը 5--6-րդ դարերում ձուլվել է Միջին Ասիայում ապրող թուրքալեզու ցեղերին:

4. Սարմատները "իբանալեզու" ցեղեր էին, ապրել են նախակովկասյան, հյուսիս-մերձսևծովյան տափաստաններում, հասել են Դանուբ, Միջին Ասիա: Սարմատական ցեղերից մ.թ.ա. 2--1-ին դդ. հզորացել են ալանները (Ալանիա): Միջին դարերում սարմատական ցեղերը ձուլվել են սլավոններին և թուրքալեզու ցեղերին:

5. Սկյութների մասին գրավոր աղբյուրները հիշատակում են մ.թ.ա. 8--7-րդ դարերից: Նրանք ապրում էին հյուսիս-մերձսևծովյան շրջաններում: Ստեղծվել է սկյութական ցեղերի միություն, որը ձեռք է բերել ստրկատիրական պետությանը բնորոշ գծեր, ունենալով թագավոր, ռազմական ավագանի, քրմություն և այլն: Սկյութները հարևանների դեմ մղել են կողոպուտչական և հարձակողական պատերազմներ:

Կրելով մի շարք պարտություններ (Մակեդոնիայի Փիլիպպոս 2-րդ թագավորից, սարմատներից, գոթերից) սկյութները թուլանում, կորցնում են իրենց էթնիկ ինքնությունությունը և ձուլվում այլ ցեղերի: 6. Դարեհ 1-ինի Բեհիսթունյան արձանագրության հիման վրա⁹ կազմված Աքեմենյան պետության քարտեզում (1-ին հազարամյակի կես) Վոլգա գետը նշված է Ռահ անունով (ՀՄՀ, հ. 2, էջ 163): Վոլգա գետը Ռահ անունով հիշատակվում է նաև Պտղոմեոսի աշխատության մեջ (V, 8, 12): Գետի նոր, Վոլգա անունը հին սլավոներեն նշանակում է խոնավ - «волный» (В. Георгиев, стр. 253):

7. Т. Гемкрелидзе, В. Иванов, 1984, стр. 921, С. Дикшит, стр. 476.

8. Էտրուսկները Ապենինյան թերակղզու հնագույն վերաբնակիչներն են, որոնք մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերից, տեղաշարժի մի քանի ալիքներով, ծովով հայտնվել են Իտալիայի հարավային մասերում: Էտրուրիայում: Էտրուսկերեն հնագույն գիրը (մահարձանների, զարդերի, կենցաղային իրերի վրա) թվագրվում է մ.թ.ա. 7-րդ դարով, իսկ նորագույնը՝ մ.թ.ա. 2--1-ին դարերով (В. Георгиев, з 184): Էտրուսկյան մշակույթը սերտորեն կապված է Էգեյան ավազանի և Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասի մ.թ.ա. 2--1-ին հազարամյակներով թվագրվող մշակույթի հետ:

Լեզվաբանները (Վ. Գեորգիև) նշում են, որ Էտրուսկերենը լեզվական ընդհանրություններ ունի ոչ թե իտալական, այլ լիդիական, լիկիական, հայկական և փոքրասիական այլ լեզուների հետ, իսկ "Էտրուսկերեն լեզվի հնչյունաբանական կառուցվածքը շատ նման է հայոց լեզվի հնչյունաբանական կառուցվածքին" (В. Георгиев, стр. 194):

9. Նշվում են թրակիա-փռուգիական ցեղերի Բալկաններից-Հայկական լեռնաշխարհ ընկած գաղթի ճանապարհը՝ ելնելով այդ տարածքների դամբարաններից հայտնաբերված նյութական մշակույթի (հատկապես խեցեղենի) նույնությունից: Իսկ ճանապարհը այսպիսին է: Թրակիա-Մալոնիկի հարթավայր - Տրոյա-Տրոադա - Փոքր Ասիայի ծովեզրեր - Մալաթիա-Խարբերդ-Դիարբեքիր-Մասուն (ՀԺՊ, 1971, էջ 232-233): Նշենք, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին և ավելի ուշ հնարավոր էր գաղթի նույն ուղին հակառակ ուղղությամբ՝ Հայկական լեռնաշխարհ--Թրակիա:

10. Նշենք նաև Հայկական լեռնաշխարհից դեպի հարավ-արևմուտք՝ Եգիպտոս կատարված էթնիկական մի տեղաշարժի մասին, որը ուսումնասիրողների շրջանում տարբերակ կարծիքների տեղիք է տվել: Պահպանված հնագույն գրավոր աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին Եգիպտոս ներխուժած հիքսոս կամ հաքսոս ցեղի մասին:

Արժեքավոր են հատկապես Եգիպտական քուրմ Մանեթոնի տեղեկությունները (մ.թ.ա. 4-րդ դար), որն օգտվելով տաճարներում պահպանվող գրավոր աղբյուրներից, գրել է Եգիպտոսի պատմությունը: Այդ աշխատությունից միայն հատվածներ են պահպանվել, որոնք մեզ են հասել Հովսեփոս Փլավիոսի ու Եվսեբիոս Կեսարացու աշխատությունների միջոցով: Մանեթոնի աշխատության պահպանված հատվածներից հայտնի է դառնում, որ մոտավորապես մ.թ.ա. 1700 թ. Ասիայից Եգիպտոս են ներխուժել անխոցելի զրահներով, սուր հատող սրերով ու նետերի երկաթե սլաքներով զինված, մարտակառքեր վարող լեռնական քաջ ռազմիկներ, որոնք "առանց պատերազմի դիրքաւ տիրեցին մեր աշխարհին", - գրում է Մանեթոնը: ("Բազմավեպ", 1912 թ., 7-9, էջ 297): Հնագույն գրավոր աղբյուրները (հունական) ներխուժող լեռնականներին անվանում են հիքսոսներ (hik-sos) կամ հաքսոսներ (hak-sos), որն "անապատի առաջնորդներ", "հովիվների թագավորներ", "օտար երկրների թագավորներ" իմաստներով է բացատրվում: Ուսումնասիրողների շրջանում միասնական կարծիք չկա հաքսոսների էթնիկական պատկանելիության մասին: Այս իմաստով կարևոր է Եվսեբիոս Կեսարացու "Ժամանակագրություն" աշխատությունը: Ե. Կեսարացին, որ անմիջականորեն օգտվել է Մանեթոնի չպահպանված

աշխատությունից, ներխուժողների համար օգտագործում է hak անունը (Եիսեբի Պամփիլեաց Կեսարացիոյ, Ժամանակագրականք, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 227-229) և նշում, որ հաքսոսները Եգիպտոս են արշավել Խուրրի երկրից: Սրանով պետք է բացատրել այն փաստը, որ Եգիպտացիները թոթափելով հաքսոսների լուծը, պատերազմ սկսեցին Խուրրի Միտանիի դեմ (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսեր) համարելով, որ այդ երկրից էր գալիս իրենց պատճառված աղետը:

Նշենք, որ ուսումնասիրողները (Հ. Յ. Ավգեր) դեռ 19-րդ դարի կեսերից նույնացրել են հայերի հայ ինքնանվանումը հաքսոսներ կամ հիքսոսներ անվան հետ (Բազմավեպ, 1912, 7-9, էջ 289-297):

Հատկանշական է նաև, որ հաքսոսները իրենց համարում էին Արեգակի որդիներ (ԼԺԹ, II, րՅԸ. 415), ու նրանց ազդեցության հետևանք էր, որ Արեգակի պաշտամունքը Եգիպտոսում բարձրացվեց պետական մակարդակի (Ra Աստծո պաշտամունքը):

Նշենք, որ Եգիպտոսի նոր տերերի՝ հիքսոսների մայրաքաղաքը կոչվում էր Ավարիս, նրանք են հիմնել նաև Երուսաղեմ քաղաքը, իսկ նրանց առաջնորդներին կոչում էին Հիան, Անատեր, Յակոբեր և այլն:

Հավելված Եգիպտոսի Հայ Թագուհիները

Կահիրեից 300 կմ հարավ՝ Ամառնա բնակավայրի մոտ, 1887 թ. պատահաբար հայտնաբերվեց Եգիպտոսի 18-րդ հարստության (մ.թ.ա. 1580-1090) արքունական դիվանը, որը մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն Եգիպտոսի, այլև Առաջավոր Ասիայի շատ երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Եգիպտական արքունիքի հայտնաբերված դիվանը կազմված էր մոտ 300 կավե տախտակներից և բովանդակում էր փարավոններ Ամենհոտեպ 3-րդի (1455-1419) և Ամենհոտեպ 4-րդի (1419-1400) դիվանագիտական նամակագրությունը Խուրրի-Միտանիի, Բաբելոնի, Ասորեստանի, Խաթթի և այլ երկրների միապետների հետ:

Ուսումնասիրությունները պարզել են, որ մ.թ.ա. 18-րդ դարից սկսած Խուրրի-Միտանի պետությունը կարևոր դեր է խաղացել Առաջավոր Ասիայի քաղաքական ու տնտեսական կյանքում: Այն առևտրական կարևոր հանգուցակետ էր հարևան երկրների համար:

Իր հզորության ժամանակ Խուրրի-Միտանիի արքաները իշխում էին Սիրիա--Պաղեստինին, որով սահմանակից էին դարձել հզոր Եգիպտոսին: Եգիպտոսը ևս ցանկանում էր տեր դառնալ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Սիրիա-Պաղեստին երկրամասին: Սկսվում են փոխադարձ ռազմական արշավանքներ: Եգիպտական փարավոնները իրենց արձանագրություններում պարծենկոտությամբ նշում են, որ արշավել են Խուրրի (նաև Նահարինա, Նաիրի) երկրի վրա, ավերել են, այրել ու մեծ ավարով վերադարձել: Սակայն շատ հաճախ կրկնվող այդ արշավանքները ցույց են տալիս, որ հաջողությունը միշտ չէ, որ ուղեկցել է եգիպտացիներին, այլապես այդքան հաճախ չէին կազմակերպվի արշավանքներ դեպի Հայկական լեռնաշխարհ:

Թուլթուս 4-րդ փարավոնը (1465-1455) հետևելով իր նախնիներին նոր արշավանք է ձեռնարկում դեպի Խուրրի-Միտանի, սակայն այդ արշավանքն ավարտվում է Արտատամա 1-ին արքայի հետ կնքված խաղաղության ու բարեկամության դաշնագրով: Թուլթուս 4-րդը համոզվում է, որ իրեն ու իր երկրին ավելի ձեռնտու է Խուրրի-Միտանի երկիրն ունենալ իբրև դաշնակից ու բարեկամ, և կնքված պայմանագիրն ավելի ամրապնդելու համար խնամախոս դեսպաններ է ուղարկում Արտատամա 1-ինի մոտ՝ կնության խնդրելով նրա դստերը: Խնամախոսները յոթ անգամ այցելում են Արտատամայի արքունիք, որն ի վերջո տալիս է իր համաձայնությունը և արքայադուստրը դառնում է Եգիպտոսի թագուհի՝ Մուտեմույե անունով:

Ամառնայի նամակները ցույց են տալիս, որ Արտատամա 1-ինի դուստրը եգիպտական հաջորդ փարավոն Ամենհոտեպ 3-րդի (1455-1419) մայրն էր: Այս փարավոնը ևս ամուսնացել է Խուրրի-Միտանիի արքայադուստրերից մեկի հետ: Մինչև իր թագավորության 10-րդ տարին (մոտ 1445 թ. մ.թ.ա.) Ամենհոտեպ 3-րդը դեսպան-խնամախոսներ է ուղարկել Խուրրի-Միտանիի հաջորդ թագավոր Մուտառնա 1-ինի մոտ, խնդրելով նրա դուստր Գիլու Շեպայի ձեռքը: Հայտնի է, որ 6 անգամ Մուտառնայի արքունիք այցելելուց հետո միայն դեսպաններին հաջողվել է ստանալ արքայի համաձայնությունը: Գիլու Շեպան 317 կանանց ուղեկցությամբ ուղևորվել է Եգիպտոս:

Ամենհոտեպ 3-րդը ունեցել է խուրրիական ծագումով մեկ այլ կին ևս՝ Թիա անունով (հավանաբար Գիլու Շեպայի մահվանից հետո, որովհետև նրա մասին այլևս տեղեկություններ չկան նամակներում):

Թիան ոչ արքայական ծագում է ունեցել: Նրա դամբարանում հայտնաբերված արձանագրություններից պարզվել է, որ Թիայի ծնողները եղել են Նաիրի երկրից: Թիան կոչվել է "արքայի մեծ տիկին" և ազդեցիկ դիրք է ունեցել եգիպտական արքունիքում: Նա ունեցել է խելացի կնոջ համբավ և օգնել է ամուսնուն երկրի կառավարման գործում: Չնայած այդ արժանիքներին, ոչ արքայական ծագման պատճառով քրմերը հաճախ են պահանջել փարավոնից, որ բաժանվի նրանից: Սակայն Ամենհոտեպ 3-րդը միշտ մերժել է նրանց, պատասխանելով, որ Թիան հզոր փարավոնի կին է:

Հայտնի են ազգետ, եգիպտագետ Պետրին, որը մանրամասն քննելով Խուրրի-Միտանիի արքայադուստրերի դիրքը եգիպտական արքունիքում գրել է. "Թիայի դեմքը... տարբերվում է նախապես Եգիպտոսում տարածված տիպից... Նեֆերտիտի կերպարանքը շատ նման դիմագծեր ունի Թիայի հետ, այնքան շատ, որ հավանական է, թե երկուքն էլ պատկանում են նույն ցեղին"¹:

Ամենհոտեպ 3-րդը երկարատև գահակալության շրջան է ունեցել և Ամառնայի նամակներից հայտնի է դառնում, որ նա, չնայած ծեր հասակին նորից ցանկացել է կին առնել Խուրրի-Միտանիի

արքայադուստրերից մեկին: Այս անգամ հարսնացուն Տուշրատա արքայի դուստր Տադու Շեպան էր, որը հայտնի է Նեֆերտիտի անունով: Փարավոնը իր Մանե ու Գելիա դեսպաններին ուղարկում է խնամախոսության: Դեսպանները իրենց հետ բերել էին փարավոնի նամակը, որտեղ գրված էր. "... Իմ եղբայր, ինձ կնության ուղարկիր քո դուստրն իբրև տիրուհի Եգիպտոսի": Տուշրատան անմիջապես չի համաձայնվում, և սկսվում են երկարատև բանակցություններ: Միտանիի արքան մեծ քանակությամբ ոսկի է խնդրում փարավոնից, որը հավանաբար նրան անհրաժեշտ էր արտաքին թշնամիների դեմ

պայքարելու համար (Խաթթի, Աշշուր): Մակայն փարավոնը չէր շտապում ուղարկել պահանջված ոսկին և գրում է. "... ինչ-որ ուղարկում են քեզ, սա չնչին է, իսկ էթե դու համաձայնվես տալ նրան ինձ կնության, որին ես փափագում եմ, նվերներ պիտի (գան ավելի շատ)": Հերթական այցելություններից մեկի ժամանակ Մանե դեսպան-խնամախոսին է ներկայացվում հարսնացուն: Մանեն շատ է հավանում արքայադստերը և Տուշրատայի պատասխան նամակով, որտեղ նա նորից ոսկի էր խնդրում, վերադառնում է Եգիպտոս: Դեսպանների տեղեկությունները հարսնացուի մասին հավանաբար գոհացրել են փարավոնին, քանի որ Մանեն նոր նվերներով ու նոր նամակով նորից ուղևորվում է հայոց աշխարհ, որպեսզի արքայադստերը առաջնորդի Եգիպտոս: Տուշրատան իր դստեր համար օժիտ է պատրաստում, որի համար ժամանակ էր պետք և որոշվում է, որ Մանեն պետք է 6 ամիս սպասեր Վաշուգանե մայրաքաղաքում, մինչև օժիտը պատրաստվեր: Նեֆերտիտի օժիտը կազմված էր Հարմոնի և Մաշրիանի քաղաքների տուրքերից, ուղարկվում էին նաև մի քանի հարյուր կանայք, մի մատուռ՝ ազգային աստվածների պաշտամունքի համար: Տուշրատայի իշխանության տակ գտնվող քաղաքներն ու իշխանները ևս մասնակցում էին օժիտի պատրաստմանը:

Ամառնայի նամակների հավաքածուի մեջ պահպանվել է Նեֆերտիտի օժիտի մանրամասն ցանկը: Այն այսպիսին է. ոսկե, արծաթե ու պղնձե առարկաներ, անոթներ, հագուստի թանկարժեք գործվածքներ, ասեղնագործված իրեր, ոսկեխուս պատմուճան, թանկագին գոհարներով զինդեր, դրվագված ապարանջաններ բազլի ու սրունքների համար, զարդեղեն, բաժակներ, տուփեր, անուշաբույր յուղերով սրվակներ, պղնձե սպասք, ոսկե ու արծաթե արձանիկներ: Կան նաև արծաթապատ կառքեր՝ իրենց ձիերով, զենք ու զրահ, պղնձե սաղավարտներ, արծնապատ, ոսկով ու գոհարներով զարդարված ոսկեպատ աղեղներ ու այլ զենքեր: Ծերունի փարավոնի համար ուղարկվում էր ինչ-որ կախարդական բալասան, որը պետք է երկարացներ նրա կյանքը: Ուղարկվում էր նաև Աշշուրից բերված (իբրև ավար) Իշտար աստվածուհու քանդակը, որը պետք է բուժեր փարավոնին իր հիվանդության ժամանակ: Երկարատև պատրաստություններից հետո, երբ խնամախոսները վեց անգամ այցելել էին Տուշրատայի արքունիք, արքան իր դստերը ճանապարհում է Եգիպտոս, տալով իր օրհնությունը: Արքայադուստրը հասնում է Եգիպտոս և ընդունվում արքայավայել պատիվներով: Եգիպտացիները հիացած էին նրա գեղեցկությամբ և կոչում են նրան Նեֆերտիտի, որը "գեղեցկուհին եկավ" իմաստն ունի: Մակայն շուտով մահանում է Ամենհոտեպ 3-րդ փարավոնը և գահ է բարձրանում Ամենհոտեպ 3-րդի և Թիայի շատ երիտասարդ ավագ որդին, Ամենհոտեպ 4-րդ անունով (1419-1400): Նոր փարավոնը հոր մահը անմիջապես հաղորդում է Տուշրատա արքային և խնդրում հոր հետ սկսած բարեկամությունը շարունակել իր հետ, քանի որ ինքը որոշել է Նեֆերտիտիին ընդունել իր կանանցը՝ իբրև "մեծ իշխանուհի, իշխանուհի բոլոր կանանց և տիրուհի հարավի ու հյուսիսի": Բարեբախտաբար մեզ է հասել գեղեցիկ ու հմայիչ Նեֆերտիտիի պատկերը: Ամառնայից հայտնաբերվել է վարպետ Ջեխուտիմեսի կերտած Նեֆերտիտիի դիմաքանդակը: Պատկերված է նուրբ դիմագծերով, երկար վզով ու երազկոտ, նշաձև աչքերով հմայիչ մի կին: Ուսումնասիրողներից Բեցոլդը խոսելով Նեֆերտիտիի օժիտի մասին, այնուհետև գրում է. "Պետական թելադրանքներ, կառավարական սկզբունքներ ամենից առաջ, սակայն և կրոնական գաղափարներ նույն ճանապարհը պետք է բռնած լինեին": Ամենհոտեպ 4-րդ փարավոնը, չնայած երիտասարդ հասակին, ուժեղ անհատականություն էր, որի անցկացրած բարեփոխումներն արմատապես փոխել են Եգիպտոսի դարավոր սովորույթներն ու լայն, սուր բախումների տեղիք տվել: Նոր փարավոնը ժխտել է բոլոր հին աստվածներին և ընդունել արևի ՌԱ Աստծո պաշտամունքը: Գերագույն աստծուն անվանել է Աթոն՝ "Արևի սկավառակ", իսկ ինքն անվանափոխվել է Էխնաթոնի, որ նշանակում էր "Աթոնի վահան": Էխնաթոնը այնուհետև իրեն նվիրել է նոր կրոնի քարոզմանը, գրել է բազմաթիվ ներբողներ, կառուցել է նոր մայրաքաղաք Ախետաթոն անունով, որ նշանակում էր "Աթոն աստծո քաղաք": Կառուցել է նաև տաճարներ, որոնց պատերը զարդարել է տվել իր սիրելի կնոջ՝ Նեֆերտիտիի ու երեք աղջիկների պատկերներով: Էխնաթոնը իր գրած ներբողների մեծ մասը նվիրել է Նեֆերտիտին: Այդ ներբողներում նա գովերգում էր նրա հմայքն ու գեղեցկությունը.

Ես սիրում եմ քաղցր շունչը քո
Ամեն օր հիանում եմ քո գեղեցկությամբ,
Իմ ցանկությունն է, լսել քո ձայնը հմայիչ,
Որ հնչում է ինչպես շրշուն հյուսիսային քամու²:

Կրոնական այս հեղափոխության մեջ հավանաբար մեծ է եղել արևապաշտ Նեֆերտիտիի դերը, որն իր հետ Եգիպտոս էր տարել իր նախնիների կրոնը՝ Արև-Աստծո պաշտամունքը: Ամառնայի նամակներից պարզ է դառնում, որ Էխնաթոնի ու Տուշրատայի հարաբերությունները այնքան էլ բարեկամաբար չեն զարգացել: Նոր փարավոնը չի ուղարկում Ամենհոտեպ 3-րդի խոստացած նվերները: Տուշրատան հատկապես շատ էր ուզում ստանալ իր դստեր երկու ոսկե արձանները, որոնք պատրաստի վիճակում ցույց էին տվել իր դեսպաններին: Որպես պատասխան Ամենհոտեպ 4-րդը ուղարկում է փայտե ոսկեզօծված արձաններ, որը խիստ վիրավորական էր Տուշրատայի համար: Հետագա նամակագրությունները և իրադարձությունները ցույց են տալիս, որ հարաբերությունները ավելի ու ավելի սառն են դարձել և ի վերջո խզվել են: Սա այն ժամանակն էր, երբ Խուրրի-Միտանին թուլանում էր, իսկ Եգիպտոսն էլ հավանաբար չէր ցանկանում շարունակել բարեկամությունը թուլացող երկրի հետ:

Էխնաթոնը և Նեֆերտիտին որդի չեն ունեցել, այդ պատճառով էլ, երբ կյանքի 30-րդ տարում վախճանվել է փարավոնը, գահը անցել է փեսաներին, նախ՝ Մեմնեխկարին, ապա Թութանհամոնին: Ամուսնու մահից հետո ապրելով ևս մի քանի տարի, Նեֆերտիտին մահացել է 37 տարեկանում: Այսպիսով, գրեթե երեք սերունդ շարունակվել են Խուրրի-Միտանիի և Եգիպտոսի արքայական ընտանիքների ազգակցական-խնամիական կապերը: Կարճ ժամանակամիջոցում Եգիպտոս հարս են գնացել Արտատամա 1-ինի դուստր Մուտեմույան, Մուտառնա 1-ինի դուստր Գիլու Հեպան, իշխան Յուայի դուստր Թիան և Տուշրատա 1-ինի դուստր Տադու Հեպա-Նեֆերտիտին: Հայոց աշխարհի արքայադուստրերը մեծ համբավ են ունեցել Եգիպտական արքունիքում³: Նրանք աչքի են ընկել իրենց բացառիկ խելքով, հմայիչ գեղեցկությամբ և խելացի խորհրդատուներ ու օգնականներ են եղել իրենց ամուսին-փարավոնների համար: Հայոց արքայադուստրերի հետ անկասկած Եգիպտոս են մեկնել նաև հարյուրավոր կանայք՝ դայակներ, սպասավորներ, պալատական այլ կանայք, որոնք Եգիպտական արքունիք էին մտնում իրենց հայրենիքի բարքերը, սովորությունները, ինչպես նաև կրոնական հայացքները: Եգիպտոսի պատմության մեջ աչքի է ընկնում հենց այս՝ նոր թագավորության շրջանը, որը սկսվում է 18-րդ հարստության փարավոնների գահակալությամբ: Այս շրջանը համարվում է Եգիպտական պետության ծաղկման ու բարգավաճման ժամանակաշրջան: Կարելի է մտածել, որ այս հաջողությունները պայմանավորված են եղել նաև Խուրրի-Միտանիի թագավորների և Եգիպտական փարավոնների միջև հաստատված ազգակցական ու բարեկամական կապերով:

1. Այս և հետագա մեջբերումները Ա. Խաչատրյանի "Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն" աշխատությունից են: Տես նաև Flinders Petrie, "A history of Egypt during the XVII and XVIII dynasties", II, 1924, աշխատությունը:

2. И. Любимов, Искусство древнего мира, Москва, 1980, стр. 89.

3. Համեմատության համար նշենք, որ խեթական թագավոր Խաթթուսիլի 3-րդի (մ.թ.ա. 13-րդ դար) կինը՝ խուրրիական ծագումով Պուդո Հեպան ևս մեծ ազդեցություն է ունեցել խեթական արքունիքում: Նա խուրրիաբնակ Կիցվատնայի (Կիլիկիա) քրմի դուստրն էր, եղել է կիրթ, զարգացած ու ազդեցիկ թագուհի "tawannas": Նրա ազդեցությունը մեծ է եղել նաև կրոնական ու մշակութային հարցերում: Խաթթուսիլի 3-րդը այնքան մեծ վստահություն է ունեցել կնոջ՝ Պուդո Հեպայի հանդեպ, որ հաճախ թուլատրել է իր անունից կազմված փաստաթուղթը վավերացնել միայն Պուդո Հեպայի կնիքով (ԼԺԹ, II, րՅԸ. 151):

Հնագույն Պատմական Վկայություններ Հայ Ռազմիկի Մասին

Հայոց պատմության հնագույն շրջանի մասին քիչ գրավոր աղբյուրներ են մեզ հասել, ընդ որում դրանք հիմնականում օտար թագավորների կողմից գրված արձանագրություններ են, որոնք լի են պարծենկոտ հայտարարություններով ու իրենց անձը փառաբանող արտահայտություններով:

Այդ արձանագրություններից (աքադական, եգիպտական, խեթական, ասուրական) հայտնի է դառնում, որ հին աշխարհի համարյա բոլոր ուժեղ պետությունները փորձել են նվաճել Հայկական լեռնաշխարհը: Մակայն դա այնքան էլ հեշտ չի եղել, որովհետև Հայաստանը միշտ ունեցել է հմուտ ու քաջարի պաշտպաններ, որոնց հաղթելը դյուրին չի եղել: Հայերը (արձանագրություններում՝ խուրրիներ, կուտիներ, հաքսուներ, հայասացիներ, նաիրցիներ, ուրարտացիներ) ոչ միայն հմուտ ու քաջարի ռազմիկներ էին, այլև զինված էին ժամանակի լավագույն զենքերով: Ընդունված է, որ Հայաստանը մետաղների մշակման և ձիու ընտելացման հայրենիքն է, հետևաբար հայ ռազմիկները զինված են եղել մետաղե զենքերով, ունեցել են ձիեր ու մարտակառքեր, որոնք էլ անշուշտ նպաստել են նրանց հաջողությանը մարտի դաշտում:

Հնագույն գրավոր աղբյուրները, պատկերներն ու քանդակները վկայում են, որ հայոց զորքը հիմնականում կազմված է եղել հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Հայերը մեծ ուշադրություն են դարձրել պատանիների ու երիտասարդների ռազմական դաստիարակությանն ու պատրաստվածությանը: Եղել են հատուկ ռազմական բազաներ, ուր ավագները իրենց հարուստ փորձը հաղորդել են կրտսերներին: Այսպես, հայոց հնագույն պետության՝ Ուրարտուի արքա Մենուան (810-786) Վան քաղաքի շրջակայքում ունեցել է մարգարան, ուր մարզվելու ժամանակ նրա "Արծիբի" անունով ձին, որի վրա նստած է եղել ինքը՝ Մենուան, ցատկել է 22 կանգուն¹: Վանից հայտնաբերված մեկ այլ արձանագրություն, որը պատկանում է Արգիշտի 2-րդին (713-685), վկայում է. "Արգիշտե Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուարա (գյուղի) անտառի առջևից մինչև Իշպիլե Բատուրդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն": Հաշվարկները ցույց են տալիս, որ Արգիշտի արքան նետը արձակել է 492 մետր²:

Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայկական ցեղերի դեպի հարավ, արևմուտք ու հարավ-արևմուտք կատարած խոշոր ռազմական արշավանքների մասին: Անդրադառնանք արդեն հիշատակված երկու խոշոր ռազմական արշավանքներին: Այսպես. մ.թ.ա. 22-րդ դարի վերջերին Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերից՝ Կորդվաց լեռներից խոշոր մի արշավանք է կազմակերպվել դեպի Ստորին Միջագետք, ուր ստեղծվել էր Աքադ բռնապետությունը: Աքադի միապետների դեպի հարևան երկրներ, նաև Հայկական լեռնաշխարհի հաճախակի կազմակերպվող արշավանքները, որ ուղեկցվում էին դաժան սպանություններով, ավերով ու թալանով, մեծ անհանգստություն էին պատճառում բնակիչներին: Կորդվաց լեռների բնակիչների՝ կուտիների (նաև գուտիների) կազմակերպած արշավանքը, որը գլխավորում էր ցեղի առաջնորդ Էնրիդավիզիրը, նպատակ ուներ վերջ տալ աքադացիների կողպատչական ներխուժումներին: Հայտնի է, որ գոռոզ ու դաժան տիրակալ Նարամ-Սուենը սպանվել է կուտիների հետ տեղի ունեցած մի ճակատամարտում մոտ մ.թ.ա. 2200 թ., որից հետո կուտիների առաջնորդ ու զորավար Էնրիդավիզիրը իրեն է վերցրել սպանված Նարամ-Սուենի "աշխարհի չորս կողմերի թագավոր" տիտղոսը: Ենթադրվում է, որ Էնրիդավիզիրը առաջնորդել է թեթևազեն հետիոտն բանակը (այդպիսին էր նաև աքադացիների բանակը): Էնրիդավիզիրը ոչ միայն փայլուն զորավար էր, այլև հմուտ կազմակերպիչ, քանի որ մեծ հաջողությամբ իրագործել է այն նպատակը, որի համար ուղարկվել էր Միջագետք, այն է. վերջ տալ Նարամ-Սուենի բռնապետությանը և բոլոր ցեղերի համար պայմաններ ստեղծել խաղաղ գոյակցության համար:

Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են Հայկական լեռնաշխարհից կատարված մեկ այլ սրբնթաց ռազմական արշավանքի մասին նա, որը մինչև այսօր զարմանք ու հիացմունք է պատճառում ուսումնասիրողներին: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից եգիպտական փարավոնները շատ հաճախ կողոպտչական արշավանքներ էին կազմակերպում դեպի հարևան երկրներ: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին երկրում աճում է դժգոհությունը 13-րդ դինաստիայի փարավոնների դեմ: Հավանաբար ոչ պատահականորեն հենց այս ժամանակ՝ մոտ մ.թ.ա. 1700 թ. հյուսիս-արևելքից Խուրրի երկրից Եգիպտոս են ներխուժում անխոցելի զրահներով և սուր, հատող սրերով զինված մարտակառքեր վարող լեռնական քաջ ռազմիկներից բաղկացած ջոկատներ, որոնց առաջնորդում էին Հիան, Անատեր, Յակոբեր անունով զորավարները: Եգիպտացի պատմիչ Մանեթոնը (մ.թ.ա. 4--3-րդ դդ.) դառնությամբ գրում է, որ այս ռազմիկները, որոնց կոչում էին հաքսուներ կամ հիքսուներ, դյուրությամբ տիրեցին մեր աշխարհին (նկ.):

Այս ռազմիկները զինված էին մետաղե ամուր գեներով ու պաշտպանված անխոցելի զրահներով: Անխոցելի զրահներով էին պաշտպանված նաև ձիերն ու մարտակառքերը: Այսպիսի գործի դեմ անգոր էր եզիպտական հետիոտն բանակը, որը զինված էր բրոնզե գեներով: Եվ Եզիպտոսը նվաճվեց հաքսոսների կամ հիքսոսների կողմից ու մոտ 110 տարի նրանք իշխում էին Եզիպտոսում: Այս առումով պատահական չպետք է համարել, որ 17-րդ ու 18-րդ դինաստիաների փարավոնների ժամանակ իշխանությունը նորից իրենց ձեռքը վերցնելուց հետո (մ.թ.ա. 1580 թ. Յահմոս 1-ինը գրավեց հաքսոսների հիմնած մայրաքաղաք Ավարիսը) եզիպտացիները պատերազմ սկսեցին Խուրի-Միտանիի դեմ, այդ երկիրը համարելով իրենց դժբախտության պատճառը: Հայկական լեռնաշխարհից կատարված այս երկու խոշոր արշավանքները սոսկ արշավանքներ չէին: Անկասկած դրանք նպաստել են պատմական, քաղաքական, մշակութային և այլ բնույթի իրադարձությունների արագ զարգացմանն ու առաջընթացին: Այսպես, հաքսոսները Եզիպտոս տարան երկաթե գեներ ու ձիեր, կուտիները վերջ տվեցին արքայական միապետների բռնակալությանը Միջագետքում և հաստատեցին այնպիսի կարգեր, երբ Միջագետքը ղեկավարում էին կառավարիչների, հաճախ ընտրված կառավարիչների միջոցով: Հայկական լեռնաշխարհի բնակիչները հայերը գերազանց ռազմիկներ էին, որոնց հարգում ու գնահատում էին անգամ թշնամիները: Նրանց հաճույքով էին ծառայության վերցնում հարևան բոլոր թագավորները: Խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդի (1340-1320) մի արձանագրությունից հայտնի է դառնում, որ 3000 հայ ռազմիկներ ծառայության են վերցվել խեթական թագավորի կողմից որպես հետևակ ու մարտակառք վարողներ: Հայ-խեթական հարաբերությունների հիմնականում փոխադարձ արշավանքների մասին տեղեկություններ կան մ.թ.ա. 15--14-րդ դարերի խեթական թագավորների արձանագրություններում: Հնագույն խեթական արձանագրությունը, որ տեղեկություններ է տալիս դեպի Հայասա կատարված արշավանքների մասին, պատկանում է Մուրսիլիս 2-րդին (1340-1320): Մուրսիլիսը պատմում է իր պապի՝ Թուրիալիս 3-րդի (1400-1380) արշավանքների մասին: Այդ արձանագրությունից հայտնի է դառնում, որ Թուրիալիս 3-րդը անսպասելի հարձակվել է Հայասայի վրա և հաջողություն ունեցել: Մակայն կարճ է տևել նրա հաջողությունը, որովհետև հայերը արագ վերադասավորել են իրենց ուժերը և խեթերին դուրս շարտել երկրից: Խեթական թագավորը մեծ ուժերով նորից է արշավանք ձեռնարկել դեպի Հայասա: Այս անգամ նա բախվել է հայոց բանակին ("հետիոտն զինվորներ և կառամարտիկներ"), որին գլխավորում էր Հայասայի թագավոր Կարանին: Գլխավոր ճակատամարտը տեղի է ունեցել Եփրատ գետի աջ ափին Կումմախա (Կումագեն, Մալաթիայից հարավ) քաղաքի մոտակայքում: Այս ճակատամարտում խեթերին չի հաջողվել վճռական հաղթանակի հասնել, քանի որ հետագայում նրանք բազմաթիվ նոր արշավանքներ են ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ:

Խեթերի հաջորդ ընդհարումը հայերի հետ եղել է Մուլիլուլիումաս 1-ինի օրոք (1380-1340), երբ հայոց ծերացած թագավոր Հուկաննան գերադասել է հաշտության պայմանագիր կնքել խեթերի հետ: Ստորագրված պայմանագրի համաձայն հայերը պետք է ռազմական օգնություն ցույց տային խեթերին այլ երկրներ կատարած նրանց արշավանքների ժամանակ, հայոց թագավորը պետք է պահպաներ իրեն հայտնի ռազմական գաղտնիքները խեթերի արշավանքների մասին և այլն: Խաղաղության այս պայմանագիրը ձեռնտու էր խեթերին, քանի որ նրանց հաջողվում էր ժամանակավորապես մեկուսացնել հայերին և նույնիսկ օգտագործել նրանց ռազմական ուժը իրենց արշավանքների ժամանակ:

Հետագա արձանագրություններից հայտնի է դառնում, որ երբ խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդը երկարատև պատերազմի մեջ է եղել իր մեկ այլ հարևանի հետ, հայոց թագավորը՝ Մարիասի որդի Անիասը հաճախակի արշավանքներ է կազմակերպել դեպի խեթերի երկիր: Այդ արշավանքներից մեկի ժամանակ Անիասը մեծ քանակությամբ գերիներ ու ավար է վերցրել: Մուրսիլիսը պահանջել է հետ վերադարձնել դրանք, սակայն մերժում է ստացել: Դրանից հետո խեթերը վերսկսել են ռազմական գործողությունները, որոնք շարունակվել են մոտ չորս տարի և հաջողություն չեն բերել ոչ մեկին: Մ.թ.ա. 1330 թ. Մուրսիլիսը մեծ ուժերով անցել է վճռական հարձակման: Հայերը փորձել են օգտագործել իրենց լեռներն ու ամրոցները, բայց խեթերը շրջանցել են այդ ամրությունները, դուրս եկել չպաշտպանված բնակավայրերի մոտ ու մեծ կորուստների գնով գրավել դրանք: Մակայն խեթերը չեն կարողացել իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, քանի որ հետագա վավերագրերից հայտնի է դառնում, որ մ.թ.ա. 14--13-րդ դարերում հայերը դաշինքի մեջ են եղել խեթերի հետ, չմտնելով Խեթական թագավորության կազմի մեջ:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսից Փոքր Ասիայի արևմտյան մասին և Միջերկրական ծովի արևելյան ափերին տիրելու համար պայքարի մեջ են մտնում Եզիպտոսը և Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում կազմավորված Խուրի-Միտանի պետությունը: Մոտ մեկ դար տեղի են

ունենում ռազմական բախումներ, որոնք ընթանում են փոփոխակի հաջողություններով: Հետաքրքիր է, որ խուրրիները այս պատերազմում օգտվում էին նաև հետախույզների ծառայություններից: Այսպես, եգիպտական գրավոր աղբյուրները հայտնում են, որ փարավոն Ամենհոտեպ 2-րդին (մ.թ.ա. 15-րդ դարի 2-րդ կես) հաջողվել է բռնել Միտանիի թագավոր Մաուսադատտարի հետախույզին, որը վզին կապված նամակ էր տանում Եգիպտոսի դեմ պայքարող Սիրիա-Պաղեստինի մանր թագավորությունների տիրակալներին³: Ի վերջո կողմերը համոզվում են, որ ռազմական ուժով իրենք համագոր պետություններ են և երկուսի համար էլ ավելի շահավետ է ոչ թե պատերազմը շարունակելը, այլ փոխհամաձայնության գալը: Որոշվում է վիճելի տարածքները բաժանել ազդեցության ոլորտների, հյուսիսային Սիրիան անցնում է Խուրրի-Միտանիին, իսկ հարավային Սիրիան և Պաղեստինը՝ Եգիպտոսին: Միտանիի և Եգիպտոսի բարեկամությունը ամրապնդվում է նաև ամուսնություններով: Այս ժամանակ է, որ Եգիպտոս հարս են գնում Հայկական լեռնաշխարհի չորս դուստրեր, որոնցից մեկը հանրահայտ գեղեցկուհի Նեֆերտիտին էր: Նշենք նաև, որ եգիպտական փարավոնները իրենց նամակներում Խուրրի-Միտանիի թագավորներին դիմում էին "իմ եղբայր", "Միտանիի մեծ թագավոր" արտահայտություններով: Նույն ձևով էլ նրանց էին դիմում Խուրրի-Միտանիի թագավորները: Դիմելու այս ձևը բացառիկ դեպքերում էին օգտագործում փարավոնները: Բոլորին չէ, որ նրանք եղբայր էին անվանում, կամ թույլ տալիս, որ այդպես կոչեն իրենց: Սա յուրահատուկ հարգանքի ու վստահության արտահայտություն էր:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսից ռազմական ընդհարումներ են եղել նաև խուրրիների և խեթերի միջև: Իր արշավանքներից մեկի ժամանակ խեթական Խաթթուսիլի 1-ին (մ.թ.ա. 18-րդ դարի սկիզբ) թագավորին հաջողվել է անցնել Եփրատ գետը ու գրավել մի շարք քաղաքներ, այդ թվում Խախուն, որն այնուհետև հրի է մատնել: Այդ մասին Խաթթուսիլիի պարձենկոտությամբ գրել է. որ Խախուն Սարգոն Հինը (Աքադի թագավորը) անգամ չի կարողացել գրավել, իսկ ինքը գրավել ու այրել է այն⁴: Սակայն պատասխան հարվածը չի ուշացել: Խաթթուսիլի 1-ինի թագավորության 4-րդ տարում, երբ թագավորը արշավանքի մեջ էր և գտնվում է Արցավայում (Լուվիա, Փոքր Ասիայի հարավային ծովեզրը), խուրրիները հարձակվում են Խաթթի վրա ու գրավում մի շարք քաղաքներ, այդ թվում Կուսսարի մայրաքաղաքը:

Խեթական հաջորդ թագավորները՝ Մուրսիլիս 1-ինը (մ.թ.ա. 16-րդ դարի սկիզբ) և Խանտիլին (մ.թ.ա. 16-րդ դարի 1-ին կես) նորից փորձում են ներխուժել Հայկական Միջագետք խուրրիների ազդեցության տակ գտնվող տարածքներ: Սակայն խուրրիները նորից հարված են հասցնում Խաթթին, որին ի դեպ, ըստ հին խեթական տեքստերի, սպասում էին խեթերը, պատրաստի վիճակում պահելով իրենց սահմանային զորքը: Հավանաբար խեթերը հասկացել էին, որ իրենց դեմ պայքարում խուրրիները այլ մարտավարություն են ընտրել. անսպասելի և սրընթաց հարվածել երկրին ու մայրաքաղաքին, երբ թագավորը գտնվում էր արշավանքի մեջ: Նշենք, որ այս մարտավարությունը իրեն լիովին արդարացնում էր: Այս դեպքում ևս, երբ Խանտիլին դեպի Հյուսիսային Սիրիա կատարած իր հաջող արշավանքից հետո գտնվում էր Թոգարամայում (Թոգարմա) խուրրիները սրընթաց (հավանաբար այրուձի) ներխուժել են Խաթթի: "Խուրրիները... սրընթաց արշավով... բարձր բացականչություններով... Խաթթի երկիրը մտան..."⁵ - գրում են խեթական տեքստերը:

Խուրրի-խեթական ռազմական ընդհարումները շարունակվում են մինչև երկու երկրների անհետանալը պատմական ասպարեզից: Եվ էթե խեթական թագավորությունը շարունակություն չունեցավ ու խեթերը վերացան որպես ժողովուրդ ու պետություն, ապա Խուրրի-Միտանիի պատմությունը շարունակվեց այլ պետական կազմավորումների (Նաիրի, Արմե-Շուպրիա) ու պետությունների (Արարատ-Ուրարտու) կազմավորմամբ:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին--1-ին հազարամյակի սկզբներին պատմական ասպարեզում հայտնվում է նոր երկիր՝ հզորացած Ասորեստանը: Նշենք, որ Ասորեստանը (նախկին Աշշուրի թագավորությունը) հզորանում էր ի հաշիվ թուլացող Միտանիից խլված հողերի, հատկապես Տիգրիսից արևելք ընկած տարածքների: Այս երկիրը ևս բազմաթիվ արշավանքներ է կազմակերպում դեպի Հայկական լեռնաշխարհ: Մ.թ.ա. 13-րդ դարում Ասորեստանի թագավորները Հայաստանի համար օգտագործում են նաև Նաիրի անունը: Իրենց արձանագրություններում նրանք պատմում են դեպի Նաիրի երկիր կատարած արշավանքների մասին: Նրանցից մեկը՝ Թիգլաթպալասար 1-ինը (1115-1077) վեց արշավանք է կազմակերպել դեպի Հայկական լեռնաշխարհ: Իր արձանագրություններում նա հայտնում է, որ ինքը մեծ պատասխանատվությամբ է նախապատրաստվել դեպի Նաիրի երկիր կատարվող արշավանքներին, քանի որ այդ երկիրն ընդարձակ, անձանոթ ու երբևէ չնվաճված երկիր է, որի շատ ճանապարհներին ոտք չեն դրել այլ

երկրների թագավորներ⁶: Այդ մասին գրել են նաև Ասորեստանի այլ թագավորներ՝ Թիկուլթի-Նինուրթան (1243-1221), Աշշուրբեկալը (1076-1059)⁷ և ուրիշներ:

Ասորեստանի թագավորների արձանագրությունները լի են դաժանության, թալանի, ու կոտորածների սարսափելի նկարագրություններով: Սակայն այդքան հաճախակի կազմակերպվող արշավանքները վկայում են այն մասին, որ ասորեստանցիներին երբեք չի հաջողվել մեծ հաջողություններ ունենալ: Նրանց դեմ միշտ դուրս էին գալիս հայոց միացյալ ուժերը, որոնց հաղթելը հեշտ չէր: Չնայած մեծամտությանը, այդ մասին անգամ Ասորեստանի թագավորներն են հիշատակում իրենց արձանագրություններում: Այսպես Թիկուլթի-Նինուրթան իր արձանագրության մեջ վկայում է "նաիրցի մարտիկների հանդուգն քաջության ու մարտական ոգու մասին"⁸: Թիգլաթպալասար 1-ինը գրում է, որ պատանդ է վերցրել Նաիրի երկրների թագավորների "հպարտ որդիներին", որոնց սակայն ազատ է արձակել փրկագին ստանալուց հետո (1200 ձի, 2000 խոշոր եղջերավոր անասուն)⁹: Մարգոն 2-րդը (721-705) իր արձանագրություններում խոսելով դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների, թալանի, կոտորածների ու ավերածությունների մասին, գրում է. "... իմ հպարտ թշնամիների վրա հաղթանակ տարա"¹⁰: Նշենք, որ Ասորեստանի թագավորները "հպարտ" են անվանում պարտվող կողմի մարտիկներին: Ասորեստանցի մի այլ թագավոր՝ Թիգլաթպալասար 1-ինը "հպարտ ու անհնազանդ" է անվանում Նաիրի (նաև Խանիգալբատ) երկրի Մելիդիա (Մալաթիա) քաղաքի բնակիչներին, որոնց համառությունը կոտրել է իր 4-րդ արշավանքի ժամանակ: Հետաքրքիր են Ասորեստանի մեկ այլ թագավորի՝ Ասարհադունի (680-669) նամակները ուղղված Արմե-Շուպրիայի (Սասուն) թագավորին: Արմե-Շուպրիա փախած իր հպատակներին ետ ստանալու համար Ասարհադունը 4 նամակ է ուղարկել հայ թագավորին, որը չի բավարարել Ասորեստանի թագավորի պահանջը: Ջայրացած Ասարհադունը իր 3-րդ նամակում գրում է. "Լսված է, որ հզոր թագավորի խոսքը երկրորդ անգամ կրկնվի, իսկ ես հզոր թագավորս, երեք անգամ գրում եմ քեզ...: Քանի որ դու չես վախենում իմ սպառնալիքներից, մի կողմ չես նետում քո հպարտությունը, դրանով դու դրդում ես ինձ պատյանից հանել Աշշուրի հզոր զենքը և պատրաստվել արշավանքի"¹¹:

Արմե-Շուպրիայի թագավորի այս հանդգնությունը անշուշտ պայմանավորված էր ինքն իրեն ուժեղ զգալու հանգամանքով: Նշենք, որ երկար նախապատրաստությունից հետո միայն (մոտ 8 տարի) մ.թ.ա. 673 թ. Ասարհադունը արշավանք է կազմակերպում դեպի Արմե-Շուպրիա, որի արդյունքները շատ չնչին էին սպառնալիքների համեմատ (ստրուկների հարցաքննություն, նրանց վերադարձը տերերին և այլն):

Ասորեստանի թագավորների այդքան հաճախակի կրկնվող արշավանքները պատճառ են հանդիսանում, որ միավորվեն Հայկական լեռնաշխարհի բոլոր մասը ու մեծ պետական կազմավորումները: Եվ արտաքին թշնամու դեմ մղված պայքարում կազմավորվում ու պատմական ասպարեզ է իջնում հայոց մեկ այլ հզոր պետություն՝ Ուրարտուն (Արարատ): Մ.թ.ա. 9-րդ դարից սկսած հայոց գորքը Արամե, Մարդուր, Մենուա, Արգիշտի, Ռուսա և այլ թագավորների (նրանք նաև զորահրամանատարներ էին) գլխավորությամբ հաղթական պատերազմներ են մղել ասորեստանցիների, բաբելացիների և այլ թշնամիների դեմ: Ասորական թագավոր Սալմանասար 3-րդի տուրտան (զորահրամանատար) Շամշիլուն, որ կռվում էր Արգիշտի 1-ինի (786-764) դեմ, մ.թ.ա. 780 թ. խոստովանում է. "Արգիշտի Ուրարտացու անունը սարսափելի է որպես ծանր հողմ, իսկ նրա ուժերը մեծաքանակ են"¹²:

Ասորեստանի թագավորների արձանագրություններից հայտնի է դառնում, որ հայոց թագավորները այս պատերազմի ժամանակ ևս ունեցել են հետախույզներ և դարձյալ օգտվել են նրանց ծառայություններից: Այսպես. Մարգոն 2-րդը իր արձանագրության մեջ գրում է, որ նվաճել է Ուրարտուի ծայրամասում, Նաիրի երկրի մոտ գտնվող Ուայախի քաղաքը, "որտեղ բնակվում էին Ուրսայի (Ռուսա) քաջ ռազմիկները, հետախույզները՝ շրջակա երկրների գաղտնիքների մեջ թափանցողները"¹³:

Պատմական վկայություններ կան նաև հայ զորահրամանատարների մասին, որոնք ծառայության մեջ էին օտար թագավորների մոտ, առաջնորդում էին նրանց գորքը կամ հայկական զորագնդերի հետ մասնակցում էին այդ թագավորների ձեռնարկած արշավանքներին: Հույն պատմիչ Քսենոփոնը վկայում է, որ պարսից Կյուրոս Մեծ (550-529) թագավորի ձեռնարկած լյուդական և բաբելական արշավանքներին մասնակցել են հայկական հեծելազորը և հետևակը Տիգրանի (հետագայում Տիգրան 1-ին հայոց թագավոր) և Եմբասի գլխավորությամբ¹⁴:

Այդ արշավանքների ժամանակ գրավվում և կործանվում է Բաբելոնը (539): Իսկ մինչ այդ, մ.թ.ա. 612 թ. մարերը դաշնակցելով հայերի ու բաբելացիների հետ նվաճել ու ավերել էին Ասորեստանի

մայրաքաղաք Նինվեն: Խորենացին վկայում է, որ Նինվեի գրավման ժամանակ հայոց զորքին առաջնորդում էր Պարույր Սկայորդին¹⁵:

Պարսից Դարեհ 1-ին արքայի Բեհիսթունյան արձանագրության մեջ վկայություններ կան երկու հայ զորավարների մասին: Մ.թ.ա. 521-520 թթ. Դարեհի դեմ ապստամբում են մի շարք երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Ապստամբությունը ճնշելու համար Դարեհը Հայաստան է ուղարկում Դադարշիս անունով իր հայ զորավարին, որը սակայն չի կարողանում ճնշել իր հայրենակիցների ապստամբությունը և պարտություն է կրում տեղի ունեցած բոլոր երեք ճակատամարտերում: Դարեհը Հայաստան է ուղարկում նոր զորք, նոր զորավարի՝ պարսիկ Վահումիսայի գլխավորությամբ: Երկու ճակատամարտից հետո միայն Վահումիսային հաջողվում է ճնշել հայերի ապստամբությունը: Դարեհի արձանագրության մեջ չենք հանդիպում այն հայ զորավարի կամ թագավորի անվանը, որի հրամանատարությամբ հայոց զորքը հինգ անգամ ճակատամարտ է տվել պարսից զորավարներ Դադարշիսի և Վահումիսայի դեմ: Հավանաբար Դարեհը չի ցանկացել, որ իր դեմ ապստամբած հայոց զորավարի անունը հավերժանա: Հայտնի է, որ հայոց Տիգրան 1-ին թագավորին հաջորդել է որդին՝ Վահագնը մ.թ.ա. 531 կամ 530 թվականին, ուստի հավանական է, որ Դարեհի դեմ կռվող հայոց զորքի հրամանատարը հենց այս Վահագնը լինի¹⁶:

Դարեհի դեմ ապստամբած երկրների թվում էր նաև Բաբելոնը: Այս ապստամբությունը ղեկավարում էր Արախս անունով մի հայ, Խալդիտա-Հալդիտայի որդին: Արախսան հայտարարում է, որ ինքը բաբելական գահի թեկնածու Նաբոնիդի որդի Նաբուգոդոնոսորն է: Ապստամբ ժողովուրդը ընդունում է Արախսային և հռչակում թագավոր: Սակայն Դարեհին հաջողվում է ճնշել նաև այս ապստամբությունը, իսկ Արախսան մահապատժի է ենթարկվում¹⁷:

Մ.թ.ա. 4--3-րդ դդ., մոտ մեկ դար, տեղի են ունենում հույն-պարսկական պատերազմներ, որոնց, հույն պատմիչների վկայությամբ, մասնակցել են նաև հայկական ջոկատներ՝ հիմնականում պարսկական կողմից: Արիանոսը վկայում է, որ Ալ. Մակեդոնացու և պարսից զորքերի միջև մ.թ.ա. 331 թ. տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտին պարսիկների կողմից մասնակցել են հայոց հռչակավոր այրուձին ու հետևակը Երվանդի և Միհրվահիշտի գլխավորությամբ¹⁸: Պարսից բանակի աջ թևը, որտեղ կռվում էր հայոց զորագունդը, հերոսաբար դիմակայել է մակեդոնական զորքին և մարտը շարունակել նույնիսկ այն ժամանակ, երբ պարսիկները Դարեհ 3-րդի գլխավորությամբ անկազմակերպ ու խուճապահար փախել են մարտի դաշտից: Աջ թևում մարտը շարունակվել է մինչև երեկո, սակայն երբ հայտնի է դարձել, որ պարսից զորքը ճակատամարտի ձախ թևում և կենտրոնում պարտություն է կրել, Երվանդը և Միհրվահիշտը կազմակերպել են հայոց զորքի կանոնավոր նահանջը դեպի հայրենիք՝ հռչակելով Հայաստանը անկախ ու ինքնուրույն թագավորություն:

Տեղն է հիշել, որ հույն պատմիչները (Քսենոփոն, Դ. Սիկիլիացի, Դիոն Կասիուս) ևս վկայում են հայերի հմուտ և քաջ ռազմիկներ լինելու մասին: Դ. Սիկիլիացին (մ.թ.ա. 5-րդ դարի վերջ) գրում է. "Մրանք՝ կարդուխները (իմա՝ Կորդվաց լեռների բնակիչները) արքային (պարսից) թշնամի էին ու ազատ, և զբաղվում էին ռազմական արվեստով: Նրանք առանձնապես վարժ էին պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու մեջ, որոնցով էլ նրանք հարմար դիրքերից հեղեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին: Նրանց նետերը երկու կանգունից ավելի երկար էին և ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում նրանց հարվածին: Կարդուխները այնպիսի խոշոր նետեր էին օգտագործում, որ հեղենները նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում"¹⁹: Քսենոփոնը ևս վկայում է Կորդվաց լեռների հմուտ պաշտպանների և նրանց աղեղների ու նետերի մեծ չափերի մասին: Նա գրում է. "Կորդուխների աղեղներն ունեն մոտավորապես երեք կանգուն երկարություն, իսկ նետերը՝ ավելի քան երկու կանգուն երկարություն"²⁰:

Հայոց զենքը Ուրարտուից հետո մեծ հաջողություններ ու հաղթանակներ է արձանագրել Տիգրան Մեծի (95-55) ժամանակ: Հայ ռազմիկների քաջությունը, արիությունը և մարտական բարձր ոգին նոր ուժով է դրսևորվում այս շրջանում: Տիգրան Մեծի մասին գրվել ու դեռ պիտի գրվեն շատ ուսումնասիրություններ: Այժմ բավարարվենք Մ. Խորենացու կողմից արված մի արտահայտությամբ, որ լավագույնս է բնութագրում Տիգրան Մեծին ու հայ ռազմիկներին. "Նա արանց (տղամարդկանց) գլուխ կանգնեց և արիություն ցուցաբերելով մեր ազգը բարձրացրեց"²¹:

Անշուշտ բարոյական ու ռազմական բարձր հատկանիշներով օժտված հայ ռազմիկի արդեն հայտնի կերպարն է առիթ հանդիսացել, որ հռոմեացիների կողմից (Վերգիլիոս) արվի հետևյալ արտահայտությունը. "Արաքսը կամուրջներ չի հանդուրժում"²²: Թևավոր այս արտահայտությունը նշանակում էր, որ հայերին հնարավոր չէ հնազանդեցնել, նվաճել: Այս արտահայտությունը այն

խոստովանություններից է, որը շարունակում և լրացնում է մյուսներին, ինչպես նաև լավագույն ձևով բնութագրում՝ հայերին ու հայոց անպարտելի մարտական ոգին: Հիշենք նաև մեկ ուրիշ փաստ: Ահա թե ինչպես է արտահայտվել Օգոստոս կայսրը Հայաստանի մասին. "Մեծ Հայաստանը, - ասված է Օգոստոս կայսեր կտակի մեջ, - ես կարող էի նրա Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել նահանգ, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին այդ թագավորությունը տալ Տիգրանին, որը Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը"²³: Նշենք, որ նախնիների օրինակին հետևելու սովորույթը չէր Հայաստանի անկախությունը պահպանելու հիմնական պատճառը, պարզապես Հայաստանն իր ըմբոստ ոգով ու պայքարող որդիներով ստիպել է, որ Օգոստոս կայսրն ընդունի Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, հակառակ դեպքում հռոմեացիներին Փոքր Ասիայում սպառնում էր երկարատև ու անօգուտ պատերազմի վտանգը:

Այսպիսով, հայ ռազմիկները հնագույն ժամանակներից աչքի են ընկել իրենց մարտունակությամբ, արիությամբ ու քաջությամբ, ունեցել են մարտական բարձր վարպետություն, բարոյական բարձր հատկանիշներ, ոգի, կամք ու անհրաժեշտ պահին հաղթելու մեծ վճռականություն: Իր երկարատև պատմության ընթացքում հայը ընդունել է կյանքի, գոյության ու լինելու համար մղվող բնական պայքարի՝ գոյամարտի պայմանները և հայ ռազմիկներին բնորոշ վերոհիշյալ հատկանիշների շնորհիվ հազարամյակներ շարունակ ապահովվել է հայ ցեղի հարատևությանը իր բնօրրանում՝ Հայաստանում:

1. Մեկ կանգունը 51,8 սմ է, հետևաբար Մենուայի ձին ցատկել է 11 մ 39 սմ, որը մոտ 2800 տարի մնում էր չգերազանցված և միայն 1975 թ. գերմանացի Բերգմանը իր Սվինգեր նծույզով ցատկեց 22 մ 16 սմ (УКН, 110, (էջ 205), ՀԺՊ Ք, էջ 52):
2. УКН, 277, էջ 339, ՀԺՊ Ք, էջ 87:
3. ИДВ, I, стр. 224, II, стр. 242.
4. ИДВ, II, стр. 130.
5. Г. Гиоргадзе, ВДИ, 1969, I, стр. 82.
6. АВИИУ, 10 (III, 35).
7. АВИИУ, 3, 19.
8. АВИИУ, 3.
9. АВИИУ, 10 (IV, 43).
10. ՀԺՊՔ, էջ 31:
11. АВИИУ, 67 (g).
12. АВИИУ, 38.
13. ՀԺՊՔ, էջ 32:
14. Քսենոփոն, Կյուրոպեդիա (Հ. Մանանդյանի թարգմանությամբ), Հ. Մանանդյան, հ. 1, 1977, էջ 384-400:
15. Մ. Խորենացի, էջ 77-79:
16. Հ. Տեր-Մովսեսյան, 1922, էջ 140, Լ. Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993, էջ 289:
17. ՀԺՊՔ, էջ 154-159:
18. Arrian, III, 8, 5, 11, 7: ՀԺՊ, 1971, էջ 494:
19. ՀԺՊՔ, էջ 174:
20. Քսենոփոն, Անաբասիս, IV, 2, 27-28:
21. Մ. Խորենացի, էջ 84-85: Խորենացին գրում է Տիգրան Երվանդյանի մասին (մ.թ.ա. 6-րդ դար), սակայն ուսումնասիրողները իրավացիորեն նշում են, որ այն վերաբերվում է Տիգրան 2-րդին, (Մ. Խորենացի, էջ 472-473):
22. ՀԺՊ, 1971, էջ 633:
23. Հ. Մանանդյան, 1977, էջ 296:

Резюме

Армения - один из древнейших центров цивилизации. Многовековые следы материальной культуры, мифологические сказания, легенды, географические и личные имена свидетельствуют о том, что армяне--коренные жители Армянского нагорья и проживают здесь с древнейших времен.

Греческая историография выдвигала свою версию о происхождении армян. Греческие летописцы (Геродот, Ксенофонт, Страбон) относят армян к фрако-фригийскому происхождению, исходя от их общих обычаев, форм покроя одежды, видов использованного оружия, также от сказания о фесалийском аргонавте Арменосе.

В армянской средневековой историографии (V-XV вв., М. Хоренаци, Агатангехос, П. Бюзанд, Себеос) было распространено мнение, что армяне--древнейшие жители Армянского нагорья и живут здесь после Вавилонского столпотворения.

С середины XX века ученые, особенно лингвисты (В. Иллич-Свитич, О. Широков, Г. Кличков, А. Долгопольский, В. Иванов) выдвигают точку зрения, согласно которой предки народов принадлежащих индоевропейским языкам - арийские племена, жили в Передней Азии, точнее на Армянском нагорье и в близлежащих областях. Теорию о местонахождении индоевропейской родины в восточных частях Передней Азии досканально разработали Т. Гамкрелидзе и В. Иванов в совместном труде "Индоевропейский язык и индоевропейцы". Эта точка зрения имеет много сторонников и постепенно входит в научный оборот.

В представленной работе делается попытка рассмотреть эту версию о локализации прародины индоевропейцев на Армянском нагорье и соседних областях, а также об автохтонности армян на своей родине. Выдвигается также теория, что Армения является центром сотворения и цивилизации согласно древнейшим мифологическим представлениям и Библии.

В труде рассматриваются все варианты, которые могут подтвердить эту версию. Выявляются археологические, этнографические, лингвистические аспекты проблемы, а также вопрос этнических передвижений, имея в центре внимания армянский этнос, армянскую историю и Армянское нагорье.

В труде обсуждаются также вопросы о культе бога-творца AP/APA.

Древнейшие письменные источники (шумерский "Энки и Нинмах", аккадский "Энума Элиш...", хурритский "О царстве небесном") свидетельствуют, что человек сотворен в стране Абзу (Апсу, Апсуб) то есть в стране Матери Земли, находящейся под покровительством бога мудрости Хайа/Энки (Айа, Эа, Гея). Эта страна известна и под другими именами: Кур, Иригал, Арали. Из вышеуказанных и других письменных источников очевидно, что своим географическим нахождением Абзу соответствует району, где находятся истоки рек Евфрата и Тигра, то есть Армянскому нагорью. Библия тоже свидетельствует, что человек создан в районе истоков рек Евфрат, Тигр, Гехон (Аракс) и Писон (предполагается Галис или Пасис).

Человек, сотворенный на земле, находившейся под покровительством бога Хайа, сам себя считал-*haу* (хай), что означает "житель земли" или "земное существо".

В хуррито-армянской мифологии, зародившейся на территории Армянского нагорья, человек сотворен в стране бога Хайа (Эа), путем соединения бога матери земли Хайа и небесного творца Бога-Солнца-AP (армянский Арев-AP/APA). И житель, сотворенный на Армянском нагорье--*haу*, в своем мирозерцании, сочетает культ богини Матери Земли Хайа с культом отца-творца бога AP - считая себя сыном бога AP - Арман (Ар-ман), Арам (Ар-ам=ма), Армен (Ар-мен). Территорию, где были сотворены сами *haу*-армяне, они называли Арарат, *Harк*-Харк, *Haук*-Хайк.

В определенный исторический период самому большому и яркому светилу, даровавшему людям свет, тепло и жизнь Солнцу, *haу*-армяне приписывали также силу творца и поклонялись ему как богу AP-APA, Солнце-бог.

В начале III тысячелетия до н.э. из Аравийского полуострова в северную Месопотамию (южнее Армянского нагорья) проникли семитские племена - аккадцы, (позднее - вавилонцы и ассирийцы). В процессе общения с жителями Армянского нагорья, где еще сохранялись древнейшие сказания и легенды о происхождении *haу*-армян, семитские племена узнали, что они жители страны бога Хайа и детища бога-творца AP. И аккадцы называли жителей Армянского нагорья сыновьями бога AP, то есть арман, арме(н) страну - Армани, Арме. Впоследствии в II-I тысячелетия до н.э., греки и персы называли жителей Армянского нагорья армянами, а страну - Арменией.

В труде подчеркивается важная роль и значение культа бога AP в создании духовной и материальной культуры армянских племен (также других арийских племен). Большое внимание уделяется богу AP, как богу солнца, и вопросу о том, что Армения является древнейшей страной культа солнца и света.

Исследования свидетельствуют, что имя, культ, идеология бога АР могут способствовать изучению многих вопросов древнейшей истории армян (также других индоевропейских народов), в том числе названий многих государственных образований, таких как Аратта, Арарат - Урарту, имен более поздних божеств, унаследовавших характерные черты бога АР, таких как Арамазд, Ахурамазда, Арес, Арас, Марс, Ярило и другие. Также изучаются вопросы, касающиеся личных и географических названий.

В IV-III тысячелетиях до н.э. в Армянском нагорье произошло бурное развитие средств производства, которое в свою очередь привело к росту числа населения и населенных пунктов. Этот факт сыграл большую роль в этнических передвижениях. В результате этого процесса, часть армянских племен, предки индоевропейцев арийские племена, появились в Иране, Индии, Греции и в других европейских регионах (III-I тысячелетия до н.э.).

Время и пространство ослабили воспоминания о родине, но духовные и материальные ценности: мифы, предания, легенды, обычаи, а также следы культа бога АР, возвращают людей в страну света и солнца - в Армению.

Интересен и тот факт, что армянский язык, в отличие от других индоевропейских языков, имеет все фонетические звуки, свойственные индоевропейским языкам.

Антропологические исследования также свидетельствуют о том, что Армянское нагорье находится в ареале, который немецким ученым фон Лушаном был назван "родиной арменоидного типа".

Таким образом, исследования дают нам возможность предполагать, что далекие предки индоевропейских народов на Армянском нагорье составляли племенную общность, имеющую единую родину. Они поклонялись одним и тем же богам (АР-АРА, Арамазд, Ваагн, Михр-Митра, Анаит), создавали общую культуру, наследие которой, пройдя через тысячелетия и века, сохранилось до наших дней.

Summary

Armenia is one of the oldest centers of civilization. The centuries-old traces of material culture, myths, and legends, geographical and personal names reveal that Armenians are the natives of the Armenian Highland; they are indigenous who lived there since the dawn of humanity.

Greek historians Herodotus (5th century BC), Xenophones (5th century BC), Strabo (63 BC-20) and some others, speak extensively about the Armenians, their history and geography. The Greek historiography had also found its own version on the origins of Armenians. The version is about the Thracian-Phrygian origin of Armenians which is based on some common features shared by both of them, common traditions, clothing, the used armours and also the myth of Armenos of Thesalia.

According to Armenian Medieval Historiography (V-XV c., M. Khorenatsy, Agatangelos, P. Bouzand, Sebeos, etc.) Armenian people were ancient inhabitants of the Armenian Highland and they have lived here since Babelon Mess.

Starting from the mid-20th century, researchers, especially the linguists (V. Illich- Svitich, O. Shirokov, G. Klichkov, A. Dolgopolski, V. Ivanov) brought forward the idea that the ancestors of the Indo-European language speaking peoples, the Arian tribes, had lived in the Armenian Highland surrounding areas. T. Gamkrelidze and V. Ivanov, in their work "The Indo-European languages and the Indo-Europeans", discussed very thoroughly and deeply the questions about the location of the ancestors of the Indo-Europeans in the areas including the Armenian Highland and surrounding lands. This opinion has many followers and enters steadily the scientific world.

Thus the monographs, author discusses and defends the assertions about the Armenian Highland as the homeland of the Armenians. The opinion that Armenia is the centre of Creation and ancient civilization, is also discussed. The arguments mainly focusing on the Armenian ethnos, history and Highland from the point of view of linguistics, mythology, history, anthropology, ethnic migrations reinforce the above stated assertions. The work also explores questions related to the worship of the Creator-AR (Ara).

The written sources of ancient peoples (Sumerians - "Myth of Enki and Ninmah", Akkadians - "Enuma Elish", Hurri "About the Heaven's Kingdom") prove that Man was created in a land called Abzu (Apsu, Apsuv) during the reign of 'Lord of the Earth' Haya (Aya, Ea). This land was known by the names Kur, Eden, Irigal, Arali. From other written sources ('Gilgamesh', 'Atrakhasis') and from its geographical location (the Land of Mountains, the region of rivers' springs) and considering the name Arali/Abzun, it becomes clear that the land is located in the sources of Euphrates and Tigris rivers in the Armenian Highland. The Bible, in its turn witnesses that man was created in the Armenian Highland, in the regions of the Tigris, Euphrates, Gehon and Pison rivers' sources. In the country under the rule of the deity Haya the created man considered himself the indigene of Haya's land, of the 'Lord of the Earth'; hay, which means 'world inhabitant, world creature'. According to the Hurri-Armenian mythology, which originated in the Armenian Highland ('About the Heaven's Kingdom' The birth of Vahagn'), man was created in the land of Haya's deity from the union of the Haya-'Lord of the Mother Earth', and of the Cosmic Creator God AR (Arev, the Sun God). The hay, an inhabitant created in the Armenian Highland, the worship of the deity Haya 'Lord of the Earth' made parallel to the Creator Father. Through the worship of the God AR he considered himself God's Son Arma (Arman), Aram (Ar-am/ma) Arme(n) and the area where the Hay-Armens were created was called Ararat (Arar-at), Harkh (Har-k) and Hayk. During a certain period of time in the history the Hay-Armens had assigned to the brightest and the biggest celestial lighter with the creative powers and worshiped him as the God AR (ARA); the one that was giving Light, Life and Warmth; the Sun God.

At the beginning of 3rd millennium BC the Semitic tribes, the Akkadians (much later the Babylonians and the Assyrians) from the Arabian peninsula appeared in the Northern or Armenian Mesopotamia to the south of the Armenian Highland and had relations with the its natives, the Hay Armens. At these times the God AR was still worshiped. Some legends and tales were preserved about the Armenian Highlands' inhabitants living in the Haya's Land (hay) and being the sons of the God AR (Arma, Aram). The Akkadians called these people the Sons of God AR (Arma, Armen) and the land Armani or Aramani. Much later, in the 2nd and 1st millennia BC the Greeks and Persians called this people Armens. In the present work, the role and the importance of the God AR is discussed in relation to the Armenians' (also to Arian tribes') spiritual and material cultural foundations. Great attention is devoted to the questions concerning Armenia as being the oldest country of Light and Sun Worship.

The study shows that AR God's name, its worship and as the ideology may help understand the ancient periods of the Armenian history, as well as some names of state formations in the Armenian Highland (Aratta, Ararat-Urartu). The origins of some personal and geographical names starting with AR (or having that component), the names of other Gods (Aramazd, Ahuramazda, Ares, Aras, Mars, Yarilo), their worships and ideologies are also examined.

The worship of Sun and the worship of AR had left a deep impact on the formation of the mentality, moral norms, spiritual and material values of the Armenian-Arian, as well as other Arian, tribes and on their further development. In the 4th and 3rd millennia BC, intensive development of the means of production took place in the Armenian Highland, which in its turn had brought to the increase in the number of population. It played a certain role in ethnic migrations of the populations. The ancestors of the Indo-Europeans, the Arian tribes appeared in Iran, India, Greece, Europe and other areas (3rd - 2nd millennia BC).

Time and space had yielded to oblivion the homeland, but the material and spiritual values (myths, customs and traditions) and also the worship of the God AR bring people back in their perceptions to the country of Sun, Light and of AR's worship - Armenia. It is also interesting that the Armenian language, in contrast to other Indo-European languages, has all phonetic sounds common to all Indo-European languages. Anthropological studies reveal that the Armenian Highland was inhabited by the anthropological type defined Armenoid by F. von Lushan.

Research of all these materials allows us to conclude that the ancestors of the Indo-Europeans, the Arian tribes, well before their big or small ethnic migrations (in the 5-3th millennium BC) lived in tribal unions. They had the same homeland (the Armenian Highland and surrounding lands), they worshiped the same gods (AR-ARA, Aramazd, Vahagn, Mihr, Anahit), they had the same culture, lifestyle, names, the impacts of which have not even been destroyed by the passing millennia.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աստվածաշունչ

Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981
 Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983
 Եխեբի Պամփիլեաց Կեսարացիոյ, Ժամանակագրականք, մասն Ա, Վենետիկ, 1818
 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, 1970
 Մեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939
 Հովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912
 Հերոդոտ, Պատմություն, Երևան, 1986
 Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970
 Ստրաբոն, (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը) Երևան, 1940
 Հովսէփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, Երևան, 1976
 Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985
 Զենոբ Գլակ, Հովհ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941
 Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1, Երևան, 1968
 Աբեղյան Մ., Երկեր, հ. 8, Երևան, 1985
 Աբեղյան Մ., Վիշապներ կոչվող կոթողները իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941
 Աբրահամյան Ա., Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973
 Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964
 Ադոնց Ն., Հին հայոց աշխարհայացքը, "Հայրենիք" (ամսագիր), Բոստոն, 1926-27
 Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972
 Ազգագրական հանդէս, Ա, 1886
 Ազգագրական հանդէս, Բ, 1897
 Ազգագրական հանդէս, 10, 1903
 Ազգագրական հանդէս, 1908, թիվ 1
 Ազիզյան Հ., Հայերի մարդաբանական տիպի առաջացման մասին, "Գիտություն և տեխնիկա" (ամսագիր), 1987, թիվ 3
 Ալեքսեև Վ., Ուշ բրոնզի դարի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության երկու խմբի մասին, ՀՍՍՀ ԳԱ, Տեղեկագիր, 1964, թիվ 1
 Անյան Սո., "Մասնա ծներ" էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները, ՊԲՀ, 1985, թիվ 1
 Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1910
 Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890
 Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976
 Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1, 2, 3, 4, Երևան, 1971, 1973, 1977, 1979
 Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, 1942
 Ավդալբեկյան Մ., Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1929
 Ավդիև Վ., Հին արևելքի պատմություն, Երևան, 1947
 Բազմավեպ, 1912, թիվ 7-9
 Բասկյան ավանդազրույց, Երևան, 1996
 Բասմաջյան Կ., Դարեհի արշավանքն ի Հայս, Բանասեր, հ. Ա, Պարիս, 1899
 Բասմաջյան Կ., Հայք ս. գրոց մեջ, Բազմավեպ, 1899
 Բարթիկյան Մ., Դիցապաշտ Հելլադան կամ Հելլեն դիք, Աթենք, 1936
 Բարսեղյան Լ., Արմանի, Արմե, Ուրմե երկրանունների մասին, ՊԲՀ, 1964, թիվ 2
 Բարսեղյան Լ., Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ, Երևան, 1996
 Բոդյան Վ., Հայ ազգագրություն, Երևան, 1974
 Բիլինաներ, Երևան, 1970
 Բուդդիս եւ իւր վարդապետութիւնը, Թիֆլիս, 1904
 Գավուրջյան Մ., Արմեն ու Հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ, 1973
 Գավուրջյան Մ., Արմենիա, Սուբարտու, Սումեր, Պեյրութ, 1988
 Գիտական աշխատություններ, Երևանի համալսարան, հ. 14, Երևան, 1940
 Դանիելյան Էդ., Հին հայոց առասպելաբանական պատկերացումները աստղային երկնքի մասին, ՊԲՀ, 1989, թիվ 3
 Դանիելյան Էդ., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997
 Դե Կարա Կ. Ա., "Արմենիա" անվան ստուգաբանություն, Բազմավեպ, 1899
 Դոլենս Ն., Խաչ., Պատմութիւն հին հայերի, Թիֆլիս, 1909

Դիցաբանական բառարան, Երևան, 1985 (կազմողներ Մ. Ն. Բոտվիննիկ, Մ. Կոզան և ուրիշներ)

Եզեկյան Ա., Սվաստիկա, Ազգագրական հանդես, 17, 1908

Եսայան Ստ., Հայաստանի հնագիտություն, Երևան, 1993

Եսայան Ստ., Կառավարիչ գործառնություն և հեծելագործ Հին Հայաստանում, Երևան, 1994

Երեմյան Ս., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիայում, ՊԲՀ, 1958, թիվ 3

Երեմյան Ս., Հայաստանը ըստ "Աշխարհացույցի", Երևան, 1963

Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2

Երեմյան Ս., Հայ ժողովրդի առաջացման պատմական միջավայրը, "Գիտություն և տեխնիկա" (ամսագիր), 1985, թիվ 4

Էմին Մ., Վեպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850

Էմին Մ., Հնախօսությունք ի վերայ հայկական հեթանոսությանց, Մոսկվա, 1875

Թումանյան Բ., Մնացականյան Հ., Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965

Իշխանյան Ռ., Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործությունները և հայերի ծագման ու հնագույն պատմության հարցերը, ԲԵՀ, 1979, թիվ 2

Իշխանյան Ռ., Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988

Իսրայելյան Մ., Էրեբունի բերդ-քաղաքի պատմությունը, Երևան, 1971

Իսրայելյան Հ., Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում, "Լրաբեր", 1967, թիվ 4

Իսրայելյան Հ., Երկնային մարմիններն ու լուսատուները բրոնզեդարյան Հայաստանում, "Լրաբեր", 1968, թիվ 5

Լալայան Ե., "Արա Գեղեցիկ" ավանդավեպը, Ազգագրական հանդես, գիրք 9, Թիֆլիս, 1902

Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967

Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան, 1933

Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. 15--17-րդ դդ., Երևան, 1998

Կարագեղոզեան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հ. 1, գիրք 1, Երևան, 1998

Կովալյով Ս., Հունաստան, Երևան, 1937

Կուն Ն., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Երևան, 1979

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հտ. I, Երևան, 1986

Հայ ժողովրդի պատմություն, պրակ 1, Երևան, 1961

Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981

Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1981

Հարությունյան Ա., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960

Հին Արևելքի Պոեզիա, Երևան, 1982

Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990

Հյուբշման Հ., Հին հայոց տեղվոյ անունները, Վիեննա, 1907

Հոմերոս, Իլիական, Երևան, 1987

Հայկական Մովետական Հանրագիտարան, հ. 1, 2, 4, 11

Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960

Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969

Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940

Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944 (1945)

Ղափանցյան Գ., Հայերի և հայերենի գոյացման շուրջ, "Մովետական գրականություն" (ամսագիր), 1941, թիվ 1

Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1977, հ. 1

Մառ Ն., Հայկական մշակույթը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության, Երևան, 1989

Մատիկեան Ա., Կրօնի ծագումը եւ դիցաբանությունը ըստ համեմատական կրօնագիտության, Վիեննա, 1920

Մատիկեան Ա., Արայ Գեղեցիկ, Վիեննա, 1930

Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1, Երևան, 1971

Մարտիրոսյան Հ., Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971

Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Մ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971

Մարտիրոսյան Հ., Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1978

Մարտիրոսյան Ն., Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4

Մելիք-Փաշայան Վ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963
 Մելքոնյան Հ., Ադիարենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980
 Մեջլումյան Ս., Լոռի բերդի դամբարանադաշտի հնէակենդանաբանական նյութը, 1989-90
 (գեկուցումների թեզիսներ)
 Մկրյան Մ., Հայ ժողովրդի կազմավորման և հայ գրականության սկզբնավորման հարցը, ԲԵՀ, 1967, թիվ
 1
 Մնացականյան Ա., Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956
 Մնացականյան Ա., Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում, Աշխատություններ,
 Պատմության թանգարան, Երևան, 1948
 Մնացականյան Հ., Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցամաքած տերիտորիայում, ՊԲՀ, 1952, թիվ 3
 Մովսիսյան Ա., Արատտա, Երևան, 1990
 Մովսիսյան Ա., Սրբազան լեռնաշխարհ, Երևան, 2000
 Շահինյան Լ., Գիրքը դարերի խորքից, Երևան, 1984
 Շահինյան Լ., "Ուրարտու" առեղծվածը, Երևան, 1994
 Չամչյան Ս., Հայոց պատմություն, հ. 3, Ժամանակագրություն, Երևան, 1984
 Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987
 Ջահուկյան Գ., Հայկական շերտը Ուրարտական դիցարանում, ՊԲՀ, 1986, թիվ 1
 Ջահուկյան Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992
 Սասունցի Դավիթ, Երևան, 1939
 Սարգսյան Ս., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967
 Սարգսյան Վ., Բասկերի հայկական ծագման վարկածը ըստ բասկ-իսպանական աղբյուրների, Գարուն,
 1991, թիվ 3
 Սրվանձտյան Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978
 Վարպետյան Ա., Ինքնություն, Երևան, 1993
 Տերտերյան Վ., Արարատյան թագավորության դիցարանը համեմատական դիցաբանության լույսի
 ներքո, "Լրաբեր", 1991, թիվ 3
 Տեր-Մովսեսյան Հ., Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1922

Абрамян Р., Армянские источники XVIII века об Индии, Ереван, 1968
 Аветисян Г., Государство Митанни, Ереван, 1984
 Арутюнян Н., Бианили, Ереван, 1970
 Арутюнян Н., Топонимика Урарту, Ереван, 1985
 Афанасьева В. К., Шумерская эпическая песнь "Гилгамеш и гора Бессмертного" ВДИ, 1969, N 1
 Большая советская энциклопедия, Москва, т. 65, 1931, т. 50, 1944
 Вулли Л., Забытое царство, Москва, 1986
 Гамкрелидзе Т., Передвижение согласных в хеттском, "Переднеазиатский сборник", Москва, 1961
 Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, ч. I, II
 Георгиев В., Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958
 Герни, Хетты, Москва, 1987
 Гиоргадзе Г., Хетты и хуритты по древнехеттским текстам, ВДИ, 1969, N 1
 Грантовский Э. А., Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970
 Гринцер П. А., Древнейший Эпос, Москва, 1974
 Дебец Г., Антропологические типы: Народы Кавказа, Москва, 1960
 Деведжян С., Лори-берд, I, Ереван, 1981
 Дикшит С., Введение в археологию, Москва, 1960
 Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2-3
 Дьяконов И. М., История Мидии, Москва, 1956
 Дьяконов И. М., Языки древней Передней Азии, Москва, 1967
 Дьяконов И. М., Предистория армянского народа, Ереван, 1968
 Дьяконов И. М., Арийцы на Ближнем Востоке: конец мифа, ВДИ, 1970, N 4
 Джаукян Г., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964
 Джаукян Г., Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967
 Дюмезиль Ж., Верховные боги индоевропейцев, Москва, 1986
 Древняя литература Малой Азии, Москва, 1977
 Древнегреческо - русский словарь, Москва, 1958

Есаян Ст., Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976
 Есаян Ст., Доспехи Древней Армении, Ереван, 1986
 Есаян Ст., Амулеты связанные с культом солнца из Армении, "Советская археология" (журнал), 1968, N 2
 Иллич-Свитич В. М., Древнейшие индоевропейско-семитские контакты, Проблемы индоевропейского языкознания, Москва, 1964
 Иванов В., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, д'Р, 1983, N 4
 Иванов В., Гамкрелидзе Т., Древняя Передняя Азия и индоевропейская проблема, ВДИ, 1980, N 3
 История древней Греции, Москва, 1972
 История Ирана, Москва, 1977
 История древнего мира, ранняя древность, Москва, 1982
 История древнего Востока, Москва, ч. I, II, 1983, 1988
 Канева И., Энмеркар и верховный жрец Аратты, ВДИ, 1964, N 4
 Капанцян Гр., Хеттские боги у армян, Ереван, 1940
 Капанцян Гр., Хайаса-колыбель армян, Ереван, 1948
 Карамзин Н., Об истории государства России, Москва, 1990
 Кифшин А., Географические воззрения древних шумеров при патеси Гудеа, "Палестинский сборник", вып. 13 (76), М-Л., 1965
 Клычков Г., Модель глоттогенеза армян, "Ис³м³с", 1980, N 8
 Литература Вавилоний и Ассирий, Москва, 1981
 Литература древнего Востока, Москва, ч. I, 1983
 Любин И., Палеолит Турции и проблема раннего расселения человечества, "Советская Археология", 1957, N 2
 Массон В., Средняя Азия и древний Восток, Москва, 1964
 Меликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954
 Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960
 Мелларт Дж., Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва, 1982
 Мифы народов мира, т. I, II, Москва, 1988, 1991
 Никольский М., Клинообразные надписи Закавказья, Москва, 1886
 Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), М-Л., 1959
 Пиотровский Б. Б., Урартские надписи из раскопок Кармир-блур (Вступительная статья в книге И. М. Дьяконова, Урартские письма и документы), М-Л., 1963
 Пиотровский Б. Б., О происхождении армянского народа, Ереван, 1947
 Платон, Республика, Москва, 1929
 Регер Д., Черкасова Е., История древнего мира, ч. I, Москва, 1970
 Ригведа (перевод. Елизаренко Я.), Москва, 1972
 Рыбаков Б. А., Язычество древней Руси, Москва, 1987
 Тацит Корнели, Аналлы, Ленинград, т. I, 1969
 Хачатрян Т., Древняя культура Ширака, Ереван, 1975
 Хачатрян Т., Армянский некрополь, Ереван, 1979
 Хачикян М., Хурритский и урартский языки, Ереван, 1985
 Широков О., Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины (Автохтонность армян по данным сравнительно-исторического языковедения), "Ис³м³с", 1980, N 5

G. Barton, The Royal Inscriptions of Sumer and Akkad, London, 1929
 L. L. Cavalli-Sforza, Paolo Menozzi, Alberto Piazza, The History and Geography of Human Genes, Princeton University Press, 1996
 L. L. Cavalli-Sforza, Genes Peoples, and Languages, 2000
 B. Hrozní, Die Lander Hurri und Mitanni und die alteste Inder, Archiv Orientální, vol. 1, N 2, 1929
 B. Hrozní, Naram-sin et ses ennemis d'après un texte Hittite, Archiv Orientalni, 1929, vol. 1
 P. Jensen, Hetiter and Armenier, Heidelberg, 1898, "Հանդես Ամսօրեայ", 1898
 A. Kammenhuber, Die Arier in Vorderen Orient, Heidelberg, 1968
 L. Luca-Cavalli-Sforza, Paolo Menozzi, Alberto Piazza, The History and Geography of Human Genes, Princeton University Press, 1996

- J. Mellaart, Earliest Civilisations of the Near East London, 1963
 S. Kramer, Sumerian mythology, New York, 1961
 S. Kramer, The Sumerians, Chicago, 1963
 C. Renfrew, Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins, London, 1987
 Ruhlen Merrit, The origin of Language Tracing the Evoluton of the mother Tongue, Toronto, 1994
 A. Sayce, The cuneiform inscription of Van (Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland), XIV, London, 1882
 Topakian Gerda, “Die Baerishe-Armenische stammessage”, Հանդէս Ամսօրեայ, 1987
 Wincler Hugo, Die Arier in den Urkinden von Boghazkoi (հայերէն թարգմանությունը Հանդէս Ամսօրեայում, 1913
 L. Wolley, A forgotten kingdom, London, 1958

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀԱ -- Հանդէս Ամսօրեայ
 ՀԱՊ -- Հին Արևելքի Պոեզիա
 ՀԺՊ -- Հայ ժողովրդի Պատմություն
 ՀԺՊՔ -- Հայ ժողովրդի Պատմության Քրեստոմատիա
 ՀՄՀ -- Հայկական Սովետական Հանրագիտարան
 ԲԵՀ -- Բանբեր Երևանի Համալսարանի
 ՊԲՀ -- Պատմա-Բանասիրական Հանդես

- АВИИУ -- Ассиро-Вавилонские Источники по Истории Урарту
 БСЭ -- Большая Советская Энциклопедия
 ВДИ -- Вестник Древней Истории
 ИДВ -- История Древнего Востока
 ИДМ -- История Древнего Мира
 ВЯ -- Вопросы Языкознания
 МНМ -- Мифы Народов Мира
 ПС -- Палестинский Сборник
 СА -- Советская Археология
 УКН -- Урартские Клинообразные Надписи